

Գիրքը յուսադատճեհահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅՐ ԵՐԿՐՈՒՄՆԵՐ ԱՐԿԵՐԱԸ ԼՅՅԱՅԱՍ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ
ԼՈՒՄԻՆԱՏԵԿՆԵՐՆԵՐԻ ԳՐԵՐԸ:

ՔՐՈՑՆԵ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՐԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄՈՒՍԱՆ "ՇԱՄԱԼՅԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

www.freebooks.am

ԵՆԴՐՈՒՄԸ ԵՎՐ ՈՐ ԺՅՆՈՒՄ ԵՔ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ
ՑԱՆԿՈՒՄԸ ԵՎՐ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՐՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ԱՐԿԸ՝ freebooks@rambler.ru

ՀԻՄՆԸ

• ԽԻՒՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ



ԽԻԿԱՐ
ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՇԻՐԱԶ

ՀՈՒՇ
ՆՈՎԵԼՆԵՐ



ԹԱՆԿԱԳԻՆ
ՄԱՍՈՒՆՔՆԵՐ



ԵՐԵՎԱՆ, «ԱՐԵՎԻԿԱ»
1990

Խմբադիր՝ Վ. Ռ. ԲԱԼԱՅԱՆ

ԳՄԴ 83. 32

Բ 371

83. 32

Մտ ———

Բ—371

ԲԱՐՍԵՂՅԱՆ, Խ. Հ.

Բ 371 Շիրազի Հուշ-նովելներ, թանկագին մասունքներ.— Եր.: Արևիկ, 1990.—264 էջ, 1 նկ.

Հեղինակը Հովհաննես Շիրազի ստեղծագործական կյանքից ներկայացրել է ուշագրավ դրվագներ, հուշ-նովելներ, անտիպ էջեր՝ նամակներ և այլ մասունքներ:

ԳՄԴ 83. 32

4803080201 (111)

Բ ————— 90—89

707 (01) 90

ISBN 5—8077—0226—3

© Խիկար Բարսեղյան 1990

ՇՆՈՐՀԱԿԱԼ, ԱԶՆԻՎ ՈՒ ՄԵՍ ԳՈՐԾ

Երբ ժամանակակից Մեծը հետո է, թվում է՝ հավերժական ու միասին եւ լինելու: Երբ այդ Մեծը հեռանում է աշխարհից, ամսոսում, զոչում ենք, որ կաթիլ-կաթիլ շենք հավաքել-ամբարել այդ Մեծի հոգու աշխարհի գանձերը, ասույթները, կառակները, արցունքները, ուրախության ու վշտի նշխարները:

Բայց այդպեռ չի գործել մեր ազնիվ պատմաբան խիկար Բարսեղյանը: Իբրև գիտնական, գիւնվորական, կուսակցական աշխատող, պրոֆեսոր խիկար Բարսեղյանը պատանեկան տարիներից եղել է մեր գրական կյանքի ակունքներին մտ, այդ ակունքներին կից, անսխալ որոշել գրական մեծությունների արժեքն ու տեղը և դեռ պատանի հասակից, հավաքել, գրի է առել շատ մասունքներ, խնամքով պահել դրանք:

Նման մի մասունքարան նա տարիներ առաջ ներկայացրեց մեզ՝ ընթերցողներին. դրանք Ավ. Իսահակյանի՝ մեր վարպետի մասին կաթիլ-կաթիլ, երբեմն բուռ-բուռ հավաքած ասույթներն ու հուշերն են՝ հավիտյան կորստից փրկված գանձեր:

Այժմ սիրելի պրոֆեսորը մեր սեղանին է դրել իր մի այլ գանձատուփ-ձեռագիր, այս անգամ մի այլ մեծ դասակարգիչ՝ Հովհաննես Շիրազի հարուստ կյանքի մեզ անհայտ ու բացառիկ արժեքավոր դրվագներով: Ասեմ, որ պատմական որևէ երևույթի, դասական որևէ անհատի անցած-գնացած կյանքի տեղեկություններն ամենից առաջ ու ամենից վավերական տալիս են նրանց ժամանակակիցները:

Պրոֆ. Խ. Բարսեղյանի այս գրառումները՝ Շիրազի կյանքից, մտերիմ ընկերոջ, ցավակցի ու գործակցի պարզ, անկեղծ, կատարյալ նշմարիտ տեղեկություններ են՝ առանց

մտտցածին հորինումների: Դրանք գրի են առնվել հենց «տախ» պահերին, այսինքն՝ հենց ծագման ակնթարթում, առտեց պանունարանության ու արհեստական գունավորման: Այնքան իմաստուն ու գունափայլ են Շիրազի կյանքի պահերը, որ ոչ մի հավելումի կարիք չունեն:

Նախ մենք անսնում ենք մինչպատերազմյան Շիրազին՝ ջոհել Շիրազին, ջահելության հզոր փոթորիկների. ապա՝ հենց պատերազմի տարիների սֆանշելի երևույթը՝ Շիրազի հետ համատեղ աշխատանքի բերումով, համընդհանուր ցավի շիրազյան ապրումներով, հողթանակի նկատմամբ շիրազյան անասան հավատով:

Անհանգիստ ու բուռն է եղել Շիրազի, շիրազյան պոեզիայի կյանքը նաև պատերազմից հետո: Թուրսու ենք վկա դրան: Մեծ քառաստեղծը ցնծում է մեր երկրի համաշխարհային նշանակությամբ տարած հաղթանակով, վշաանում իր մայր ժողովրդի հաաված-հաաված երտզանքների անկասար մնացած մտսիռամեծ ցավերով: Սակայն միշտ լավասես, երբեք չհուսահատվող:

Խ. Թարսեղյանի այս գրառումներում մենք անսնում ենք նաև Շիրազին հոգեհարազատ այլ մեծերի՝ Ավեսաի Իսահակյան, Գուրգեն Մահարի, Ցոլակ Ամերիկյան, Ժան էլոյան ու էլի: Ապա ականատես ենք լինում գիրք ապագրելու շիրազյան առօրյա առապանքներին, Շիրազի նկատմամբ եղած ժողովրդական մեծ սիրո, պետական բարի հոգատարություն պատկերների ու վկայությունների:

Անչափելի արժեքներ են Շիրազի ստեղծագործական այն մասունքները, որ մնացել են Խիկար Թարսեղյանի մոտ՝ անտիպ ու անհայտ: Լավագիտակ լինելով շիրազյան փոթորկոտ, բուռն, երբեմն վերուվարող ներտշխարհին, Խիկար Թարսեղյանը հմտորեն ստեղծել է Շիրազի կերպարը, որ շնորհակալ, ազնիվ ու մեծ գործ է: Հավատացած եմ, որ այս գիրքը բարի նանապարհ կունենա դեպի բնթերցողի, ժողովրդի սիրար:

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

Մայիս, 1986

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ՇԻՐԱԶԸ

Գրավոր Շիրազը ուղեկցելու է բոլոր հայ սերունդներին... Ժամանակակիցների պարտքն է՝ որքան հնարավոր է պահպանել բանավոր Շիրազին... Պետք է ամեն ինչ անել գոնե փրկելու համար այն, ինչ տակավին մնում է մարդկանց հիշողության մեջ...

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Հովհաննես Շիրազ ... բնդմիշտ անմոռաց ու անզուգական անուն, հորդարուխ ու նշմարիտ մեծ բանաստեղծ: Շուրջ կես դար հավատարիմ հայ բանաստեղծության հետզույն ավանդույթներին՝ Գրիգոր Նարեկացու, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի հայրենասիրական բնաբանի դոդանջներին, Հովհաննես Շիրազը արգասավորեց հայ բանաստեղծությունը միանգամայն նոր արժեքներով: Նա եկավ բանաստեղծների, երաժիշտների օրումն Շիրակից: Իջավ, ինչպես ինքն է գրել՝ մանուշակներ ոտներին ու շուշաններ ձեռներին, եկավ որպես մայր բնության, հարազատ մոր և մայր-հայրենիքի հիմներգու: Նա երիտառության կուտֆն էր՝ մտսիսված հայ պոեզիայի անդառուտում: Շիրազը կենդանի լեզենդ էր, ֆենոմեն, մարդկային մեծ սիրո բնաբերակ, հայ ժողովրդի պատմության նշմարտացի ու ազնիվ պատմագիր, անմահության համփորդ: Մարդը՝ ինքը ոնն է: Շիրազի ողջ ստեղծագործությունը ինքը՝ Շիրազն է, ինքն իր մեջ այրվող, համամարդկային ու մարդասիրական, խաղաղության ու ազգերի երջանկության երազանքին ի խնդիր:

Շիրազն Հայաստանն է, Հայասանը՝ Շիրազ ...

Գործի բերումով երկար տարիներ ընկերություն ու բարեկամություն եմ արել Հովհաննես Շիրազի հետ: Գրի եմ անել նրա հետ ունեցած գրույցները, հանդիպումներից ստացած տպավորությունները, պահել ինձ հասցեագրված նամակները, գրությունները, ընծայագրերը, ինչպես և որոշ բանաստեղծությունների ինքնագրերը՝ իբրև մասունքներ, որոնք և ներկայացնում եմ ընթերցողին:

Հեղինակ

Մայիս, 1986

* * *

1986-ին սույն հուշանովելների և մասունքների գիրքը ճինգ հազար օրինակ տպաֆանակով լույս տեսավ և արագ սպառվեց: Ընթերցողները, Շիրազի ընկերներն ու նրա պոեզիայի երկրպագուները շեմորեն ընդունեցին գրքի լույս աշխարհ գալը: Մեզ ուղղված նամակներում շնորհակալություն են հայտնում «Ազնիվ մտահղացման, Շիրազին վայել գիրք ստեղծելու», «Նրա բնավորության առանձին գծերը ու գաղտնիքները բացահայտելու, մասունքները փրկելու համար»: Նրանք միաժամանակ ցանկություն են հայտնել շարունակել աշխատանքը և գիրքը նորից հրատարակել: Այն ժամանակ հնարավոր չէր բոլոր նյութերը հրապարակել: Ընթերցողներից ստացա շիրազյան շատ մասունքներ՝ նամակներ, անտիպ բանաստեղծություններ, լուսանկարներ, որոնք մեր ձեռքի տակ եղած անտիպ նյութերի հետ միասին հարստացրին գիրքը:

«Շիրազ: Հուշ-նովելներ, թանկագին մասունքներ» գրքի «Նամականի» բաժնի վավերագրերը, բանաստեղծություններն արժեքավոր նյութ են պտրունակում հաննարեղ պոետի կենսապատման համար: Իսկ ընթերցողներից ստացված անտիպ բանաստեղծությունները, տարբերակները, ընծայագրերը Շիրազի ժողովրդայնության առհավատչյան են:

Այո, որքան հնարավոր է պետք է պահպանել բանավոր Շիրազին, հավաքել և սերունդներին տալ նրա սփռված գրական ժառանգությունը:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց նյութերով օգնել են սույն գրքի հրատարակությանը:

ԽԻԿԱՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ

5 դեկտեմբերի, 1987

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՁԵՐ ՍԵՐՆԴԻ ՊՈՆՏԸ ԾՆՎԵՑ ...

22 սեպտեմբերի, 1935:

Մեր «Չանգեզուր» գրական խմբակի այսօրվա խոսակցության նյութը Հովհաննես Շիրազն է: Խմբակի ղեկավար, հայ գրականության դասաաու Միկիա Հակոբյանն ասաց. «Ձեր սերնդի պոետը ծնվեց. Հովհաննես Շիրազը մեծ Եղիշե Չարենցի սանդղագործական ժառանգորդն է»: Եվ նա ամունֆողին հատուկ վարպետությամբ արտասանեց.

*Մանուշակներ ոտքերիս ու
շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու
գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը
աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից
իջա ես քաղաք...:*

Սա ժամանակի ներբողական աղմուկների մեջ ֆնարական զուլալ ղողանջ է:

«Գարնանամուտը» կարդացինք ու տեսանք, որ Հովհաննես Շիրազը խորհրդահայ պոեզիային հաղորդում է նոր քարմություն:

Մեր գրական խմբակի անունից ջերմ նամակ գրեցինք Շիրազին, հրավիրեցինք Չանգեզուր:

Հուլիս, 1937:

«Խորհրդային Հայաստան» թերթում գրական աշխատող եմ: Պարաստվում եմ մանկավարժական ինստիտուտի ընդունելության ֆենություններին: Երևանյան շոգ ամառ է: Մեր խմբագրությունը գտնվում է Գեունի (Կնունյանց) փողոցում: Ապակեպատ փոփրիկ սենյակներում տոթ է: Բակում՝ կանաչ չինարի մեծ ծառի տակ, բացօթյա խորտկարան կա: Փայտածուխը մանդալում մարմանդ կայծկլտում է: Մուշոն, գարեջրի մեծ բաժակը պարպելով, մոնչում է, ինչ-որ բան ասում:

Հայկական մեծ ցեղասպանության օրերին թուրք ասկյարի սվիներ խոցել է նրան, անդամալույծ դարձրել: Մի ֆաղաֆ, մի Մուշո: Բոլորը նանաչում են նրան, բայց ֆչերը գիտեն նրա ողբերգական կյանքի պատմությունը:

Խմբագրության միջանցքում մեկը ջրով լի կուծր ձեռքին բացականչում է.

— Զո՛ւր, ջո՛ւր, պուլպուլակի սառը ջո՛ւր ...

Հրաչյա Միրզոյանն ասում է.

— Մեր Շիրազն է, երիտասարդ աադանդավոր բանաստեղծը, մանկությունն է հիշել:

Զրավանառ երեխայից Շիրազը վերցրել է կուլան և մտել խմբագրություն:

— Զո՛ւր, ջո՛ւր, պուլպուլակի սառը ջո՛ւր ...

Խմբագրության աշխատողները դուրս են եկել ոենյակներից և ուրախանում են: Մոտեցա Հրաչյային և խնդրեցի Շիրազի հետ ծանոթացնել: Երբ Շիրազն ավտրտեց իր կատակախաղը, մտավ գրականության և արվեստի բաժին՝ Հրաչյա Քոչուրի մոտ ...

— Մո՛, Օնիկ, մանկությունդ հիշեցիր, — ասաց Քոչուրը: — Մոռացիր, այլևս ջրավանառ չես, բանաստե՛ղծ ես, բանաստեղծ, էլ Օնիկ Կարապետյանը չես, էլ Օվոն չես, այլ Հովհաննես Շիրազը ...

Առաջին անգամ ես տեսա Շիրազին, ծանոթացա նրա հետ: Ասացի, որ բանաստեղծություններ եմ գրում:

— Իսկ գրական անունդ ի՞նչըիս է:

— Թախ ...

Շիրազը ծիծաղեց.

— Թախ անունով երաժիշտ լսել եմ, բայց բանաստեղծ՝
ոչ ... Իսկ ջութ ծախե՞լ ես:

— Ո՛չ:

— Ափսո՞ս:

ՇԻՐԱԶԻՑ ԵՍ ԱԶԴՎԵԼ

26 ապրիլի, 1940:

Բանաստեղծություններ եմ գրում: Տեղս ամոթիաժ ներկայացրի Ավետիք Իսահակյանին: Վարպետին արդեն ծանոթ եմ: Խոսեց ծանր, մի անսակ ուրախ:

— Մի ֆանիսթ քարձրածայն կարդա:

Կարդում եմ: Թերթից տառերը կտրտել և միացրել եմ, այնպես, որ տպագրի տպավորություն է թաղնում, իսկ տպաֆանակը, հասկանալի է, մեկ օրինակ է: Վարպետը լսե՛ց, լսե՛ց և ասաց.

— Փիլիսոփայությունը շատ է, սերը թեև պահանջում է փիլիսոփայել, բայց հուզական-ֆնարական պիտի լինի: Աշխատիր քիչ փիլիսոփայել: Հաջող տողեր կան: Մեկ ուրիշն էլ կարդա:

Կարդացի մեկն էլ, որ ֆայլերգ էր: Ժպտաց:

— Հովհաննես Շիրազից ես ազդվել: Վատ չէ: Քայլերգեր քիչ ունենի: Գրիր: Այժմ շատ սկսնակ և երիտասարդ բանաստեղծներ հետևում են Շիրազին: Շիրազը տաղանդավոր է և մեծ ապագա է խոստանում:

ՉԱՓԱԾՈ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիս, 1941:

«Սովետական Հայաստան» թերթի նոր խմբագիրը՝ Հովհաննես Մամիկոնյանը, մի ֆանի օրվա ընթացքում գրական աշխատանքի ընդունեց երիտասարդ մտավորականներին՝ Սու-

րեն Վահունուն, Սողամոն Տարոնցուն, Քրիստափոր Քափալցյանին, Գրիգոր Գրիգորյանին, Եղիշե Պետրոսյանին, Հովհաննես Շիրազին, Գուրգեն Ավետիսյանին, Արև Զուրաբյանին:

Շիրազը գրականությամբ բաժնում է աշխատում, բայց նրան հանձնարարվել է գրել թղթակցություններ: Գրում է, բայց ինչ էլ որ գրում է, չափածո է դուրս գալիս՝ տոտնց տնունների, թվերի և տոկոսների:

— Ես կմտխոփը կսարքեմ,— տսում է նա բաժնի վարիչին,— իսկ դու լցրու, սյուններն իմն են, ամուր են:

Հետո խոժոռվելով տվելացնում է,— բունյաթս տվազ չիմանաս ...

Բաժնի վարիչն իրենն է պնդում՝ մեզ պետք է ոչ թե բանաստեղծություն, այլ թղթակցություն:

— Արձակ չեմ կրնա գրե,— տսում է Շիրազը:

«Հ. Կարապետյան» ստորագրությամբ լույս տեսան նրա մի քանի թղթակցությունները, որոնք, այնուամենայնիվ, պահպանել էին չափածոյի հետքերը: Խմբագիրը գտավ ելք՝ Շիրազին գրական խորհրդատու նշանակեց ... Նա արդեն կարդում և օգնում է բանաստեղծներին, տպագրում իր ստեղծագործությունները:

ՊԱՏԵՐԱԶՄ

22 հունիսի, 1941:

Քաղաքը նոր էր արթնացել կիրակնօրյա ֆնից: Արովյան փողոցով բարձրանում եմ վեր: Առավոտ է: Գնում եմ Ալ. Մյասնիկյանի տնվան հանրային գրադարան: Պատրաստվում եմ պետական ֆննությունների: Տրամվայը հասավ կանգառ: Մի տղամարդ խիստ այլայլված, բեկբեկուն ձայնով գոչեց.

— Ֆաշիստական Գերմանիան հարձակվել է մեր երկրի վրա ...

Մեկը բարկացած առաց.

— Ձայնդ կտրի՛ր, պրովոկատոր ...

Վերադարձա խմբագրություն: Շտապ հավաքվեցին աշխատակիցները, եկավ և Շիրազը ... Ռադիոհաղորդումը լսելուց հետո հանձնարարություն ստացանք մեկնել հիմնարկ-ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ՝ աշխատավորության հակաֆաշիստական միտինգները լուսաբանելու: Շիրազը խմբագրին խնդրեց, որ ես ու ինքը միասին գնանք երկաթուղայիներին միտինգին մասնակցելու: Համաձայնվեց: Հետո ինձ ասաց.

— Դու գնա միտինգի, իսկ ես ուզում եմ մնալ այստեղ և շափածո խոսք գրել:

Մնաց: Մի քանի ժամ անց նա ներկայացրեց «Նզովկ» խորագրով բանաստեղծությունը, որը տպագրվեց թերթի հունիսի 23-ի համարում:

Թերթի գրական աշխատող Քր. Թափալցյանն ասաց.

— Շիրազ, Հայնեից ցասումով ես գրել:

— Քրիստ, եթե Հայնեն այժմ ապրեր և տեսներ ֆաշիստական Գերմանիայի ուխտազրծությունը, ինձնից ավելի ցասումով կգրեր և երիցս կանիծեր Հիտլերին, — ասաց Շիրազը:

Քնարերգու բանաստեղծը միանգամից մարտիկ դարձավ, ուղիղ փնար հնչեցրեց: Իբրև բնաբան նա վերցրել էր Հայնրիխ Հայնեի տողերը.

Գերմանիա, մենք քեզ պատանք ենք գործում...

Գործում ենք, գործում...

Ահավաստիկ այսպես, այս կրակե խոսքերով,

Այս երգով էր երեկ քեզ նշովում անմահն,

Ժողովրդի որդին, որին ես պարծանքով

Համարում եմ հոգուս եղբայրն հավերժական,

Բանաստեղծի աչքով իր արծվատես ու ջինջ

Թափառական մի վեհ մարգարեի նման,

Կանխատեսել է նա ու անեծքով անջինջ

Նշովել է նա քեզ, երկիր ֆաշիստական ...

Ապրիլ, 1942:

Ղրիմի ռազմանականում գոնվել է գնդապետ Աիմոն Զախիյանը, Բախվի հերոսական կոմունայի մասնակիցը, հայկական դիվիզիայի ֆաջարի հրամանատարը: Անյունը Ղրիմից տեղափոխել են Հայաստան: Ազատող Երևանը ապրիլի 5-ին հրաժեշտ տվեց հայ դյուցազնին: Ավետիք Իսահակյանը բռնաստեղծություն է նվիրել նրա հիշատակին: Բանաստեղծություն է գրել և Շիրազը... Ընդամենը ութ տող՝

*Ոչ ոք, արցունքս ոչ ոք չտեսավ,
Որ սրտիս աչքից սրտիս մեջ ընկավ,—
Բայց ինչո՞ւ հեծծեմ, երբ երկրի վրա
Փառքի դափնի է շիրիմը նրա,
Երբ աճեն տարի գարունը կգա
Եվ կնորոգի ծաղկունքը նրա,—
Զի հերոսության վայրկյանը անհուն՝
Կամուրջ է՝ դեպի մի անմահություն:*

ԲԱՆԱՍՏԵՂՄԻ ԶԱՅՆԸ

Մայիս, 1942:

Երևանում վաշտի ֆաղդեկ եմ: Իմ խնդրանքով, մայիսի 15-ին Հովհաննես Շիրազը, որ աշխատում է «Սովետական Հայաստան» թերթում, եկավ մեզ մոտ, հանդիպեց զինվորների հետ, արտասանեց իր մտառաշունչ բռնաստեղծություններից: Նա մի ժողովածու է հրատարակել՝ «Բռնաստեղծի ձայնը» խորագրով: Մեր զինվորները բերանացի արին «Էփուպրոմար»:

*Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Գուր հողմերի պես խուժեցիք վայրագ:*

*Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ ...*

Շիրազը «սիրտը տագնապի գանգ դարձրած» նշավա-
կում է ֆաշիզմը, նրա բարբարոսությունները, պայքարի է
կոչում՝

*Հե՛յ, ոտքի ելե՛ք, ելե՛ք ամենհի,
Հյուսիս, արևելք,
Սրարշավ ելե՛ք,
Ես կհամբուրեմ ոտքերն իսկ մահի՝
Բայց շարին ներել՝ չեմ կարող երբեք:*

Պատերազմը մարտական շունչ է հաղորդել Շիրազի քր-
նարին: Զինվորների խնդրանքով նա դրվագներ պատմեց
իր կյանքից, որոնք տարիներ հետո գրի է առել «Մի փե-
տուր իմ արժիվ կյանքից» խորագրով:

Նա սիրով և կարոտով է հիշում իր մանկությունը, որ
անց է կացրել Գյումրիչայի ձորում և այդտեղ էլ կորցրել:
«Քանի՛-ֆանի՛ անգամ դասերս թողնում և փախչում էի
Գյումրիչայի ձորերը,— ասում է նա,— որտեղ անցել էր իմ
մանկությունը, կարծես սիրտս ուզում էր պատանեկությունս
էլ այն ձորերում կորցնել ... մի քան, որ պիտի կորցնեմ ...
թող այնտեղ կորցնեմ, ուր կորցրել էր մանկությունս, որ երբ
առիթ լինեի փնտրել մանկությունս, փնտրեի և պատանեկու-
թյունս ... Իպրոցական տարիներս թեև կես կուշտ, կես ֆաղ-
ցած էին, բայց կախարդական էին ու երագական: Որքան
աղոթեմ, որ ետ գան ... Չնայած այս բալուրին՝ ամենքը մոռս
ասում էին, որ ես լավ մարդ կդառնամ: Եվ դարձա»:

Այդ օրը գիմեկով ինձ՝ նա առաց. «Հրամայիր գինվորա-
կան հագուստ տան, մեր գինկոմը ինձ բանակ չի ուղարկում,
առողջությունս թույլ է, բայց ձեր մեջ գտա ուժերս... Հրա-
մայիր գինվորական հագուստ տան՝ մեամ ձեզ մոտ...»

13 ապրիլի, 1944:

Գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով 1943-ի հոկտեմբերին մեր ՑԾ-րդ հայկական հրաձգայի՛ն զիվիզիան մարտերում ցուցաբերած արիության համար կոչվեց Թամանյան: Գրեցի «Թամանցիների ֆայերզը», որը տպագրվեց «Կարմիր զինվոր», «Առաջ, հանուն հայրենիքի» զինվորական թերթերում, «Բանվորագյուղացիական կարմիր քանակի ագիտատուրի բլոկնոտ» ամսագրում:

Հովհ. Շիրազը ծանոթանալով ֆայերզի տեքստին, խըմբագրել է և ավելի հղկել:

«Թամանցիների ֆայերզը» շիրազյան խմբագրությամբ լույս տեսավ «Սովետական Հայաստան» թերթի ապրիլի 14-ի համարում:

— Լա՛վ եմ մշակել, — հարցրեց նա:

— Հրաշալի է, թամանցիների սխրանքները ոգևորիչ են, — ասացի նրան: — Շիրազ, բանաստեղծություններդ ֆազարի զինվորների նման ռազմանակատում կովում են ֆաշիզմի դեմ, հայ ռազմիկները քեզ շատ են սիրում:

Նա մի ֆիչ մտածեց, խորհեց և իրեն հատուկ ոգեվորությամբ արտասանեց.

*Իմ երազի մեջ՝ կանաչ դաշտի մեջ
Կոիվն անցել էր, մաճկալ էի ես,
Կանաչ դաշտի մեջ, դալար դաշտի մեջ
Խոփիս տակ ընկավ մանուշակ մի հեզ,
Կանաչ դաշտի մեջ, դալար դաշտի մեջ
Կարծես թե սիրտս պոկեցին կրծքես ...*

Արտասանեց և ասաց.

— Մի բանաստեղծություն էլ պիտի նվիրեմ գեներալ Նվեր Սաֆարյանին, բոլորը ասում են, թե նա իսկական վասպուրականցի է, ֆաշիզորով, գորավոր Անդրանիկի նրման անվախ ու մարդասեր ...

Մայիս, 1944:

«Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունում գրուցում եմ Շիրազի հետ: Ռազմահակատային ամեն մի դրվագ, որ պատմում եմ, լսում և հուզվում է, հայ թաման-ցիների սխրանքներով ոգևորվում: Խոսք բացվեց Հունան Ավետիսյանի մարտական ֆաշագործության մասին: Պատմում եմ, ինչ որ գիտեմ:

— Միշտ այդպես ֆաշակորով են եղել զանգեզուրցիները, — ասաց Շիրազը, — պոեմ պիտի գրեմ Հունանին նվիրված:

Մի պան լոեց և հարցրեց.

— Իսկ ի՞նչ գիտես Գառնիկի մասին:

— Ո՞ր Գառնիկի:

— Գառնիկ Ոսկանյանի, Հմայակ Սիրասի եղբոր, մոռացե՞լ ես, թե նա իմ «Արևի երկիրը» գրքի մասին ի՞նչ լավ գրախոսություն գրեց «Սովետական Հայաստան» թերթում:

— Չեմ մոռացել: Անցյալ տարվա աշնանը Նովորոսիյայի մատույցներում դաշտային մի հոսպիտալում գրույցի ժամանակ իմացա, որ Գառնիկը ծանր վիրավորվել է, փոխադրվել հոսպիտալ, այստեղ ֆաշիստական ավիացիայի որմբակոծությունից զոհվել է ...

Շիրազը հեկեկաց, լաց եղավ ...

— Լսել էի, բայց հավատա չէր գալիս: Նրա հիշատակին բանաստեղծություն եմ նվիրել:

Կարգում է:

ՍՊԱՍՈՒՄ

Գ-ի հիշատակին

Կտրիճները տունդ դարձան,
Նրանց առջև թող լինի

Արարաւոր ճօի սեղան,

Ու Արազը՝ հին գինի:

Կտրիճները տուն դարձան,

Ա՛խ, թող քեզ էլ դարձ լինի,

Գիրկս լինի քեզ սեղան

Ու համբույրս՝ քեզ գինի:

Կտրիճները տուն դարձան,

Մեռնեմ դարձի ճամփեքին,

Դու էլ դարձիր, իմ թառլան,

Աչքս մնաց քո ճամփին:

Կտրիճները տուն դարձան,

Դու էլ դարձիր, իմ գարուն,

Ա՛խ, դու շես գա հավիտյան,

Ա՛խ, դու մորդ գլխի ձյան:

— Այս տարվա փետրվարին եմ գրել և ուղարկել Հրաշյա Քոչարին՝ ռազմականագետային թերթում հրատարակելու համար: Քոչարը եամակով խնդրել էր, որ աշխատակցեմ բանակային թերթին: Ուրիշ բանաստեղծություններ էլ եմ ուղարկել Հր. Քոչարին: Դրանք բնարական-հայրենասիրական երգեր են:

Տասնամյակներ անց, 1985-ին «Սովետական Հայաստան» ամսագրում կարգացի Հովհ. Շիրազի բանաստեղծությունների փունջը, որը տպագրության է պատրաստել Արփիկ Ավետիսյանը: Հրատարակված է «Սպասումը»: Խորագրի վերև Շիրազը գրել է. «Քոչար. Ահա քեզ մի փունջ, Եթե հավանես, տպիր, եթե ոչ՝ այրիր: Հ. Շիրազ: Քարեկի Հակոբին (խոսքը Հակոբ Խանջյանի մասին է. — Խ. Բ.):

Ստորև մեջ ենք բերում այդ բանաստեղծություններից մեկը.

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԼՈՒՍԱԹՈՎ

Ես լուսաբացն եմ սիրում լուսածով,

Որ միշտ բացվում է պայքարի հույսով:

Լուսաբացին եմ ես որոտացնել,
 Լոնել մայրական քաղցր մեղեդին:
 Լուսաբացին եմ աչքերս բացել՝
 Աշխարհի շարն ու բարին հասկացել:
 Լուսաբացին եմ իմ երգը հյուսում,
 Ուր թոթովում է արևի լեզուն:
 Լուսաբացին եմ ես ծնվել, ու թող
 Այս լուսաբացի համար դառնամ հող:

Արփիկ Ավետիսյանը որոշ կրճատումներով հրատարակել է նաև Շիրազի՝ Հր. Քոչարին գրած երկու նամակ, որոնք որոշակի նշանակություն ունեն Շիրազի և Քոչարի մատերմական կապերի լուստրանման գործում:

ՍԻՐԵԼԻ ՔՈՉԱՐ

Ստացա նամակդ, սրտիս դատարկ գավաթը լցվեց գինով, թեև նորից տեսա խորունկ ժպիտդ՝ տողերիդ տակից: Դու խոսումսդ շես կատարել: Հիշիւ «Երգերի» Գ. Գիրք: Քո նաշակը վսեմ է, եթե բացած լինես տնկեղծությանդ բալոր լուսավոր առագաստները, իսկ եթե... արի չվիճենք հիմա... Դու ախպես եղիր և դա իմ ամենից վսեմ խնդությունը կլինի, կուզենայի շնորհավորել Կարմիր աստղի շքանշանդ. դու եղիր արժան... և այդ կլինի... Քո գրական գետը դեռ շատ փառքի դաշտեր պիտի ծաղկեցնի ոտքիդ ասկ... Դու հայրենիքի երգիչ և հայրենիքի զինվոր, թող ամեն ֆայլին գարնան շրթունքը ծարավի, թող եղևնանա զինվորի ու երգչի դափնիդ հավերժորեն գմրուխասացած, ես քո երգի և գեների վնիս ու խանարի եղբայրն եմ...

ՍԻՐԵԼԻ ՔՈՉԱՐ

Ստացա նամակդ, մեծ՝ ու անաղաւտ խիճողով կաշխատակցեմ ձեր՝ ռազմի թերթին, ձեր հրավերք սրտագին է:

Հույսով եմ, որ իմ ֆնարի ձայնը կհասցնես իմ հայրենի, իմ կարոտալի, ֆաջարժիվ կարին ընկերների ականջին: Սիրտըս կուզեի դնել երգիս մեջ, բայց առայժմ հիվանդ է սիրտըս, իսկ ուղեգրի համար երգի մեջ պիտի շատ հրավառ սիրտ բարախի: Շուտով կգրեմ քեզ համար հաղթանակի երգեր և կուղարկեմ քեզ... Հուսով եմ, ձեր հրավերը ծիլեր կաա:

Համբուրի Զակոբին (խոսքը Զակոբ Խանջյանի մասին է, — Խ. Բ.)

Ձմեռ, Երևան, Հովհաննես Շիրազ:

Հովհաննես Շիրազի յուրաքանչյուր տողը բանաստեղծություն է, ֆնարական: Այսպես են և Հր. Քոչարին գրած այդ նամակները:

ՀԱՂԹԱՆԱԿ

9 մայիսի, 1945:

Հաղթանակ: Խորհրդային զորքերը հաղթարշավով մտել են Բեռլին: Ֆաշիստական Գերմանիան պարտվել է: Բեռլին են մտել նաև 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի ֆաջարի ուղեգրիները՝ լեզենդար գեներալ Նվեր Սաֆարյանի հրամանաատարությամբ: Ամենուրեք առն, ցնծություն է: Տոն է և մեր խմբագրությունում: «Սովետական Հայաստան» թերթի մայիսամեկյան համարում լույս տեսավ Հովհաննես Շիրազի «Հաղթանակ» բանաստեղծությունը, իսկ հետո՝ նշանավոր ներքողը:

Մայիսի 10-ին Շիրազը մտավ կուսբյուրո, որի ֆուրուդարն էի, և ասաց.

— Պատերազմը հաղթանակով ավարտվեց, խմբագիր ընկեր Մամիկոնյանին ասա, թող ինձ զորացրի, գրական աշխատողի պաշտոնից ազատի, ուղեգրից ընկերներս զորացրվում գալիս են, հարկավոր է նրանց աշխատանքի տեղավորել:

— Իսկ դու՞:

— Ես բանաստեղծություններ կգրեմ, կապրեմ՝ ընթանիս մեծ շէ: Հրապարակախոս եմ դարձել, լիրիկան տու-

ծում է: Լույս են աեսել «Բանաստեղծի ձայնը», «Երգերի գիրք» ժողովածուներս, հարյուրավոր բանաստեղծություններ, շատ հոդվածներ: Վատ չեմ կովել, այժմ ուզում եմ սիրո ֆնարը հնչեցնել: Մորս պես ֆաղցր ու ազնիվ, սրբազան հայրենիքը որախս մեջ է: Հիշիր հայրենիքին ուղղված խոսքս:

*Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց:*

Նոր ժողովածու եմ պատրաստում, խմբագիրը Ռուբեն Զարյանն է:

— Ռազմի պոետները, ինչպե՞տ մարշալները, շեն գորացրվում, մեռնում են շարժում, Շիրազ ...

Այնուհետև ասաց.

— Իմ առաջին բանաստեղծությունը տպագրվել է 1931 թվականին, Լենինականի «Մանածագործ» թերթում՝ «Դու հերոս ես, վե՛ն հերոս» խորագրով, որը նվիրված էր հարվածային ջուլհակունիներին: Առաջավոր կուլանտեսական Գլխի Աֆրիկյանի մասին էլ եմ այդ ժամանակ բանաստեղծություն գրել:

— Ի՞նչ լավ հիշողություն ունես:

— Հիշողությունս մորիցն եմ ժառանգել՝ ոսկե բլազուկ է: Զինվորական կոչումդ մայրն է, չե՞:

— Այո՛:

— Իսկ ես ի՞նչ կոչում ունեմ:

— Պոեզիայի մարշալի:

— Բա ե՞րբ են ինձ գեներալիսիմուսի կոչում շնորհելու ... Դե՛, ասա մարշալ էլ չեմ էլի՛, Հովհաննես Շիրազ եմ:

— Պոետները միշտ ձգտում են դեպի Պատնառ: Դու խաղաղության մարշալ ես ...

ԳԻՐՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՐՈ

Ապրիլ, 1952:

Մի գրույցի ժամանակ Շիրազն ասաց.

— Պաշտոնդ մենձբցել է, բնկերոջդ մոռացել ես: Աշից-
ծախից ինձ ֆենադատում են, ինչո՞ւ չես պաշտպանում, ին-
չո՞ւ չես օգնում գրքերս հրատարակվեն:

— Իսկ ո՞վ ասաց, թե մոռացել եմ, քո լիրիկան կմո-
ռացվի՞:

— Լիրիկան անմահ է, քանի դեռ մարդը կա: Ասեմ,
լսի՛ր.

*Երբեք չի մեռնի քնքուշ լիրիկան,
Այդ ո՞ր գարունն է, որ վարդ չի բերել,
Այն ո՞վ է, որ իր սիրած աղջկան
Չի տենչում թեկուզ երգով համբուրել ...*

Մի տարի անաչ եմ գրել, 1951-ին, ա՛խր, ի՞նչ վաս բան
կա, ու եթե իրավ մարդը ֆեֆշացել է, ինչպե՞ս կտրոզ է մեռ-
նել լիրիկան.

*Վիրավոր գինվոր գու իմ լիրիկա՝
Ես քո արյունից ելած մանուշակ,
Ես՝ լիրիկայի հավերժի գուշակ ...*

Ասա իմանամ, ե՞րբ պիտի մի մենձ հաառով ֆնարա-
կան ստեղծագործություններս հրատարակվեն:

— Պլանավորված են «Քնար Հայաստանի» խորագրով
գրքերդ:

— Հաստա՛տ:

— Այո՛:

— Ուրեմն ֆեզ տված նախասինֆս եա եմ վերցնում:

Ես ասացի, թե «Գիրք խաղաղության և սիրո» ընարա-
նին շիրագյան հնչեղություն ունի: Նա մոայլվեց.

— Միայն այդֆա՞նր: Հնչեղությունը ի՞նչ է որ, ֆիչ է,
ասա հայ պոեզիայի ավանդապաշտություն ունի, նարեկացու
և Խահակյանի ֆնարական աղբյուրից է հոսում ... Այն դա-
րը, որ սուրբ լիրիկա չունի, թոչունի ավեր բույն է, ես մա-
գե կամուրջներով եմ անցկացրել մեր լիրիկան: Իմացի՛ր,
վարդ ու սոխակի դարը չի անցկի ... Հետո, ֆանի՞ անգամ
կրկնեմ.

Բոլոր դարերն իմ հոգում՝
Ես միշտ հեռան եմ իմ դարի,
Բոլոր սարերն իմ երգում՝
Ես պոետն եմ իմ դարի:

- Հրաչայի՛ է...
- Այդպես է, որ կա: Հըբբ ...

«ԻՄ ԿՅԱՆՔԻ ՎԵՊԸ»

Հոկտեմբեր, 1952:

Ընկերներիցս մեկն ասաց.

— Դու՛մ գիտե՞՛ք, որ Շիրազը մեզ մտտ՝ Լենինականում է:

— Ո՛չ: Չգիտեմ:

— Բա՛, ինչպե՞ս է, որ ձեզ չի զանգահարել: Ի՛ր ֆուշ
ասանն է:

Քիչ անց խմբագրություն եկավ Շիրազի մանկության
ընկերներից մեկը: Նա ասաց, թե Շիրազը դրսում սպասում
է: Հանդիպեցինք: Շիրազը, թե՛

— Ընտանեկան գործով եմ եկել, Գոհար ֆուշս մայրա-
քույրը վայելեցի, վերադառնում եմ Երևան, ուզեցի Լեզ
անանել, խմբագրություն որ մտնեմ, տղաների ձեռքից շեմ
պրծնի: Մի փոքր խնդրանք ունեմ, ընկերոջս լավ նայիր: Նա
զոհ է, բայց լավ կլինի աչքդ ավելի ֆազը պահես վրան,
երեխաներ շատ ունի, գիտես չէ՞, որ ուրբանոցային ընկերս
է: Մի Լորիկ էլ իմ այս ընկերն է, այն տարբերությամբ, որ
Արփաշայում չի խեղդվել:

— Ինչ որ հարկավոր է՝ կանեմ,— ասացի ես:— Հի-
մա արի գնանք նախանաչենք, և նոր նանապարհո՞ղ շարու-
նակիր:

Գնացինք «Ինտուրիստ» նաշարան: Տնօրենը բանակի
ընկերներիցս է, մեր նրեառահային մարտկոցի կոմիսարը՝
Աշոա Քաթայանը: Տեսնելովվրմեզ, ուրախացավ: Սկզբում երե-
նով էինք, հետո եկան և մեզ միացան Ժան էլոյանը, Յուլիկ

Ամերիկյանը, Լեոն Զոհրաբյանը, Մուշեղ Նարյանը և էլի ուրիշներ: Գնալով գրույցն աշխուժացավ: Ուշագրության կենտրոնում Շիրազն է, Շիրակի նշանավոր գավախը:

— Արամ Գրիգորյանը ձեր մասին վեպ էր գրում, ի՞նչ եղավ,— բռնեք ծայնով հարցնում է Ցուլակ Ամերիկյանը:— «Բանվորում» նա գրել էր, թե աշխատում է «Պոետի կյանք» գրքի վրա:

— Արամը Մոսկվայում սովորում է,— ասաց Շիրազը,— նյութեր է հավաքել, որքան գիտեմ, իմ մանկության և պատանեկության տարիների մասին է գրում: Բայց իմ կյանքի վեպը միայն ես կարող եմ գրել: Ճիշտ է, արձակ շեմ փորձել, սակայն, մի՞թե իմ երգերի գիրքը, իմ կյանքի վեպը չէ, իմ կյանքի գիրքը: Ուրիշ վեպ պետք չէ: Իմ ժողովրդի պատմությունը, Մասիսը, Հայաստանը, հայ ժողովուրդը, իմ ստեղծագործությունները՝ սրանք են իմ կենսապատումը:

*Եվ հրաշք է, հրաշք, որ կամ,
Շատ նման եմ մի բուռ երկրիս,
Քանի անգամ
Բախտը դժկամ
Խեղդել կուզեր՝ շոքած կրծքիս.
Բայց հիմա էլ նախանձողից
Հախոցվում է իմ սիրտը հեզ,—
Քանզի մի որբ ջուր ծախողից
Դարձա հենց այն՝ ինչ որ գիտեք ...*

— Ահա և ձեզ իմ կյանքի վեպը,— շարունակեց նա.— Ուրիշ վեպ պետք չէ: Ժողովուրդն է իմ վեպը հյուսում:

Ժան էլոյանը լենինականցիների հորինած նոր սրամտություններն է պատմում, ուրախացնում, տամուկում Շիրազից: Շիրազը ներշնչված ասում է.

— Է՛, ի՞նչ ասեմ, իմ սիրտը ուրիշ է, գրսից կովարտր քալիկ է, ներսից՝ խաղալիք: Սիրտս ամենքինդ է ...

— Հովհաննես, քանի բեմին հրաժեշտ շեմ տվել, մի պիես գրիր, գլխավոր դերում խաղամ,— ասաց Ցուլակ Ամերիկյանը և օգու բաժակը պտրպեց:

— «Սիամանթոս» պակա՞ս պիես է:

— Ես պատմական, հայրենասիրական թեմայով ե՞ր
գում, կամ էլ խոհափիլիսոփայական, մի խոսքով՝ շիրա
յան,— տաում է Ամերիկյանը:— Ես գորկիական մարդա-
ոիրական մոտիվներով պիես եմ ուզում:

— Գրամատուրգիայի գաղտնիքները շեմ պեղել, վար-
պետ, տեսնենք:

Նախահաշը հաշ դարձավ: Նազար Գալստյանն այտե՛ր
կարմրացրած, որբանոցային կյանքի պատմության կծիկն է
բացել, դրվագներ է պատմում իր և Շիրազի «խելառ» ման-
կությունից, որբանոցից: Ճաշարանը լի է մարդկանցով: Լե-
վոն Զոհրաբյանը, որ շարունակ լսու և լարված լսում էր,
շուրթերը դողդողտցնելով, հարցրեց.

— Շիրազ, որդիս, դու երջանի՞կ ես...

— Այո՛, մեր բեմի մեծ վարպետ, բայց բանաստեղծները
մի՞թե, երջանիկ լինելու իրավունք ունեն: Քանի աշխարհում
ցավ կա, բանաստեղծը երջանիկ լինելու իրավունք չունի: Ես
երագում եմ, որ գարունները գան ու չգնան: Լսե՛ք, թե եր-
ջանկության մասին ինչ եմ գրել:

Մոցագրպանից հանեց թղթերը և կարդաց.

.
... Կիրք երջանկութունն, ո՞ւր ես չգիտեմ,
Սրտիս թասը միշտ արցունքով է լի,
էլ ինչո՞ւ կյանքիս ամպը փարատեմ,
Ցավն իմաստության մայրն է պաշտելի:
Երջանիկ սրտերն ինձ չեն հասկանա,
Ցավերս ցաված սիրտը կկիսի,
Ամենքի ցավն՝ իմ սրտով կրն՞թանա,
Սիրտս կամուրջն է արցունք ու լույսի ...

— Ահա և իմ պատասխանը ձեր հարցին:

Շիրազը մի բանաստեղծություն ևս կարդաց, որից միայն
մի բառյակ հասցրի գրի առնել.

Կյանքս՝ սառցի տակով անցնող մի առու,
Պատրանք էր ձյունն անվրդով,

Մեռնում էի՝ ոչ թե հացի, այլ հեռու

Մասիսների կարոտով ...

— Մո՛, Օճիկ,— ասաց ժառեր,— արի գնանք Արփա-
չայի Բյանաթը, կամ էլ Թափաղուլակ¹ գյուղը, ինչքան կուզես
Մասիսի և Անիի կարոտդ առ:

— Ես այդպես չեմ ուզում,— ձայնը բարձրացնելով՝
ասաց Շիրազը,— ես ուզում եմ անարդարության նախադաս
թեմ, ուզում եմ Անին ու Մասիսը տուն բերեմ: Գերի չը-
մնան ...

Հույսս հազար ձի է թամբում՝

Շատ չի մնա Մասիսն ամպում ...

Ասաց ու վեր կացավ: Բաժանվելիս, թե՛

— Քաղփին լավ նայե՛ք, է՛ն քաղաքը, որ թատրոն չու-
նի, պոետ չունի, արվեստ չունի, քաղաք չէ: Մեր Լենինա-
կանն այդ բոլորն ունի: Մնում է լավ պահել ...

Մինչև Զաչուրի լեռնանցքը՝ Ավետիֆի աղբյուրը, ուղեկ-
ցեցի նրան:

— Քաղփիս, Գոհար փուրկիկիս լավ աշե, բանասանդ-
ժություններս «Բանվորում» հանախ տպագրիք, թող կարդան,
տեսնեն, Օվոն ի՞նչըրիս է մենձրցել, մեծ պոետ դարձել ...

«ԱՌԱՆՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԻՄ ԿԱՐՈՂ ՇՆՉԵԼ ...»

20 ապրիլի, 1955:

Մի ֆանի օր է, ինչ Մասկվայում եմ: Գնացի Հովհաննես
Շիրազին տեսնելու, Մ. Գորկու անվան գրականության ինս-
տիտուտի գրական ստուդիայում է սովորում:

Հանդիպեցի: Շաա է նիհարել, ինչպես երևում է՝ հյու-
սիսի կլիմային լավ չի հարմարվում:

— Գրիպով ծանր հիվանդ էի, նոր եմ առողջացել,—
ասաց նա,— հետաքրքիր դասախոսություններ եմ լսում, ու-
սերենի գիտելիքներս ու իմացությունս խորացնում եմ: Հա-
յաստանի, Մաոիսների, ընկերների կարոտից այրվում եմ:
Թշնամիներիս էլ եմ կարոտել ... Ննջարանիս պատին Մեծ ու

¹ Այժմ՝ Արևիկ:

Փոքր Մասիոնների լուսանկարն եմ փակցրել: 'Իորպատի հա՛մալուարանի ուսանողների՝ Խաչատուր Աբովյանի, Պետրոս 'Ռոդոխյանի, Ռափայել Պատկանյանի նման կարոտել եմ մեր Աշտարակին, Արփաշային... Մեր դասախոսները բոլորն էլ հարգալից են իմ նկատմամբ: Ալեքսանդր Ֆադեևը, այդ սիգնիվ, հայասեր ոուսը, շատ հոգատար է իմ նկատմամբ: Իմ ստեղծագործություններից որոշ գործեր թարգմանվում են: Թարգմանել են Լենինին նվիրված բանաստեղծությունս. ասում են «Պրավդան» պիտի տպագրի... Մի բան արե՛մ շուտ վերադառնամ տուն, կարոտս առնեմ...— Շիրազի տրամադրությունը աստիճանաբար բացվեց:

— Մոսկվայում մի երկու պզտիկ կարոտաթախիժ բանաստեղծություն եմ գրել, կարդա՞մ...— Եվ կարդաց.

*Ավա՛ղ, չի կանչում ականջս այստեղ՝
Ոչ ոք չի խոսում այնտեղ իմ մասին,
Դու էլ չես խոսում, դու, որ խելահեղ,
Օր չէիր տալիս իմ հեռախոսին,—
Ա՛խ, թե խոսում ես, կամ գեթ շշնջում,
Ինչո՞ւ չի այստեղ ականջս կանչում...*

Լավ է:

— Շիրազ, լեզվի հարցում չե՞ս դժվարանում:

— Բանաստեղծները մի լեզվով են խոսում, բանաստեղծության լեզվով, ես իմ գործերը արտասանում եմ հայերեն, բոլորը հասկանում են ...

Զրույցն ավարտվեց: Ուղեկցում եմ նրան:

— Գիտե՞ս, տրանսպորտ չեմ նստում, ոտով պիտի գնանք:

— Ինչո՞ւ:

— Վախենում եմ վարորդները շփոթվեն... կործանվեն:

— Մետրոն ապահով է:

— Չեմ փորձել, բայց ասում են՝ արագությունը մեծ է: ...Ոտով գնանք:

Գնացինք: Նա պատմեց իր հիվանդության մասին և ասաց, որ լավ կլինի իրեն ետ կանչեն Երևան:

— Մի նամակ եմ ուղարկել կյանքիս պահապան Ալտ-
զանին, մի օրինակը պահել եմ, կտամ քեզ, վերադարձիդ հե-
տաբերվիր, տես ի՞նչ է արել:

Շիրազյան այդ մասունքը պահում եմ թղթերիո մեջ, որը
և հրապարակում եմ.

«Իմ սիրելի,

Իմ անգին եղբայր

Ալազան

Վերջապես ոսացա նամակիս պատասխան նամակ և
խավարից հայտնվեցավ լույսը, այսինքն շա՛տ և շա՛տ ուրա-
խացա: Հիվանդ պառկած եմ: Մանր գրիպից թոքերիս վրա
ծանր հեռանակ է մնացել... Ես ապրում եմ ֆազաֆից հեռու,
մի անառում. սնունդը միօրինակ լինելուց հոգնել եմ և եթե
շատ մեծ ախտաբան՝ կորած եմ: Խնդրում եմ մայիսին չհու-
սած մի հեռագիր ասա, թե՛ «մայրդ հիվանդ է, եկ», այլա-
պես չեն թույլ տա: Դասերիս մնում է մեկ և կես ամիս, իսկ
թոշակ կստանամ ամսի 27-ին, հեռագիրը աուր ֆրոշո՛՛ Մա-
նիկի անունով: Ձեռքս չի գտնում, որ շարունակեմ... շատ
տխուր եմ, շատ ախրամոռայլ ու վհատ... առանց Հայաստանի
չեմ կարող շնչել... կրկնվում են ներվային ծանր նոպաներս,
ուզում էի աեղափոխվել հիվանդանոց, բայց կարոտն ավե-
լի անբուժելի է: Հուսով եմ:

Քո կրտսեր եղբայր՝

Հովհաննես Շիրազ:

1955»:

Հրածեղաից առաջ եո նրան մի ֆիչ դրամ ավեցի:

— Ի՞նչ ես անում,— ասաց նա,— երեխաներ ունես,
ձուգուկներիդ բաժինը մի կտրիր:

— Գիրքս ապագրվում է, հոնորարը ստացել եմ, և հե-
տո դու ուսանող ես. հայոց մեծ բանաստեղծը թոշակառու
ուսանող է... Վերցրու, ընկերներիդ կհյուրասիրեո, գիանեմ,
այստեղ էլ նոր սերեր կունենան:

— Ի՞նչ անեմ, որ ֆենիդ շհամաձայնվեց իմ կինը դառ-
նալ, հո ամուրի չե՞մ մնալու:

— Ձեր հաշիվը իրար հետ պարզեմ, մենք ընկերներ

ենք, և կարծում եմ, վատ ընկերներ չենք: Առանց այդ էլ մեր ընկերությունը ամուր է:

— Այո՛: Փողը վերցնում եմ, բայց պարտք չհամարես, հա՛: Մի երկու ընկերոջ անցյալում պարտքով փող եմ տվել, տարել են ու էն տանելն է, այլևս չերևացին: Ափսո՛ս, ընկերներ կորցրի:

— Ես պարտքով չեմ տալիս, իրար չենք կորցնի:

— Բարեկիր Հայաստանին, Հայաստանի ազգիկներին, Մասիսներին և իմ... թշնամիներին:

— Դու թշնամի չունես:

— Ո՞վ ասաց, որ չունեմ:

— Այո՛, թշնամի չունես, նախանձողներ ունես:

— Դե, բող քո ասածը լինի, իմ ողջույնները փոխանցիր նրանց, բող սառը սրտերն էլ ջերմանան:

Հրտժեշտից առաջ նորից ողջագուրվեցինք: Նրա փայլաասկող աչքերում կարոտի վհիտ արցունքներ երևացին...

«ԲԱՅՑ ԿՈՒՋԵՒ ԵՍ ԱԶԱՏԵՄ...»

29 մայիսի, 1957:

Մի ֆանի օր առաջ Շիրազը հանդիպում ունեցավ Երևանի պետական համալսարանի ուսանողություն հետ: Այն անցավ ջերմ, բուռն ու կրակոտ: Դահլիճը թնդում էր ծափերից:

«Երևանի համալսարան» թերթի մայիսի 27-ի համարում տպագրվել է հանդիպման մատին, հրապարակվել են պոետի ստեղծագործություններից: Բայց գտնվեց մի չկամեցող և անհարկի ազմուկ սարքեց: Թերթի խմբագիրը, որ մեր ժուռնալիստիկայի բաժնի ուսանող է, պատմեց եղելությունը: Բանավեհը երկու ֆառյակի շուրջ է: Ահա դրանք.

*Նստած նայում եմ կարոտով խորհրդավոր Մասիսին,
Իմ պապերի-պապերի սար, իմ ալևոր Մասիսին,
Միտք եմ անում, թե պապերիս ի՞նչ պատասխան պիտի տամ,
Երբ որ զարթնեն, գերի տեսնեն իմ վիրավոր Մասիսին:*

.
,

Ինձ էլ բերեք Մասիսի ձյունից՝ իմ հուշերի արցունքով,
Երբ կազատեք, լուրն ինձ բերեք ո՛չ թմբուկով, ո՛չ շաքով,
Քանզի սիրտս շատ է մաշվել Արարատիս կարոտով,—
Որ շմենեմ խնդուխտներից, լուրն ինձ բերեք ... շշուկով:

— Բացատրություն են պահանջում,— ասաց խմբագիրը:

— Ի՞նչ բացատրություն:

— Թե ինչո՞ւ եմ տպագրել ...

— Անհտնգատանալու հարկ չկա: Ձեր քնդդիմախոսներին, այդ թվում՝ հիշածդ գրականագետին, ասացեմ, մասիսերգությունից մի վախեցեմ, Մասիսը հայ ժողովրդի խորհրդանիշն է, տյն պատկերված է Հայկական ԽՍՀ պետական գերբին, օրենսդրական հանաչում է գտել մեր ստիմանադրությամբ՝ հիմնական օրենքով: Եվ տպա ի՞նչ է, Շիրազն առաջին անգամն է, որ Մասիսին նվիրված բանաստեղծություն է տպագրում: Մոռացե՛լ եմ նրա հոշակավոր ներբողը, որ առաջին անգամ մամուլում լույս է տեսել 1944 թվականին, այնուհետև 1946-ին՝ «Ընտիր էջեր հայ գրականության» ժողովածուում, 1950-ին՝ «Սովետահայ գրականության տնթուղագրություն»: Ո՞վ չգիտի, որ Շիրազը մասիսերգակ է: Էնպես որ՝ հանգիստ եղիր:

Ամեն ինչ կարգավորվեց:

Շիրազը իմացել էր այս պատմությունը: Հանդիպեցի՞մ, ջերմ ողջագուրվեց և ասաց. «Շնորհակալ եմ»:

— Ինչի՞ համար:

— Ճշմարտության, իմ բանաստեղծության ազնիվ մեկնաբանման համար:

— Շիրազը մեկնաբանման կարիք չունի, քանզի ճշմարիտ բանաստեղծ է: Ես այն կարծիքին եմ, որ ով իր սրտում Արարատ ունի, ազգային նվիրական երազանքներ, ինտերնացիոնալիստ է և քեզ հիշա կհասկանա...

— Մասիսը հայոց խորհրդանիշն է,— ասաց ու արասասանեց հետևյալ երկտողը.

Հաստատ գիտեմ, որ կազատվի՝ թեկուզ դարեր անցեն

զլխով,

Քայլը կուզեի ես ազատեմ, որ ծածկվեի նրա հոգով...

— Առանց Արարատի կյանքն ո՞ւմ է պե՞տք: Մասխար սյունն է Հայաստանի, աշխարհացրիվ հայերին իրեն քաջող հզոր մագնիս...:

«Դեվին ԿՃԱՆԱԶԵՍ...»

Սեպտեմբեր, 1964:

— Դեվին կհանաչե՞ս,— հարցրեց Շիրազը,— թեհրանաբնակ հայ բանաստեղծ է:

— Ոչ, չեմ հանաչում: Սփյուռֆահայ մամուլում նրանից միայն մի երկու բանաստեղծություն եմ կարդացել:

— Քա ասում ես՝ չեմ հանչե, դե հանչում ես, էլի: Դեից նամակ եմ սաացել: Նա գրում է. Շատ սիրելի ու հարազատ, թանկագին գրչեղբայր Հովհաննես Շիրազ, մեծ հաճույքով եմ կարդում ստեղծագործություններդ, շատ ուրախացա, որ իմացա՝ ծննդյանդ 50-ամյակին պարգևատրվել ես Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով... Շնորհավորում և հաջողություն եմ մաղթում, անգուցական բանաստեղծ իմ եղբայր, ցանկանում եմ այնպիսի վերելք, որ արժանի լինի հասնելու մինչև քսանամյա Մասիսի հառազայթափայլ ու թագակիր գագաթները: Շատ ապրես...

Կարդաց ու ավելացրեց.

— Կտեսնե՞ս սփյուռֆր ինչպես կհարգե ինձ:

— Շատ վաղուց գիտեմ քո նկատմամբ սփյուռֆահայության ջերմ վերաբերմունքի մասին:

— Հա, բայց ուշադրություն դարձրու, տես Դեր առյուծին ինչպես է շնորհավորում: Ինչ էլ որ լինի՝ Դե է, չէ՞...:

ԵՐԳԵՐԻ ԳԻՐՔՁ

...Այն ժամանակ ես չգիտեի, և նա ինքն էլ ոչինչ չէր ասել իր «Երգեր» գրքի հրատարակության հետ կապված

դաժան պատմության մասին: Միայն գրքի տպագրությունն էր երեսուն տարի անց՝ «Շիրազ» (1986) հուշ-նովելների գրքուկիս հրատարակությունից հետո, հայտնի դարձավ, թե «խմբագրման» բողի ասկ ինչպիսի բութ դանակ է գործել, հակառակ հեղինակի և նանաշված գրականագետ, վարող խմբագիր Հակոբ Սալախյանի կամքի և դիմադրության, ինչպես են ջարդել հայ պոեզիայի այդ մարգարիտները, ազդանմուշային օրինակից հանել հարյուրավոր հայրենասիրական, լիրիկական անկրկնելի բանաստեղծություններ: Գրքի այն ժամանակվա հրատարակչական խմբագիր Լենա Արագյանը, որը Շիրազի պոեզիայի ջերմ երկրպագուներից է, ազնիվ մտավորական, մինչև այսօր էլ սրաի խոր ցավով է հիշում այն ծանր մղձավանջը, որ կապված էր «Նրգեր» բանաստեղծությունների ժողովածուի հետ: Այժմ, քան երբեք, հստակ պատկերացում ենք կազմում, թե ինչպիսի հզոր կամք, քաղաքական արիություն, նվիրում է ունեցել Շիրազը, ինչպիսի համարձակությամբ է նա պաշապանել իր յուրաքանչյուր առողր, փրկել լիրիկան, ընդդիմակայել անգուսպ ներբողների սիրահարներին: «Նրգերի» գիրքը իրեն հատուկ ազնվությամբ և շիտակությամբ է խմբագրել և պաշապանել Հակոբ Սալախյանը: Բայց դա էլ չի օգնել: Հակոբը քաղ գիտեր Շիրազի ըմբուս, լուցկու պես բռնկվող և շուտ հանգչող բնավորությունը: Շիրազն էլ իր հերթին էր հարգում Հ. Սալախյանին, երբեմն նեղացնում էր, բայց հետո զղջում, հնազանդվում: «Հակոբ, կներես, որ քեզ դուրս արի տնից, — այդ օրերին գրել է Շիրազը, — շատ ախուր էի և շատ լքյալ... Գիրքն էլի արգելել են և հույս չկա, թե բախտիս ասաղը ամպից դուրս կգա մեկ օր... Մեկ էլ որդուս շառ են կարոտել, և մայրն էլ էլի մերժել է միանալը ինձ հետ...»

Լենա Արագյանը մեզ է տրամադրել «Նրգերի» (265 էջ) հենց այն «անդամահատված» ազդանմուշային օրինակը և նրա պատմության հետ կապված փաստաթղթերը (պատմությունը չի ջնջվում): Այսպես, վերականգնվում է նշմարությունը, լրացվում են պոետի կենսապատման բաց էջերը:

Մեր նպատակն է փրկել շիրագյան մասունքները: Պոետը ոչ միայն խաղաղության և հումանիզմի մունետիկ էր, այլ նաև հալածված առաջյալ: Եկե՛ք ծանոթանանք «Երգերի» գրքի ադիսականին, պոետի պատճառաբանություններից մի ֆանիսի հետ, մնացածը թողնելով նրա ապագա գիտական կենսագրությունը ստեղծող հեղինակներին: Այսպես, «Երգերի» էջ 35-ում ասված է.

*Ա՛խ, ինձ հազար կանչողներ կան,
Արագ, ինձ մի ճանապարհ տուր,
Մեկն Անին է, վշտիս վկան,
Արագ, ինձ մի ճանապարհ տուր,
Մեկն իմ շքնաղ սարն է Սիփան,
Արագ, ինձ մի ճանապարհ տուր,
Մեկն իմ վանա ծովն է ծփան,
Արագ, ինձ մի ճանապարհ տուր,
Մեկը Մասիսն է սրբազան,
Արագ, ինձ մի ճանապարհ տուր,
Ա՛խ, ինձ հազար կանչողներ կան,
Արագ, գեթ մի ճանապարհ տուր:*

Այս ամենը պահանջել են հանել:

Շիրագը դիմադրել է: Թանաֆով և կարմիր մաախաով երեք անգամ տարբեր ժամանակ գրել է. «Չէ, պիտի մնա գրքում: Հ. Շիրագ»:

«Այս պիտի մնա»: «Ով որ այս բանաստեղծությունը հանում է՝ հայ ժողովրդի սիրան է խոցում: Հ. Շ.»:

Այնուհանդերձ բանաստեղծությունը հանվել է. Շիրագը այն փոխարինել է «Վերք Հայաստանի: Բաց նամակ Հայոց Հովհաննես Շիրագից մի թուրք պոետի» անախպ բանաստեղծությամբ: Շարվել է, տեղադրվել էջում: Կարգադրվել է այս նոր բանաստեղծությունը ևս հանել: Շիրագը գրել է. «Պիտի մնա»: «Պիտի մնա, Հակոբ ջան, մնա, հիջիր, որ հանված չէր, սառագրել ես: Հ. Շ.»:

«Երգերի» գրքից հանված այս և այլ ստեղծագործություններ տարբերակներով, կրճատումներով և փոփոխություններով հեաազայում լույս են տեսել նրա ժողովածու-

ներում, հատկապես «Քնար Հայաստանի», «Հուշարձան մայրիկիս» և «Երգերի» գրքերում: Քայց ամեն մի բանաստեղծություն ունի իր պատմությունը, որը որոշակի հետաբերություն է ներկայացնում պոետի կյանքը նիշտ լուսաբանելու համար: Պատմությունը, հիրավի, մարդկության հիշողությունն է: Պատմության զիգզագները ևս ուսանելի դասեր ունեն:

Շարունակենք մեր պրպտումները:

Հովհ. Շիրազն իր ստեղծագործությունների կենարտակունքը համարում էր իր մորը՝ Ասաղիկ մայրիկին: Եւ գրել է.

— Թե կաթիղ մեջ շիներ՝
Ինչ քնարվեց իմ հոգում՝
Ես բանաստեղծ մարդասեր՝
Ո՞նց ծնվեի այս կյանքում...

«Երբ մորթել են հայրիկիս» բանաստեղծության վերջում Շիրազը ավելացրել է.

Եղեռնից է խորշոմել
Մայրս, օ՛, վայ իմ հացին,
Ապշանքից են խոշորվել
Մորս աչքերն, աստված իմ:

Էջ 118-ում զետեղված է ութ տողանոց անվերնագիր մի բանաստեղծություն, որն սկսվում է «Գահընկեց արհնք արքաներն համայն» տողով: Առաջարկվել է այն ևս հանել: Շիրազը գրել է. «Կարծում եմ լավ է և պիտի մնա, քանզի ոտվեր շի գցում գրքի վրա... Հ. Շիրազ»:

«Իմ տենչանքի պես» բանաստեղծությունը (էջ 135) ութ առղ է. խոհական և լիրիկական, մտրդկային զգացման պոռթկում.

Իմ տենչանքի պես
Դուք անհաս աստղեր,
Իմ հասակի պես
Գարնան աղբյուրներ,

*Ջրեր, հավերժ եք
Դուք գլգլալու,
Բայց ի՞նչ է արդյոք
Իմ գլխին գալու...*

Առաջարկել են հանել: Շիրազը սկզբում գրել է. «Մարգ-
կային զգացում է և ոչ նախազգացում: Ինչո՞ւ հանել: Հ. Շ.»,
իսկ հետո, երբ շաա են ստիպել, նա տեղի է ավել, և այս
անգամ գրել. «Այս մնա, բայց ոչ, թույլ է արվեստով: Հա-
նել կարելի է: Հ. Շիրազ»:
Այսպիսին է Շիրազը:

*Հեռո՛ւ-հեռո՛ւ, հեռո՛ւ-հեռվում
Մի խրճիթ կա դաշտի մեջ,
Մի ճրագ է մեջը վառվում
Կյանքի նման նրա խեղճ:
Ո՞վ է ապրում այն խրճիթում,
Այն դաշտի մեջ մենության,
Արդյոք գիտե՞, որ աշխարհում
Նախանձում եմ ես նրան:*

Այս բանաստեղծությունը դրվել է գրքի 137-րդ էջում:
Խմբագիրը կրկնակի սառագրել է և հաջողության մաղթել:
Բայց «զգասա» բննադատները իրենցն են պնդել, հանել: Շի-
րազը գրել է. «Սա էլ պիտի մնա»: «Իմ կարծիքով սուրբ
վայրկյանի ստեղծագործությունն է և պետք է մնա: Հ. Շիրազ»:
«Անցորդ, խոնարհիւր» առղերով սկսվող հանրա-
հայտ բանաստեղծությունը, որ տպագրվել է «Հուշարձան
մայրիկիս» և այլ ծողովածուներում, 12 տող է, ձեռագրում
16 տող է եղել:

«Երգերի» գրքից հանվել են՝

— Գինի գտա, մի թասի տեղ մի դավ գտա այս գիշեր,
Հաֆիզ, քո էլ հրեշտակից լավը գտա այս գիշեր,
Մովի եզրին, վարդի զովին, կույսի գիրկն էլ ընկնելով
Ա՛խ, չգտա դրախտն էլի ու ցավ գտա այս գիշեր ...

(էջ 175)

— Ա՛խ, բալիկս, քանի գնում մեծանում ես, առնանում,
Միտքս հետդ հպարտանում, բայց իմ ահն է դառնանում,
Ավա՛ղ, կովի շշուկներ կան, ա՛խ, բալիկս, մանկացիր,
Ո՛ւր էր, դու էլ մանկուհեացիր, աշխա՛րհ, զուր ես առնանում...
(էջ 180)

— Երազիս մեջ հերկվոր էի Անիում,
Վրա տվին, զինվոր էի Անիում,
Դուրս մղեցինք սուլթան ու խան, յաթաղան,
Արնոտ արտում հնձվոր էի Անիում:
(էջ 182)

— Գերի միայն Մասիսը չէ, իմ բյուրասար, իմ անգին,
Դու իմ Գրգուռ, դու իմ Սիփան, իմ Ծովասար, իմ անգին,
Հազարասար իմ Հայաստան, հազարից մեկդ է ազատ,
Ու դողում է հազար սիրտս մեկիդ համար, իմ անգին:
(էջ 188):

— Լոկ մի բանի համար կուզեմ անմահություն ունենալ,
Այս աշխարհում դարը մի օր կենդանություն ունենալ,
Որ քեզ նորից գամ օգնության, ազգ իմ, երբ որ նեղն ընկնես,
Ահա ինչո՞ւ չէի ուզի հավիտյան քուն ունենալ:
(էջ 195):

Շիրազը գրել է. «Ինչո՞ւ հաճել այն ուրբ և համաշխարհային հայրենասիրությունը, չպիտի հաճել: Հ. Շիրազ»:

— Քաշվիր, ով մահ, մեծ իղձեր են իմ քնարին սպասում,
Դեռ դարձատենչ հայն է ինձ հետ Մասիս սարին սպասում,
Դեռ հայ բախտին վայ են հայոց պանդուխտները բյուրավոր,
Դուռս բաց թող... մեծ գործեր են մեր աշխարհին սպասում:
(էջ 196):

— Գիտեմ ինչու այսքան բարձր է Մասիս սարը հույսիս պես,
Աշխարհի ողջ ծայրերն հասած պանդուխտ հայեր կան
պես-պես
Մասիսն այսքան բարձր է կանգնել, որ ամենքին երևա.

Որ տեսնի հայն ու հայ մնա, ինչպես Մասիսն իր այս վես:
(էջ 201):

«Սա էլ պիտի մնա, ուժեղներից է, թույլն հոնեցի, որ
սա մնա: Հ. Շիրազ»:

— *Մարդը վեր է իմ աստծուց, երբ որ մարդ է միշտ մնում,
Նարեկացու սրտի նման անաղարտ է միշտ մնում,
Որ գոյության կովի մեջ էլ մինչ մահ մաքուր մնալով՝
Անմեղության ձյունը գլխին Արարատ է միշտ մնում»:*
(էջ 208)

— *Գինին թույն է մարմնիս համար, հոգուս հոգին է գինին,
Հոգուս համար մեղր ու նեկտար ու քաշող կին է գինին,
Թեկուզ անմահ լինի հոգիս, բայց մի թասով մահանա.
Թող մահանա՝ մի թաս էլ տուր, կյանքից անգին է գինին:*
(էջ 215):

Շիրազը պատճառաբանել է. «Թույլ չէ, բայց թույլ էլ չէ...»:

Հովհ. Շիրազը մասիսերգակ է: Ինչպես Մասիսը դրոշմ-
ված է Հայկական ԽՍՀ պետական գերբում իբրև հայ ժո-
ղովրդի նվիրական երազանքների ջահ, տյնպես էլ այն դար-
ձել է հանճարեղ պոետի երգերի ֆնարակտն հերոսը, գաղա-
փարը: Շիրազի պատկերացմամբ Մասիսը հայ ժողովուրդն
է, նրա պատմությունը, նրա երեկը, այսօրը և վաղը: Դրա
համար էլ հասկտնալի է, թե ինչո՞ւ է նա պնդել, որ այդ և
նման բովանդակությամբ ոտնդժտգործությունները մնան
«Երգերի» և այլ գրքերում:

էջ 217-ում գետեղվել էր այնպիսի ֆառատող.

*Աչքս մեխած, լույս երեսիդ, Արարատ,
Նայում եմ միշտ դեռ այս կեսիդ, Արարատ,
Ա՛խ, երբ պիտի մյուս կեսիդ էլ նայեմ,
Որ հասցնեմ քեզ մուրազիդ, Արարատ:
Շարվածքի լուսանցքում Շիրազը գրել է. «Մնա: Մի՞թե դու
չես ուզում նայել, Հակոբ, կամ մյուսները, մի՞թե...»
(էջ 219):*

— Ա՛յ Արազ,

Իմ արցունքի թայ Արազ,
 Դու Քինգյոլի՞ց ես բխում,
 Թե՞ իմ սրտից, վա՛յ Արազ:
 ... Հրազդան,
 Ի՞նչ ես անում, Հրազդան,
 Հայոց սիրտն է Սևանը,
 Ո՞ւր ես տանում... Հրազդան...
 Եվ այսպես էլի շատ էջեր...

«ՀՈՒՅՍՍ ԴՆՈՒՄ ԵՄ ԿՈԼԵԿՏԻՎ ԽԵԼՔԻ ՎՐԱ»

30 դեկտեմբերի, 1967:

— Շնորհավոր նոր տարի, — ասաց Շիրազը, — տեսնենք 1968 թվականը ինչպիսին կլինի:

— Դե, որ մինչև ձմեռ պապի գալն ես շնորհավորում, ով գիտի, ինչպես կլինի:

— Ձմեռ պապին երեխաներինն է, հրատարակիչը՝ բանաստեղծինը: Վաղօրոք շնորհավորում եմ, որ ինձ լավ աչքով նայեմ: Էն օրը տեսա՞ր ինչքան երիտասարդներ էին հավաքվել իմ հանդիպմանը:

— Միշտ էլ եմ հանդիպումները այդպես մարդաշատ են լինում: Դու գիտեիր, որ երեկոյի մուտքը հրավիրատոմսերով է, բայց ասացիր՝ բոլորին ներս թողեմ, ժողովրդական բանաստեղծի հետ ժողովուրդը հրավիրատոմսով չպիտի հանդիպի: Դու չգիտե՞ս, շիրազապաշտներն այնքան շատ են, որ նույնիսկ մեր ֆաղափի մարզադաշտը չի բավարարի, էլ ուր մնաց՝ մշակույթի պալատը:

— Մի նամակ եմ գրել, բայց որոշեցի չուղարկել:

— Նամակ է, թե՞ բողոք, — հարցրի:

— Նամակ-բողոք: Վերցրու:

Կարդում եմ. «Ժամանակին պետք է լսել տեսներ «Արանամե» պոեմս, բայց մինչև այժմ չի հանձնվել տպարան: Խմբագրված է, բարձր կարծիքների է արժանացել, բայց ինչո՞ւմն է բանը, որ մինչև օրո պլանից պլան է անցնում. Պետհրատի նախկին ղեկավարները ասում են, թե ես եմ ձգձը-

գում իմ գործերի տպագրությունը, համաձայն չեմ կրնառումներին: Բայց ահա պատմեմ բուն բնույթը այս մուսթ թնչուկի: «Սիրանամեն» նվիրված է Շոթային ու Քամարին, հայոց և վրաց գործերի և հայ գորավար Զաֆաբեի գլխավորությամբ Քամար թագուհու հրամանով շեղդատյան ֆոդեից, սելչուկ թուրքերից Անիի ազատագրմանը: Այս մասը, այսինքն՝ ազատագրումը վրաց և հայոց գործերով, պետհրատի աշխատակիցները թողնում են պոեմում, իսկ հաջորդ մասը հանում են, շնչում և ուզում են, որ ես պոեմս խաթարված հասցնեմ ընթերցողին... Հույսս դնում եմ կոլեկտիվ խելիի վրա: Հովհաննես Շիրազ»:

Ասացի՛ նամակդ լավ ես վերջացրել, թող կոլեկտիվը, որի վրա հուսադրվել ես, հույսերդ արդարացնի ...

«ԱՅՍ ԻՆՉ ԲԱՆ Է...»

4 հունվարի, 1968:

Շիրազը բորբոքված է:

«Հուշարձան մայրիկիս» ժողովածուի մի ֆանի բանաստեղծություններ («Հորս աղոթքը», «Մորս մահով նոր իմացա մահն ինչ է», «Մորս խրատը», «Մորս հուզարները», «Կինը ասածս հարձն է, ասի», «Մայրս կասեր») խմբագրվել են և որոշ տողեր հանվել...

— Այս ի՞նչ բան է, ես չեմ ասե՞լ՝ առանց իմ համաձայնության ոչինչ չհանել...

Հանգստացրի նրան:

— Խմբագիրը քո օգտի համար է արել, նա չի ուզում Շիրազի գրչին ոչ վայել գործեր ապագրվեն: Նա և հաշակով խմբագիր է, և քեզ անսահման նվիրված:

— Դա նիշա է: Թույլ տուր նորից վերանայեմ ժողովածուի նյութերը:

Թույլատրեցինք: Մի ֆան օրից բերեց ժողովածուն, ինքն ավելին էր հանել, ֆան խմբագիրը, բայց էլի զրծգոն էր հրատարակչությունից և խմբագրից:

Զարմանալի հոգեբանություն: Շիրազյան հոգեբանություն:

Հունվար, 1968:

Շիրազը հանախ է գալիս հրատարակչություն, հետա-
քրքրվում իր գործերով: Բանաստեղծ Լ. Միրիջանյանը խրմ-
բագրում է «Անի» պոեմը. ժամկետ է տրված մինչև մարտի
25-ը: Գեղարվեստական ձևավորումը պատրաստ է: Սփան-
չելի է: Հունվարի 5-ին Շիրազը նորից եկավ:

— Լավ կլինե՞ր՝ «Անին» պատմաբան խմբագրեր,—
առաջ նա:

— Ինչո՞ւ:

— «Անին» պատմական պոեմ է, վախենում եմ...

— Խմբագիրդ և՛ բանաստեղծ է, և՛ պատմաբան...

— Դե որ այդպես է, համաձայն եմ, թող Լևոնը խրմ-
բագրի, երկու «խուրթից» միանգամից կանցնեմ:

— Ի՞նչ խուրթ:

— Մեր անվանի գրողներից Վախթանգ Անանյանը թեր-
թում գրել է, թե ինչպես է ծնվում գիրքը: Նա ասում է՝ հրա-
տարակչությունից մինչև տպարան հեղինակը ձեռագիրը ֆուս
խուրթի վրայով պիտի գլորի, որ գիրքը լույս աշխարհ գա:

— Այդ դեպքում համարի՞ր, որ գլխավոր խմբագրի և
տնօրենի խուրթերի վրայով էլ ես գլորել:

— Հավասա՞մ: «Անիին» կյանք տուր,— ասաց նա,—
միանգամից հեղինակությունդ, պատիվդ կբարձրանա...

— Շիրազ, վախենում եմ «Անին» տանես չբերեմ:

— Ի՞նչու չբերեմ:

— Զգիտեմ, ասում են՝ սրանից ութ տարի առաջ տա-
րել ես և միայն հինգ ասրի անց բերել, ուզում եմ՝ դիմում-
ներդ ցույց տամ:

Գեղարվեստական գրականության բաժնից վերցրել էի
գրագրությունները: Նրանցից այս մեկը կարդացի.

Պետհրատի տնօրենին

Դիմում

Խնդրում եմ «Անի պոեմիս» դիմաց դուրս գրել, քան

ստորագրված պայմանի, ինչ հասանելի վաթսուն տոկոսը
հոնորարի... և ոչ թե 25 տոկոսը՝ ինչպես մաագիր եմ:

Միայն վաթսունը...

Հովհաննես Շիրազ

1960 թ.

Երևան,

Գարուն

Պետհրատի անօրենք կարգադրել է՝ «Գիրքը տպարան
ուղարկելուց հետո միայն դուրս գրել 60 տոկոսը: 18 ապրի-
լի 1960»:

— Ձէ՛, այս անգամ շուտ եմ բերելու...

Հա, խոսքով ընկանք, մոռացա, կարգադրիր «Տիգրան
Մեծի վիշաք» բաց թողնեն, թե չէ Տիգրանի գործերը կառ-
նեմ, կգամ:

— Բաց է թողնված, ապաֆանակի մի մասը մինչև Հայ-
գրֆին հանձնելը հավելել է...

Նա ուրիշ այլ հարցերի մասին էլ է խոսում:

— Մեր ազգային մեծ հանճարի՝ Հովհաննես Թուման-
յանի ծննդյան 100-ամյակի նախապատրաստությունը հաջող
է ընթանում, մի քիչ էլ պզտիկ Հովհաննեսով զբաղվեմ:

— Պզտիկ Հովհաննեսն ո՞վ է, ծովանկարիչ Այվազով-
սկի՞ն է:

— Միամիտ մի ձևացրու, մասիսապան Օնիկն է, Օվոն՝
Հովհաննեսը:

— Դե՛ ամբողջ Հայաստանը պսաիկ Հովհաննեսով է
զբաղված:

— Ոչ թե պսաիկ, այլ առյուծ, պոեզիայի թագակիր ար-
քա, եռածին՝ մայր բնության, հարազատ մոր և մայր-հայրե-
նիքի երգիչ՝ գուսան... Հովհաննես Շիրազ...

«ՇԻՐԱԿԻ ՊՈՆԶԻԱՅԻ ԾԱՌԸ ԶՐԵՔ»

25 փետրվարի, 1968:

— Շիրազ, «Անի» պոեմը ուղարկում ենք տպարան,
շխանգարես:

— Հաստատ: Ինչո՞ւ այդքան արագ:

— Արագ չէ:

— Այդ դեպքում թույլ տվե՛ք տանեմ տուն, մի անգամ էլ նայեմ, թույլ տողե՛ր շզնան:

— Տար նայիր:

Փակագծերում ասեմ՝ տարավ, շքերեց:

— «Անին» շտապ չէ, — ասաց նա, — Լենինականի գրողները ժողովածու են ներկայացրել, արագացրե՛ք: Դու էլ կիսով չտի Լենինականցի ես, երկու անգամ մեր ֆաղափ «Քանվոր» թերթի խմբագիր ես աշխատել: Օգնի՛ր, Շիրակի պոեզիայի ծառը ջրի, երիտասարդ շնորհալի և հոյնալի ստեղծագործողներ կան: Լյուդվիգ Միֆայելյանը պատմական հաջող դրամաներ է գրում. մի ֆանի թատրոններում քեմադրվում են նրա «Գոշ», «Վարազդատ» պիեսները, պատճրվածքներն էլ են հաջող: Օգնի՛ր, Շմավոն Թորոսյանը, Քաջիկ Գրիգորյանը, Մհեր Թորոսյանը ևս նոր ժողովածուներ են ներկայացրել: Քաջիկին կնանչնաս, աշխատել է ֆեզ հեռ, նա իսկական քանաստեղծ է, խորհուրդ եմ տվել շատ կարգալ և ինձ նմանվել: Շիրակի պոեզիայի ծառը միշտ պետք է կենսունակ մնա: Շիրակի պոեզիայի ծառը ջրե՛ք...

Շիրազին հասկտնալ էր պետք, սեփական անձը մոռացած՝ ուրիշների հոգսերն էր փաշում, գորավիզ լինում նրանց:

«ՀՈԳՈՒՍ ՊԱՐՏՔՆ ԵՄ ԿԱՏԱՐԵԼ»

29 մարտի, 1968:

— Գուրգեն Մահարին Եղիշե Չարենցի սիրելի քանաստեղծն է, հուշեր է գրում, — ասաց Շիրազը: — Նրա «Այրվող այգեստանները» մահարիական սրամտությամբ և հումորով է համակված: Վանի ինֆնապաշտպանական կոիվների վերաբերյալ ֆիշ գրականություն կա, եղածներն էլ չոր ու ցամաք են, Մահարու գիրքը դրանցից տարբերվում է:

— Գիտեմ, «Այրվող այգեստանները» նրա «Երկերի ժողովածուի» չորրորդ հատորումն են գետեղվելու, այժմ հե-

դիճակը վերամշակում է... Սպասում եմ:

— Ավագ գրողներին հարկավոր է ավելի շատ օգնել, իհարկե, տաղանդավորներին: Վահրամ Ալազանին շատ եմ սիրում: Նա է իմ հանապարհը բացել, «Գարնանամուտ» ժողովածուն լույս աշխարհ բերել: Բանաստեղծություն եմ նվիրել նրան և ընկերներին, մեծ չէ, ընդամենը 12 տող: Հոգուս պարտքն եմ կատարել:

Տվեց ինձ այդ բանաստեղծության ձևագիրը, որն այս անգամ կանաչ թանաքով էր գրված: Ահա այն.

*Դուք ելաք ամպից, ցնծում եմ սրտանց,
Բայց իմ ազիզը ամպի տակ է դեռ,
Դուք ելաք բանտից ու սիրտս թնդաց,
Բայց իմ Մասիսը բանտի մեջ է դեռ,
Զեղ հարյուր սրտով էի սպասում,
Հազար սրտով եմ նրան հրազում,
Այնպես, որ կարծես այժմ բովանդակ
Ամենայն հայոց սիրտն է կրծքիս տակ:
Դուք ելաք բանտից, բայց ավա՛ղ, անմեռ
Սուրբ Արարատը սև բանտում է դեռ.
Ու կարծես խոցվող իմ սրտի սրտում
Ամենայն հայոց սիրտն են կտրատում...*

Շիրազը մի այլ բանաստեղծություն էլ արտասանեց և ընագիրը տվեց, թե՛

— Պահիր, իմ պատմաբան ընկեր, ես քեզ լիովին վրատահում եմ, գնահատում եմ ազնիվ նվիրումդ:

— Դա խոսք է, որ ասում ես, Շիրազ, մեր ընկերությունը մի՞թե ավելին չէ, քան վստահություն ասածդ: Մոռացել ես, որ այդ բանաստեղծությունը ինձ մտա արտասանել ես 1952-ին՝ Լենինականում... \

— Եվ ի՞նչ ...

— Բանավոր խոսքը թոչում գնում է, դժվար է բռնել, իսկ գրավորը՝ փաստ է...

— Պահիր թղթերիդ մեջ:

Պահել և այժմ հեռապարակում եմ, քանզի այդ ժամանակ-

կից շատ ջբեր են հոսել, և նորից ու նորից ենք համոզվում,
թե ինչպիսի իմաստուն բունաստեղծ և նշմարտության խի-
զախ ավետաբեր էր Շիրազը:

ԵՐԱԶԻՍ ՄԵՋ ...

Երազիս մեջ Սիրիո էի աքսորված՝
հազարների հետ անմեղ,
Հազիվ էի քաշում ստվերն իմ՝ ապշած,
լուռ քայլելով խելահեղ:
Հուսինն հայոց մի լավաշ էր ինձ թվում՝
կախված հեռու երկնքից,
Քաղցում էի, ինչպես դայլը ձյան ծովում,
բայց, աստված իմ, ո՞ւմ մեղքից:
Ամպը ելնում՝ լուսնի նշխարն էր ծածկում,
հայր կոչվածի մորուքով,
Բայց կարոտն ինձ քաղցից խոր էր կեղեքում,
ողբում սառած արցունքով:
Կյանքս՝ սառցի տակով անցնող մի առու,
պատրանք էր ձյունն անվրդով,
Մեռնում էի՝ ոչ թե հացի, այլ հեռու
Մասիսների կարոտով:
Երազիս մեջ Սիրիո էի աքսորված՝
այս օրերում խելահեղ,
Ու չիմացանք՝ ի՞նչն էր մեղքը մեր գործած,
ողջ կյանքի մեջ մեր անմեղ:

«Ա՛՛ԽՐ ԻՆՉ ՎԱՏ ԲԱՆ ԿԱ.»

1 ապրիլի, 1968:

Շիրազը նորից է եկել հրատարակչություն, գրուցում ենք:
Նյութը «Հուշարձան մայրիկիս» ժողովածուն է:
— Ինքն խմբագրիւր գիրքն, — ասում է նա:

— Ես բանաստեղծ չեմ, Շիրազի ստեղծագործությունները պետք է խմբագրեն նշանավոր պոետները:

— Այդ դեպքում Չարենցին կենդանացրե՛ք...

Շիրազին համոզելն այնքան էլ հեշտ չէ: Տեսա, որ մեք գրույցը պիտի երկարի, ասացի:

— Շիրազ, այսօր ապրիլի մեկն է, խաբելու օր, վերջացնենք:

— Ուրեմն, խաբեցիր, «Հուշարձանը» չե՛ք ուղարկել:

...Գրպանից մի թուղթ հանեց և մեկնեց ինձ.— «Քնար Հայաստանի» գրքիս խմբագիրը այս տողերը հանել է, այժմ էլ «Հուշարձան մայրիկիս» գրքի խմբագիրն է ուզում հանել: Ախր ինչո՞ւ, կտրդա, ի՞նչ վատ բան կա այդտեղ:

Կտրդացի և լռեցի:

— Իսկ ինչո՞ւ ես լռում, ինչո՞ւ չես կարծիք հայտնում ...

Նորից եմ լռում:

— Ուրեմն, հավանում ես, որ չես խոսում:

— Այո՛:

— Դե, պահիր, որ կարգադրես ժողովածուիս մեջ ամփոփեն:

Պտհեցի: Չեմ հիշում՝ լրիվ տպագրվե՞ց, թե՞ ոչ:

— Շիրազ, երկու օր առաջ Հովակ Գալոյանը մի սֆանջիլի բանաստեղծություն կարդաց՝ նվիրված Հրաչյա Ներսիսյանին, ասաց՝ հեղինակը դու ես: Ճի՞շտ է:

— Այո, դա ես եմ գրել և բնագիրը նվիրել Հրաչյային: 1956-ին էր, Հայկական արվեստի տասնօրյակի օրերին: Հրաչյա Ներսիսյանը իր կախարդական դերակատարումներով գայթակղել էր Մոսկվայի խստապահանջ թատերասեր հասարակությանը: Նրա Պաղտասար աղբարը անկրկնելի էր: Հրաչյային մեծարեցին ծափերի որոտներով, պետական մրցանակով: Թերթերը լի էին մեծարանքի խոսքերով: Հրաչյան պարզևատրվեց լեհիների շֆանշանով: Հովակի հետ միասին Հրաչյային «Երևան» ռեստորան հրավիրեցին և մի լավ շնորհավորեցին: Հենց այդ ուրախ ժամին էլ ծնվեց «Իլլիչի շֆանշանով նշանավորված Հրաչյա Ներսիսյանին» ներբողս: Մտքերս թղթին տվեցի և տեխնիկա նվիրեցի անզուգական Հրաչյային: Հովակը վարպետից վերցրեց բանաստեղծ-

ծությունը և կարգաց, իսկ հետո արտասանեց: Նրա նի-
շողութունն անոելի է: Ձայնակցեցի նրան: Բնագիրը մնաց
Հրաչյայի մոտ, արտաստնության պատիվը՝ Հովակիին, իսկ
ինձ... հեղինակային իրավունքը:

— Շիրազ, հաջորդ տեղում որ գաս՝ խնդրում եմ այդ
տեխստը բերես:

— Մո՛, ինչ պիտի տեսս:

— Պետք է:

— Խորամտնկ ... Հովակից վերցրու:

... Անցան ժամանակներ, Հրաչյայի հոբելյանական երե-
կոյին, որը տեղի ունեցավ 1987-ի ապրիլի 27-ին Գ. Սուն-
դուկյանի անվան պետական ակադեմիական բատրոնի շեն-
ֆում, Հայկական ԽՍՀ ժողովրդական տրախտ Հովակ Գա-
լոյանն արտասանեց շիրազյան ներբողը: Դանլինք թնդաց
որոտընդոստ ծափերի տարտփից: Հավաքվածները սիրո և
հարգտնի տուրք էին մատուցում հայ ժողովրդի երկու նշա-
նավոր գովակներին, որոնք այժմ Կոմիտասի անվան այգում՝
մեր մեծերի դիցարանում, հանգչում են կողք կողքի: Հորել-
յանական երեկոյից հետո շնորհակալություն հայտնեցի Հո-
վակին և խնդրեցի շիրազյան ներբողի տեխստը արամադրի
մեզ, հրատարակելու համար: Սկզբում նա մի պահ աա-
տանվեց, հետո ասաց.

— Գիտե՞ք ինչ, հարգաբաժան պրոֆեսոր, այս բանաստեղ-
ծությունը շուրջ երեսուն տարի է՝ ինձ հետ է: Դժվար է նրա-
նից բաժանվել, այն մեր եռյակի՝ Հրաչյայի, Հովհաննեսի և
իմ ջահել տարիների սուրբ ուխտի խորհրդանիշն է: Բայց
որ ասում եմ, ինչ արած, թող ձեր կամքը լինի, հրապարակեմ,
որ Հովհաննեսիս հատորներում գետեղեն:

Այդպես էլ վարվում եմ:

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

*Ես չգիտեմ՝ ի՞նչ խոսքերի
Աղամանդով քեզ ներբողեմ,*

Ի՞նչ վարդերով քեզ աղողեմ
 Վարդերից ի՞նչ խոսքեր բուրեմ,
 Որ հայացքիս թարմությունը
 Հոգուդ հովտում նորից բուրի,
 Երբ թառամի կրծքիս վարդը՝
 Բույրը նորից քեզ համբուրի,
 Հայոց բեմի վարագույրի
 Մութը ցրող գուլ աստղանեա,
 Թռած ասածս սուրբ աղեղից
 Պետրոս Մեծի* զարմ ու ցեղից,
 Որ մերթ անմահ Օթելլոյի
 Սիրտը եղար ազնվաբերդ,
 Ու սերն այնպես մռնչացիր,
 Որ զարթնեց խանգն անգո հողից,
 Գինով գնա միշտ քո ուղին,
 Դավիթ-Բեկի սրի նման
 Թող շմտնի փառքդ պատյան,
 Ու թող դիպչի շողդ հավիտյան
 Ժամանակի միշտ բաց աչքին,
 Որ չի կարող անխոս անցնել,
 Շիրմիդ մոտով աստղապսակ,
 Որ երախը դեռ չի բացել:
 Ես չգիտեմ՝ ի՞նչ խոսքերի
 Աղամանդով քեզ ներբողեմ,
 Որ քեզ միշտ փառք շնչացող
 Ժողովրդի սրտից բխեմ,
 Հագիդ կարմիր քո ծիրանին,
 Հեծած նժույզն Աղամյանի,
 Միշտ բաց առջև իմաստության
 Վարագույրներն Հայաստանի:

Հովհաննես Շիրազ

* Խոսքը Պետրոս Աղամյանի մասին է.— Խ. Բ. 1

«ՏԵՂ ԳՆԱԼԻՍ ԻՆՁ ՀԻՇԻՐ»

2 ապրիլի, 1968:

«Հուշարձանի» գործերը լավ են գնում. զարմանահրաշ գիրք է ստացվում, մայրերգության նման օրինակներ, Ավ. Իսահակյանի ստեղծագործություններից բացի, գեղարվեստական գրականության մեջ փչ գիտեմ: Մայրաքույր խնկի ա- նուշ ծխով են թաթախված, ինչպիսի՛ ֆեֆշություն, ազնվու- թյուն, ասպետականություն, ասավածացում... Այս և նման խորհրդածություններ եմ անում: Նա լսում, լսում է և դիմում ինձ.

— Ասեիր թող մի առանձնատուն կառուցեն ինձ համար, երեխաներս շատ են, մեծանում են... Ասում են՝ երեկ Ալեք- սեյ Կոսիգինը մեր օպերայի շենֆում հանդիպում է ունեցել երևանցիների հետ, ընդմիջմանը հեմատրահ է դուրս եկել, գրուցել, կաասակել Սերո Խանգաղյանի, Գեղամ Սարյանի, Վա- դարշակ Նորենցի և այլոց հետ: Ճի՞շտ է: Ինձ տանեի՛ք հան- դիպելի, Մասիսը ուզեի, ռուս մեծահոգի մարդ է, սիրտը բաց, ինտերնացիոնալիստ: Տեղ գնալիս ինձ հիշիր, հետո տար, մի անգամ էլ Զանգեզուր տար, Ակսել Բակունցի ծննդավայ- րը: Հրաշք երկիր է:

«ՁԳՈՒՅՇ ԵՂԻՐ, ՔԵՁ ՉԽԱՐԵՆ...»

9 ապրիլի, 1968:

Այսօր Շիրազի «Հուշարձան մայրիկիս» ժողովածուն ուղարկեցինք տպարան: Ձևավորումն էլ է իրենք, թղթի վրա մատիտով նկարել է խաչքար և ասել.

— Էսիկ մորս հուշարձանն է... Հիմքը «Ձյուն է իջնում...» բանաստեղծությունն է.

*Ձյուն է իջնում՝ կուտակվում
Մորս վրա վերևից,*

Ասես փետուր է թափվում

Հրեշտակի թևերից...

Կարդաց և ժպտալով հարցրեց.

— Ի՞նչըխ ես:

— Լավ եմ, «Հուշարձանը» ուղարկեցինք տպարան:

— Չեմ հավատում:

— Ինչո՞ւ:

— Չգույշ եղիր, ֆեզ շխարբեն, աշֆովդ տեսե՞լ ես, որ արտադրական քաժնից «Հուշարձանը» տպարան են ուղարկել:

— Այո՛ւ: Ի՞նչ անհավատ մարդ ես, հիսուն հազար օրինակ տպաֆանակով հրատարակելու ենք:

— Իսկ չի՞ լինի հարյուր հազարով տպագրեք:

— Ինչո՞ւ չէ, այն ժամանակ մենք կշահենք, իսկ դու հոնորար ֆիշ կստանաս, ավելի ֆիշ, ֆան ֆսանհինգ, հիսուն հազարի դեպքում:

— Դե այդ ժամանակ վարվիր այնպես, ինչպես կուզես. որֆան հոնորար շատ, այնֆան լավ: Ժողովուրդը կասի՝ հայոց մեծ քանաստեղծին լավ են նայում:

— Երկու անգամ հիսուն հազար օրինակով կհրատարակենք,— ասացի,— և թուղթ կլինի, և դու կշահես...

Նորից ժպտաց:

— Խորամանկ ես, հա՛, խորամանկ: Մեկ էլ ստուգիր, տես «Հուշարձանը» իրո՞ք տպարան են ուղարկել: Հովհաննես Թումանյանի հատորը կիջեցնեն արտադրություն, կասեն Հովհաննես Շիրազինն է: Աղվեսները շատացել են: Առում են Թումանյանի «Ախթամարը» աասներկու լեզվով հրատարակում եք, քա իմ գործերը ե՞րբ եք ուսերեն հրատարակելու: Դե, ես գնացի, զգույշ եղիր, աշխատողների ֆեզ շխարբեն...

«ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԸ ՍՐՏԻՑՍ Է ԽՈՍԵԼ»

16 ապրիլի, 1968:

Մի ավրոմ ենք ստեղծել՝ «Հեղինակները հրատարակչությունում» խորագրով: Ուզում ենք մեր անվանի գրողները,

նկարիչները, պատմաբանները, արվեստաբանները, հասարակագետները իրենց տպավորություններն ու ցանկությունները գրեն այդ ալբոմում: Առաջին էջը բացել է Մարտիրոս Սարյանը նա նկարել է զույգ Մուսիսները, հայկական երկնասլաց բարդիներ և գրել. «Հայաստան» հրատարակչությանը մաղբում եմ հաշոդություններ, իսկ հայ ժողովրդին՝ նվիրական իղձերի իրականացում: Մարտիրոս Սարյան»:

Շիրազին ասացի.

— Հովհաննես, մի երկու խափ էլ դու գրի, իբրև ներդրում:

Նա թերթեց ալբոմը, տեսավ Մարտիրոս Սարյանի մաղբանքները և ասաց.

— Չեմ գրի... Ես հեղինակ չեմ, այլ «Հայաստան» հրատարակչության տնօրենը:

— Իսկ ե՞ս ով եմ, — հարցրի նրան:

— Դու տնօրեն չես, այլ դիրեկտոր: Դիրեկտորները գալիս, գնում են, իսկ տնօրենը՝ ոչ: Նա հարատև է:

Հրատարակչության գլխավոր խմբագիր Մկրտիչ Սարգսյանը ժպտալով հարցրեց.

— Շիրազ, ինչո՞ւ չես ուզում տպավորությունների գիրքը ֆեզնով բացենք:

— Գիրքն արդեն բացված է, այն բացել է Մարտիրոս Սարյանը, իմ պաշտելի Մուսիսները նկարել: Ես բավարարված եմ, վրձնի մեծ վարպետ Մարտիրոս Սարյանը սրախն է խոսել:

— Այոուհանդերձ, մի բան գրի, — ասացի ես:

— Իմ էջը զբաղեցված է, չեմ գրի, եթե իմ էջը սպիտակ լինե, կգրեի:

Եվ ոչ թե ալբոմում, այլ անանձին թղթի վրա գրեց.

*Ինչպես լռեմ՝ այսքան մոտ եմ Մասիսին,
Այսքան մոտ եմ, բայց կարոտ եմ Մասիսին,
Խաղաղութուն, տես քեզ ինչքան եմ պաշտում,
Որ չեմ գոռում, թե վառող եմ... Մասիսին:*

... Ալբոմում հետագայում իրենց տպավորություններն ու ցանկությունները գրեցին Սերո Խանգաղյանը, Պարույր Սևակը, Համո Սահյանը, Մարիետա Շահինյանը, Նաիրի Զարյանը, Վահագն Դավթյանը, Վարդգես Պետրոսյանը, Հրաչյա Հովհաննիսյանը և ուրիշներ:

«ՊՈՆԶԻԱՆ ՍԿՍՎՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԻ ԽՐՃԻՐԻՑ»

8 մայիսի, 1968:

Երիտասարդ ստեղծագործողներին խրախուսելու նպատակով «Հայաստան» հրատարակչությունը ստեղծել է «Առաջին գիրք» մատենաշարը: Յուրաքանչյուր գրքույկի ծավալը մեկ մամուլ է՝ յոթ հարյուր տող չափածո: Շիրագն ասաց, որ պաշտպանում է մատենաշարի մտահղացումը. երիտասարդները օգնության կարիք ունեն, բայց անհրաժեշտ է միաժամանակ պահանջկոտ լինել:

— Վահրամ Ալազանն է բանաստեղծական կենտրոն, — ասաց նա, — նա է ձեռք բռնել, վեր բարձրացրել, «Գարնանամուտ» խմբագրել: Ես բնավ չեմ մոռանա նրա եղբայրական հոգաաարությունը: Մեր որոշ սկսնակ բանաստեղծներ ո՛չ իմ հանապարհով են գնում, ո՛չ էլ Պարույր Սևակի, մոլորության մեջ են, ուստի օգնության մեծ կարիք ունեն, նրանք պետք է հետևեն հայ պոեզիայի գեղեցիկ ավանդույթներին: Ես մեկ անգամ չէ, որ ասել եմ և կրկնում եմ. ինչպես կաղնի ծառն է ոկսվում հողից, այնպես էլ պոեզիան է ոկսվում հայրենի խրհիթից: Բանաստեղծական մայր ախունքը մայրենի հողն է, մայրենի լեզուն: Սրանց ավելացրած՝ համամարդկային զգացմունքները:

— Հրաչյալի է: Իսկ ի՞նչ է, մեր հրատարակած առաջին գրքերն այդպիսին չե՞ն:

— Առայժմ՝ ո՛չ: Դրանք ձեռնարկի են նման, մանուշակ չեն: Այնուհանդերձ, ես գիտեմ նաև, որ անտարբ միայն կաղնիներից չէ, անառուով ծաղկում են և՛ փոփոխիկ մանուշակը,

և՛ հսկա կաղնին, և՛ մարենին, և՛ բարձր բարդին, դրանք բոլորն էլ պետք են, ինչպես մարդու գույգ աչքերը: Բայց ամեն մի հայ բանաստեղծ պետք է առաջին հերթին ուղեցույց ունենա Գրիգոր Նարեկացու և Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի ու նաև՝ շատես թե մեծամտում եմ, Հովհաննես Շիրազի պոեզիան ... Իմացե՛ք. իսկական պոեզիան միշտ բնական է և միշտ փաղափարական:

Կիրովականից Հրաչյա Սարոխան անունով մի պատանի երեկ ինձ մտ էր եկել, բանաստեղծություններ է գրում. «Առաջին գիրք» մատենաշարով պետք է լույս տեսնի նրա գրքույկը, պատրաստվում է բանակ մեկնել: Հայրենասեր տղա է, ծանոթացա նրա բանաստեղծություններին: Թեև որոշ գործեր պղտոր են, բայց խորքում գուլալ ու ազնիվ շաքան կա, դե՛, ինչքան շի՛նի Հովհաննես Թումանյանի հայրենակիցն է, արմատը կոռու ձորումն է: Օգնիր Սարոխանին:

Հենրիկ էդոյանը նույնպես արժանի է ուշադրության, սովորում է համալսարանում. նա էլ է առաջին գրքի հեղինակ, կարող է իսկական բանաստեղծ դառնալ:

— Իսկ ինչո՞վ է տարբերվում իսկական բանաստեղծը ոչ իսկական բանաստեղծից:

— Ինչը՞ղ չիդես, իսկական բանաստեղծն անուն ունի, անիսկականը՝ կեղծանուն:

— Իսկ դու իսկական բանաստեղծ չե՞ս, որ ծածկանում ունես:

— Տեսնո՞ւմ ես, դու կեղծանուն շասացիր, այլ ծածկանուն ասացիր, ուրեմն ինձ նիշտ հասկացար, և ապա՝ առյուծները օրենքից դուրս են: Ես Հովհաննես Շիրազն եմ....

Հրբբ՞:

ԱՆՄՈՌԱՅ ՄԱՅԻՍԻՆ

25 մայիսի, 1968:

Մայիս է, երևանյան կանաչ, գով, ջերմացնող մայիս: Ժողովուրդն այսօր գնում է Սարդարապատ, 1918-ի մայիս-

յան հակառակման, մեր գոյատևման համար նահատակ-
վածների հիշատակը հավերժացնող հուշարձան-համալիրի
բացմանը: Երեկ երեկոյան Շիրազի հետ պայմանավորվել էինք,
որ միասին ենք գնալու: Առավոտյան հիշտ ժամին Հրաչիկ
Սիմոնյանի հետ եղանք Շիրազի ասանը: Նկարիչ Հրաչյա
Ռուխկյանը, գրականագետ Մուշեղ Նարյանը և էլի մի ուրիշը
արդեն հասցրել էին մեզնից առաջ գնալ և համոզել Շիրա-
զին, որ իրենց մեկենայով տանեն: Բարեկեցի բոլորին:

— Զեզի ըսի, չէ՞, որ հրաաարակչության դիրեկտորի
հետ եմ գնալու,— առաց Շիրազը և մանկան պարզությամբ
տսես ուզում էր տրդարացնող հանգամանքներ գտնել:

Գնացինք:

Այսօր, 1918-ի այն բախտորոշ մայիսի նման բոլոր հա-
նապարհները Սարգարապատ են աանում: Մեկենաների շա-
րասյունը Երևանից ձգվում է մինչև Սարգարապատ: Գալիս
են Շիրակից, Զանգեզուրից, Գուգարի աշխարհից, Սևանի
ավազանից, Ղարաբաղից, Ախալաբադից ու Ախալցխայից,
Հյուսիսային Կովկասից և այլ հայաբնակ վայրերից: Գալիս
են ու գալիս:

Իչել ենք մեկենայից: Քայլում ենք դեպի համալիրի
կենտրոնական հաավածը: Շինարարական աշխատանքները
նոր են ավարտվում, կանայք նանապարհներին ջուր են շաղ
տալիս, ինչպես վաղնջական ժամանակներում մեր նախնի-
ներն են արել Վարդավաթի տոնին: Հագարավոր մարդիկ են
հավաքվել, ամենուրեք երգ-երաժշտություն, պար-խնդություն:
Պատմական Հայաստանի բոլոր գավառների, շրջանների տա-
րազը կգանես այրաեղ, և ինչո՞ւ միայն տարազը, նաև երգն
ու երաժշտությունը: Քայլում է Շիրազը և մամտում:

— Ուր տող բանաստեղծություն հուրինեցի,— ասում է
նա,— լսեք:

Ցածրաձայն արասանում է: Իսկական շիրազյան մի
նոր էֆայրոմտ՝ հիմն Սարգարապատի հերոսներին, հիմն՝
հայ ժողովրդի գոյատևման, գովք Մասիսներին:

— Ասեք՝ ինձ թույլ տան արտասանելու, Սարգարապա-
տի հակառակման իմ տուրքը տալու:

— Շատ լավ:

Շիրազը մոտենում է հուշադրյուրից շուր խմելու: Քրիտակ նորից ինչ-որ բան է մտնելում:

— Ի՞նչ ես ասում:

— Նահատակներին եմ հիշում:

Սրբ ֆառե աստիճաններով բարձրացանք ըլրի գագաթը, ուր հուշարձանների համալիրն է՝ զանգակները, դեպի հարավ նայող արատես արծիվները, հեկա պատին ժողովրդական աշխարհագրի վարտական գործողությունները պատկերող որմնաճանդակները, դեմ-դիմաց ֆարակերտ երկու հսկա սև ցուլերը և հետո նորից համալիրը, որը բարձրացել է Աբարատյան դաշտավայրում՝ ձյունաթագ Մասիսների հայացքի ներքո, Շիրազը ներշնչված նորից կարդաց իբ նուր քանաստեղծությունը, ընթացքի ժամանակ մի երկու տող փոփոխեց և ասաց.

— Այս համալիրը հրաշք է, օրհնվի հայ շինարարի ձեռքը, որ այս հրաշքը մեզ և սերունդներին է պարգևել: Սա մեր վերածննդի իսկական խորհրդանիշն է:

Ժամը 10-ն է: Կրակոտ ելույթներ են ունենում շատերը, փառաբանում մեր գոյամարտի հերոսներին և բարերար ռուս ժողովրդին, 1918-ի մայիսի 22—26-ը թուրքական հարձակումը ետ շարտած թշնամուն մահացու հուրված հասցրած ֆաշարի մարտիկներին: Միտինգը ռադիոֆիկացված է, բոլորը համակված են ժողովրդական սիրահների փառաբանությամբ:

Սարալունջի փեշերից երիտասարդները բացականչում են.— Ձայն տալ Շիրազին, հանգերգում են՝ Շիրազ, Շիրազ, Շիրազ...

Միտինգն ավարտված է: Շիրազին ձայն չհասավ: Երիտասարդների մի հոծ խումբ լսզանգներով գալիս է դեպի մեզ:

— Ինչիս էնեն, արանք մեզ կխեղդեն, ոնց դուրս գանք մարդկային այս ծովից, — ասում է Շիրազը:

Հանգստացնում եմ նրան, թեև ներքուստ անհանգիստ եմ: Շրջափակման մեջ ընկանք: Ընկերներիցս մեկը մոտեցավ և ասաց.

— Շիրազի երկրպագուներն իրենց սիրո գոհն են դարձնելու Շիրազին, հարկավոր է դուրս գալ այս հրմշտոցից:

— Ինչպե՞ս...

Նա Շիրազին աննկատ մի բեռնատար մեքենայի վարորդի կողքին նստեցրեց, հետո նայեց դեպի հակառակ կողմը՝ արժիվներին և ասաց.

— Ա՛յ, Շիրազը ֆայլում է երբորդ արծվի մոտ...

Թուրք միանգամից շարժեցին նշված ուղղությամբ: Հետո նա մի ֆանի տյլ ընկերների հետ մեզ տարավ մերձակա տներից մեկը: Տանը, բացի նոր միայն մայրացած գեղեցկատես կնոջից, ոչ ոք չկար: Նորածնին էր կերակրում: Տեսնելով, որ բազմությունը շարժվում է դեպի իրենց տուն, նորահարսը տագնապեց:

— Մենք կգնանք, թույլ տվե՛ք ընկերս՝ Հովհաննես Շիրազը, մի ֆիշ հանգստանա, հուզված է, կգնանք:

— Ի՞նչ, ի՞նչ,— զարմացած հարցրեց երիտասարդ մայրը:

Ես կրկնեցի: Նա միանգամից փոխվեց: Նորածնին դրեց օրորոցում, պատից կախված գորգը պոկեց, փոեց Շիրազի ռաֆերի տակ, շոֆեց և շշնջաց.

— Փառ՛դ շաա, այս ինչ բախտավորություն է, հայոց մեծ բանաստեղծը մեր տանն է:

Հետո նա թարմ թան բերեց և առաջարկեց խմել:

— Երեխային դեռ չենք անվանակոչել,— ասաց նա,— աճուներ Հովհաննես պիտի դնեմ, ի պատիվ այս հանդիպման:

— Հովհաննես շատ կա, Շիրազ կոչե՛ք,— ասաց բանաստեղծը...

Դրսում ամբոխված ժողովուրդը գտել էր Շիրազի հետերը, հավաքվել ասն շուրջը և հանգերգում էր.

— Շի-րա՛զ, Շի-րա՛զ...

Հետո նրանք մարդիկ ուղարկեցին իրենց սերը և հիացումը Շիրազին հաղորդելու:

Մայիսյան վարդեր ու յասամաններ, մանուշակներ և սուռամբարներ են նվիրում Շիրազին: Իսկ նա առաջարկում է այդ բոլորը դնել Սարդարապատի հակառամարտում զոհված հերոսների հուշարձանին:

3 հունիսի, 1968:

Շիրազն ասաց.

— Սարդարապատի նակատամարտի հուշարձան-համալիրն այն օրը լավ շաեսանք, ինձ ասար նորից տեսնեմ:

Գնացինք: Ճանապարհին Մուսալեռ սովխոզում հանդիպեցինք բարեկամիս՝ գեղապետ Լիպարիա Ավագյանին. Մեզ ասարավ իր հայրական տունը, որը գտնվում է նամփեգրին: Մայրը մեզ հյուրասիրեց: Թուր կերանք:

— Շիրազ, — ասաց Լիպարիաը, — տեսնո՞ւմ ես Մասիսը մեր պարտեզից ինչքան մոտ է երևում:

Հովհաննեսը երկնասլաց բարդիների արանքից նայեց, խորհեց և ասաց.

— Ձեր այգին Մասիսի փեշերից է կախված. ա՛յ, այս խաղողի վազը, ասես Մասիսի ներմակափայլ ձյունից է բրոնել: Ձեր տունը Մասիսի փեշերին է հենված, Մասիսատուն է:

— Հանգուցյալ հայրս՝ Ավագ Ավագյանը, Մուսալեռ սովխոզի հիմնադիրն է, — շարունակեց Լիպարիաը, — դարսեցի է, ձեր մայրն էլ էր Ղարսից, մեր տնատեղը նա է ընտրել, ասել է՝ տունս այնպիսի անդ պետք է շինեմ, որ գիշերը պանկած տեղս էլ Մասիսը աչքիս առջև լինի:

— Ձեր հայրն էլ է ինձ նման Մասիսը խենթի պես սիրել, — կասակում է Շիրազը: — Դե՛, ո՛ր հայր չի մասիսահարոտ:

Երեք ժամ անցկացրինք Սարդարապատի համալիրում: Շիրազը շարունակ ինքն իր հետ էր, խոսում էր, ուրախանում, տխրում, փիլիսոփայում: Գանգատվում էր, թե Արարիչն անարդար է, ժամանակը սխալ է բաժանել, հավերժը իրեն է պահել, վայրկյանը մարդուն տվել: Հավերժ աստղերն էլ հավերժական չեն, հները կերթան, նորերը կգան, մենք էլ ենք երթալու, բայց երանի նրան, ով իր գործով ժողովրդի սրտում կապրի:

Հոկտեմբեր, 1968:

Ջանգահարում եմ Շիրագին, տանը չէ: Նորից եմ զանգահարում, հեռախոսափողը վերցնող չկա: Այդ պահին նա ներս է մտնում իմ առանձնասենյակը:

— Աչքդ լույս, Հովհաննես, «Հուշարձանը» հրատարակվեց, — ասում եմ և ընդառաջ գնում:

— Ուրդե՞ղ է, ուրդե՞ղ...

Դեռևս տպագրական ներկի յուրահատուկ բուրմունքը պահպանած գրքից հինգ օրինակ նվիրում եմ նրան: Համբուրում է գիրքը, փաթաթվում և ողջագուրվում ինձ: Չգիտեմ ուրախությունից, թե հուզմունքից լաց է լինում:

— Ա՛խ, մայրիկ ջան..

— Շատ լավ գիրք է դուրս եկել, Շիրագ, հրաշալի՛ է, դա քո «Երգ-երգոցն է», ստեղծագործություններիդ պոակը:

— Այո՛: Դե՛ թող հիմա խոսեն. երանի Ավոն՝ վարպետը, կենդանի լինե՞ր, տեղներ: Արդեն թե՛ն ու հանգիստ եմ զգում ինձ:

Ներս մտան Մկրտիչ Սարգոյանը, Հրանտ Ղազարյանը և Գևորգ Արշակյանը: Տեղնելով հուզված Շիրագին, գրքերը՝ հայտնեցին իրենց ուրախությունը:

— Տեսա՛ր, Շիրագ, բա ասում էիր չի լինի, տեսա՛ր, ինչպե՞ս ծնվեց գիրքդ...

— Գիրքը գլխումս է ծնվել, — ասաց Հովհաննեսը, — իսկ ծննդյան վկայականը տվել է հրատարակչությունը:

— Այն էլ հիռուն հազար տպաֆանսկով, — ասաց Հրանտ Ղազարյանը: Հայ գրականության պատմության մեջ դա տնտեսադեպ իրողություն էր: Առաջին անգամ այսպես ասում բանաստեղծությունների ժողովածու էր հրատարակվում նրման տպաֆանսկով:

— Շնորհակալություն, — ասուց Շիրագը և գրքերը թևտակին դուրս եկավ առանձնատենյակից:

Հրատարակչությունում այդ օրը տոն էր... նոր գիրք էր ծնվել, այն էլ ինչպիսի՛ գիրք՝ հայկական ֆնարեգության և մայրերգության «Երգ Երգոց»...

Մի ֆանի օր անց Շիրազը «Հուշարձան մայրիկիս» գրք-
ֆից մի օրինակ արտառուչ ինֆնագրով նվիրեց ինձ: Գրքում
մի փակ ծրար կար, առանց հասցեառի: Մտարք վերա-
դարձրի Շիրազին: Նա շվերցրեց:

— Այդ ծրարը քեզ եմ տալիս, — ասաց նա, — ազատ
ժամանակ նրա պարունակությունը կարդա և սրտիս նայեր
լսիր:

— Երեի մասխերգություն է:

— Ո՛չ, նզովք է անարդար օրենքների, մոհչոց՝ ամե-
նայն արտով:

«Ամենայն արտովը» ցատումնալից գործ է... Այն ավարտ-
վում է այսպես.

Օտարի ձեռքից հինգ հարյուր տարվա հողերը այսօր
ետ են գրավվում,
Փրենք է, մենք էլ ասում ենք, որ հողն սեփական
տիրոջն է լոկ պատկանում,
Բայց ինչո՞ւ խոսել ուրիշի մասին և միշտ մոռանալ
ցավը սեփական,
Ինչո՞ւ վաստակել, որ ուրիշն ուտի, մոռանալ քաղցը
հարադատ մանկան,
Ո՛չ, բավական է, չպետք է լոնել, երազել քիչ է,
պետք է պայքարել,
Քառասուն տարին դեռ նոր է անցել, Հայոց հողերը
պետք է պահանջել,
Քարտեզի վրա դեռ շատ անուններ մինչև օրս էլ
հինն են մնացել,
Նույնն են մնացել քաղաքներ, գյուղեր, լճեր ու գետեր ու
հին ամրոցներ:
Սահմանին թիկնած Արարատն է սեզ, իրեն լանջերով
զմրուխտ կուսական,
Եվ Արարատն է Սիմբոլը Հայոց, միշտ թովչանքով լի
քաղցր, մայրական,
Իսկ այն կողմ, հեռվում, Բյունգոլն է լքված, սզվորի
նման սև ամպերի մեջ,
Վանա և Նազիկ լճերն են նիրհում, Ախթամարն է մեր

արտասովոր անվերջ:
Այս բոլորը դուք տեսնում եք, Հայեր, և այն թողել եք
բախտի պատմության,
լոկ ցանկանալով հարցեր չեն լուծվում, այս է մեզ
ասում մեր կյանքն աժյմյան,
Պետք է պայքարել, պետք է պայքարել և պետք է
սոսկալ մահից սեփական,
Մահվան գնով էլ պարտավոր ենք մենք միացյալ
տեսնենք հողը հայկական:

13 հոկտեմբերի, 1968:

— Շիրազ, լավ ես գրել, ցատումդ արդարացի է, բայց
կրկնություն է:

— Քանի անարդարությունը չի վերացել, հայ ժողովուրդը
կոտորակված է, նրա մի մասը պանդուխտ, ես պետք է
բողոքեմ... Ի՞նչ է, դո՞ւ էլ ես լռում, երբ առանց հայ ժո-
ղովրդի հետ խորհրդակցելու, նրա կարծիքն իմանալու առան-
ձին արձույտներ հայտարարում են՝ Թուրքիայից հո-
ղային պահանջներ չունենք: Իսկ ո՞վ է ասում՝ չունենք, նը-
րանք չգիտեն, որ 1945-ին Պոտսդամում Խորհրդային Միու-
թյան պատվիրակությունն արդարացիորեն պահանջում էր, որ
Թուրքիան վերադարձնի բռնի զավթած հայկական հողերը,
հայկական վիլայեթները, մեր Ղարսն ու Արզահանը, Սուրմա-
լուն ...

— Ես չեմ լռում, իսկական հայրենասեր ինտերնացիո-
նալիստը նա է, ով սիրում է իր ժողովրդին: Ով իր ժողովրդ-
դին չի սիրում, նա չի կարող սիրել ուրիշ ժողովուրդների և
ազգերի:

— Ուրեմն «Ամենայն սրտովը» կրկնություն չէ, նոր մը-
որնչոց, հզոր մանչոց... Մի կիսատ պոեմ էլ ունեմ՝ «Տըր-
տունը հայրենամոռնի», տվելի նիշտ պոեմի նախերգանքն
այդ նույն թեմայով:

Իմ թղթերի մեջ պահպանվել են հեղինակի ձեռնով, կար-
միր մեկանով գրած «Տրտունը հայրենամոռնի» երկու ծա-
վալուն էջ...

20 դեկտեմբերի, 1968:

Սերո Խանգաղյանը, Համո Սահյանը և Գուրգեն Մահարին գործով հրատարակչություն են եկել: Զբոցում ենք. Սերոն և Համոն, ինչպես հասկացա, եկել են բարեխոսեն, որ Գ. Մահարու հաառների հրատարակչությունն արագացվի: Մահարին իր անելիքը գրավոր ներկայացրեց: Կարդացի:

Հոնորար էր ուզում, այն էլ մեծ գումար:

— Գուրգեն խան,— ասացի նրան,— Ձեր խնդրանքը ի կատար: Հանգիստ մնացե՛ք: Այսօր նոր բան գրե՞լ ե՛ք:

— Այո՛, օր չի լինում, որ չգրեմ: Նոր գրքիս տպագրանակը շե՛ք բարձրացնի:

— Ինչո՞ւ չէ: Գեղարվեստական արձակի պահանջը մեծ է: Սերոն, Վախթանգը լայն նանապարհ են բացել: Զափածոն էլ է հիմա լավ տարածվում:

— Այսինքն՝ Հովհաննես Շիրազի «Հուշարձան մայրիկիս» գրքի նման,— տասց Մահարին:— Գիտե՛ք ինչ, լույս են տեսել բանաստեղծությունների գրքեր, որոնք գրախանութ են ասարվել և այնտեղից փոխանակ ընթերցողի ատն գնալու, սախաված են եղել պահեստ վերադառնալ: Բայց Շիրազի «Հուշարձան մայրիկիս» գիրքը, որ ձեր հրատարակչությունը լույս է ընծայել հիսուն հազար ապաֆանակով, աչքովս եմ տեսել, սպառվեց այնպիսի արագությամբ, ինչպես սովի ասարիներին մաանաֆաշ հացը: Դա աննախադեպ երևույթ էր:

— Դուք հիշա ե՛ք: Այժմ պատրասավում ենք «Հուշարձանը» ևս հիսուն հազար տպագրանակով հրատարակել, համոզված ենք, որ նույնպիսի արագությամբ կսպառվի: Վերջերս ֆրանսիացի մի բանաստեղծի հետ զրույց ունեցա: Երբ նա իմացավ, որ բանաստեղծությունների գիրքը 50 հազար օրինակով ենք ապագրել և մեկ օրում սպառվել է, շաա գարմացավ: Զարմանքը ֆիչ է. չհավատաց: Նա ասաց, որ իր հայրենիքում արվեսաթ ու գրականության ֆիչ երկրպագուներ չկան, այդուհանդերձ, նշանավոր բանաստեղծների զրբերը լույս են տեսնում երկուսից-երեք հազար տպագրանա-

կով, այն էլ ոչ միշտ: Շիրազի բոլոր գրքերն էլ շերմ ընդունելություն են գտել ընթերցողների մոտ: Նրա գրքերն ընթերցողներ չեն փնտրել, ընթերցողներն են փնտրել Շիրազի գրքերը:

— Եթե Շիրազը մեր խոսակցությանը ներկա լիներ,— տասց Սերուն,— կասեր՝ հըբբ'... Շիրազը պոռթկումների բանաստեղծ է, մեծ ֆնարերգակ, ամեն ֆայլափոխում արարում է մի նոր հրաշխ:

— Շիրազը առասպել է,— ավելացրեց Համոն,— առասպել է բոլորի համար, և՛ հայրենիքում, և՛ սփյուռքում:

— Հրատարակչություն եկանք իմ հարցով,— ասաց Մահարին,— բայց զբաղվեցինք Շիրազով: Վատ չէ...

«ԷՒԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՊԵՏԻԿԸ ՉԷ՞»

Մի ֆանի օր անց Շիրազը հրատարակչություն եկավ: Իր ոովորության համաձայն առանց նտխագգուշացման մտավ կաթինետ: Մոտս թարգմանիչ Պետրոս Նազարյանն էր: Շիրազին խնդրեցի մի ֆանի բոպե համբերել, մինչև մեր գրույցը ավարտենք: Դա նրա սրտովը չէր:

— Էդիկ թարգմանիչ Պետիկը չէ՞:

— Այո:

— Դա ծուռ է, օտարամուլ: Թարգմանիչները ավերել են մեր գրականությունը, գրանց երես մի տախ: Այժմ ով ասեո որ թարգմանությամբ չի զբաղվում, հրատարակչությունը ինչո՞ւ չի թարգմանական գործերի մրցույթ հայտարարում: Ես չգիտեմ ֆաղաֆական գրքերի թարգմանության որակն ինչպիոին է, հավանական է, բարվոք է, ֆանգի երվանդ Տեր-Մինասյան, Հայկ Ազատյան, Վարդան Փոթեյան, Հարություն Թուրշյան, Տորֆ Դադիյան և այլք ունենք, բայց գեղարվեստականի վիճակը շատ ծանր է...

Այնուհետև խնդրեց, որ Նազարյանը խոսք կարն կապի:

— Ընկեր Շիրազ,— ասաց Պետրոսը,— Դուք հաննարեղ եք...

— Էդիկ լավ ասիք, նորից կրկենք՝ պրոֆեսոր պատմա-

բանը լսի: Դա ձեր խոսքը չէ, ժողովրդինն է, ժողովուրդն ար-
դար է և անմահ:

— Ի՞նչ է, Շիրազ, դու չգիտե՞ս, որ հանճարեղ բանաս-
տեղծ ես,— ասացի ես:

— Ես գիտեմ, բայց թշնամիներս ցույց են տալիս, որ
իրենք չգիտեն: Հարություն Քուրջյանի գրքի մասին խնդրանք
ունեմ, քեզ հետ առանձին պիտի խոսեմ: Հայոց լեզվի ու-
Ֆորմատորի հետ խոսքը վերջացրու:

— Ընկեր Շիրազ, դո՞ւմ էլ եմ իմ առաջարկություննե-
րին դեմ,— արտևեղած առաց Պ. Նազարյանը:

— Ձեր առաջարկությունները նոր չեն, «Պրոլետկուլտից»
են գալիս, դրանցից նավթալիների հոտ է փչում: Ամեն մի
ժողովուրդ ունի իր լեզուն, իր պատմությունը: Լեզուն ոչ
միայն հաղորդակցության միջոց է, այլ նաև ազգապահպա-
նության միջոց, ազգապահպանության զենք, պատմություն:
Ով չի ուզում գիտակցել իր արմատները, ով իր ազգը, իր
լեզուն չի սիրում, նա ուրիշ ազգերի, ուրիշ ժողովուրդների
լեզուն չի կարող սիրել: Հայոց լեզուն թուր է, զգուշացիր:
Մեր լեզուն դա ժողովուրդն է, նրա պատմությունը, մեր վար-
դանացում օտար փշերի շարք է, որ դուրս էլ եմ ուզում
ավելացնեմ: Մի՛ արեմ: «Հայոց լեզվապատումում» այսպիսի
փառյակ ունեմ:

*Ծովի մոտով անցնող գետակ —
ծովին շատ մի մոտենա,
Քեզ կույ կտա ոսկի վտակ՝ ծովին
շատ մի մոտենա,
Ինչ որ օտար սերը շարավ՝ թո
խաբվելը քեզ կանի,
Քեզ կձուլի ծովն անհատակ,
ծովին շատ մի մոտենա ...*

Հրրր: Հասկացար, օտարամոլության ասպեռ:

Պեարոօր գնաց:

Շիրազին անհունգասացնում էին Հարություն Քուրջյանի
«Սարգսրապատի հերոսամարտը» աշխատության երկրորդ
հիւստարակության (առաջինը լույս էր տեսել 1965 թ.) շուրջ

եղած անհարկի խոսակցությունները: Չէ, ինչ բարեխոսություն, հիմնավորել, որ այն արժեքավոր գիրք է, պատմագիտական նշանավոր երեւոյթ, հարկավոր է տպագրությունն արագացնել:

— Այն, ինչ որ մենք տեսանք Սարգսրապատում, այն հոշակապ համալիրը, որ հայ ժողովուրդը կառուցել է,— ասում է Շիրազը,— նրանում իր մասնիկն ունի նաև Թուրշյանը՝ հակատամարտի մասնակիցը և նրա պատմության ատրեգիկը: Չորավար Անդրանիկին նվիրված էֆսպրամտս, որ միտքնգին թույլ շտվեցին արտասանեմ, Թուրշյանի գրքի ազդեցությամբ եմ գրել: Թուրշյանի գրքի խմբագիրը և անուշաբանի հեղինակը ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանն է: Գիտեմ, որ այդ խոշոր պատմաբանին դու հարգում ես, նրա խոսքը ծանրակշիռ է, բայց ուզում եմ, որ իմ խոսքն էլ գումարես նրա խոսքին, նրա ջրաղացի ջրին...

Շիրազը միշտ էլ մնում է Շիրազ: Հարկավոր էր շարունակ լարված հետևել նրա մտքի ընթացքին, ըմբռնել խոսքի ծալքերը: Երբ համոզվեց, որ հրատարակչությունը դրական դիրժորոշում ունի Հ. Թուրշյանի գրքի երկրորդ հրատարակության հարցում, մի պահ դուրս եկավ կաթինետից և նորից հետ եկավ ինձ մոտ: Պարզվեց, որ Թուրշյանի հետ միասին են եկել հրատարակչություն: Նման վերաբերմունքը, ինչ խոսք, հաճելի չէր, քանզի Թուրշյանի հետ շուրջ երեսունամյա գործընկերներ ենք, և իբրև ավագ ընկերոջ ակնածանք եմ տածում նրա նկատմամբ: Թուրշյանը մի մեծ ծրար տվեց ինձ. դիմում էր և «Իսասակապետ պատմաբանը» խորագրով մի հոդված, որը, ըստ էության, պատասխան էր իր ընդդիմախոսին՝ Մարտին Մարտիրոսյանին:

Շիրազն իր գործն ավարտված համարելով, գնաց. մեր գրույցը Թուրշյանի հետ շարունակվեց:

— Դուրս գիտեմ, թե ինչ ազնիվ սիրտ ունի Հովհաննեսը,— ասաց Թուրշյանը,— ընկույզի նման դրսից բիրա և, բայց ներսից ֆնֆուշ, նա շատ մեծ հայ է, ասված խոսք է, ով իր ազգին, իր պատմությունը չի սիրում, նա կոսմոպոլիտ էլ չէ: Շիրազը «Իմ նախորդներին» բունաթանդություն մեջ ասել է.

Դուք շեփորում եք տրակտորը դեռ
ես սիրտն եմ կարդում տրակտորիստի,
Ձեր երգը՝ պողպատ, իմը՝ սիրտ ու սեր,
Ու... մի՞թե սրտիս ժանգը կնստի:

- Ընկեր Թուրշյան, ինչ լավ էլ հիշում եմ:
- Բա՛ ինչպես, մոռանում եմ, որ ես գրողների միության անդամ եմ, Շիրազի հարեանը և նրա ստեղծագործությունների երկրպագու:

«ԲԱՐՁՐ ՊՈՆԶԻԱՆ ԱՆԹԱՐԳՄԱՆՆԵԼԻ Է»

Դեկտեմբեր, 1968:

Գրականագետ Միֆայել Զավարյանը «Նրևան» թերթում մի հոդված է տպագրել՝ Շիրազի ուսերեն թարգմանված բանաստեղծությունների ժողովածուների (1956, 1960) մասին: Նա հատկապես ֆննդաասել է Մասկվայում պոեաի 1960 թվականին լույս տեսած Հատրնտիրը, որի թարգմանությունները կաաարել են շուրջ 30 բանաստեղծ: Հոդվածում հիշատակված են անհաչող թարգմանությունները: Այնպեո օրինակ, Շիրազը գրել է.

Հորդ են գետերն այս գարնան,
Խենթ են գետերն այս գարնան,
Ու գետերի պես գարնան
Իմ ջնարը խենթ է դեռ:

Ռուսերենում թարգմանված է.

Бурливы реки весенние,
Безудержны реки весенние,
И рекам весенним подобна,
Лири звучит светло. (?)

«Խենթ է դեռ»-ը թարգմանվել է «звучит светло»: Մի ուրիշ օրինակ: Մի անվերնագիր բանաստեղծության մեջ ասված է.

*Այս, եթե ընկնեմ մի օտար սրից,
Ու սև ազոավը կոնշա վրաս...*

Թարգմանվել է.

Если я паду среди чужих полей
От меча паду в дальней стороне...

և այլն:

Ի՞նչ խոսք, որս բարձրանաչակ ընթերցողին նման թարգմանությունները չեն գոհացնի: Ավելին, Շիրազի ստեղծագործությունների գեղարվեստական արժեքը աեղ չի հասնի, անբացատրելի կմնա Շիրազ-ֆենոմենը:

Հողվածագիրը առաջարկում է բարելավել Շիրազի երկերի թարգմանությունների որակը: Հողվածի մեքենագիր օրինակը Շիրազը փոստով ուղարկել է ինձ: Թե ինչո՞ւ փոստով, այդպես էլ չհասկացա: Առաջին էջի լուսանցքում գրել է. «Եթե դու ազգի գրականության շահերն ես պաշտպանելու, ապա սա կարդա: Հովհ. Շիրազ»: Իսկ վերջում ավելացրել է՝ «Այս ազնիվ հողվածը ապված է «Երևանում», Բո Նախորդները կարդացին և... լուռ իրենց Պեգաս կարծողներ... հույսս թամբ էլ շարին իրենց վրա... Ես նույնիսկ խնդրեցի, որ Պեահրասար աչքի առաջ ունենա, իմ գրվածքները նորից թարգմանել աա, մարդ բերելով այստեղ, բայց շարվեց: Վասրնգի... Հ. Շիրազ»:

Ճիշտ է, «Հայաստան» հրատարակչությունը Մոսկվայի «Գեղարվեստական գրականություն» հրատարակչության հետ ձեռնարկեց Շիրազի ստեղծագործությունների նոր թարգմանությունը, բայց, ցավոք, թարգմանիչները լիովին չարարացրին հրատարակիչների և ընթերցողների հույսերը:

Շիրազին թարգմանելն այնքան էլ հեշտ չէ: Իա ինքն էլ գիտեր, Բանի որ նրան է պատկանում «Բարձր պոեզիան անթարգմանելի է» ձևակերպումը:

— Բարձր բանաստեղծության փիլիսոփայությունը այլ

լեզուներով քարգմանէք տեխնիկայի գործ է,— ասում է Շիրազը,— իսկ բանաստեղծական արվեստը դժվար քարգմանելի:

— Շիրազ, համաձայն լինելով մտֆերիդ, միաժամանակ պեաք է ասեմ կան և լավ քարգմանիչներ, ինչպես, օրինակ, Խան-Մասեհյանն ու Պաստեռնակն են, որոնք անզուգական քարգմանություններ են կատարել: Հրատարակչությունում մի նոր բաժին ենք ստեղծել, վարիչը գրականագետ Լևոն Մկրտչյանն է, որը առաջադիր խնդիր ունի հայ գրականության նշանավոր ստեղծագործությունները քարգմանել և հրատարակել ռուսերեն և դրանով իսկ այն դարձնել ընթերցող լայն մասսաների սեփականությունը: Մոսկվայի «Գեղարվեստական գրականություն» հրատարակչության հետ միասին վերջերս պայմանավորվել ենք քո ստեղծագործություններից մի նոր, հաջող Հատրնտիր կազմել և հրատարակել: Այդ աշխատանքը արդեն սկսված է: Դրանով զբաղվում են Անահիտ Մակինցյանը և Լևոն Մկրտչյանը: Հույսով եմ, որ ռուս ընթերցողը շուտով կհանդիպի Հովհաննես Շիրազին: Այն էլ ասեմ, մեր գլխավոր խմբագիր Մկրտիչ Սարգսյանը ինձ ծանոթացրել է Գրողների Միության ֆարաուղարությանը ներկայացված մի գրավոր առաջարկության հետ, որն առնչվում է մեր այս խոսակցությանը: Ահա այդ առաջարկույթ անտեխտը:

ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆԸ

Առաջարկություն

Այժմյան մեր գրականությունն իր մակարդակով բարձր է և չի գիջում մեր մեծ միության մյուս գրականություններից: Ելնելով մեր գրականության շահերից, մենք առաջարկում ենք Լենինյան մրցանակի ներկայացնել մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազին, որին մենք համարում ենք իսրհրդային դասական բանաստեղծ: Ցավելով պիտի նկատենք, որ Հովհաննես Շիրազից ռուսերեն հրատարակված է միայն մի

փոփոխական ժողովածու: Ուստի առաջարկում ենք միջնորդել «Հայաստան» հրատարակչությանը ուսերեն թարգմանությամբ հրատարակել բանաստեղծի Հատընտիրը, որի մեջ կմանեն հանրահոշակ «Բիրյիական», «Մեր գյուղերի անունները», «Սիամանթո և Խչեզարե» և մյուս պոեմները, ժողովուրդների եղբայրության, Հայրենական մեծ պատերազմին ու խաղաղության նվիրված բանաստեղծությունները, սիրո և մայրական թեմաներով զրված երկերը, որոնք թե՛ իրենց մոտիվներով, և թե՛ բարձր արվեստով միանգամայն արժանի են Լենինյան մրցանակի: Հաղորդումները կարող են ներկայացվել, ինչպես այդ արվում է:

Մենք համոզված ենք, որ բանաստեղծի այդպիսի ժողովածուի ուսերեն հրատարակությունը՝ լավ թարգմանությամբ և լավ առաջաբանով, լայն արձագանք կգտնի և պատիվ կբերի մեր գրականությանը:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Հ. Մկրտչյան
2. Մ. Սարգսյան
3. Գ. Արշակյան
4. Ժ. Ավետիսյան
5. Լ. Հախվերդյան
6. Գ. Հովսեփյան

— Մկրտիչը ինձ էլ է ծանոթացրել այդ թղթին և ասել, որ Սերո Խանգաղյանը, Համո Սահյանը, Սուրեն Աղաբաբյանը և Ռուբեն Զարյանը իրենց ձայնը միացրել են նրանց արդար ձայնին:

— «Հայաստան» հրատարակչությունն էլ է միացնում, այդպիսի Հատընտիր կստեղծենք, ուս թարգմանիչներ ենք հրավիրել...

3 հունվարի, 1969:

— Ամանորի շնորհավորական բացիկդ ուսացա,— ասաց Շիրազը,— հուզվեցի, հրաաարակչության շնորհավորանք կարեւոր է: Գրողն առանց հրաաարակչության նույնն է, ինչ ձուկն առանց ջրի: Դե, որ այդքան ջերմ շնորհավորանք ես ուղարկել, նոր ասարվա ցանկություններս լո՛ր: Հասորներս հրաաարակեմ, լույս աշխարհի բերեմ «Հայոց Դանթեականը», «Անին», «Քառաձայն պատարագը», իմ բոլոր գործերը: Ռուս քարգմանիչներ հրավիրեմ և իմ գործերից մի հզոր հատոր լույս ընծայեմ... Վերմիշեի «Ամիրսպասալար» վեպը հայերեն հրաաարակեմ, շատ պետական գիրք է: «Հայ մատենագիրներ» և «Սփյուռֆահայ գրողներ» մատենաշարերը շատ օգտակար են, եթե կարող եմ, աստեկան մի ֆանի հեղինակի երկերի ժողովածու տպագրեմ: Ժամանակակից հեղինակների գործերի վերահրատարակությունները մի երկու տարով դադարեցրեմ, որ նոր բաներ գրեմ: Կյանքից հեռագածներին սյիտի շատ վերահրաաարակել: Դրանով են նրանք նորեն կյանքի կոչվում:

Լսեցի, որ «Հայկական մանրանկարչություն» գրքի վրա երկու կիլոգրամ ոսկի և նույնքան էլ արծաթ եմ օգտագործել, հի՞շտ է:

— Այո, հույանդական, տպագրական ոսկի:

— Իսկ իմ հանհարեղ գրքերի վրա ե՞րբ եմ ոսկի ծախսելու: Վահրամ Ալազանի, Գուրգեն Մահարու, Մկրտիչ Աբմենի, Գառնիկ Ղազարյանի (հին բուլղերի է), Վաղարշակ Նուրենցի գործերին ուշադրություն դարձրեմ... Համո Սահյանի «Քարափների երգը» հրաշալի է ստացվել, այդպիսի մի գիրք էլ իմ գործերից հրաաարակեմ: Տեսնո՞ւմ ես, ինչքան բան խնդրեցի:

18 փետրվարի, 1969:

Շիրազը եկավ հրատարակչություն: Չբարեեց, թեև գլխի թեթև շարժում արեց: Նայում է պատերին, ցածրաձայն ինչ-որ բան է խոսում: Ներս մտավ գլխավոր խմբագիր Մկրտիչ Սարգսյանը:

— Բարե, Առյուծ,— Շիրագի կողմը նայելով ասաց նա,— գիտե՞ս, որ քիչ առաջ քո բենեֆիսն էր, մեր կոլեկտիվի աս-րեկան ժողովում օվսաննտ հյուսվեց քո անվանը: Սառույցը կոտրվեց...

— Հովհաննեսը ներս եկավ և ինձ շբարեեց,— ասացի Մկրտչին:

— Ինչպե՞ս թե: Զարմանալի է:

Շիրազը մեղմ ժպտաց.

— Ես արդեն գիտեմ ձեր ժողովի մասին: Գոհ եմ: Գովասանքներից սարսափելի վախենում եմ, ավելի շատ դիրեկտորի համար եմ մտածում: Շնորհակալ եմ: Աստված վերից նայում է և հսկում: Նա դարձավ դեպի ինձ.— Բարե, պատմաբան դիրեկտոր: Մուկուշ, ես ասել եմ, չէ՞, որ հրատարակչության ղեկավարը լավ է գրող շիինի, վերեններում ձայնս, հավանական է, լսել են: Բայց մի տարի էլ չի անցել, դիրեկտորի մագերը հերմակել են: Ռազմանակատում շներմակեց, իսկ այստեղ... էհ, դու էլ կարող ես ինձ նման հանգերգել տողերս.

Գարնանային ջրերն՝ ո՞ւր,

Զահելուժյան օրերն՝ ո՞ւր,

Ո՞ւր գնացին, ո՞ւր եկան,

Այս մանրաթել ձյուներն՝ ո՞ւր...

Հետո նա գրեց այս ֆառատողը և հանձնեց ինձ:

— Պահիր, պետք կգա... Դու գիտես արժեքավորել իմ թղթերը:

Արդեն ուշ էր, բոլորը տուն էին գնացել, պահակ նիկոլը, իր սովորության համաձայն, սենյակներն էր ստուգում,

դոները փակում: Տեսնելով Շիրազին՝ ասաց.

— Շիլագ ջան, էդ ինչ լավ ուլաանավոր էիր կլել, էսոյ ժողովում կալդացին, բոլորս հուզվեցինք, լացացրիր մեզ, բե ձեռքդ համբույեմ, հալալ լինի կերած կաթդ:

— Ա՛յ, ա՛յ, կաեսնի՞ք, ժողովուրդը ինչ կարծիք ունի իմ մասին, իսկ թզուկ ֆենադատները սուր են նոնում, այսինքն՝ իզուր անդր թուղթ են մրտաում: Կարեւորը ժողովուրդի կարծիքն է: Ժողովուրդն անմահ է, Շիրազն էլ է անմահ: Ես այդ վայ ֆենադատների մասին էպիգրամ եմ գրել, ուզում եմ արտասանեմ.

*Հազար կողմից վրա տալիս,
Ինձ վրա են անվերջ գալիս
Քննադատներն այս անպատկառ,
— Ո՞ւր է, չկա նոր կյանքը վառ
Քո երգերում, քո գրքերում,—
Ինչո՞ւ է քեզ Անին գերում,
Բավ չէ՞ դու մեզ տանես Վանի
Ավեր կողմերն Հայաստանի,
Ո՞ւր է նորը քո երգերում,
Ինչո՞ւ չկանք քո գրքերում...
Մոնչում են վրաս այսպես
Քննադատներն այս թիզ ու կես,
Այնպես, ինչպես հագած զրահ...*

Հը՛մ, ի՞նչըխ է:

— Լավ է,— ասացի,— զարմանալի հիշողություն ունես, բոլոր գրվածքների բերանացի հիշում ես, այդ ինչ հիշողություն է:

— Հըբը՛, բնձի Շիրազ կրսեն:

— Գրի՛ր, աուր, ինձ պեաք է:

— Կտամ, բայց վերջի հինգ տողը կհանես, գիտեմ:

Մի ֆանի օր անց Շիրազը ինձ հանձնեց այդ էպիգրամի ձեռագիրը, որը հրատարակում եմ: 12-րդ տողի առաջին բառը... փոխել եմ, վերջին հինգ առոները հանել:

1968-ին «Հայաստան» հրատարակչության հունձքն առաա էր: Արգասավոր էր և Հովհաննես Շիրազի ստեղծա-

գործական կյանքի:

Շիրազն ասաց.

— Դե՛, որ իմաստուն ես, կարո՞ղ ես ասել այս տարի մենք քանի անգամ ենք հանդիպել և զրուցել զբաղանության, զբահրատարակչության, իմ հոգսերի և այլ հարցերի մասին:

— Այո՛, կարող եմ, քանզի «Օրագիր» ունեմ, իսկ դու..

— Դե՛, որ գիտես, աստ քանի անգամ:

Թերթում եմ «Օրագիրս», հաշվում. հիսուներեք: Չարմա-
նում է.

— Շատ համբերատար մարդ ես, հա՛...

— Ես շատ զոհ եմ այդ հանդիպումներից, չէ՞ որ դու Հովհաննես Շիրազն ես...

ՀԱՐՍՏԱՑՆԵՆՔ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ
ՉԱՐԵՆՑՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՆ Ը

3 ապրիլի, 1969:

Տեղի ունեցավ Խորհրդային Հայաստանի գրողների Միության 5-րդ պլենումը: «Հայ պոեզիայի արդի խնդիրները» թեմայով զեկուցում կարդաց բանաստեղծ Գևորգ Էմինը: Ելույթներ ունեցան Աշոտ Գրաշին, Մկրտիչ Կորյունը, Ռաֆայել Արամյանը, Պարույր Սևակը, Սուրեն Աղաբաբյանը, Հովհաննես Շիրազը, Արաո Եղիազարյանը, Ստեփան Վարդանյանը, Վազգեն Մնացականյանը և տողերիս գրողը: Գլխավոր ուշադրությունը նվիրվեց Վ. Ի. Լենինի կերպարի գեղարվեստական պատկերման, հայ բնաբերգության լենինիանայի շարենցյան ավանդույթների զարգացման հարցերին:

Մինչև պլենումի աշխատանքներն սկսելը Շիրազը զրույց ունեցավ ինձ հետ: Պատմահեղափոխական մի քանի վավերագրեր հանձնեցի նրան ծանոթանալու: Խորհուրդ տվեցի ելույթը նվիրել շարենցյան ավանդույթներին:

Այսպես էլ արեց: Դա նրա հրապարակային ուշագրավ ելույթներից էր:

Խոսելով Եղիշե Չարենցի ֆնարերգության լենինապատման մասին, Շիրազը ցույց տվեց նրա ֆերթվածների ուժի և գեղեցկության պոետական գաղտնիքները:

— Եղիշե Չարենցը մեր պոեզիայի լուսապայծառ դեմքն է, պոետների ուսուցիչը, — ասաց Շիրազը: — Նա հեղափոխության հերոսին այնպես է ներկայացնում ինչը իս գնաս հետը նսանս խոսես: Նա ամենից առաջ հերոսի խիղճն է խոսնցնում, դեմ է անգուսպ ներբողներին:

Այնուհետև նա կարդաց շարենցյան մի երկու ֆնարերգական գործեր: Լենինյան թեմաներով գրող բանաստեղծներից պահանջեց մշաապես հիշել Չարենցի խորհուրդները.

*...լենին՛ն, այո, — Լենին՛ն, — բայց ո՛չ
միտինգային,*

*Բայց ո՛չ թմբուկ թեթև, բայց
ո՛չ պլակատ ...*

Եղիշե Չարենցը շատ բան կսովորեցնի մեզ: Նրան պիտի նետենք՝ շարենցյան կերպարներ ունենալու համար: Ստադիր եմ մեծ բան գրել հայ ֆաջորդիների մասին: Մեր Շահսումյանը, Սպանդարյանը, Կամոն, Մյասնիկյանը հեղափոխության սուրբ գործի մարտիկներն են ... Քիչ առաջ ընկերս ինձ տվեց Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Սաֆո Համբարձումյանի՝ իր ֆրոշը ուղարկած նամակի լուսապատմանը, որ գրել է 1924 թվականին, Լենինի թաղման օրը: — Նա կարդում է.

«Մոսկվայում շաա ցուրա էր, մանավանդ Լենինի թաղման օրը: Սակայն սառնամանիքը ոչ մի արգելիչ չհանդիսացավ թաղման արարողությանը... Սա և՛ սուգ էր, և՛ ուխտ էր: Ուխտում էին հավատարիմ մնալ մարդկության շահագործվող մարդկության ազատագրման այն գործին, որ գծել և անշեղ տարել է Լենինի հանճարը: Անկուսակցական բանվորները և գյուղացիները նեղանում էին, երբ նրանց անկուսակցական էին անվանում.

«Мы не беспартийные,—ասում էին գյուղացիք,—мы Ильичевской партии...»

Բանաստեղծական մտքի անսպառ սնունդ է տալիս կյան-
քը: Էսպիսի փաստաթղթեր շատ կան, ամեն մեկը մի-մի
պոեմի նյութ: Պետք է գրել, պատմել մեր պատմության հե-
րոսական էջերի, նրա կերտողների մասին:

Վերջում Շիրազն արտասանեց իր «Վ. Ի. Լենին» էֆու-
պրումար, որ գրել է 1940 թվականին:

Դանլիներ բունն ծափահարեց: Նա իրեն հատուկ շարժ
ու ձևով գոհունակություն հայանեց և ոգևորված ասմունքեց
«Լենին» բանաստեղծությունը.

*Տիեզերքն ու քո հոգին եկան մի օր շափվեցին,
Թե ո՞րն է խոր ու անմահ, վկան՝ արևն էր անգին,
Եվ արևը շշնջաց՝ տիեզերք է քո հոգին,
Եվ տիեզերքը կրկնեց՝ արձագանքով ցնծագին՝
— Տիեզե՛րք է քո հոգին,
— Տիեզե՛րք է քո հոգին:*

«ՄԱՐՏԻՐՈՍՎՈՂ ՍԻՐՏԴ...»

6 ապրիլի, 1969:

Շիրազը նորից է եկել հրատարակչություն:

— Շատ շեմ գրադեցնի, գիտեմ գործերդ շատ են, և
սպասողներ էլ շատ կան,— ասաց նա և առաջացավ:— Տես,
թե Քեյրութից իմ երկրպագուները ինչ բանաստեղծություն են
նվիրել ինձ:

Կարգաց: Շիրազին արժանի բնութագրումներ կան:

— Դե տես եո ինչպես եմ նրան պատառխանել:

Կարգաց նաև իր գրածը.—

Շաա սիրելի Մարտիրոսին՝

Ինձ նվիրած իր բանաստեղծության համար.

*Քո մեջ տեսա բանաստեղծի սիրտը բոց,
Մարտիրոսվող սիրտդ բոցում ամպուռքի,
Քո ոգու մեջ տեսա ոգին իմ Հայոց,—
Տեսա տանջվող հուսանոգին սփյուռքի,
Հայրենիքի ոգին տեսա ալեկոծ.—
Տեսա վաղը վեր մասիսված իմ կուռքի,
Տեսա վերջը Հայոց վիշտ ու ամպուռքի...*

Հովհաննես Շիրազ.

Հույս ու սանդուղի Մասիսի

1969 թ.

Ավարտեց ընթերցումը, հարցրեց.

— Հը՛, ինչըխ է, Մարտիրո՞սն է լավ գրել, թե՞ ես...

— Ինչ խոսք, Մարտիրոսը, — կատակեցի ես:

— Թող այդպես լինի, — ասաց նա, — քանզի Մարտիրոսի ձոներգը սփյուտֆահայության արտի խոսքն է իր պոետին:

— Շիրազ, դու չգիտե՞ս, որ ոչ մեկը քեզ նման չի կարող գրել, և հետո դու գիտես նաև, որ բանաստեղծական իմ պաշտամունքն ես, էլ ինչո՞ւ ես ինձ խոսեցնում:

— Այս բանաստեղծությունը, որ գրումս դնեմ, կտպագրե՞մ:

— Այո՛, բայց այդ մտքերն արդեն շատ անգամ ես կրկնել... Հավանորեն Մարտիրոսը այնտեղ կտպի: Դու գիտե՞ս, որ սփյուտֆ-հայրենիք կամուրջի որձափար ես:

— Ես կամուրջ եմ, Սանահինի կամուրջի պես ամուր...

— Իսկ ստորագրությունիցդ հետո գրած Հույս ու սանդուղի Մասիսի... տողն ո՞ւմ է վերաբերում:

— Շիրագին, Հովհաննես Շիրագին, մասիսակարոտ, մասիսակամուրջ, հաննարեղ խելագար Հովհաննես Շիրագին.

— Բա ասացիր մի երկու բայե եմ զբաղեցնելու, այս երկու բայե՞ եղավ. ինձ գործով սպասում են Նաիրի Զարյանը, Համո Սահյանը, Սերո Խանգաղյանը:

Ինքն էլ գիտի, բայց խոսակցությունը երկարացնում է. երևի դա իրեն հանելի է:

— Թող սպասեն, նրանք շատերին են սպասեցրել:

— Պարույրն էլ է գալու, գործ ունի:

— Նա էլ ինձ նման է. նրա «Անլուելի զանգակատունը» մասիսված գործ է, շարենցյան շնչով ու թափով ժայթփած պոեմ, դե ինչ պոեմ, դա մեր ժողովրդի պատմության սթափ դողանջն է: Իրեն չասես... Նա աստիճանով պասիկ է, դեռ շատ նոր մեծ գործեր կարող է տալ. շմեծամասանա...

— Եվ նոր գործեր տալիս է: Շուտով լույս կտեսնի նրա «Նղիցի լույս» բանաստեղծությունների ժողովածուն, Մկրտիչ Սարգսյանն է խմբագիրը, ա՛յ գիրք, ա՛յ ստեղծագործություն... ա՛յ գրական մեծ երևույթ:

— Բա ասում են մեկը արդեն «ահագանգել է»:

— Չգիտեմ, մինչև տարեվերջ գիրքը մեծ ապաֆանակով լույս կտեսնի: Իս սովորական գիրք չէ:

— «Նոսձայն պատարագը» այդ ժողովածուում դրված է, ապագրո՞ւմ եք...

— Այո՛:

— Բա իմ «Քառաձայն պատարագը» ինչո՞ւ չե՛ք տպագրում, Սերո Խանգաղյանը շատ է հավանել, ասում է՝ «Տողերից մեռոն է ծորում, սուրբ Նարեկացու մոնչոցի ձայնն է լսվում»:

— Սերոն քո բոլոր գործերն է հավանում, քոնն էլ ենք տպագրելու: Շիրազ, ֆեզնից անտիպ գործ չի մնալու, մեր այս գրույցն էլ է տպագրվելու:— Ասացի և «Օրագրություններին» տեսում նշումներ կատարեցի:

— Էդ ինչ կենես, գլուխդ բարձրացրու: Իմ խոնափիլիսոփայական առակների գրքում դրել եմ, խմբագիրը հանել է.

*Ինձ ասում են՝ Շիրազ հետո կզգան քեզ,
Երբ հեռանաս՝ դարձդ կուզեն, կզան քեզ,
Արծաթ երգդ պեղեն՝ ոսկի դուրս կզա,
Արքա, քո թագ Արարատն էլ կտան քեզ...*

— Իս ոչ ոք չի հանել. ֆանի որ ժողովածուում նման բան չկա, հավանական է նոր ես գրել: Լա՛վ է: Պարույր Սևակի մասին նիշտ խոսք ասացիր, գրում եմ, սր շմոռանամ:

— Էդիկ բանավոր խոսք էր:

— Բանավորը հարկավոր է գրավոր դարձնել, Պարույր

Սեակը մասիսերգությունը թողել է ֆեզ և իր նորօրյա ազոթֆներում մարդկության համար եղիցի լույս է ուզում:

«Օրագրությանս» մեջ ունեի գրի առած Պարույրի խոսքերը: Կարդացի նրա «Նորօրյա ազոթֆի» լուսաշունչ առղերը.

*...Ես վախենում եմ,
Շատ եմ վախենում
Բյուրավոր ու բուժ հավատացյալից,
Բյուրատեսք ու սուտ հավատացյալից:
Եթե աստված եք՝
Փչեցե՛ք նրանց բոլոր մոմերը,
Մարեցե՛ք նրանց կանթեղներն ամեն,
Հանգրե՛ք նրանց ջահերն այլազան,
Որ... Եղիցի լույս...*

— Հը՛, ի՞նչ կասես:

— Գրիգոր Նարեկացի է,— գոչեց Շիրազը:

— Ինչպե՞ս թե:

— Այո՛, Նարեկացի է: Գրիգոր Նարեկացու օրհնանքը, թափը, մոնչոցը, պաակերները, բողոքը և վարպետությունը կա այդ հրաժայթ առղերում: Ինչըխոս ես գրած լինեմ: Շատ խորամանկն ես, հա՛, ինձ խոսեցնում ես, դու գրի առնում:

Անհամբեր Նաիրին համբերությունը հաաած դուրը բացեց և բարձրաձայն ասաց.

— Ընկեր դիրեկտոր, մենք շատ պիտի սպասե՞նք, արդեն մեկ ժամ է ձեր գրույցը չի վերջանում, ի՞նչ է պաաանել...

Ասաց և նորից ես գնաց:

Շիրազը ուր կախ է գցել:

Մաերիմ ընկերոջ իրավունքով, բեղերը սրած, աշխույժ թափով ներս եկավ Սերոն, նրան հետևեց Համոն:

— Բարև, Շիրազ,— ասաց Սերոն,— շատ սպասեցրիք, մենք էլ պաշտոնական գործեր ունենք հրատարակչությունում:

Իսկ Համոն ինչ-որ բաներ էր փնթփնթում ֆթի աակ...

— Դիրեկտորը մանկությանդ ընկերն է, առանց ֆո գալու էլ գործերդ կարգավորում է,— ասաց Շիրազը,— հեաո դու Համո Սահյան ու Սուրեն Աղաբաբյան ունես, Հրաչիկ

Հովհաննիսյան \ու Վահագն Դավթյան ունես, Հրանտ Թամ-
րազյան և Սերգեյ Սարինյան ունես, մեր արձակի սպարա-
պետն ես, իսկ ես մենակ եմ, առյուծը մենակ է ման գալիս...
Նրեխաներ շատ ունեմ, թող ընկերդ ֆողցր աչքով նայի, գր-
ֆերս լույս աշխարհ հանի. «Հայոց Դանթեականը» և «Անի»
հրատարակի, իր անունն ավելի կմենձնա:

— Որքան գիտեմ, Շիրազ,— ասաց Սերուն,— ընկերս ֆեզ
շատ է սիրում, երկու ասրի էլ չկա, որ աշխատում է այստեղ,
գրֆերդ մեկը մյուսի ետևից հրատարակում է, լույս են տեսել
«Տիգրան Մեծի վիշտը», «Հուշարձան մայրիկիս», «Քառյակ-
ներ», «Սիամանթո և Խջեզարե» սֆանչելի ու պաշտելի գր-
ֆերդ, խմբագրվել և պլանավորվել են «Սիրանամեն», հա-
աորներդ, խմբագրվում են «Հայոց Դանթեականը»... և էլի
շատ գործեր:

— Ինչըխ էլ գիտես, էդիկ Լեոն Միրիջանյանն ասած
կլինի՝ գրողներին իմ դեմ գրգռելու համար: Բա որ հինգ
ասրի Շիրազից ոչինչ չեն տպագրե՞լ:

— Ինչո՞ւ, «Քնար Հայաստանի» գրֆերը ֆսնր չե՞ն:

— Էդոնք շուտ են տպագրվել, խմբագիրը թեև ընկերս
է, բայց պաշտոնյա մարդ է, կրնատումներ շատ արեց. Ինչ
որ է, նրանից էլ եմ շնորհակալ: Դե՛, ես գնացի ...

Քթի տակ իրեն հատուկ և սովորական դարձած խոս-
ֆերն աղոթքի նման մրմնջալով ցտեսություն ասաց և հեռա-
ցավ...

— Նաիրի Զարյանին ներս հրավիրիր,— ասաց Սերուն,—
նա ավագ է:

Եկավ և Նաիրի Զարյանը:

— Ե՞րբ եմ «Հարգագողի նամֆան» տպագրելու,— ասաց
նա:

— Տեֆտը խմբագրվում է:

Համոն, որ այդքան ժամանակ նազատ գլուխն առել էր
ափերի մեջ և լուռ էր, հայացքն ուղղելով ինձ՝ ասաց.

— Մեռնում եմ, տանը մուգ թեյ կտա՞ն. գնանք խմենք...

— Ինչո՞ւ չէ: Սիրով:

— Ի՞նչ է, միայն հայրենակիցների՞դ ես հրավիրում,—
ասաց Նաիրին:

— Ո՛չ, ձեզ էլ:

Գնացի՞նք:

Ես չգիտեի, որ նրանց մեջ ինչ-որ վեճեր կային: Տունը աշխույժ խոսակցությամբ լցվեց:

— Նաիրի,— ասաց Համոն,— այդ ինչ նոր գրական աստղեր ես գտել, «Մովեաական գրականություն» ամսագրում ի՞նչ հոդված ես տպագրել: Բա դա քեզ վայել է՞:

— Ի՞նչ անեմ,— ասաց Նաիրին,— բոլորդ ինձ մեճակ եմ թողել. Սերոն իր գրական կոլխոզն ունի, իսկ ես էլ ջանկերից ուզում եմ իմը ստեղծել:

— Բա՛, բա՛, բա՛,— բեղերը ձգելով միջամատեց Սերոն,— բա դա ասելու բա՞ն է, Նաիրի, այդ անաաղանդներին ինչո՞ւ ես երես տալիս:

— Մեր գրականությունն այսօրը և վաղը դուրս եմ,— ասաց Ն. Զարյանը,— և ձեր շուրջն են համախմբվել բանաստեղծներն ու գրողները: Օգնեցե՛ք այս դրությունից դուրս գամ: Բանաստեղծությունների իմ նոր գրում գրել եմ.

Իսկ ինձ մի դառն հարց է միշտ հուզում,

Ես ո՞ւր տանեմ նավը այս դպրության.

Կանգնած է նա լճի ծանծաղուտում

Եվ փակ է ծովը դուրս գալու ճամփան:

Զրույցն ավարտվեց: Ամեն մեկը իր սրտում կուտակվածից ազատվեց, թեթևացավ: Ն. Զարյանը շաա գոհ մնաց: Սերոն ասաց.

— Ափսո՛ս, Շիրազին էլ պիտի հրավիրեինք, Շիրազը, ախ՛ր, շատ մեծ պոետ է. մեզնից և ոչ մեկը նրա ժողովրդականությունը չունի, նա նշմարիտ բանաստեղծ է, նրա երգած Մասիսը հայ ժողովուրդն է:

— Ես դեռևս 1955-ին եմ բանաստեղծություն գրել Շիրազի մասին,— ասաց Համո Սահյանը:— Մոռացե՛լ եմ, որ գրել եմ:

Շիրազում էլ վարդեր չկան

Մեր Շիրազի վարդերի պես,

Զարդեր չկան ուրիշ երգում

Նրա երգի զարդերի պես,

Լիացնում է սիրտը մարդու,
Հայրենական արտերի պես,
Եվ աշխարհի ծովն է մտնում
Մեր մեսրոպյան տառերի պես...

Հնչեց հեռախոսի զանգը, վերցնում եմ լսափողը. «Գարուն» հանդեսի գլխավոր խմբագիր Վարդգես Պետրոսյանը, Արամայիս Սահակյանը և Հովհաննես Մելիքոնյանը հրատարակչությունում ոպասում են: Միասին դուրս եկանք և բաժանվեցինք:

«ԼԱՎ ՓԱՌԱՔԱՆԵՑԻ, ՉԷ՞...»

9 ապրիլի, 1969:

Երևանի բժշկական ուսումնարանի դոսախոսական և ուսանողական կոլեկտիվն այսօր հանդիպում ունեցավ Հովհաննես Շիրազի հետ: Ես էլ մասնակցեցի, ջերմ խոսք ասացի նրա ստեղծագործությունների, հատկապես հրատարակման պատրաստվող գրքերի մասին: Շատ զսկ մնացին: Ելույթ ունեցավ Շիրազը: Դանլինը ծափերի որոտից թնդում էր. մեկ ժամի շափ ևս արասանեց իր ֆնարական, խոհափիլիսոփայական գործերից, ինչպես միշտ, ծրագրում ուներ «Մարգարիան ու փրփուրը», որի վերջին հինգ տողը առանձին շեշտվածությամբ է տրտասանում.

...Մարդիկ կան, որոնք փրփուրի նման
Միշտ կյանքի ծովի երեսն են ելնում,
Բայց խորքում որքա՛ն
Մարգարիտներ կան,
Որոնց փառքը դեռ փրփուրն է խլում:

Արասանում է, աչքի տակով նայում ծափերի ալիք տոաչտցնող ունկնդիրներին և կամաց ականջիս շշնջում՝
— Հրբը, մարգարիտը ես եմ, փրփուրը հակառակորդս:
— Գրողն ինչ զգում է, արտահայտում է, թեկուզ ի վնաս

իրեն: Այս դեպքում հոգուս քեզ է,— ասացի նրան:

— Հոգուս ինձ է, որովհետև ես եմ ինձ շնորհներ պարգևողը, բայց ուրիշներն են դափնեկորվում:

Շիրազն տյսպիսի տողեր էլ ունի՝

Ի՞նչու ուրիշին տվիք իմ գահը,

Մի՞թե փրփրած գովքն է անմահը...

Մեկը մյուսին փոխարինեցին ասմունքող ուսանողները: Շիրազը ձեռքիցս վերցրեց հրավիրատուսը, որի վրա իր նրկարն է և մի հատված «Համամարդկայինից» ու ցույց տվեց ինձ այս տողերը.

Ցածում բախվում են օրոցք ու շիրիմ,

Ցածում կյանք ու մահ իրար շաղախված,

Բախվում են հավերժ հաշտ ու ռիսերիմ,

Անհայտից հսկում, սգում է աստված...

Հետո նա ավելացրեց.

Բայց սասանեցեք աստծո սուգից,

Աշխարհ է գալու ցածում ինքն աստված,

Այնժամ մարգարե կկոչեք դուք ինձ,

Երբ մարդ չեք գտնի... փրկված...

Տվեց ինձ և ասաց.

— Առ, պահիր, այս վերջին տողերն անտիպ են:

— Անտիպ էլ շիինեն, ոչինչ, հո՞ քո ձեռքով են գրված, տանեմ թղթերիս մեջ դնեմ:

Տուն գնալուց հարցրեց.

— Տեսա՞ր, ժողովուրդը ինչպես է ընդունում, մի քանի անգամ հետս արի, գործս ավելի կշահի: Նկատեցի՞ր, թե քանի մարդ էր ձայնագրում: Գո՞հ ես: Ռուս ժողովրդին լավ փառաբանեցի, չէ՞:

Մի քանի օր անց Արվեստի աշխատողների տանը ևս երեկույթ կազմակերպվեց՝ նվիրված Շիրազին: Պոետի կյանքի ու գրական գործունեության մասին զեկույցեց բանաստեղծ Բաբկեն Կարապետյանը: Շիրազը գոհ մնաց:

— Բարեկենը իմ հին, հավատարիմ ընկերն է,— ասաց Շիրազը,— նրա խոսքերն անկեղծ են, եռ լիովին հավատում եմ նրան, նա շտա անգամ է օգնել, նրա գեղարվեստական գործերը օգտակար են:

Շիրազը նկատեց, որ դանլինում եմ: Ելույթն ընդհատեց
և նայելով իմ կողմն՝ ասաց.

— «Հուշարձան մայրիկիս» գիրքը պրոֆեսոր Բարսեղ-
յանն է լույս աշխարհ հանել, շնորհակալ եմ...

Դանլինը ծափահարեց:

Շիրազը շարունակեց իր ելույթը:

«ՔԱՆԶԻ ԻՄԱՍՏՈՒՆ Է ԲՆՈՒԹՅՈՒՆԸ»

19 ապրիլի, 1969:

Հրատարակչությունում գրուցում եմ: Թեման իր՝ Շի-
րազի ստեղծագործություններն են: Հեսախոսային զանգե
ընդհատում է մեր խոսակցությունը: Մոսկվայից է, Անաս-
տաս Միկոյանը: Հետաքրքրվում է իր «Պայքարի ճանապար-
հով» գրքի հայերեն թարգմանության վիճակով: Պատասխա-
նեցի, որ ընթացքը լավ է, Լևոն Մելիքսեթյանի թարգմանու-
թյունը հաջող է: Հաղորդեցի, որ ինձ մոտ է բանաստեղծ
Հովհաննես Շիրազը: Շիրազն ասաց՝ իմ անունից բարեկիր ըն-
կեր Միկոյանին: Բարեք հաղորդեցի:

— Կոմունիստական իմ ողջույնները հաղորդեցեք պոետ
Շիրազին, — ասաց Միկոյանը, — նա Եղիշե Զարենցի գործի
մեծ շարունակողն է, խոշոր լիրիկ: «Մեր մարդկանց անուն-
ները» իմ խորհրդով է նա գրել: Շատ լավ, օգտակար ստեղ-
ծագործություն է: Ասացեք Մոսկվայում գտնվելիս ինձ զան-
գանարի, հանդիպի, հեսախոսիս համարը տվեք նրան, շատ
գոհ կլինեմ ...

Մի պահ լռեցինք բոլորս: Շիրազն ասաց. ծո՛ւ, ինչո՞ւ
լռեցիք. անսա՛հ... դե՛, թող իմանան: Կարգադրիւր թող փող
փոխանցեն, մի տասը հազար սուրլի, կարող ե՞ս, պետք է:

— Այդքան փողը ի՞նչ պիտի անես: Կահույք ե՞ս գնելու:

— Ո՛չ: Բայց պետք է:

— Գուցե բնակարա՞նդ ես նորոգելու:

— Ո՛չ: Իմ բնակարանը տեսել ես, շէ՞, հիշտ է, տան
պատերը սև են, բայց չպիտի նորոգեմ, նրանց վրա մորս

մասնահետքերը կտն, խիզնս չի տա շնչեմ, մայրահոտ եմ առնում:

— Իսկ փայտե ճեմամաշ մահնակալդ ինչո՞ւ չես փոխում, զսպանակները դուրս են պրծել:

— Հեռուում եմ գեներալխիմուս Սուվորովին, նա խորհուրդ էր տալիս զինվորին կոշտ մահնակալի վրա ֆնել: Կոշտ մահնակալին ֆնելը որբանոցում եմ սովորել:

— Թեև շասացիր, թե ինչ պիտի անես տասը հազար սուրյին, բայց կփոխանցենք: Ստանալիք շատ ունես:

Հարցրեց՝ նախանաշելու շե՞ս գնում:

— Եթե ցանկանում ես, գնանք մեզ մոտ, մեր տուն:

— Գնանք, բայց տուն չեմ գա. նանապարհին մի բաժակ զարեջուր հյուրասիրի: Միայն մի բաժակ, բավ է. էլ չեմ խմում, իմացիր:

— Դե՛, որ մեր տուն չես գալիս, արի գնանք ձեր տուն:

— Ո՛չ ձեր և ո՛չ էլ մեր տուն, տեղ պիտի գնամ: Հա՛, մոռացա ասեմ, սփյուռփեց բանաստեղծությունների մի գիրք եմ նվեր ստացել, հեղինակը կին է, պատասխանը գրել եմ, բայց չեմ ուղարկել, կուզե՞ս ծանոթանալ:

— Ի՞նչ միտք ունի:

Մի ֆանի օր անց, այնուամենայնիվ, չգիտեմ ինչու, նա իր պատասխանի սևագրությունը տվեց ինձ: Ահա այն.

«Սիրելի բանաստեղծուհի

Ստացա գիրքդ, համբուրում եմ ուշադրությանդ անմարմին շուրթերը, որ ինձ նույնիսկ բանաստեղծություն մըն ես նվիրած... լավն է, մանավանդ, որ չես մոռցած իմ պաշտելի Մասիոր... ինձ մեջ ալ: Այս գիրքդ ավելի լավն է, բայց պատկերների ինչո՞ւ ֆիչ կգործահյուտես անմահ գորգիդ վրա:

Թեև ֆենադատած ես զիս, բայց բնավ նեղացած չեմ ու չեմ մոռնար ֆեզի, թեև ես բանաստեղծուհի չեմ սիրեր, բայց դու, որ հեռուն ես՝ կսիրեմ... անոնք կապույտ գուլպա են այժմ էլ ողջ աշխարհում և բարի բնությունը շար է խիստ, երբ կին գրող կուզե ծնել, անոր հաննար չի տար, այլ մի շնորհ, կամ կիսակատար ձիրք մը, ֆանգի իմաստուն է բնու-

թյունը, կինը արդեն գանձ մ'է, էլ ինչ տա գանձը գանձին, ասոր համար կինը շունի յուր ֆնարին մեջ մեծություն, ֆանի որ արդեն մեծություն կծնանի—մարդ արարածն է անոր ծնած և ծնելիք մեծությունը:

Բայց դուն մեծությանց մեջ թևանի արծիվ մ'եռ, ուրիշներն ադ ալ շունին, ուրեմն կհամբուրեմ ազնիվ ուշադրությանդ անմարմին, հեռավոր, բայց ոսկեգոծյալ շուրթերը»:

Ո՞վ է հաշվել, թե ֆանի՛-ֆանի՛ այնպիսի բարի, իմաստուն խորհուրդներ է Շիրազը տվել բանաստեղծներին, փորձված ու անփորձ ստեղծագործողներին, իր նամակներում սրփոելով հոգեգմայլ, մարգարտաշաղ հույզերն ու զգացմունքները:

ՏՈՂԵՐ ԻՄ «ՕՐԱԳՐԵՐԻՅ»

Հունվար-հունիս, 1969:

18 *հունվարի*. — Հովհաննես Շիրազին ձևակերպել հրատարակչության ավագ խմբագիր:

... Զրույց «Անի» պոեմի և «Սովետական Հայաստան» թերթի «Ամբողջ ձայնով» առաջնորդող հոդվածի մասին:

21 *հունվարի*. — Շիրազը հրատարակչության գլխավոր խմբագրությունում ընթերցում է իր «Անի» պոեմը:

5 *մարտի*. Շիրազը խոսում է Կոստան Զարյանի ժողովածուի մասին: Նա բարձր է գնահատում Կ. Զարյանի գեղարվեստական արձակը:

27 *մարտի*. — Շիրազը խնդրում է մի ոկսնակի «Առակների» գիրքը հրատարակել:

— Առակագրությունը դժվար ժանր է, — ասում է նա, — և ոչ մեկը ստույգ չգիտի, թե «առակս զինչ ցուցանե...» Իրա համար հարկավոր է առակներ շատ տպագրել, բայց պայմանով, որ ազվեսներին հանգիստ տրվի:

2 *ապրիլի*. — Շիրազը պատրաստվում է գրողների միության պլենումում ելույթ ունենալ: Քսան մեքենագիր էջ տեխս է գրել: Կարդաց:

— Լավ կլինի բանավոր խոսես,— ասացի նրան,— և հետո այդ տեֆտը պլենումում ֆենարկման դրված հարցի հետ շի առնչվում:

— Հաստա՞տ:

— Այո՛:

— Կմտածեմ,— ասաց:— Լավ է, գրուցեցինք:

— Մտածի՛ր,— ասացի,— ուզում ես Սուրեն Աղաբաբյանի հետ էլ խորհրդակցիր, նա քո լավ բարեկամներից է: Ավելի լավ կլինի Սերոյի հետ խոսես: Դու գիտե՞ս...

— Ելույթս Սերոյին ցույց կտամ: Նա մեծ արձակագիր է և հեռատես մարդ: Սերոն, թեև բանաստեղծ չէ, բայց բանաստեղծությունը բարձր նաշակով և շափանիչներով է ըմբռնում:

— Սերոն, չգիտե՞ս, որ իր գրական գործունեությունը բանաստեղծություններով է սկսել:

— Գիտեմ: Դե ո՞ր պատանին բանաստեղծություն չի գրում:

7 *ապրիլի*. — Շիրազը հարցրեց.— Ռազմիկ Դավոյանի «Ռեֆլիեմը» կարդացե՞լ ես:

— Այո՛, ինչպե՞ս չէ: Իսկ դո՞ւ:

— Չեմ կարդացել, հավատում եմ Սերո Խանգաղյանի առաջաբանին: Ճանապարհ տվեք նրան, պոեզիայի ծառը միշտ պիտի թարմ նյութեր արձակի: Ռազմիկը հուսալի նյութ է:

8 *ապրիլի*. — Շիրազը Մ. Սարգսյանի, Հ. Ղազարյանի, Լ. Միրիչանյանի և Գ. Արշակյանի ներկայությամբ կարդում է ֆառյակներ իր ժողովածուից:

— Շիրազ,— ասաց Մկրտիչը,— ֆառյակների շատ են, մի ֆիչ կրճատիր:

— Շատությամբ համա՞ր կրճատեմ,— հարցրեց նա,— թե՞ թույլ գործեր կան:

— Կրճատիր, որ խտանա, մարգարիտանա...

— Դե, գլխավոր խմբագիր ես, որ ասում ես, արի գնանք քո աշխատասենյակը, բաժնի վարիչի հետ միասին տեֆտը նայենք, կրճատենք, բայց չկտրտենք... Քառյակներս մարգարիտ են, փրփուր չկա...

11 *ապրիլի*. — Շիրազն ինձ ասաց. — Գուրգեն Մահարուն լավ նայիր: Օգնիր: Ես չեմ սիրում, որ նրան «խան» են ասում. ի՞նչ «խան», նա վաստակաշատ գրող է: Եղիշե Չաբենցը դեռևս 1933 թվականին նրա մասին գրել է.

*Երգերդ աղբյուր են զուլալ՝
Մեր երկրի արևից բխած:
Դու, մեր երկրի՛ պես շռայլ,
Մեր երկրի՛ պես հորդառատ ու բաց:
Կարդալով քո գիրքը անհուն՝
Հավատում եմ գալիքին մեր:
Օ, ինչքա՛ն է սիրտը վեհանում,
Որ նման երգեր է տվել...
Պայծա՛ռ է մեր երկրի գալիքը,
Օ՛, բարի հերկերի գուսան:
Թող հավետ ապրի այս ծաղիկը՝
Մեր դաշտերում բուսած.*

Այսպիսին է Գուրգեն Մահարին: Գուրգեն Մահարին խան չէ, այլ արձակի վարպետ: Հա՛, մոռացել ե՞ս: «Հայոց անունները» պոեմում գրել եմ.

Ի՞նչ խան, ախպեր, ի՞նչ խանիկ...

16 *ապրիլի*. — Շիրազը հետափրփրվեց «Անի» պոեմի հրատարակման ընթացքով: Կարդաց պոեմի «Վերջերգանք».

*Դեռ մի կարոտ ունեմ անհագ՝ հասնեմ Անի ու նոր մեռնեմ.
Բանամ ճամփիս դռները փակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ.*

Այս տողերը կարդալուց նրա աչքերը արցունքով լցվեցին:

— Բա՛, ասում ես առյուծ եմ, առյուծը այդպես լաց կլինի՞:

— Ում սիրտը փար չէ, նա լաց կլինի, դու էլ ես լաց լինում, բայց ցույց չես տալիս, խորամանկ ես: Լացը օգտակար է, ամեն անգամ լացից հետո աչքերիս տեսողությունը ավելի է պարզանում:

Նրան ասացի, թե ես մի տեղ գիտեմ, այնտեղից հեռագրատակով երբ նայում ես՝ Անին ոնց որ ասիիդ մեջ: Մի ֆանի

անգամ գնացել եմ և դիտել, հրաշք է: Եկ մի անգամ տանեմ տես:

— Շնորհակալ եմ հրավերքի համար, սակայն գալ չեմ կարող, սիրտս չի դիմանա, մեկ էլ տեսար... թեքցի անարդարություն վրա...

30 ապրիլի. — Հմայակ Սիրասը եկել և խնդրում է իր «Երկերի ժողովածուի» հերթական հատորի ծավալը հինգ մամուլով ավելացնել: Ուզում եմ ընդառաջել: Այդ ժամանակ եկավ և Շիրազը:

— Բարև, Հմ. Սիրաս, — ասաց նա, — «Արարատ» վեպը ծավալով Արարատ է, բայց բովանդակությամբ չգիտեմ, չեմ կարդացել:

Հմայակ Սիրասը գնաց: Ես Շիրազին հարցրի:

— Շիրազ, նի՞շտ է, որ սփյուռֆահայ մի մտավորական գրողների միությունում ծանոթացել է Սիրասի հետ, բաժանվելիս սփյուռֆահայն ընկերոջն ասել է, տարօրինակ է, հոն մե՞նք Շիրազ կբսե՞նք, հոս՝ Սիրաս:

— Հրաշյա Քոչարն է կատակել, նա է սարքել, թեև Սիրասին շատ մոտ է: Քոչարը սրամիտ է, բայց երբեմն պարտքի ասկ է մնում: Մեկ անգամ հիվանդանոցում պառկած էի, նա եկավ տեսության: Արտակարգ հոգաբարություն ցույց տվեց: Ապաֆիևվեցի, գնացի տուն: Մի օր փողոցում հանդիպեցի, նանտպարհս փոխեցի: Նա, թե՛ «Մո՛ւ Հովհաննես, ինչո՞ւ ես ինձնից հեռու փախչում, մոռացել ե՞ս արածս լավությունը, որ հիվանդանոց չգայի, հիմա քո վիճակն ինչպե՞ս կլինե՞ր, առողջացրի, այդպե՞ս ես լավությունս հատուցում»: Իսկ ես նրան պատասխանեցի. — Կարծում ես, թե չգիտեմ, խորամանկ, ինչո՞ւ էիր այդքան շահագրգռված, որ առողջանամ:

Նա, թե՛

— Ինչո՞ւ:

— Առողջացրիր, որ հալածես...

Հր. Քոչարը ֆա՛հ-ֆա՛հ ծիծաղեց, և մեր այս գրույցը առաջինը տարածեց՝ իհարկե, ծաղկեցրած:

14 մայիսի. — Շիրազը եկել է «Քառյակների» ժողովածուի հարցով: Խմբագրական աշխատանքն ավարտված է, ձե-

վաժորումը նույնպես:

— Արագացրե՛ք, — ասաց նա, — թե շէ...

— Թե շէ, ի՞նչ:

— Ոչինչ... գիտեմ, պիտի տպագրե՛ք:

18 *Հունիսի*. — Շիրազը և Մահարին նորից եկել են հրատարակչություն:

— «Հայոց Դանթեականը» նորից նայում, խմբագրում եմ, «Քառյակները» նույնպես, — ասաց Շիրազը, — Գուրգեն Մահարու գրքերին նանապարհ ավե՛ք: Անհամբեր է դարձել:

— Իսկ դու համբերում ե՞ս:

— Ինչպե՞ս շէ: Տուն-հրատարակչություն, այս է իմ նանապարհը: Երբ համբերությունս լցվում է, նանապարհին դատարկում եմ, մի ֆանի ժամով հրատարակչություն շեմ գալիս:

Հոկտեմբեր. — Շիրազը ասաց. «Գիտելիքի» հանրապետական պլենումում տարաբեր էլույթ ունեցա, բա ինչո՞ւ շեք ուղարկում տեղերում դասախոսություններ կարդամ:

— Իսկ ո՞վ ասաց շեք ուղարկում, ի՞նչ թեմայով ես ուզում դասախոսել, ե՞րբ, ո՞ր օրը, բանաստեղծություններ ես կարդալու, թե՞ դասախոսություն...

— Աստղաբաշխությունից եմ կարդալու դասախոսություն, շե՞ որ հաննարեղ աստղագետ եմ... աստղերի գաղտնիքները վերծանող... թելադրում եմ, գրի՛ր «Մեծ աստղագետին» վերնագրով այս բանաստեղծությունը, պե՛տք կգա: Գրի առա...

— Հրաշալի է...

— Ուշադրություն դարձրու վերջին՝ «Երեսուն ու վեց հայ աստվածները, միակ գործերն մեր ազգապահն» տողերին: Գիտե՞ս թե դրանք ի՞նչ են...

— Ո՛չ, պե՛տք է մտածեմ:

— Դրանք մեր հայերեն մեսոպատաներն են՝ մեր աստվածներն ու ազգապահ գործերը, հայ ժողովրդի գոյատևման խորհրդանիշը:

Մի ֆանի օր անց նա մեր գրույցը տարավ հայոց լեզվի և հայ գրականության հունով և թողեց մեքենագիր երկու բանաստեղծություն-կտակ:

ԻՆՉՈՒ ՉԵՍ ԽՈՍՈՒՄ ՀԱՅԵՐԵՆ

(Կտակ վեցերորդ)

Գարուն ձմեռ ազգապահ ծաղիկներդ կթուրեն,
Բայց մի գանգատ ունես դու, իմ Արարատ հայերեն,
Ազգակորույս տազնապներս էլ ո՞ւմ հույսով համբերեն՝
Ամեն լեզվով խոսում են, բայց չեն խոսում հայերեն,
Հայ պապերիս գերեզմանն անհանգիստ է հայրորեն,
Հայեր, մենք որ չխոսենք՝ էլ ո՞վ խոսի հայերեն:
Դեռ էն գլխից պատգամել՝ պատգամում եմ ես նորեն՝
Հայեր, դուք որ չծնվեք, էլ ո՞վ ծնվի հայերեն:
Հայրդ հայ է, մայրդ՝ հայ, սարերդ էլ հայ պապեր են,
Որդիս, դու որ չխոսես, էլ ո՞վ խոսի հայերեն:
Տես, արծվենի ազգերում հայն էլ ազգ է արծվորեն,
Ուտրս, դու չճախրես, էլ ո՞վ ճախրի հայերեն:
Մի նայիր այն հայերին, որոնք հայի վայեր են,
Դուստրս, դու որ չըպարես, էլ ո՞վ պարի հայերեն:
Դու հայ ծիլը Մաշտոցի, դու հայ հողին՝ հայ ցորեն՝
Չազս, դու որ չծլես, էլ ո՞վ ծլի հայերեն:
Քո հայ հողում թաղվես էլ՝ հայ կծաղկես դու նորեն.
Հարսս, դու որ չպտղես, էլ ո՞վ պտղի հայերեն:
Քեզ ի՞նչ լեզվով պապերիդ ոգիները համբուրեն,
Թոռս, դու օր օտարվես, ո՞վ թոթովես հայերեն:
Էլ ինչո՞վ ես դու Հայկի, Վահագնի զարմն [համրորեն],
Ջարմս, դու որ չկռվես, էլ ո՞վ կռվի հայերեն...
Քի՞չ կտրեցին հայ լեզուն յաթաղաններն անօրեն,
Ջազս, որ դու չհաղթես, էլ ո՞վ հաղթես հայերեն:
Ինչպե՞ս լռեմ անգանգատ՝ կանթեղներդ կմարեն,
Աստղերի մեջ դու լուսաստղ, իմ ազգապահ հայերեն:
Էլ քեզ ինչպե՞ս տուն կանչես քո Մասիսն էլ հայրորեն,
Սփյուռք, դու որ չտոկաս, էլ ո՞վ տոկա հայերեն:
Այլոց լեզուն ծով չի քեզ՝ հույս մի կապե ձկնորեն,
Հայ ազգ, դու որ հայ չապրես, էլ ո՞վ ապրի հայերեն:
Հայքն է օրոցքն հայության, Մասիսն, Արազն հայեր են,
Ազգ իմ, մենք որ չպահենք, ո՞վ հայ պահես մեզ նորեն,

Թե կլանեն մայր լեզուս՝ էլ ինչի՞ս է կյանքը շեն,—
Շիրազ, դու որ շքերգես, էլ ո՞վ երգի հայերեն.
Արարատիս ճակատին այս պատգամս կգրեմ,—
— Այն ազգիկնն եմ հավիտյան, ով խոսում է հայերեն:

ՎԵՐՋԻՆ ԻՂՁՍ

Ներիր, ազգ իմ, քո որդին քո հույսերը կուտակում՝
Քո հոր նման, քո Հայկի պես քո իղձն է քեզ կտակում:
Գիտեմ, որ դու իմ կտակը կկատարես դարից դար,
Գերեզմանից ես դուրս կգամ՝ թե չթողնես անկատար:
Բայց թե թողնես՝ լույս Մաշտոցն էլ մութ գերեզման կմտնի,
Նա, որ այս էլ տասնվեց դար քո արևն է կենդանի:
Տիգրան Մեծի թագի տեղակ քո մայր լեզուն պահելով՝
Կկատարես իմ կտակը՝ դու քեզ միշտ հայ պահելով:
Ով հայ, վաղվա հայ սերունդները, խնկեք կտակն իմ անմեռ,
Գուք ինձ վառեք դեռ կենդանի՝ մեծախորհուրդ զոհն եմ ձեր:
Վառեք շուրթերս ու կրակով այրեք շուրթերն այն պղծված,
Որ ազգապահ պատգամներիս համբույրով շեն թրծված:
Վառեք ձեռքերս ու կրակով այրեք թուրքին ենիշար,
Որ հեղեղեց անմեղ հայոց կոտորածներն անհամար:
Վառեք խիղձս ու կրակով այրեք պալատն այն լռին,
Որ դեռ բանտ է հայոց բանտի շղթայակապ լեռներին:
Վառեք սիրտս ու կրակով այրեք շարին անխնա,
Որ ծարավիս ետ չի տալիս մեղրածովակն իմ վանա:
Վառեք միտքս ու կրակով այրեք հայի այն լեզուն,
Որ մոռնչով չի պահանջում հայ Մասիսներն հայկազուն ...
Վառեք աչքերս ու կրակով այրեք ձեռքերն այն շարի,
Որ շեն տեսնում վերածնունդն հայոց մորթված հանձարի:
Վառեք լեզուս ու կրակը, որպես ահեղ մի ցասում՝
Լցրեք բերանն այն հայերի, որ հայ լեզվով շեն խոսում:
Որ թաղում են հայոց սոխակն, այլոց հավքին կյանք տալիս,
Վառեք նրան՝ ում ծնունդով Մաշտոցն աշխարհ չի գալիս:
Վառեք ոգիս՝ դրեք կրակն հայի կրծքի տակ,
Որ հավիտյան ես հայ պահեմ հայ սշխարհը բովանդակ:

*Վառեք դուք ինձ ու կրակս, որպես հավերժ մի ցատում՝
կցրեք բերանն այն հայերի, որ հայերեն չեն խոսում...*

«ՏՐՏՈՒՆՁ ՀԱՅՐԵՆԱՄՌՈՒՆՁ...»

5 փետրվարի, 1970:

Շիրազն ասաց.

— Ինչո՞ւ ես անտրամադիր:

Ես չեմ արձագանքում, միայն ուշադիր լսում եմ, չէ՞ որ
Շիրազն է խոսում:

Հետո տեղի տվեցի:

— Երանի բանաստեղծներին, այն էլ քեզ նման մեծին:

— Ընչի՞:

— Որովհետև դժվար պահերին բանաստեղծություն եմ
գրում, լիցքաթափվում, կենսական ուժ անում:

— Ես միաժամանակ մոնչում եմ...

— Չե՞ս կարող հիմա մի ուժեղ մոնչալ:

— Ինչո՞ւ չէ: Լսիր «Տրտունջ հայրենամոռունչ»:

Արտասանեց: Մի տեսակ թեթևացա, տրամադրությունս
բարձրացավ:

— Տեսնում ե՞ս ինչ ազնիվ մոնչոց է:

— Այո՞, վերքի բալասան: Միրուն ձեռագրովդ, հետո
կարմիր մելանով կգրես և ինձ կտաս:

— Ի՞նչ պիտի անես... Մի անգամ կարծեմ տվել եմ:

— Տխուր պահերին կկարդամ, մոնչոցդ կհիշեմ: Հիմա
հասկացա, թե ինչու ես ասում՝ մոնչա Շիրազ... «Տրտունջ
հայրենամոռունչը» ստացա*:

* Այն նոր խմբագրությամբ անխորագիր տպագրված է հեղինակի
Երկերի ժողովածուի առաջին գրքում, Երևան, 1981, էջ 201—203:

Դեկտեմբեր, 1971

— Ամերիկայի Միացյալ Նահանգներից նոր ես վերադարձել, պատմիր տեսնենք, ինչ տեսար,— ասաց Շիրազը:

— Ինչպես մյուս գրոսաշրջիկները, այնպես էլ ես: Տպավորություններս գրել եմ, կտամ կկարդաս: Գևորգ էմինն ու Անդրեյ Վոզնեսենսկին ԱՄՆ-ի համալսարաններում խորհրդային գրականության մասին դասախոսություններ էին կարդում: Գևորգ էմինը ամերիկահայերի համար խոսում էր Պարույր Սևակի, Սերո Խանգաղյանի, Բո և ուրիշների մասին:

Նյու Յորքում կազմակերպվել էր Պարույր Սևակի հիշատակին նվիրված երեկո՝ էմինը Ֆրեզնոյում էր և շէր կարող ներկա գանվել: Նախօրոք իր խոսքը ձայնագրել էր, ուղարկել, որը և հաղորդվեց, երեկոյի մասնակիցներն ունկրնդրեցին:

Դե՛ որ ասում ես, Բեգ հետաքրքրող ևս մի փաստի մասին պատմեմ:

ԱՄՆ-ում սեփական ավտոմեքենա ունեցողն իրավունք ունի իր ցանկացած համարն ընտրել, կամ էլ դրա փոխարեն որևէ անուն-խորհրդանիշ գրել: Իհարկե, դրա համար լրացուցիչ փող պետք է մուծել:

Լսա Անջելես և Սան Ֆրանցիսկո ֆաղաֆներում տեսա ավտոմեքենաներ, որոնց համարների փոխարեն Հայկ, Արամ, Աշոտ... հայկական անուններ էին գրված: Մի ավտոմեքենայի համարի փոխարեն գրված էր՝ «Ես հայ եմ», մեկ սրիշինը՝ «Արարատ»:

— Ի՞նչ կրսես, երևի դրա տերն էլ մասիսապաշտ է:

— Հավանական է: Գյումրեցի մի գործավոր ասաց, որ որոշել եմ իմ ավտոմեքենայի համարը փոխել, Շիրազ պիտի ղենեմ... Հավտնություն տվեցի:

— Իսկապե՞ս:

— Այո՛:

— Գրի՛ր, թող այդ փաստը իմանան, թե չէ, որ ես ասեմ՝ չեն հավատա:

— Կգրեմ, անպայման կգրեմ...

— Վիլյամ Սարոյանին տեսա՞ր, — հարցրեց Շիրազը:

— Ո՛չ, չեմ տեսել: ԱՄՆ-ում առաջադեմ հայ մտավորականները շանում են Վիլյամ Սարոյանի թեկնածությունն առաջադրել Նոբելյան մրցանակի համար:

— Լավ կլինե՞ր, նա մեծ գրող է, որքան գիտեմ յոթանասուն տարում (1901—1971 թթ.) Նոբելյան մրցանակի են արժանացել աշխարհի 66 գրող: Այդ թվում՝ Բունինը, Բ. Պաստերնակը, որը հրաժարվել է, և Միխայիլ Շոլոխովը:

«ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԶԱՅՐՈՒՅԹԸ ԱՄԵՆԵՆ ՍՈՍԿԱԼԻՆ Է...»

Սեպտեմբեր, 1972:

Հանդիպեցի Շիրազին: Զրուցեցինք:

— Բեյրութում հրատարակվող թերթերից մեկում «Հ. Շիրազ» ստորագրությամբ մի բանաստեղծություն կարդացի, — ասացի նրան, — թույլ է՞ր, հավատալս չի գալիս, որ դու ես գրել:

— Դա նորություն չէ, — ասաց Շիրազը, — մի երկու մարդուկներ խիղճները կորցրած, իրենց անտաղանդ գործերի տակ «Հ. Շիրազ» են ստորագրում և տարածում: Դրանք իմ շարակամներն են: Վերջերս սփյուռֆահայ մի գրոսաշրջիկի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ խիտ նախագգուշացրեցի, որ իմ մտքերը չաղավաղի, հարագատ ձևով ներկայացնի սփյուռֆի մեր հայրենակսրոտ եղբայրներին ու փույրերին: Նա հավաստիացրեց, որ ոչինչ չի եղծի: Թղթի կտորի վրա այսպիսի մի երկտող գրեց. «Սիրելի Շիրազ: Վստահ եղիր, որ մեր ունեցած հարցազրույցն մեկ բառ չեմ փոխե՞ր հանուն նշմարտության: Բանաստեղծի գայրույթը ամենեն սոսկալին է: Ես ոչ մեկ նշմարիտ բանաստեղծի գայրույթը չեմ հրավիրե՞ր իմ վրա»:

Տարիներ առաջ, «Խորհրդային Հայաստան» թերթում երգիծաբան Լեռ Կամսարի մի երկտողը կարդացի: Նա համով-հռտով, սուր ֆելիեառններ էր գրում: Այդ օրերին մամուլում

«Վարդ Կամսար» ստորագրությամբ երեացին թույլ, անմշակ ու անտաղանդ ֆելիետոններ: Նշանավոր երգիծաբանը գրեց՝ «Վարդ Կամսարը իմ կիներ չէ: Լեռ Կամսար»: Վարդ Կամսարը լոեց: Նա կուշտ ծիծաղեց:

«ՄՌՆԶԱ ՇԻՐԱ՛Չ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՍԻՆ»

Հուլիս, 1974:

«Հուշարձան մայրիկիս» ֆետրական ժողովածուն տպարան ուղարկելուց առաջ նորից կարդացի: Հարուստ էր բանաստեղծական գյուտերով և նորություններով, իսկը մայրերգության հրաշապատում: Առանց ակրոստիֆոս բառի հիշատակության նրանում մի բանաստեղծություն կար, որի սկզբնաառերի բառակազմությունը որոշակի միտք էր պարունակում: Ոչ մեկին այդ մասին ոչինչ չասացի: Երբ Շիրազը եկավ հրատարակչություն, ակրոստիֆոսի խոսքերը կրկնեցի և ասացի.

— Հը՛, հավանում ե՞ս...

Նա թե՛ «էդիկ ես եմ գրել, ո՞ր սատանան բացեց գաղանիֆս»:

— Ես վերծանեցի, գրվածք ուզում ես թող մնա, թեև թեմատիկ առումով մայրական շարքին փչ է առնչվում: Դրանում որևէ վատ բան չկա:

— Քանի որ ծածկագիրս այդպեռ շուտ հայտնի դարձավ, ժողովածուումս չեմ դնի, թող մնա թղթերիս մեջ: Ինձնից հետո գրականագետները թող պեղեն և հրապարակ հանեն:

— Այդ մաքերը նույնությամբ արդեն մի ֆանի տարի է, ինչ հրապարակում ես, էլ ի՞նչ կարիք կա ակրոստիֆոս գրելու:

— Դա շատ վաղուց եմ գրել: Տանեմ պահեմ:

Լույս աեսավ «Քնար Հայաստանիի» երրորդ գիրքը, նրանում հանդիպեցի այդ նույն բանաստեղծությանը՝ որի սկզբնատառերից ստացվում է՝ մոնչա Շիրա՛զ, ազատություն Մասիոին:

Զանգահարեցի իրեն.

— Բարև, Առյուծ, մոնչա, Շիրազ, ազատություն Մասիսին... Նա ֆա՛հ-ֆա՛հ ծիծաղեց:

— Դե, որ մոնչալ ես ուզում, արի գնանք վարպետ Մարգարի մոտ: Գնացի՞նք: Վայելեցի՞նք Մարգար Սեդրակյանի հյուրասիրությունը: Վարպետ Մարգարը հուշերի կծիկը բացած պատմում էր զորավար Անդրանիկի մասին: Այնուհետև թվեց, թե ինչ նշանավոր մարդիկ են եղել իր մոտ, հիշեց Մաֆսիմ Գուրկու այցը, նրա թևավոր խոսքերը՝ «Արարատի» մատանի աստիճաններով, համտեսից հետո, վերելքն ավելի դժվար է, քան բիրլիական «Արարատ» լեռը բարձրանալը: Շիրազը թե՛ «ես, հիմա հինգ անգամ այս աստիճաններով վեր ու վար կանեմ, միայն թե թույլ տային գեթ մեկ անգամ իմ պաշտելի Արարատի գագաթը բարձրանամ և այնտեղից բարձր, շատ բարձր, Ձեռով Օհտնի ձայնով մոնչամ... Մասի՛ս, Մասի՛ս, ա՛խ, Մասի՛ս...»

«ԳԼԽԱՎՈՐԸ ՇՈՒԵՔԱՐՇՆ Է...»

30 հոկտեմբերի, 1975:

Երկիրը նշում է քսաներորդ դարի բանաստեղծության լուսապայծառ աստղերից մեկի՝ մեծ վարպետի՝ Ավետիֆ Իսահակյանի ծննդյան 100-ամյակը: Թերթերը, ռադիոն, հեռուստատեսությունը մեծաբան են մեծ քնարերգակին, ամենուր հնչում են նրա տեֆտերով զրված երգերը: Հայաստանն Իսահակյանով է շնչում:

— Երեկոյան Երևանի Ալ. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում տեղի է ունենալու հոբելյանական հանդիսավոր նիստ: Զանգահարեց Շիրազը:

— Վարպետի հետ ունեցած հանդիպումների մասին զբոսայգի մի շնչով կարդացի, ապրես, լավ ես գրել. էդպես պատիկ գիրքում էլ իմ մասին գրիր:

— Վարպետը իմ սրբության սրբոցն է, հոգևոր հայրս... Քո մասին ես գրելու եմ, — ասացի — բայց դեռ շուտ է, օրեօր հրաշագործ սեզանի նման բացվում էս...:

— Երկար իմաստունն էս, բայց գյուժրեցի Յվոյին շէս խաբի, եթե գրելու էս, հիմա գրի, քող ժողովուրդը կարդա: Սուրեն Աղաբաբյանն էլ է ասում՝ հետո եմ քո մասին գիրք գրելու, Մուկուշ Սարգսյանն էլ. հիմա ո՞վ պիտի գրի:

— Սուրեն Աղաբաբյանը միշտ էլ քո մասին գրել է և խղճով է գրել, բանիմացությամբ: Ինչ վերաբերում է Մուկուշին, գիտեմ, որ նա շատ նշմարտասեր մարդ է, քո երկրպագուն, հրատարակչությունում աշխատած տարիներին զգացել եմ նրա, Փնորգ Արշակյանի, Հրանտ Ղազարյանի արտակարգ բարի վերաբերմունքը քո նկատմամբ: Իմ կարծիքով, բոլորն են քեզ սիրում, դե՛ ամենայն հայոց բանաստեղծին ո՞վ կտրող է չսիրել...

— Էդ վերջին բառերը նորից կրկնիր: Մի բանի օր առաջ մի հայտնի նկարիչ այդ նույն խոսքերն ասաց և հետո ավելացրեց. «բայց խասյաթդ (...) լավ չէ»: Ես նրան ասացի. «Առաջին խոսքերդ նորեն կրկնի, իսկ խասյաթիս մասին ասածը դրդ բերանիցդ դուրս մի թող»:

Մի քիչ հետո՝

— Հա՛, գիտե՞ս ինչու եմ զանգել:

— Որ ասե՞ս՝ կիմանամ:

— Վարպետի հոբելյանական երեկոյին գնալու ե՞ս:

— Այո՛, ինչպե՞ս չէ, նախագահության տոմս ունեմ:

— Միասին գնանք, օպերայի շենքի առջև ինձ կսպա-

սես:

Պայմանավորված ժամին եկավ: Օպերայի հրապարակում ասեղ զցելու տեղ շկա: Բոլորն ուզում են ներկա լինել նիստին: Դահլիճը լեփլեցուն է: Բեմը, ուր կախված է մեծանուն բանաստեղծի նկարը, նույնպես լցված է: Հյուրեր շատ կան:

— Քոյս նստի, — ասաց Շիրազը, — խորհուրդ պիտի հարցնեմ:

Հայտնաբերված կոմկուսի կենտրոնի առաջին ֆարտուղար, հոբելյանական հանձնաժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանի բացման խոսքից հետո մեկը մյուսի ետևից ամբիոն են բարձրանում հոեաորները՝ ԽՍՀՄ գրողների միության վարչության ֆարտուղար, սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Սուրճյանը, ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրի տեղակալ Է. Կու-

խարսկին, Հայաստանի գրողների միության վարչության առաջին ֆարտուղար Վ. Պետրոսյանը, նշանավոր գրողներ, բանաստեղծներ, իսահակյանական պոեզիայի երկրպագուներ Մ. Դուդինը, Վ. Կազաչենկոն, Մ. Տանկը, Ա. Ալիմջանովը, Ի. Կասումովը, Կ. Կուլինը, Վ. Սիրաձեն, սփյուռֆահայ գրող Վահե Հայկը: Տեսնում եմ Շիրազն անհանգիստ է, ուզում է տեղից պոկվել և մոտենալ ամրիոնին, խոսք ասել Վարպետի մասին: Զբաղեցնում եմ:

Վարպետի պոեզիայի վերաբերյալ իմաստուն դատողություններ է անում:

— Վարպետն անկրկնելի մեծություն է, նրա ամենամեծ գործը «Աբու-լալա-Մահարին» է, — ասում է Շիրազը, — մարդկային մտքի նման խտացած ու շողշողուն մարգարիտ չկա, գոնե ես այդպես եմ կարծում: Միայն այդ պոեմով կարելի է դարեդար ապրել, ինչպես Գրիգոր Նարեկացին է ապրում իր Մատյան ողբերգությամբ՝ հուստատուն տեղ գրավելով համաշխարհային գրականության անդաստանում: Ավ. Իսահակյանի սիրո և մայրական բանաստեղծություններն էլ են անկրկնելի՝ մեր մելոսի, հայրենիների պես սաղմոս ու ազոթի դարձած: «Հավերժական սերը», «Արագի ափին...», «Մոր սիրտը», «Վա՛յ, խեղճ տղաս...» գոհարներ են: Իսահակյանն այնքան կապրի, որքան մեր մայրենին, որքան Նարեկացին ու Քուչակը, Հ. Թումանյանն ու Դ. Վարուժանը, Պ. Դուրյանն ու Ե. Զարենցը... էլի կասեմ, պնդում եմ. Իսահակյանի գլուխգործոցը «Աբու-լալա-Մահարին» է, որը կապրի դարեդար, եթե անգամ աշխարհում մի ուղտ էլ չմնա: Ամեն մի նշմարիտ, հաննարեղ բանաստեղծ մի ֆանի ուժեղ, ցնցող ստեղծագործություն է ունենում: Իրանի նրանց պոեզիայի շոգեֆարշն են, իսկ մնացածը՝ վագոնների են նման, կարող ես ցանկացած դույնի ներկել և շոգեֆարշին կցել: Այո՛, Իսահակյանը, իրոք, այդպիսին է, նա անմահ է, երանի՛ նրան:

— Իսկ քո բանաստեղծությունների շոգեֆարշը ո՞րն է, Շիրազ, — հարցրի ես:

— «Բիբլիականը», «Համամարդկայինը», «Հուշարձան մայրիկիս» շարքը: էլի ասեմ, կասես՝ մեծամիտ է: Եթե ինձնից մի վեց-յոթ գործ ապրի, ասենք հարյուր, հինգ հարյուր,

հազար ասրի, ես ինձ աշխարհի ամենաերջանիկ մարդը կհամարեմ: Մնացած գործերս քաջարի զինվորների նման մարտիրոսանալու են հանուն ազգի: Անտառը միայն կաղնիներից չէ սանդղված, գառան ծառեր, մացառներ էլ են պեաֆ:

— Շաա հիշա ես դաաում,— ասացի,— բա՛ որ գործերիցդ մի քանի առդ խմբագրում են, ինչո՞ւ ես աղմկում, դրժգոհում, նեղանում:

— Դա ուրիշ խոսակցություն է: Մարդը բշով չի բավաբարվում: Թո՛ղ Մասիսը աան՝ հանգստանամ:

— Բայց կհանգստանա՞ս:

Լոում է...

Ես էլ եմ լոում:

Երբ նիսաի հանդիսավոր մասը ավարավեց, նա հարցրեց.

— Համերգին մնալու ե՞ս:

— Ինչպես կուզես, չե՞ս ուզում մնանֆ:

— Շաա նսանցիներ, երկար շեմ համբերում, աթոռի սովոր շեմ. իմ աթոռը երկնում է, ամպերից վերև, այնանդից՝ աստղերի մոաից եմ հսկում: Բանասանդություններն առաջ գլխիս մեջ եմ մշակում, նոր միայն թղթին հանձնում: Երբ կովի նախօրեին «Խորհրդային Հայաստան» թերթում գրական աշխատանքի անցա, ասենֆ դու գիտես, աեղ էին որոնում ինձ համար, սենյակներ ֆիչ կային: Ես խմբագրին ասացի՝ ինձ աթոռ պեաֆ չէ, ես տեղում շեմ նսանլու, թաղվելու եմ կյանքի բովում, միայն մեֆենագրունուն պաավիրեֆ, որ գործերս ժամանակին աա, թելադրելու եմ:

Մնալ շեմ կարող, վախենում եմ մնամ վարպեաի երգերին շղիմանամ, մանկությունս, սերերս հիշեմ, լաց լինեմ: Ձեմ ուզում ժողովուրդը աեսնի առյուծի լացը: Ես գնացի:

Միասին դուրս եկանֆ, ուղեկցեցի մինչև Լենինի պողոտայի № 27 շենֆի նրա բնակարանը: Ճանապարհին ծանոթ-անծանոթ բարևում էին նրան, ինքը՝ հպարտ պաաասխանում էր գլխի շարժումով, իսկ կանանց երբեմն կանգնեցնում և շոյիչ խոսեեր էր ասում:

— Մեծերը ուշ-ուշ են ծնվում ու հավերժանում են, սա-

կայն մեծերին անտաղտնդները խանգարում են, — ասաց նա, — Առյուծը մենակ է մտն գալիս: Խոտերի ծովը ծածկում է ծաղկին, իսկ մեծ բանաստեղծին ծածկում են պատիկները, որոնք միանում են, բանտկվում: Ես հնդկական մի կինոնկար եմ տեսել, ուր արևադարձային սևաթույր մրջյունները անթիվ բազմությամբ խմբվում և հարձակվում են վիթխարի փղի վրա ու մի քանի վայրկյանում ոչնչացնում հսկային: Ֆիլմի հաջորդ կադրում փղից մնացած սպիտակ կմախֆն է: Այդ ֆիլմի տպավորության տակ գրել եմ.

*Եղնիկը ուղեց աշխարհ տեսնել,
Գեթ երազների աստղին հասնել,
Բայց երբ որ ելավ անտառից դուրս՝
Իսկույն արնոտվեց երազը կույս:
Ես եղնիկից էլ անզեն ու նուրբ՝
Ինչպե՛ս ապրեցի՝ հրա՛շք է սուրբ...*

Կարդաց ու ասաց. — Մտածում եմ, ինչո՞ւ մարդն այսֆան լիք է, նույնքան էլ վտր է, ինչո՞ւ մարդու մեջ դրվել է սոխակը և աղվեսը, ինչո՞ւ... եղնիկո, եթե գայլի նունկից ելնում, բնկնում է առավել զորեղի հունկը...

— «Աբու-լալա-Մահարու» ազդեցության տակ ես, Հովհաննես:

Նա ծիծաղեց:

— Իսկ դու ո՞ւմ ազդեցության տակ ես...

Բաժանվեցինք: Ուշ երեկոյան Շիրազը զանգահարեց և ասաց.

— Հտրցիս չպատասխանեցիր: Գիտե՞ս, Վարպետը արժանավայել մեծարվեց, ժողովուրդը շատ է սիրում նրան, իսկական ժողովրդական բանաստեղծ է իմ մեծ հովանավորը: Նրա իմ մասին տված գնահատականները գրան են... Հա՛, հրաաարակչության մարդկանց, Վիկտոր Բալայանին, իմ ու ին լավ բարեկամին շոգեհարշի պատմությունը շանես, թե չէ գրքերս տվելի պատիկ կդարձնեն, վագոնները՝ «օտցեպիտ» կանեն, կանջատեն:

Դեկտեմբեր, 1975:

Հանդիպեցի Շիրազին: Նրան տվեցի «Հայագիտությունն արտասահմանում» գիտաինֆորմացիոն բյուլետենի այն համարը, որտեղ նյութեր կային սփյուռֆահայ մամուլում հրապարակված Շիրազի ստեղծագործությունների մասին: Գոհ մնաց: Հեռո խոսք բացվեց նրան շնորհված Պետական մրցանակի մասին:

— Պետական մրցանակի դափնեկրի կոչում շնորհելու առթիվ հեռագիրդ ստացա, — ասաց նա, — շատ գոհ եմ: Դու և Վիկտոր Բալայանը ասես խոսքներդ մեկ էիք արել, միատեսակ ձևակերպումներ տվել: Շնորհակալություն: Ձեր կարծիքները մամուլում հրապարակեմ, թող ժողովուրդը կարդա, թե չէ ինչի՞ նման է՝ գրել եմ միայն ինձ համար, իսկ ես գիտեմ, թե ինչպիսի Շիրազ եմ:

— Ինչ հեռագրով եմ հաղորդել, պատրաստ եմ մամուլում ավելին ասել, ի՞նչ է, կասկածո՞ւմ ես: Վիկտորը մեկ անգամ չէ, որ քո մասին ազնիվ, հշմտրիտ ու խորիմաստ հոդվածներ է գրել: «Համամարդկայինը» նա է լույս աշխարհ բերել: Առիթից օգտվելով նորից եմ սրաանց շնորհավորում քեզ և բարեմաղթում՝ մուրազդ ի կատար:

— Ո՞ր մուրազ:

— Դու ինձնից շատ լավ գիտես, թե որ մուրազդ...

— Է՛, Բեյրութից ծանր, սիրտ խոցող լուրեր են գալիս, այնտեղ ցեղասպանություն է, ազգակործանում, սով, տեղահանություն, արյուն ու կրակ: Բեյրութաբնակ մի զբոսաշրջիկ մտավորական վերջերս հանդիպեց ինձ: Նա սկզբից ևեթ ասաց. «Ինչպես սկսեցի մեր հարցազրույցը, որ շուրջ իր նամփով բնթանա»: Ես պատասխանեցի՝ «չուր, որ արցունք է և գինի»: Նա, թե՛ ինչպե՞ս: Այո, արցունք է և գինի: Բեյրութի հայ համայնքը մշակութային աշխի բնկնող կենտրոն է: Սրտիս սիրտը ծակեց, երբ գրուցակցիս շուրթերից լսեցի բեյրության դանթեականի մոայլ պատումները, սիրտս մղկրասաց բեյրության դժբախտությունների բոթը կշռելով: Չէ՞

որ ես ծնվել եմ հայկական մեծ ցեղասպանության օրերին, 1915 թվականին, և գիտեմ, թե ինչ ասել է սով. կոտորած, տեղահանություն: Այդ է պատճառը, որ ես որոշել եմ Պետական մրցանակի դափնին պահել ինձ, իսկ դափնեկրի հասանելիք դրամը ուղարկել Բեյրութի անապատան, ֆաղցի ու սովի մատնված երեխաներին, ծերերին, նամանավանդ՝ մայրերին:

— Ճիշտ ես մտածել: Մեծ Հայրենականի տարիներին սփյուռֆահայերը, այդ թվում՝ Բեյրութի հայերը ոչ միայն բարոյապես, այլև նյութապես նպաստեցին ֆաշիզմի ջախջախմանը:

— Սփյուռֆահայերի հայրենասիրական նախաձեռնությունը՝ «Սասունցի Դավիթ», «Գեներալ Բաղրամյան» տանկային շարառյուներ ստեղծելու նպատակով, անմոռաց է: Ես նույնիսկ բանաստեղծություն եմ նվիրել նրանց, — ասաց նա: — Այժմ Մայրիների երկիրը, և նրան ապավինած հայությունը դժբախտության մեջ են: Սովի վտանգից ավելի վտանգավորը արտագաղթն է: Ասում ես մուրազիդ հասիր, ինչպե՞ս հասնեմ, երբ սփյուռֆահայությունը ամբողջ համայնքով նորից թափառականի ցուպը ձեռքն է վերցրել և ինքն էլ չգիտի, թե ուր են տանում ֆարավանները: Սփյուռֆահայ իմ եղբայրներին ու փոյրերին, իբրև պատգամ, միշտ նիշեցնում եմ շմոռանալ Արշակ թագավորի նետ Տիգրանում կտտարված պատմությունը, որը մեզ է հաղորդել Փավստոս Բուզանդը՝ ուր էլ որ գնան, անմիտ չգտնվեն: Հայոց լեզուն, հայ մշակույթը ընդունեն իբրև այն հողը, որի վրա արծվանում էր Արշակ թագավորը, թեև ձեռքերը մեջքին շղթայակապ էր:

— Շիրազ, չորս տարի առաջ, 1971-ին, Լոս Անջելես և Սան Ֆրանցիսկո ֆաղաֆներում երկու հայ ընաանիքներում միևնույն փաստին հանդիպեցի: Նրանց ռենյակներից մեկը կոչվում էր Մայր Հայաստան, ուր պահվում էին մայր հույրենիքից ստացած հուշանվերները, Արարատ լեռան նկարը և Արարատի ֆոնի վրա ֆո լուսանկարը: Սան Ֆրանցիսկոյում Ռուբեն Պողոսյանն ասաց. — Այո սենյակը իմ Հայաստանն է, իմ հույսն ու ապավենը: Իսկ Հովհաննես Շիրազը սփյուռֆ-հայրենիք կապերը ցուցանող աստղ է:

— Այդ մասին ինչո՞ւ չեմ գրում,— առաց նա:

— Ինչպե՞ս չէ. գրել եմ, լույս է տեսել «Մոսկովոկիե նովոսի» թերթում՝ «Հայերը Ամերիկայում» խորագրով: Թերթը հրատարակվում է անգլերեն, ֆրանսերեն, իռլանդերեն և այլ լեզուներով:

— Զգիտեի:

— Զգիտե՛ո, որ սփյուռփում ևս շիրագապաշառությունը մեծ է: Դու առում ես. «Որտեղ հայ կա, բերե՛ք սեղմե՛մ իմ կրծքին», իսկ նրանք էլ՝ «Շիրագին բերե՛ք, ոտնմե՛նք մեր կրծքին»: Սփյուռփահայերը քաջ գիտեն, որ դեպի հորհրդային Հայաստան նոր ներգաղթի՝ հայրենադարձության նախապահներ ես դու փափագում, հիշում են խոռոչերդ՝ «Քանգի գետերի միացումն է Աևանի ծովացման ուղին»:

Զիկագոյում մի հայ առաց, որ Շիրագի հետ նամակագրական կապեր ունի Նրան հարցրի, թե ի՞նչ հառցեով է թղթակցում: Առանց վարանելու պատասխանեց. «Հայաստան, Հովհաննես Շիրագին: Ուրիշ հառցե պե՛տք չէ, մի Հովհաննես Շիրագ կա՝ և մի Հայաստան, մեր Շիրագը և մեր Հայաստանը»:

«ՍԻՐՏՍ ՍՓՈՓԱՆՔԻ ԷՐ ԾԱՐԱՎ»

10 հունվարի, 1976:

Դասախոս Բալաբեկ Մելլյանը աշխատում է «Հովհաննես Շիրագ» կենսամատենագիտության վրա: Ամբիոնն օգնում է նրան: Շիրագին Հայկական ԽՍՀ Պետական մրցանակ շնորհելու կապակցությամբ Բալաբեկը նամակով շնորհավորել է պոետին: Շիրագը գրավոր շնորհակալություն է հայտնել: Ամբիոնում կարդացինք Շիրագի նամակը և մաքեր փոխանակեցինք: «Սիրելի իմ բնթերցող,— գրել է նա,— ստացա սրաագին ողջույնդ, անչափ ուրախ եմ արձագանքիդ համար, մանավանդ վկայությանդ: Ցավերով բազմալված սիրտը սփոփանքի էր ծարաված և այն էլ աստիներ... և ահա մի նշույլ բալզամ-բալասանի բույր եղավ այդ ...

Ինչպես հայտնի է, տաղանդի ու անտաղանդության կոնիվը այն կոնիվն է, ինչ երեկ էր, մեկէլ օրը և ինչ այսօր է և ինչ վաղն է ու... հավերժը..

Մնում է հուսալ միմիայն ժողովրդի անկաշառությանը.
Ողջ լեր...

Հովհաննես Շիրազ»:

Մի ֆանի օր անց հանդիպեցի Շիրազին: Նրան ասացի. դասախոս Մելյանին գրած նամակը մեր ամբիոնում կարդացինք: Լավ էր:

— Իսկապե՞ս,— հարցրեց նա:

— Այո՛, մեր դասախոսները խնդրեցին, որ մի օր գաս և կուլտուրայի ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպես:

— Կուգամ, ինչո՞ւ չէ: Ես միշտ էլ մեծ բավականություն եմ ստանում երիտասարդության հետ ունեցած հանդիպումներից... Երիտասարդությունը կյանքի գարունն է, ծաղիկը, լիրիկայի միջուկը, ոիրո թագակիրը: Կուգամ, միայն խոստացիր, որ գեկուցողը դու ես լինելու:

Պայմանավորվեցինք:

Մի ֆանի օր անց Շիրազը տվեց իր նկարը և հանդիպման երեկոյի հրավիրատոմսի նմուշը:

— Բա՛, ասում ես ժողովրդական բանաստեղծի հանդիպմանը հրավիրատոմս պետք չէ՞:

— Հրավիրատոմսը պետք է, իբրև հիշատակ. ես ասել եմ դանլինի մուտքը պիտի ազատ լինի: Հրավիրատոմս կուգեմ, որ վրան իմ մասին նշանավոր գրողների ասույթները գրվեն: Հրրը՞:— Հետո՞ նա տվեց հրավիրատոմս, որի վրա կար ասույթների ծաղկափաղ և «Մայր Հայաստան»* բանաստեղծության տեքստը, որը և հրապարակում եմ:

«Ուշադրություն պիտի դարձնել այն պատի վրա: Պիտի դաստիարակել նրան, մեծ ապագա է խոստանում: Գուրգուրեցեք, բայց երեւ մի տվեք, ընդհանուր ազմուկի մեջ

* Նույն «Ո՞րն է, բարո» բանաստեղծությունն է, որ հրավիրատոմսում տպագրվել է այդ վերնագրի տակ (Խ. Բ.):

ժողովրդական լիրիկա է բերում սա»:

1935 թ.

Ալեքսանդր Շիրվանզադե

«Կուզեմ այսանդ գոնե քանի մը տողով հիշատակել (ավելի լայնորեն անոնց մասին խոսելը թողնելով առաջիկային) տիադոսները երկու ֆերթողական գրփույկներու, որ հայ նոր ու գմայլելի բանաստեղծի մը բերկրառիթ հայտնությունը կրբերեն մեզի, այն է «Գարնանամուտ» (իսկապես գարնանաբույր) տաղերու հավաքածուն և «Սիամանթո ու Խեղեղարե» հոյակապ վիպերգը Հովհաննես Շիրազի, որ երեկ անապասաան «խուժանային», որք տղակ մը եղած է Խ. Հայաստանի մեջ և որ այսօր, բոտ ին, Երևանի և ամբողջ աշխարհի հայ բանաստեղծներուն մեջ ինֆնուրույն անդ մը գրավելու արժանի ներշնչյալ հմայիչ ֆնարերգակ մըն է»:

Արշակ Չոպանյան

(«Անահիտ», 1936, սեպտ.-հոկտ., էջ 30)

«Շիրազը շատ հախուռն բնավորություն ունի: Բնությունը շատ շոայլ է եղել նրա նկատմամբ, հեղեղ է, անավոր հեղեղ... Հետք բերում է ծիլ-ծաղկունք, տիղմ, փրփուր, երեսիս օրոցք, արմատախիլ կաղնի, կնունով լիք ոսկի (տիղմը կանցնի, կթողնի՝ ոսկին) և գնալով պիտի պարզվի, զուլալվի և կդառնա մեր պոեզիայի հրաշալի սպագան»:

1938 թ.

Ավետիք Իսահակյան

«Շիրազը հոյակապ դեմք է մեր պոեզիայի պառնասում, հորդաբուխ և նշմարիա բանաստեղծ, նրա ամեն մի բանաստեղծությունը մի գյուտ է զարմանալի պատկերներով: Բնությունը նրան օժանել է փիլիսոփայական ինտուիցիայով: Համաշխարհային գրական գոհարներ եթե կազմվեին, ես մեծ սիրով տեղ կտայի «էֆսպրոմտին», «Բիբլիականին» և այլ բանաստեղծությունների: «Բիբլիականը» կոսմիկական տարերք ունի, փիլիսոփայական մեծ տաղանդի գործ է: Խորիմաստ «Բիբլիականի», ծաղկաբույր «Խեղեղարեի» և մյուս պոեմների կախարդ հեղինակը ետևոկտեմբերյան ամենամեծ հայ լիրիկն է:

Հ. Շիրազը հայ ժողովրդի վշտի դարավոր մառախուղից ծագած աստղն է («Երբ շծագած աստղ էիր մառախուղում երագի»): «Քիբլիական» պոեմը գրված է վայրի տաղանդով»:

Ավետիք Իսահակյան

«Կլասիկ կրակներով լիքն է Հովն. Շիրագի պոեզիան, ոչ միայն Հայաստանի, այլև Խորհրդային Միության ամենատաղանդավոր, հիանալի պոետներից մեկն է նա»:

Նիկոլայ Տիխոնով

«Նախկին անապաստան, այժմ մեծ պոետ է Հովն. Շիրազը՝ Հայաստանի ամենամասսայականը, ամենաժողովրդականը»:

Լուի Արագոն

«Հովն. Շիրագի «Քիբլիականը» հայ ժողովրդի հոգու նիչն է, մոունչը, ժողովուրդ, որ տարիներ շարունակ անարդարացի տառապել է զագիր ու հանցագործ օտարների նիրաններում, նիչն է մի ժողովրդի, որը 1.600 տարի առաջ ստեղծված և ցայսօր հարատևած իր գրեթե ստեղծել է գիրք, գրականություն, բարձր մշակույթ»:

Ահմեդ Շամլուն

(Պարսիկ քննադատ)

«Շիրագ՝ մեր ապրող բանաստեղծներեն ամենեն ժողովրդականը և տիրապետող դեմքն է այսօր հայրենիքի և սփյուռքի մեջ: Մեր ազգային բանաստեղծը, իշխանը, մեր օրերու «Ամենայն հայոց բանաստեղծը», ինչպես էր իր ատենին՝ Հովն. Թումանյանը: Շիրազը կիսօսի մեր սրտեն, կերգե մեր տենչերեն՝ կատարյալ արվեստով խորունկ հայրենասիրությամբ:

Վարպետն է վնիտ և պարզ ոնի, տգնիվ խոսքի, վարակիչ է, հուզում է, հաննարեղ ֆնարերգակ է»:

«Զահակիբ», 1965 թ., մարտի 11

«Հովհաննես Շիրազի հայրենաշունչ ֆնարը ազգային դիմագիծ պահելու դեղ է՝ ձուլման նամփաներով անցնող սփյուռֆահայի համար, մեր աշխարհացրիվ բեկորներին դեպի մայր հայրենիք կանչող զանգ է, ազգահավաքի հզոր զանգ»:

«Հայրենիքի ձայն»

«Դեռ 1935 թվին, այսֆան կանուխ, արդեն խորհրդային ականավոր գրույներ, վեհանձն ու խոնարհ վկայությամբ Շիրազին կնկաանին Չարենցի բանաստեղծական գանի ժառանգորդը, և հիմա Շիրազն հասել է Չարենցի վայելած ժողովրդական հիացմանը, հռչակին ու ծափին, գորովանքին: Տարակույս չկա, որ ներկա սերնդի հայ բանաստեղծներուն մեջ Շիրազը օժաված է ամենեն հորդ ու բազմերանգ տաղանդով...»

«Պայքար»

«Հ. Շիրազը ժամանակակից անգուգական բանաստեղծ է, արֆան է համաշխարհային մրցանակի արժանի (ֆերթոզական արվեստի կալվածքին մեջ): Նրանով կնանչնան հայությանը, հայ թոհիչին, հայ մաքին ու հայոց հաննարին»:

Ս. Գալայժ
(Իսպանացի թարգմանիչ)

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

— Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք.
— Էն, որ ունի բարձր երկինք,
էն, որ ունի ամպ ու արև
Ցուր թագարժան գլխու վերև.
Էն, որ ունի լեռն Արագած՝
Հայ թագուհու զմրուխտ հագած,
Որ կսպասե իր արքային,

Արքան՝ գերի այլոց գահին:
 էն, որ տեսքով իր Աւանի,
 Մազերն արձակ ու գեղանի
 Լացող հարսի կնձանի,
 Որ կսպասե ողջ ազգովին
 իր մեծաքույր Վանա ծովին:
 էն, որ ունի աշխարհի թագ՝
 Քանց թագավոր Մասիս ճերմակ,
 Ճերմակ Մասիս, սիրտը մրմուռ,
 Գլուխը վեր, դրախտի գուռ:
 էն, որ ունի Մասիսն ի վար
 Հի՛ն-հի՛ն բերդեր, վանքեր մթար,
 Որ ավերակ, բայց դեռ դարեր
 Լուռ կաղոթեն երկինքն ի վեր,
 էն, որ ունի Արազ, Տղմուտ,
 Եվ ափերը մամոռտ ու մութ
 Գերեզմաններն են պապերուդ
 Մատուռներն են հայոց ոգուդ
 էն, որ Ղազրեկն ու Արագած
 Արտերու մեջ ախպեր կանգնած՝
 Ձեռ կզարնեն գինով թասին
 Ու կձենեն մեր Մասիսին,
 Թե՛ «Հե՛յ, բաբո, բավ չէ՞ մենակ
 Պանդուխտ մնաս ամպերու տակ...»

«ՊԱՏԳԱՄ ԱԶԳԱՊԱՀԻ»

Ապրիլ, 1980:

- «Հուշարձան մայրիկիս» գրքիս երուրդ հրատարակությունը անտե՞լ ես,— հարցրեց Շիրազը:
- Այո՛, ոչ միայն անտե՛լ եմ, այլև կարդացել:
- Եվ ի՞նչ ապավորություն ես ստացել:
- Տպավորությունս աասներկու տարի առաջ եմ հարդել, «Հուշարձանը» անձեռակերտ հուշարձան է:

— Միայն այդքա՞նք:

— Էլ ի՞նչ ես ուզում, որ ասեմ: Երբորդ հրատարակությունում նախորդից դուրս մնացած ստեղծագործությունների դրել ես, նոր բանաստեղծություններ էլ ես ավելացրել: Լավ է: Ուզում ես ասեմ, ծածկագիր պատգամների էլ եմ վերծանել:

— Ի՞նչ ծածկագիր:

— Դու չգիտե՞ս: «Պատգամ ազգապահի» սփանչելի մայրերգությանը առաջին բաների ընթերցանությունը ի՞նչ է... Ասե՛մ...

Շիրազը ժպտում է, մի պահ խորհում:

— Դե՛ անանց ծածկագրի էլ դու այս մասին շատ ես գրել:

— Խորամանկ, իմ բոլոր գաղտնիքները գիտես: Էդիկ ծածկագրով եմ գրել՝ բանաստեղծական ուժերս սառնելու համար: Կտեսնի՞ս ինչըխ հաննարեղ է ստացվել:

— Համաձայն եմ: Իսկ «Մորս կանչը» հրաշք բանաստեղծությունում ինչո՞ւ ես կրկնել Եղիշե Չարենցի «Գիրք հանապարհի» նշանավոր պտտգամը:

— Չարենցն իմ բանաստեղծական կուրֆն է... Իսկ ուշադրություն դարձրե՛լ ես մորս խոսքերին՝ պանդուխտի հացը կուտ կրկնի օտարի թունում...

— Այո՛, ինչպե՞ս չէ. և եռ խոսքերին, որ դու դրել ես իբրև բնարան՝

Ազգ իմ, ի քեզ ես ինձ քամում՝

Այս եմ, ազգ իմ, քեզ պատգամում...

— Ուզո՞ւմ ես էլի ասեմ: Հանուն հայոց լեզվի գոյատևման, նորից ես մոնչացել.

«Մոնչա Շիրազ փրկություն հայոց լեզվին...»

— Իսկապես, որ իմ գործերը խորն ես կարդում: Դե, ասենք, պատմաբանները վերծանել գիտեն: Այդ պատգամները ես շատ անգամ եմ գրել, հրատարակել. ակրոստիֆոսի միջոցով բանաստեղծական հնարաններս եմ մեծացնում:

— Հա՛, գրքիդ վերջում էլ գրել են, թե «Շիրազը ծնվել է 1918 թվի մեծ եղեռնին». սա ի՞նչ նորություն է, ուզում ես շահե՞լ երևալ:

— Նորություն չէ, վրիպակ է, պե՜տ է լինի 1915 թվականին...

— Բա՛ մանկությանդ ընկեր Նազարն էլ ասում է, թե 1911 թվականին եռ ծնվել...

— Ինձ էլ է ասել: Դրա համար էլ անձնագրերի փոխանակության ժամանակ նրան եմ տվել իմ անձնագիրը, որ ասանի փոխի, աչքովը ասանի և լո՛ւ...

«ԱՎԱ՛Ղ, ԱՎԱ՛Ղ...»

17 սեպտեմբերի, 1981:

Զանգ: Վերցնում եմ հեռախոսափողը: Շիրազի ձայնն է:

— Մի շահել գյումրեցու միջոցով ուղարկում եմ երկերիս առաջին հաառը, դու ինձ շատ ես օգնել, շնորհակալ եմ, թեև «Հայոց Դանթեականը» լույս աշխարհ չբերի:

Մեկ ժամ անց բերեցին հաառյակը: Շիրազը գրքի անվանաթերթի վրա գրել է. «Նրան, որին պարտական եմ սուրբ գրքիս աշխարհ գալը...— բայց ավա՛ղ հետևյալում նա կուզնաց... մութից լույս շահանելով «Հայոց Դանթեականը», նույնֆան սուրբ գիրքս, էլ չեմ ասում Անին, Թոնդրակեցիներս, ավա՛ղ, ավա՛ղ...»:

Օրեր հետո ասացի.

— Շիրազ, գերդաստանիդ լուսանկարը շատ ապավորիչ է, մի օրինակ նվիրի ահադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին, նա քեզ շաա է սիրում:

— Քանի նրա լուսահոգի հայրը՝ մեծ գիանական և հոեաոր Համագասպը ապրում էր, գործերս հաջող էին գնում: Նա ինձ անչափ սիրում էր, մեր բնավորություններն էլ էին նման, որդին գիտեր: Այժմ Համագասպը չկա, աղբյուրներս ցամաֆել են: Դե, որ ասում ես՝ կնվիրեմ... Բայց ի՞նչ մակագրեմ:

— Ինչ էլ գրես բանաստեղծություն է լինելու ...

— Ինչըխ լավ ասացիր:

— Աղբյուրներիդ ցամաֆելու մասին էլ հիշիր: Լուսա-

նկարի մի օրինակ էլ լավ կլինի ինձ նվիրես: Երեխաներիդ բոլորի անունները հիշո՞ւմ ես:

— Ինչպե՞ս չէ: Բա Երկերիս ժողովածուի առաջին գրքում «Քնար բալիկներիս» շարքը չե՞ս կարդացել, բոլորի համար ձոներգեր եմ հյուսել: Մեծս՝ Արա (Արա Գեղեցիկի անունն է), Մասիս-Մասիսիկ (բիբլիական սարիս անունն է, մասիսախն եմ չէ՞), Սիփան-Սիփանիկ (մյուս սարիս անունն է), Արաֆս (գեան է, մայր Արաֆսը), Աստղիկ (մորս անունն է), Հայկ-Քաթոսիկ (հորս անունն է), Անի (ֆաղաֆիս անունն է), Վան-Վանանդիկ (մյուս ֆաղաֆիս անունն է):

Ասացի, թե երեխաներիդ անվանակոչության ժամանակ էլ ես ֆեզ հարագաա մնացել:

— Երեխաներս իմ գանձերն են, շարունակությունս ... Երանց արյունը իմ անդրադարձն է:

Ասաց ու ծիծաղեց:

ՇՂԹԱՅՎԱԾ ՄԵՂԵԴԻՆԵՐ...

Մարտ, 1983:

Հեռախոսային զանգ, վերցնում եմ հեռախոսափողը, ծանոթ ձայն է. Շիրազն է:

— Բարև, ինչըխ ես, պատմաբան եղբայր, ասում եմ իմ մասին նյութեր ես հրատարակել «Հայագիտությունը արասասանմանում» բյուլետենում, կրճամ ծանոթանալ:

— Ինչո՞ւ չէ, մի օրինակ կուղարկեմ, սփյուռֆի մտավորականները հանելի գնահատականներ են տվել գործերիդ: Կարդա...

— Թող նախանձողներս էլ կարդան... Իսկ Երկերիս ժողովածուի երկրորդ հատորը ստացե՞լ ես:

— Ոչ, չեմ տեսել, ուղարկել ե՞ս, որ ստանամ:

— Տպաֆանակը «Հուշարձան մայրիկիս» գրֆիս առաջին հրատարակությանը գերազանցեց, երանի Գուրգեն Մահարին կենդանի լիներ և տեսներ: Առաջին հատորը լույս է տեսել 20

հազար օրինակով, իսկ երկրորդը՝ 60 հազար: Մյուս հասարակներն էլ են այս շահով տպագրվելու: Տկար եմ, «Բյուլետենը» մեկի միջոցով ուղարկիր, իսկ ես՝ հատուրյակս կհամփեմ: Հա, «Շղթայված մեղեդիները» թեև մկրատվեց, բայց գոհ եմ խմբագրից, վերջապես հրատարակվեց: Գիտես չե՞, որ 1937-ին եմ գրել, տարեթիվը փոխեցին, գրեցին 1938—1949 թթ.: Ինչ որ է: Մալխաս:

— Դա «Պոեմ երաժշտության մասինը» չե՞: Հիշում եմ, 1937-ի, կարծեմ, օգոստոսին էր, «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրության գրական բաժնում Հրաչյա Քոչարի և Գառնիկ Ոսկանյանի ներկայությամբ կարդացիր: Քոչարն ասաց.

— Մո՛ Օնիկ, հո խելառ չե՞ս... Չես տեսնում շուրջդ ինչ է կաաարվում: Տար ատն պիևդ պահիր, ջանել ես: Կարծեմ 1957-ին ուզում էիր տպագրել, ինչ եղավ, չգիտեմ:

Կուզեմ դու կարդաս:

Հատորը ստացա: Իրոք տպաֆանակը դարձրել են 60 հազար: Պոեզիայի համար բացառիկ մի բան: Հատորում գետեղված են պոեմները՝ բիրլիականները, հայրենականները և փոֆր պոեմները՝ 31 ստեղծագործություն: «Շղթայված մեղեդիները» (էջ 152—159) դրված է «Բիրլիականները» շարքում: Գիտեմ, որ Շիրազն անհամբեր է, ուր որ է պիտի գանգահարի և հարցնի ստացա՞ր, ի՞նչ կարծիքի ես... Թերթում եմ գիրքը, կարդում «Շղթայված մեղեդիները». գլուխները թվանշաններով բաժանված են, բայց 3-ից հետո 5 է նըշվում, 4-րդ թիվը չկա. և առաջին էջերում հաջորդական կապր ասես թե խախտված է:

Օրվա երկրորդ կեսին նորից գանգահարեց:

— Կտեսնես Սփյուռֆի եղբայրներս ինչըխ ջերմ կգնահատեն տաղանդս. Սփյուռֆի գրողներից Հ. Օշականը գրական մուտֆս առաջին ողջունողներից էր: «Այս տղուն մեջ, — ասել է նա, — արևելահայ գեղջուկ պարզությունը և արևմտահայ շֆեղ պատկերավորությունը, ռնագեղությունը կրնան իրար գտնել... Եթե Վարուժանի շֆեղությունը օր մը երբևիցե պիտի խառնվի գեղջուկ-ջունչին, կկարծեմ որ իրականացնողն այս աղան պիտի ըլլա»: Այս խոսքերին, որ վերահրա-

աարակված են «Բյուլետենում», գումարվել է նաև Սյուրմելյանի խոսքը՝ «Շիրագր Սփյուռֆին մեջ խորհրդահայ ամենաժողովրդական և սիրված բանաստեղծն է, նրա ձայնը հոս սրաներ կգրավի և մեզ կխրատի, որ շարունակենք երագել, որ Աբարաանն ու Վանա լենն և պատմական Հայաստանն շհրաժարվենք...»: Ասենք ինչու եմ կարդում, ձեր ինֆորմացիայի կենտրոնի հրատարակած «Բյուլետենում» այս բալլերը կա: Դու «Շղթայվածի...» մտսին խոսիր:

— Հատուր անգուգական է. բիրիտկան սիրով և կրակներով, փիլիսոփայական խոնկերով և խորֆեբով լցված: Բայց ո՞ր է «Շղթայվածի» շորորդ գլուխը...

— Խորամանկ ես հա՛, հրատարակչի աչք ունես, մկրաանելու ժամանակ 4-րդ թիվը մեխանիկորեն ևս մկրաավել է. որոշ առդեր հանվել են կամ էլ հեա ու առաջ են տարվել: Կլխավորը այն է, որ տպագրվեց:

Շիրագի մահից հետո, ժամանակներ անց, մեր ձեռքն ընկավ «Շղթայված մեղեդիների» ապարանային մեֆենագիր օրինակը, որը համեմատեցինք հաաորի աարբերակի հեա: Աանդազործության պաամության հեաագոտողներին օգնելու համար նշենք բնագրային մի քանի աարբերություններ: Այսպես, օրինակ, էջ 154-ում, տ. վ. 5-ից հետո հանվել է.

Ահեղամոունչ երախն էր գոցվում,

Երբ լսելիքն էր երգով լցվում:

Նույն էջում ա. վ. 21-ից հետո պետք է լինի 4 թվանշանը (շորորդ գլուխ): Իսկ դրանից վերևի 12 առդը (3-րդ գլուխ) առաջ է տարվել 4-րդ գլխից: էջ 155, ա. վ. 3-ից հետո հանված են՝

Գնա նվագիր երկրում բովանդակ,—

Թե ինչպես առյուծը ընկավ ոտքիս տակ,

Թեկուզ բոնեցիր, բայց բաց չեմ թողնի,

Օրհնքն անօրեն շղթաներ շունի:

Նույն էջում ա. ն. 8-ից առաջ հանված է՝

Մոռացիր նոցա

էջ 156 ա. վ. 3-ից հետո՝

Եվ ինքը վանդակ ընկավ

*Նա, որ գազանին երգով վանդակեց...
էջ 159, տ. վ. 2-ից հետո երեք տող նոր է գրել.
Եվ կնգովեմ օրենքը բազկի...
Ու լցրեց բամբիտն իր յոթ զավակով՝
Իր յոթ առյուծի յոթն ըմբոստանքով.*

Նույն էջում տ. վ. 11-ից հետո ավելացվել է՝
*Ու մոունչ դառավ հառաչ ծերունին,
Շանթերն արքային հասած ծերունին,*

Եվ այսպես: Հիրավի շիրազագիտությունը դեռ ինչքան շատ գործ ունի կատարելու, մասիսված Շիրազի բազմաճանաչումս գրական ժառանգությունը հավաքելու և ժողովրդականացնելու, ժողովրդի սեփականությունը դարձնելու գործում:

Շիրազը միայն «մառիստիս» և «հայրենախ» չէ, ինչպես գրել են նույնիսկ նրա լավագույն բարեկամները, այլ մեծ ֆաղափացի, բանաստեղծ:

ԵՐԿՈՒ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պատմաբան Սիմոն Կրկյաշարյանը Շիրազի «Իմ ընկեր Լորիկը» գիրքը թեև տակ դրած մտեցավ ինձ, բացեց տխրոսաթերթը և ասաց.

— Տես ինչ գանձ եմ ստացել, մեծ բանաստեղծը ինչպիսի ընծայական է գրել:

Կարդում եմ.

«Սիրելի Սիմոնին, պատմաբանին, այն տաղանդավոր մարդուն, որը հայ մեծ Ազգին պարգևեց հույն մեծ ազգի մեծ ստեղծագործությունը, — այն մարդուն, որը սրբեց հանճարեղ Տիգրան Մեծի ոսկե թագին հույն կեղծարարի ձեռքով դրված սև բիծը, — ի վերջո, այն մարդուն, որ ուրախ է, որ այս իմ գիրքն էլ լույս տեսավ, — բայց դու կարդա իմ էլ Տիգրան Մեծի վիշտը...»

Հ. Շիրազ

— Շիրազը երևի Քսենոֆոնի «Անաբասիսը» նկատի ունի:

— Այո՛, այո՛, միանգամայն նիշա եմ, «Անաբասիսը» բնագրից ես եմ հայերեն թարգմանել: Շիրազի հետ ընկերություն եմ անում, նա ինձ շատ է օգնել...

... Մի ֆանի օր անց գրուցում էի Սերո Խանգաղյանի հետ: Խոսք բացվեց Շիրազի մասին: Սերոն ասաց՝ Շիրազի հետ առաջին տնգամ անձնապես ծանոթացել եմ 1938-ին: Բայց դա թուրքիկ հանդիպում էր: 1939-ին Երևանի պետական համալսարանի շենքում հանդիպեցի նրան: Այն ժամանակ նա սովորում էր Համալսարանում, իսկ ես ժողովրդական ստեղծագործության տան աշխատակից էի՝ բանահավաք: Շիրազին ցույց տվեցի թեիս տակ դրած բանահյուսության նյութերի ժողովածուն և ասացի՝ բանակ եմ գնում, իսկ այս հավաքածուն տունում եմ Արամ Ղանալանյանի՞ հանձնեմ: Շիրազը ծանոթացավ թղթապանտկի բովանդակությանը և իր սովորության համաձայն չափածո նամակ գրեց Արամին: Այն, իբրև մասունք, պահում եմ: Կավ կլիների օգտագործես քո գրքում:

— Սիրով, — ասացի նրան:

Անա շիրազյան այդ մասունքը.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ ԱՐԱՄ

*Ծրիտասարդ այս իմ ընկեր
Բանաստեղծն անոսկեհեր
Կերթա բանակ* կամք ու սիրով,
Բայց նա այս լույս հին երգերով
Երազում է ճարել մի բան
Գումար մի գանձ կամ հոնորար,
Որ ճամփեքին քեֆով լինի,*

* Այդ ժամանակ բանակ չտարան (Խ. Բ.):

Քե՞քը ծփա ինչպե՞ս գինի,
Լա՛վ կարծիք տուր գրքի մասին,
Որ վառ լինի ինչպե՞ս լուսին,
Որ չմոռնա տղան երբեք
Գլխիմուր ու սրտաբեկ
Լա՛վ երգեր են—առակ ոսկի,
Հմայքը կա՛ հայոց խոսքի:

Ծիրագ

ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ 1968—1984

ՄՈՐՍ ԽՐԱՏԸ*

Փետրվար, 1968:

Մայր իմ, ասի,
Քեզ Գանգեսի
Արմավենին հարս բերեմ,
Թե՞ եղևնին, որ քո հարսի
Ողջ կյանքով քեզ համբուրեմ:
— Չէ՞, ոստոտ է օտար սերը,
Փշեր ունի եղևնին,
Վերջը սրվող իր փշերը
Խարված սիրտդ կխրվի:
Արմավենին՝ արմավենուն,
Դու քո բարդուն բաղկավիր,
Հարս բեր իմ հայ խնձորենուն,
Դու մեր այգուց մի շեղվիր:
Արմենուհի կույս եմ ուզում
Որ շպոկվես նրանից,
Որ շպոկե իմ հայ լեզուն
Նա թոռներիս բերանից:
Արագիլը՝ արագիլից,

* «Թանկագին մասունքներ» բաժնի բնագրերի մեծ մասը գտնվում են մեր ձեռքի տակ—Խ. Բ.:

Արծիվն՝ արծվից է սերում,
 Ճանճը՝ ճանճից, գայլը՝ գայլից,
 Վարդից է վարդն հարս բերում:
 Բեր վարդուհի մի դեռ կոկոն
 Դու քո ծնված անտառից,
 Որ երբ հասնի քո երեկոն,
 Հավք շփախշի քո թառից...
 Դեղձը միայն դեղձենիով,
 Եղևնով չեն պատվաստում,
 Չարն է քանդում օտար գինով
 Բնության կապն իմաստուն:
 Թե սուրբ լիներ խառնասերը՝
 Վաղուց էին խառնվել,—
 Շատ են խառնել մեզ ազգերը
 Շատ ցավեր են մեզ տվել...
 Ես հայուհի հարս եմ ուզում,
 Որ ծաղկի ազգն իմ տանից,
 Որ շպոկվի իմ մայր լեզուն
 Իմ ծոռների բերանից...

Այս բանաստեղծությունը Շիրազը դրել էր «Հուշարձան մայրիկիս» ժողովածուում: Խմբագիրը համաձայն չէր: Շիրազը տվեց ինձ և ասաց.

— Կարդա:

Լուսանցքում գրել էր. «Այս բանաստեղծությունը հանված է, այն էլ գաղտնորեն, առանց հեղինակիս հետ բանավիճելու...»

Իսկ ինչո՞ւ է հանված, գրավոր եմ պահանջում..

Հ. Շիրազ»:

— Հանգստացիր,— ասացի նրան,— հիմա կգան հրատարակչության գլխավոր խմբագիրն ու գրքիդ խմբագիրը, կբանավիճենք և հետո կդնենք ժողովածուում:

— Հաստա՞տ:

— Այո՛:

— Այդ դեպքում թույլ տուր մտածեմ...
Խորհում եմ, ինչքան հեշտ է և դժվար Շիրազին հա-
մոզել...

«ԱՆՈՒՆՆ Է ՌՈՒՔԵՆ ԵՐԱԶ»

5 մարտի, 1968:

«Ահա մի ծիլ, որ եթե իր բախտից հանդիպի մի ազնիվ
այգեպանի՝ կարող է ելնել, ցողունի փոխվել, և ցողունն ան-
պայման ծաղիկ կտա, և ծաղիկն տնայայման կպտղավորվի...
այսինքն՝ կունենանք մի նոր բանաստեղծ, և գուցե մեծ, և
մեր մշակույթն ինչքան բանակվի, այնքան հույսը կզինա-
վորվի, և նույնիսկ կարող ենք գալիք մեր սերունդներով՝
Մասիսն էլ այս կողմի վրա շուտ տալ... և այն ժամանակ մեր
փոքրիկ ածուն էլ շի անիծի աստծուն...

Իսկ այժմ ես կօրհնեմ քեզ, եթե լույս աշխարհ բերես
այս պատանուն, անունն է Ռուբեն Երազ...

Հովհաննես Շիրազ»:

«ԱՅՍ ԱՅՆ ԱՂՋԻԿՆ Է...»

8 ապրիլի, 1968:

«Այս այն աղջիկն է, որից իմ գրվածքների արտասանու-
թյունը լսեցիր և դահլիճի հետ հիացմունքով ձեռքերիցդ էլ
շատրվանեց...

Այժմ, ինքն ասաց, որ խոսք ես տվել օգնել ընդունվելու
համալսարան... և հիմտ՝ քանի որ խոսք ես տվել՝ խոսքն է
քո տերը,— ուրեմն լավ է ազատվես ստրկությունից... այ-
սինքն մի անմոռաց բարություն անել,— չէ՞ որ փշտատանի
մեջ մի վարդն էլ՝ մի հրաշքի պես է երևում՝ հեռվից էլ...

...Շատ բաներ եմ խնդրել ինձ համար՝ ձգձգել և ցարդ

գլուխ շես բերել,— խնդրում եմ գոնե տյա խնդրանքս կատարես՝ ֆանի որ ինձ համար չէ... այլ այլոց համար է:

Հովհաննես Շիրազ»:

Խնդրանքը կատարվեց:

«ԳԼՈՒԽՍ ՉԻ ՀԱՎԱՏՈՒՄ»

7 հունիսի, 1968:

— Երեկ մի ֆանի ֆառյակ եմ հորինել, այսինքն գլխումս կար, թղթին հանձնեցի,— ասում է Շիրազը:— Կարդամ, լսի՞ր:

Կարդում է: Մի ֆանիսը մի աասնյակ դարձավ: Արտասանում է ոգևորված, բարձր ձայնով: Դե՛ նա իր գրվածքները շատ լավ է ասմունքում:

— Բա՛ դա մի ֆանի՞սը եղավ,— ասում եմ նրան:

— Լսի՛ր, պատմաբան, այսպիսի խոհափիլիսոփայական ֆառյակներ ֆիչ ես կարդացել, լսի՛ր...

Վերջացրեց: Մի ֆառյակը գրեց և տվեց ինձ, որը և հրապարակում եմ.

Գլուխս չի հավատում.

Բայց սիրտս լուռ աղոթում՝

Թեթևանում է վշտից՝

Աստվածանում է վշտում...՝

Շուայլ սերմնացանի նման ամենուրեք նա ցրում է իր հունձեր ...

ԳԻՐԸ ԿԱՐՄԻՐ ԷՐ

15 նոյեմբերի, 1968:

Այսօր հրատարակչությունն եկավ մի քարտես պտաանի: — Հովհաննես Շիրազից ծրար եմ բերել,— ասաց նա: Վերցրի և բացեցի. նրա լուսանկարն է, ձյունաթափ Մա-

սիսների և նաիրյան երկնասլաց բարդիների ֆոնի վրա: Հա-
ջորդ էջին իր սիրած կարմիր գույնի մեղանով գիրն է. «Սի-
րելի երկար, այս թղթաբեր պատանին ձեր կողմերից է, զին-
վոր է գնում, եկավ մոտս գիրքս ուզեց՝ ուզում է Հայաս-
տանի հողից ծոցում և միշտ աչքի մեջ ունենալ հեռուներում,
այսպես էլ նա տասց, — ուստի խնդրում եմ մի հատիկ տաս
նրան՝ ի սեր հայության: Հովհաննես Շիրազ»:

Մեծ բանաստեղծի և թանկագին ընկերոջ հանձնարա-
րությունը հանույժով կատարեցի...

«ԳՐԱԲԵՐՈՒՂԻՍ... ԳՅՈՒՄՐԵՑԻ Է»

1968

«Գրաբերունիս բանաստեղծունի է, գյումրեցի է, քեզ գի-
տե որպես խելացի մարդու... խնդրում եմ ընդառաջես և մի
գործ տաս, կամ թարգմանություններ թող անի...»

«ԿԱՐԵԼԻ Է ՉՏԵԼ, ՄԱՔՐԵԼ...»

12 փետրվարի, 1969:

Ատոմ Շահբազյանը հավաքել, կազմել է թեավոր խոս-
քերի, ժողովրդական ասացվածքների և ասույթների մի ժո-
ղովածու: Շիրազը ծանոթացել է տեքստին ու գրել. «...կա-
րելի է գտել, մաքրել, խմբագրելով հանել ոսկեփունջ մի, մի
բուռ ոսկին էլ ոսկի է... խնդրում եմ հսկես և աշխարհ բերես
ոսկու բեկորը...»

Հ. Շիրազ:

1969

«Գրաբերս շնորհալի բանաստեղծ է, ընկել է վշտի մի
նեղ շավիղի մեջ... այժմ դու կարող ես նրան շավիղից հանել
լայն պողոտա...»

Հնարք խիղճ է, եթե չի մեռած կամ մեռցված, առնա-
սարակ սկսնակների վշտերը ցրող շկա այլևս, նույնիսկ շնոր-
հալիների, ինչպիսին այս հայցվորն է...

Հովհաննես Շիրազ»:

ԵՐԵՎ ՔԱՌՅԱԿ

1969

Եկ այս փոքրիկ իմ երգերով մեծ-մեծ տեղեր քեզ տանեմ,
Մտքի թևով իմ սրտաշեն ինքնաթիռի պես տանեմ,
Թե հայ ես, քեզ Մասիսն հանեմ, թե այլ ազգի դրախտն հին,
Իմ «հնարար» գոհարներով նորարից վեսսա տանեմ:

* * *

Երբ սերը կա՝ կյանքը նոր է, սիրուց անուշ օր չկա,
Քանի վայրագ, գրկել գիտես՝ դեռ ծերության ձոր չկա,
Սրբապիղծ է՝ ով պզծում է իր անցյալը պանծալի,
Կյանքը նոր է հավերժորեն, մարդուն հին ու նոր չկա:

* * *

Այնքան խմեմ, որ կարոտած հոգիս գինով մի գավ լինի,
Ինձ շուրթերիդ ավերն հանող սերս հարբած մի նավ լինի,
Բախտս նավում մանուկ ճամփորդ՝ գտնի փարոսն հուր
աչքերիդ,
Ձեռքես բռնես՝ ինձ ավ հանես և համբույրդ համբավ լինի...»

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՇԻՐԱԶԻ ԻՆՉ ՀՎՍՑԵԱԳՐՎԱԾ
ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

«ՄԵՐ ԱԶՆԻՎ ԳՐՈՂԸ»

13 հոկտեմբերի, 1969:

«Վրամ Հովսեփյանի մասին բարեխոսելիս (հոնորարի համար) մոռացա խնդրել նաև Վալտեր Արամյանի մասին՝ նույն խնդրով: Խնդրում եմ նրան հասանելիֆի գեթ մի մասն էլ դուրս գրել կարգադրես...»

Կարիֆի մեջ է նաև վերջինս, մեր ազնիվ գրողը...

Հ. Շիրազ»:

«ԱՇԽԱՐՀ ԲԵՐԵՔ»

1969:

«Խնդրում եմ Առողիկ անունով այս բանաստեղծուհուն աշխարհ բերեք, իմ կարծիքով շնորհալի է և արժանի ձեր ջանքերին...»

Հ. Շիրազ»:

«ԱՆԻՆ» ՏԱԿԱՎԻՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՄ...»

1969:

««Անին» տակավին ու դեռ մշակում եմ և... հղկում, այնպես որ կուշանա...»

Ուստի խնդրում եմ տեղ տաս «Հայոց Դանթեսկան» պոեմին, որը պատրաստ է և գրված կարծիքները մեղադրում են պետհրատին, որ այսֆան ուշացնում է և նրա ծնունդը:

Հ. Շիրազ»:

5 օգոստոսի, 1969:

Շոգ ամառ է: Տոթ: Շիրազը գործով եկել է հրատարակչություն: Զրուցում ենք: Տրամադրությունը բարձր է:

— Ինչո՞ւ եռ այս շոգերին ֆաղափում մնացել:

— Երբ եմ ամռանը տեղ գնացել, որ հիմա գնամ, ամառանոցս իմ գրասեղանն է և տան մերձակա խաչմերուկներն են: Պատմաբան ես, իմացիր, աշխարհի հոգսը բանաստեղծների ուսերին է ծանրացած:

Խոսք քաղվեց ոգելից խմիչֆների մասին: Ես ասաց. ես դատապարտում եմ և չեմ սիրում խմող մարդկանց: Ես չեմ խմում հայամի թասով, իմ ամեն մի թասը (երեսկայական) լիքն է Մասիսով, իմ գավաթը հողն է Հայաստանի, խմում եմ Վանա ծովիս բաժակով:

— Ուզում ես ասել հայրենասիրությունդ մոլեգին է, հա՞:

— Այս մասին գրել եմ՝ «Թաժակ անխայամականում»:

— Դու ունես նաև «Պոեմ խայամական»:

— Այո՞, «Թաժակ անխայամականը» հակադրություն է «Պոեմ խայամականի» գաղափարին:

— Ի՞նչ ասեմ, գիտեմ, որ տարիներ առաջ գրել ես.

«Մի բաժակը լավ է, երկուսը՝ բավ է, երրորդը գլխացավ է»: Իսկ «Պոեմ խայամականում» ասում ես՝ «ազգեր բաժակի շուրթերից կախվեցե՛ք»:

— Ի՞նչ, վատ եմ ասել: Պոետներին կարելի է: Նրանց ողղակի չպիտի հասկանալ, նայած ինչ տրամադրության ժամանակ է ծնվում բանաստեղծությունը: Եթե այդպես վարվենք, Օմար հայամից բան չի մնա: Եվ հետո ես չեմ խմում... «Թաժակ անխայամականս» գրել եմ, որ մարդիկ գինաբուֆից հեռու մնան, հարբեցողությամբ չզբաղվեն:

Կարդում է Շիրազը, ի՞նչ կարդալ, ասմունքում է, հուզվում և հուզում: Նրա աչքերից արցունք է հոսում, և այսպես 324 տող, դե արի դիմացիր...

Հրաժեշտից առաջ հարցրի ո՞ւր ես գնալու:

— Իմ բացօթյա նեմարանը՝ մեր տան շրջակայքի տա-

բաժնը Լենինի պողոտայի և Ամիրյան փողոցի շիրազյան հասվածք, սր հավաքվում է իմ և իմ պոեզիան պաշտող ընթերցողների բազմությունը: Մի ժամանակ, կարծեմ, դու էլ էիր իմ հեմարան-ակադեմիայում:

— Են հիմա էլ եմ քո պոեզիայի երկրպագուն...

— Դե ես գնացի,— ասաց նա, և աղոթք դարձած մըշտահույս խոսքեր շնչալով հեռացավ...

Մի ֆանի օր անց Շիրազը բերել էր «Պոեմ անխայամականը»:

— Պահիր, պետք կգա...

«ԳՈՂ ԵՄ, ԲԱՅՑ ԴԺԳՈՂ ԵՄ...»

Հունվար, 1970:

Երկու շաբաթ է, ինչ ամեն օր Շիրազը գալիս է հրատարակչություն: «Հայոց Դանթեականը» նորից է վերամշակել, հրատարակության համար գրախոսել և երաշխավորել են Ռուբեն Զարյանը, էդվարդ Թոփչյանը, Սուրեն Աղաբաբյանը, Հրահա Ղազարյանը: Բայց հենց որ ուզում ենք ապարան ուղարկել, հորից ետ է վերցնում, վերամշակում, արմատական փոփոխություններ մտցնում: Ասում են Շիրազը իր գործերը ֆիչ է հղկում: Դա սխալ է: Այո՛, հորդ աղբյուրի նման ժայթֆում են նրա բանաստեղծություններն ու պոեմները, բայց նա շատ խստապահանջ է:

— Տաղանդը նա է,— ասում է Շիրազը,— ով իր աշխատասիրությամբ բյուրեղացնում է կամոֆն ատածո տվածը. ֆարը ֆարհանֆում ֆար է, իսկ հմուտ վարպետն այն տաշում է և հրաշագործ տանար դարձնում:

Ես կարդացի «Հայոց Դանթեականի» նոր տարբերակը, համեմատեցի նախորդի հետ: Բազում փոփոխություններ է մտցրել, ինչ խոսք, ավելի է բարելավել*:

* Հանգամանորեն տես մեր «Շիրազ» հուշ-նովելներ գրքույկը, 1986, էջ 129—136: Վերջապես «Հայոց Դանթեականը առանձին գրքով 200 հազար օրինակ տպաքանակով, Սիֆան Շիրազի նկարազարգումներով (խրմբազիր Հարություն Ֆելեքյան) լույս տեսավ:

Եվ այսպես... Նա իրեն հատուկ ձևով շարունակ երկնել, վարպետորեն հղկել է ֆնարական և էպիկական իր մարգարիտները՝ ողջ ստեղծագործությունները:

— Շիրազ, դու գոհ ե՞ս քո մշակումներից, նոր տարբերակներից:

Նա ֆմծիծաղելով ասում է.

— Գոհ եմ, բայց դժգոհ եմ...

«ԱՅՍ ԳԻՐՔԸ...»

4 փետրվարի, 1972:

«Հուշարձան մայրիկիս» գրքի տոաջին հրատարակության մի օրինակի վրա Շիրազը շատ ջերմ ու սրտառույ մակագրություն էր արել և նվիրել ինձ: Հետագայում նա այդ օրինակը խնդրեց վերադարձնել, քանի որ իր մոտ այդ հրատարակությունից օրինակ չէր մնացել: Հենց այդպես էլ ասաց:

Երբ 1972 թվականին «Հուշարձանը» նորից հիսուն հազար տպագրվելով լույս տեսավ, կրկին մեկ օրինակ նվիրեց:

— Առաջին հրատարակության քո օրինակը պահում եմ, — ասաց նա, — պետք է:

Նոր հրատարակության ընծայական խոսքերը նույնպես ջերմ են: Նա գրել է.

«Այս գիրքը աշխարհ չէր գա, եթե այս Խիկարը չլիներ, բայց Խիկար իմաստուն կծնվեր, եթե «Հայոց Դանթեականը» աշխարհ չաներ և լույս աշխարհ բերեր... Շիրազ»:

Ես ասացի՝ Շիրազ, դու տակավին «Հայոց Դանթեականի» վրա շարունակում ես աշխատել, ինչո՞ւ ես քո բեռը իմ ուսերին դնում: Նա մի պահ մտածեց և ձայնը բարձրացնելով ասաց.

— Երեսուն տարի է, ինչ գրել եմ «Հայոց Դանթեականը», երեսուն ասարի է տֆնում եմ, մոռնում, նրա վրա աշխատում, հղկում: Այսպես լավ եմ զգում, իմացիր:

10 սեպտեմբերի, 1973:

Աշխատում եմ Հայկական ԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնում: Շիրազը եկել է մեզ մոտ: Շատ հետաքրքիր գրույց ունեցանք, տրամադրությունը բարձր է: Վերջում նա ասաց.

— Արի գնանք լուսանկարվելու:

Սիրով համաձայնվեցի: Տերյան և Սայաթ-Նովա փողոցների հատման անկյունում վարպետ Վարդգեսը, որ Շիրազի երկրպագուներից է, նկարեց մեզ:

Մի ֆանի օր անց նկարը ստացանք: Շիրազը հավանեց:

— Վարդգես, — ասաց նա, — այս մեկն էլ կախիր ցուցափեղկում՝ տարիներ առաջ նկարածդ երիտասարդ Շիրազի պատկերի կողքին, թող տեսնեն առյուծը ո՞նց է ծերացել:

— Մերության մասին խոսելը շուտ է, — ասաց Վարդգեսը: — Քեզ ծերություն չկա: Սերը թույլ չի տա մարդուն ծերանալ, իսկ դու սիրո երգիչ ես, Մասիսների երգիչ: Այնֆան շատ սերեր ունես:

Նկարներից մեկի վրա Շիրազը մակագրեց և նվիրեց ինձ. «Իմ պաշտելի մայրիկիս մասին գիրքս կմնառ մութի մեջ դեռևս շղթայված, եթե սիրելի հիկարը շլիներ, — նա, որ մեծ ծովի նավ է, բայց ընկած է ծանծաղուտում...»

Հովհաննես Շիրազ»:

ԽԱՌԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերաական մի փոքրիկ տետր կա թղթերիս մեջ՝ Շիրազի ձեռագրով: Դրանք բանաստեղծի ձեռագիր-մասունքներն են, որոնք հրատարակել ենք մեր «Շիրազ» գրքույկում, 1986 թվականին (տես էջ 139—140):

Շիրազը նամակագրական կտպի մեջ էր սփյուռֆտալ գրողների հետ: Ահա դրանցից մի ֆանիսը:

ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉԵՐ

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՊԵՊՈ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻՅ

Մեծ բանաստեղծի մահվան օրերին Բեյրութում հրատարակվող «Արարատ» թերթը տպագրել է Պեպո Սիմոնյանին Հովհաննես Շիրազի 1963 և 1964 թվականներին ուղարկած նամակները:

Ստորև հրատարակում ենք հատվածներ այդ նամակներից.

«Սիրելի Պեպո.

Հույսի ուղկանը մտքիս ձեռքին, ոպասման ծովափին ժայռի պես նստած, բայց ոչ մի համբավի ոսկե ձկնիկ, մի լուր դեռ չունեմ, թե ինչ եղան իմ այն գրվածքները... միայն մեկի ձեռքին տեսա ամսագիրը (խոսքը «Արարատ» գրական ամսագրի մասին է—*Խ. Բ.*), մեջն ինձնից մի ֆանի կտոր... արդյո՞ք շէի՞ր կարող քո ոսկի ժամանակից մի ինչ-որ նշույլով խոսել իմ անհամբեր սպասման հետ...

Այնքան անուշիկ եղբայրական համբույրից հետո, ինչո՞ւ այսքան դառն լուրջուն: Միտք ունեմ այս տարի գալ ձեզ մոտ, իմ պաշտելի հայրությանն այցելության, ֆանի որ ոչ մի սրտաբաց ու ազնիվ եղնիկ չի իջել դեռ հայրենալեռների խոտնախոտն անտառներից դեպի սփյուռֆի հայակույ,

մթնաբավիղ հեռաստանները... ուզում եմ աշխույս տեսնել, քանաստեղծի սիրտս բերել նրան, հոսկացող, նայրենակարոտ, մասիսատենչ իմ անխառն հայությունը... Այժմ իրավ հուսով եմ, որ սփյուռֆահայության այդ կես ծովը (այս կես ծովիս կեսիկ ծովը) իր արծվի սիրտը կառնի...: Բայց այս շատ եղավ, ինչպես իմ հոգու Համլետն է ասում իր կես ընկեր Հորացիոյին... շատ եղավ, ֆանգի ես մի փետուր ալ շեմ տակավին...

Ենդրում եմ, ինձնից ինչ որ այդտեղ տպագրել եֆ, ուղարկեֆ ինձ, ձեր ազնիվ խստաման համաձայն...

Երևան, 1963

Հովհաննես Շիրազ:

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՊԵՊՈՒ, ԲԱՆԱՍՏԵՂԾ

Սաացա նամակիս պատասխան նամակդ, այնքան անկեղծ ու բուռն սրտով գրված, որ կարծես ձկնորս Պեպոն է խոսում լուսնի տակ. մայր Արաֆսի մսայլ ափին... Մասիսի առջև. որին ուզում է Հայոց Հույսի ուղկանով հանել, սրպես ոսկե ձկնիկ-կերձուկը մեր բախտի: Անչափ շնորհակալություն լռությանդ սառույցը կտարելու և ինձ հիշելու համար, բայց խոստացած թերթերը և «Արարատը», ուր իմ գրվածքներն են իբր տպված՝ տակավին չեմ ստացած: Եվ էլի կույր ու կաղ հույսով կսպասեմ: Բայց այս օրտեղի՞ց եֆ գտել օրացույցիդ մեջ տպված իմ դիմանկարը, թեև ջահել, բայց շար ու հերտտ...

Այժմ խմբագրվում է «Քնար Հայաստանի» գրֆիս երկրորդ հատորը, որ երբ լույս աշխարհ գա օր մը... ֆեզի ալ կուղարկեմ հատորես, որ կարդաս իմ սրտի մյուս կեսն ալ... նիշտ է, դառն է լռությունը, երբ մի ազգը երկու մասի է բաժանված և կարոտը մեջներին տնդրադառնում է, բայց ահա հույս կա, որ ազգահավտֆր հորդանա՝ ծովանա Մասիսի շուրջը: Եվ ուր է սակայն, սպասումս մուրրվում ու խելագարվում է իմաստության մթնաբավիղներում:

Ենդրում եմ կատարես խոստումդ, և համբույրներս հպես բոլոր քեզ ամեն օր իրիկուն (գիշեր չեմ ասում) հունդիպող հայերին, եղբայրներիս, հայունիներին՝ բույրերիս, ողջ ցրումովս հայությանը...

Հովհաննես Շիրազ»:

Երևան, 1964

ԲԵՅՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԻՐԱՏՈՄՍ

Բեյրութում ապագրված մի հրավիրատոմս նվիրեցին ինձ:

Բեյրութի համազգային մշակութային միության Հովհաննես Շիրազին նվիրած երեկոյի հրավիրատոմսն է: Առաջին էջում գույգ Մասիսներն են, Շիրազի խորհրդավոր նկարը՝ գախար երկու ափերի մեջ առած, մարգարեի կերպարանով: Այն բացվում է մեծ ֆնարերգուի ֆառատողով.

*Որտեղ հայ կա՝ բերեք սեղմեմ իմ սրտին,
Թե Սփյուտը է՝ վիշտը մեղմեմ իմ սրտին,
Թե Սասիսն է՝ ինձ Մասիսին կթաղեք,
Որ ամխալան սարս սեղմեմ իմ սրտին....*

Նորից շիրազյան խոսքեր. «Համբույրներ բոլոր սփյուտֆահայությանը, ողջ ու ողջ վեր փյունիկված մեր անմահ ազգին..», «Շնորհակալ եմ սփյուտֆահայության երիտասարդության կանչի համար»:

Երկրորդ էջում ծավալուն մեջբերումներ են սփյուտֆահայերին Շիրազի ուղղած նամակներից. «Ես լսել եմ, որ Բեյրութում հայությունը հայություն է,— գրել է Շիրազը,— գուռ ոսկի հայոց լեզվի մշտահոս կյանք է... Այս բոլորը հրաշալի է, կոզևորվի իմ սիրտը... Ես ուրախ եմ, որ հայ եմ ծընվել, բայց անիծում եմ իմ ծննդյան թվականը, ոչ թե, որ աշխարհ եկա, այլ նրա համար, որ այդ թվին եղեոն է եղել և՛ հայոց ողջ ողնաշարը փշրել է յաթաղանով: Անիծում եմ 1915 թվականը, երբ մեղուցին անմահ Վարուժանը, անմահ



Մտորում

Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց:



Մայր իմ բարի, դու սուրբ, դու հեզ...



Վարպետի համար Շիրազը կարդում է «Բիրլիսկանը»



Հովհաննես Շիրակ, Ռիկար Բարսեղյան (1973)

Իմ ողջ կյանքում երազել եմ
Ա՛խ, մի փայեր ունենալի,
Հազար լուսի հետ վազել եմ
Ա՛խ, մի փայեր ունենալի:

«ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀՐԱՏԱՐԱԿԱԳՈՒԹՅԱՆ
ԳԻՐԵԿՏՈՐ

ՀՖ. 56-58-54

ՍԻՆՏԵԶ ԵՐԿՐԱՆ

Ահա դուք տեսե՛ք որ
դու կա՛նք ինչպես ես
և... ինչպես, արդեն
դու կա՛նք...

նույն ժամանակ
ե՛ս քեզ դուրս դնում
բա՛րեբարձր՝ կռիվի,
ու՛ր արդարացի է
գրքի կարգավորման ժամանակ
դու ես կռիվում, որ
արդեն ոչ ոք չես
դու ինքու՛ր...

Ի. Չ. Երևան



Երբ գլկում եմ բալիկներին,
Չեզ եմ գրկում, հայ բալիկներ,
Երբ երգում եմ ձագուկներին,
Չեզ եմ երգում, հայ գալիքներ:



Շիրազի հայրը



Անմեղություն

Սև աչքերից ես գերի,
Սեպ Մամբախ պես գերի,
Ես կազառուի ուշ թե շուտ,
Ես համիտյան քեզ գերի:



Մառի՛ս, Մառի՛ս, ա՛խ, Մառի՛ս:



Անմեղություն է դեռ իմ բալկը:



Ես, որ ջահել, բայց ճգնությամբ ակտիվ
Սրբությունն եմ ճգնալորի...



Ակնթարթ

Անգլոսի է նա՛ որ այս աշխարհում,
Այս՛դ, ուրիշի գլխով է խոբում...



Հանդիպում

Մեզ էն գլխից են զարկել, քայց նորեն
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն...



Շիրազը մի խումբ հայ գրողների հետ



Հանդիպում



Շիրազն իր քույրերի հետ



Ո՛վ եմ ես...



Դպրոցականների մոտ

Այն տունը տուն չի, որ աղմուկ չունի,
Որ դեռ չի հնչել ծիծաղը մանկան...



Շիրազն ինքն իր հետ




Մենդավայրում

Բոլոր կանայք՝ մի կին,
Բոլոր կանայք՝ մի կին,
Բոլորին է սակայն
Տենչում իմ խենթ հոգին:



Մանուշակներ ուտելիս ու շուշաններ ձեռքերիս...



Ինձ ասում են՝ Շիրազ, հետո կզգանք քեզ...



Մենք խաղաղ էինք մեր լեռների պես...




Ջե'րմ, սրտառուչ հանդիպում...



Հայրենի մասունքների մոտ



Վարպետի հուշարձանի մոտ (Լեհիճակահ)



Հավերժի ճամփորդը

Գարնան ջրերն ո՛ր,
Ջահելության օրերն ո՛ր...



Պատգամ

Ի՞նչ էլ քերեք Մասիսի ձյունից,
իմ հուշերի արցունքով,
Երբ կազառեք, լուրճ ի՞նչ քերեք
ոչ թմրուկով, ոչ շուքով.
Քանզի սիրտս շատ է մաշվել
Արարատի կարուտով,
Որ չմեռնեմ խնդությունից
լուրճ ի՞նչ քերեք շշուկով:



Շիրազը խորհում է

Ես աշխարհ կիջնեմ, և կլանքն անրիծ՝
Թող որ սանդուղքի մի քարը դառնա,

Թող ինձ կոխտեն, մոռանամ թող ինձ,
Միայն թե մարդը միշտ վեր բարձրանա:



Ես մի զախակն եմ հայ ժողովրդի
Ու ամենից շատ նրան եմ սիրում...



Հովհաննես Շիրազ

Գործ՝ Սիփան Շիրազի



Հովհաննես Շիրազ

Գործ՝ Արա Շիրազի

Սիամանթոն, անմահ Գրիգոր Զոհրապր: Անմահ Կոմիտասը խելագարվեց և սակայն մահերից էլ վեր հառնեց մեր փշրված ազգը: Ողջ կտրված անտառից մնաց մի ծառ սակայն:

Ահա ծաղկում է այդ իմ պաշտելին՝ ազգերի նղակտոր վայրը, հայ ցեղը, մի բուռ հողի, ապառաժի վրա ծաղկելով, երևանվելով: Ահա, թող ուրեմն թշնամին իր գլուխը կախի, քանզի հայր պիտի ծաղկի ու շթողնի իր Մասիսները:

Ծնվեցի Լդեոնի տարին, որ մեռնի թշնամին»:

Երբորդ էջում Շիրազի մատրումներն են՝ տողեր բեյրութահայերին գրած նամակից. «Այս աշնան (1966 թ.—*հ. Բ.*) գալու եմ Սայաթ-Նովայի ծննդյան փառատոնը ձեզ հետ, ցրված հայության հետ թնդացնելու: Գալու եմ համբուրելու բոլոր այն հայերին հոգիները, իրենց շուրթերին վրա, որոնք երբեք չեն դավանանել մայրենի լեզվի հավիտենական սրբությունը: Պիտի գամ և պիտի ձեզ համբույրենք բերեմ ծաղկող Երևանի ամեն մի ծաղկած շրթունքից, որ բուրում է ազգահավաքի և հայապահպանման խորհրդարսւյրով:

Աղոթում եմ աշխարհի խաղաղության, մշտատևության համար և ամենից առաջ հայոց լեզվի չձուլվելուն, ցրված բոլոր ու բոլոր հայերին մեկտեղելուն համար...»

Հաջորդ էջում Շիրազի մարգարտաշար գրությունների ֆախսիմիլեն է.

— Աշխարհացրիվ հայություն,

հալ օփյում,

բյուրահայեր:

Դաժան ու նենգաշողոմ ներմակ ջարդի ընդդեմ հայոց սրբազան կոնվր շարունակեցե՛ք հաղթանակը մերն է...

Վարդան Ավարայրի,

Հովհաննես Շիրազ

Վարդանի

1966 թ.

Երևան»:

Իսկ այս մյուսն էլ «Հայոց նակատագիրը» խորագրով բանաստեղծությունն է:

*Մեզ էն գլխից են զարկել, բայց նորեն
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:*

Հազար դարեր են զարկել, բայց նորեն
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:
Ո՛վ էլ որ զարկի, ինչքա՛ն էլ զարկեն՝
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:

Երևան,
Մաղկուն հանգրվան հայոց
1966 թ., գարուն»:

ԷՔՍՊՐՈՄՏ ՏԵՔՍՏԻԼԻՆ*

Գինեմուլը կարող է և կյանք-գինին մոռանալ,
Բայց չի կարող Շիրազը իր հայրենին մոռանալ,
Քեզ հետ ջուլհակ Հովհաննեսը հազար թելերով է կապված,
Ո՛վ կարող է իր ազգին, իր մայրենին մոռանալ:

«ԿԱՐՄԵՍ ՇԱՏ Է ՔԻՉ ԱՇԽԱՐՀԻ ՀՈՂԸ...»**

Կարծես շատ է քիչ աշխարհի հողը,
Որ մարդիկ մեռնում և հող են դառնում,
Բայց տեսնես գիտե՞՞ բարի մեռնողը,
Թե ո՞ւմ հողին է իր հողը խառնում:
Բարին ու շարը կովելով մեռնում,
Սև հող են դառնում, խառնվում իրար,
Հողը չի հողի կոկորդից բռնում,
Իրար գրկում են հավիտյան խոնարհ,
Սուզված նավի պես հանգիստ են առնում,
Մայր հողն աստված է մեր հար հաշտության,
Ի՞նչ լավ է մահը, երբ միշտ հող դառնում,
Հավերժ ենք հաշտվում, ով դու շար աշխարհ...

* Տե՛ս Լենինականի «Բանվոր» թերթի 1984 թ. մարտի 16-ի համարը:

** Տե՛ս Կիրովականի «Կայծ» թերթի 1984 թ. մարտի 17-ի համարը:
Տեքստը տպագրության է ներկայացրել Վ. Ավետիսյանը:

1984

Նդեգնաձորի № 2 միջնակարգ դպրոցի ուսմասվար, ՀեՍՀ վաստակավոր ուսուցիչ Աշոտ Գաբրիելյանը Երևանի պետական համալսարանում սովորել է Հովհ. Շիրազի հետ: 1938 թ. Շիրազն իր «Արևի երկիր» գրքի մեկ օրինակի վրա գրել է.

Սիրելի Աշոտ Գաբրիելյանին

Թեև փողը դու ես սվել,

Եվ շտապել կարդալ սիրով,

Բայց թող նվերն ինձնից լինի՝

Որպես մի թաս անխառն գինի՝

Կարդա, խմիր, անուշ լինի...

«ՀԱՄԱՐՈՒՅՐՍ ԱՐԵՎԻՆ՝ ԺՈՂՈՎՐԴԻՆ...»**

1984

Մկրտիչ Գրիգորյանը «Դիլիջան» թերթում գրել է. քանհինգ տարի առաջ Նանսեն Միֆայելյանի միջոցով Հովհաննես Շիրազին նվիրված բանաստեղծությունն ուղարկեցի նրան: Հավանել էր և պատասխանել. «Սուսցա ձեր բանաստեղծությունը, խորին ու խորին շնորհակալություն: Ահա մի բանաստեղծություն, որ նման է մի մեծ ծաղկեփնջի, սակայն մի ծաղկեփունջ, որից միայն մի ծաղիկ եմ... արժանի հագիվ մի վարդի: Բայց ամեն անգամ այսպիսի ծաղկեփնջեր ստանալիս (մանավանդ իմ գրական երեկոներում...) ապշում եմ՝ հիշելով ներկայիս պաշտոնական ֆննադատության և ժողովրդիս կարծիքների պաղ ու տաճից, և ինձ թվում է, թե մի գետ եմ, մի ափս սառույց է, մի ափս՝ հավերժընթաց արև ու գարուն...

* Տե՛ս «Վերելք» թերթի 1984 թ. մարտի 22-ի համարը:

** Տե՛ս «Դիլիջան» թերթի 1984 թ. մարտի 20-ի համարը:

Համբույրս արևին՝ ժողովրդին...:

Ողջունն հրով

Հովհաննես Շիրազ»:

* * *

Միլը նոր կյանքի

Թող ծաղկի հավետ՝

Միայն թե ծաղկի

Հայոց լեզվի հետ:

Ես կմոռանամ աստղեր ու լուսին,

Ես կմոռանամ իմ սիրը բողբոջ,

Ես կմոռանամ իմ հույսի կույսին,

Ու երկնաթափառ երազներս ողջ:

Ինձ կմոռանամ, բայց ձեզ, ձեզ՝ հրբեք,

Ով կոտորածներ, հայեր իմ ոսկի,

Ով կոտորածներ իմ անմեղ ազգի:

Ով կոտորածներ մեր ազգակիցներ,

Ով դժնի հուշեր՝ դասագիրք հղեք...

Եվ թող այս մանուկ աշխարհն էլ սոսկա,

Թե ինչ է եղեռն իմ ազգակիցներ,

Թե ինչպես կիսվեց հայ ազգն իմ ոսկյա:

ՆԱՄԱԿԱՆԻ

«ԻՄ ԳԱՆՁԵՐԸ ԱԶՔԻ ԼՈՒՑՍԻ ՊԵՍ ԿՊԱԶԵՍ...»

Շիրազի նամակները քրոջը՝ Գոհարին, մորը՝ Աստղիկին,
փեսային՝ Բագրատին

Գրողի գրական ժառանգության անբաժան մասն է կազմում նրա նամակներն: Նամակը ևս գրական-հրապարակախոսական ժանր է: Այն, ինչ որ հնարավոր չէ գեղարվեստական ժանրերի, հատկապես բանաստեղծության միջոցով արտահայտել, հեշտ է նամակի միջոցով, և ապա՝ այն զերծ է գրաֆնությունից, ուրեմն և շարադրանքի մեջ տգատ ևս, իոկ երբ այն պատմություն է դառնում, հրապարակայնությունն այլևս արգելիների չի հանդիպում: Անցյալում նամակները գրավոր գործերի նշանակություն ունեին: Նամա-

կանիի համաշխարհային դասական օրինակներ շատ կան: Հովհաննես Շիրազը ևս թողել է հարուստ նամականի: Թեանք գրվել են տարբեր ժամանակներում, զանազան հոգսերի, ապրումների, «տաք» տպավորությունների տակ: Շիրազը լինելով ֆեոնոմեն, տակավին կենդանության օրոք դարձավ լեգենդ: Բազմադարյան հայ ֆնարեգությանը անձանոթ է կյանքի, հրեղանքի, արբեցման, մայրեգության և մտսիսապաշտության նման մի օրինակ, ինչպիսին Շիրազի ոսեղծագործություններն են:

Ինչ է բանաստեղծությունը հարցին նա շատ դիպուկ և իմաստուն է պատասխանել: Բանաստեղծությունը, գրել է նա, այն է, «ինչ որ կարոտն է՝ կարոտ մորը, կարոտ հայրենիքին, նայած մարդու հասակին, կարոտ սիրո, սիրածի: Բանաստեղծությունն այն է, ինչ որ սոխակն է թռչունների մեջ: Սոխակի այն պահը, երբ հառաչում է ինչ-որ մեկի կտրուտից: Եվ ինչպե՞ս որ անթարգմանելի է սոխակի երգը (այսինքն՝ աղավնին և անգղը շեն կարող նույնությամբ կրկնել սոխակի երգի ֆաղցրությունը), այնպես էլ տեքացատրելի է բանաստեղծությունը: Իհարկե, հեշտ է ասել, որ նա պետք է ունենա արտաքին հանգեր, ներքին վանկեր, պատկերներ, համեմատություններ: Բայց դա էիչ կլինի: Էլի ծարավ կմնա լսողը, թե ինչ է բանաստեղծությունը...»: Բանաստեղծության գաղտնիքը բացահայտելու համար Շիրազը բերում է տոսնութամյտ գեղեցիկ աղջկա արձանագլխի և կենդանի գրլխի նկատմամբ տոծվող ոիրո օրինակը և տսում՝ կենդանության մեջ է, դա է արյան ուրբազան գաղտնիքը, արյուն, որ շուրթերը փոխարկել է ամենագեղ կեռտսի, արյուն, որ տշֆերի միջով հույս ու զգացմունք է ցայտեցնում: Ահա այս է բանաստեղծությունը: Հիւրավի, Շիրազի ոչ միայն բանաստեղծությունները, այլև արձակ էջերը, որոնք ցավոք էիչ են, նամականին նույնպես այդ ոգով է հագեցված: Շիրազյան նամակները աշխտահասփյուտ են՝ հասցեագրված մորը, ֆուրերին, հարագտաներին, քնկերներին, բարեկամներին, հայրենյաց և Սփյուտքի արվեստագետներին, գրողներին, գիտնականներին, հետաուակչություններին, թերթերի խմբագրություններին, քնթերցողներին: Կարելի է մի սավտու հտտոր

ստեղծել միայն ընծայական գրքերի վրա նրա թողած խորիմասա ինքնագրերից: Շիրազի նամականին իր բանաստեղծական աշխարհի ծիածանի գույներից է, որոնցում շոշափված են ոչ միայն անձնական-կենցաղային հարցեր, որոնք նույնպես արժեքավոր են, այլ ամենից առաջ գրական կյանքի կենսաթրթիո պրոբլեմները, որոնք իբրև կանոն թաթախված են բանաստեղծությամբ և տակավին անտիպ են, կամ հրատարակվածների տարբերակներ են:

«Ինչ էլ որ գրում եմ,— նկատել է նա,— բանաստեղծություն է ստացվում: Հողեղեն եմ առանց երգ, ես երգով եմ հրեղեն»: Եվ ապա՝ «գրում եմ ներշնչանքով և զգացմունք դարձած խոհականությամբ: Իսկ չէ որ պոեզիան խոհ է: Այո, ինչ էլ որ գրում եմ, թեկուզ երեխաներիս դպրոց ընդունելու մասին սովորական դիմում՝ բանաստեղծություն է դառնում: Առված խոսք է, բայց խոհերով ապացուն տողերը բանաստեղծություն չեն: Բանաստեղծությունը սրտի խոսք է, տրեփանք, արժիվային թոխչի: Պոեզիայի մասին հանճարեղ է բանաձևել հույն մեծ փիլիսոփա Պլատոնը: Նա ասել է. «Ով առանց մուսաների ներշնչած մանիայի մոտենում է պոեզիայի դոներին, համոզված, որ հմտությամբ լավ պոետ կդառնա, նա երբեք կատարյալ չի լինի, և նրա պոեզիան որպես ողջամիտ պոեզիա (իմ կողմից ավելացնեմ՝ որպես չոր ու անկյանք մտքեր գրողի—Հ. Շ.), կզանազանվի խենթություն անողների պոեզիայից»:

Ինչ խոսք, դա այն իմաստուն, աստվածային խենթությունն է, որից ծնվում է հրեղեն երգը՝ բանաստեղծությունը:

Հովհաննես Շիրազի նամականին, ամենից տոաջ, բանալի է պոետի բանաստեղծական ներաշխարհը բացահայտելու, Մարդ, ֆաղաֆացի, հայրենասեր, մայրերգակ պոետի կենսապատման էջերը լրացնելու համար: Շիրազը եղբայր չի ունեցել: 1943 թ. հունվարին փեսային՝ Բագրատին ուղարկած մի նամակում նկարագրելով իր վիճակը՝ գրել է. «...իմ տունը շպիտի թողնել իմ հույսին, ես բամբակե ռյուն եմ, մինչդեռ հարկավոր էք գրանիտյա լինել... Դու զարմանալի մարդ ես, ախր դու ուրիշ մարդ ես, ես՝ ուրիշ: Ծա գլուխս աստղերին տված՝ թափառում եմ երազների մեջ, ինձ համար

օրվա մի պատճառ չար հացը կբավե... Իսկ դու արիչ ես, ես քերես հախաճճում եմ քեզ... ես ուզում էի, որ ունենայի մի կամ մի քանի եղբայր, հատկապես ինձանից մեծ, որ տընտեսակաճի լուծը իմ ուսերից նրանք առնեին և ես լիք օրով թևավորված գրականությամբ զբաղվեի... Բախար մի աչքով է ժպտացել ինձ... Միտյն տաղանգը քիչ է... քիչ... կամ թե լինեի իմ հարսնացուն կամ ինչպես լինելու է կինս՝ մի ձեռնահատ, մի լիք էակ, կամ կարգին մի օջախի զավակ, որ ինձ օգնեի և ես՝ կրկնում եմ, հենարան կունենայի է՛լ ավելի խոր բաներ գրելու...»: Մի ուրիշ անգամ՝ «ես տարված եմ իմ մուսայով, իմ միակ աստվածությամբ, որն իր միակությամբ միայն հավասար է իմ ազգին»:

Շիրազը եղբայր չի ունեցել, բայց երկու, այո՛, ազնվագարմ փուր է ունեցել՝ Մանիկը և Գոհարը, որոնք և փուրություն են արել, և եղբայրություն, և մայրություն: Մանիկին սխտեճատիկ համակ գրելու հուրկ չի ելել, քանի որ նա ապրում է Երևանում, կողք-կողքի: Իսկ Գոհարին, որ բնակվում է Անիեականում (որոշ ժամանակ ընդհատումներով այնտեղ է ապրել նաև մայրը՝ իր կյանքի լուսասաղը՝ Աստղիկը), Շիրազը հանախ է գրել, խորհրդակցել նրա հետ, ուրախություն ու վիշա կիսել: Եղբայր ու փուրեր ազնիվ նվիրվածության օրինակ են: «Ըմբոստ ու խենթ» Շիրազը իր փուրերի նկամամբ աածող սերը հասցրել էր մայրական սիրո փողցության բարձունքին, մանկական հեզությամբ լսում էր նրանց բարի խորհուրդները: Շիրազի պոեզիայում փուրերի բարությունը կա:

Հին կոմունիստ, աշխատանքի վեաերան Գոհար Կարապետյանը (Վարդանյան) խնամքով պահպանում է իր եղբայր՝ Հովհաննես Շիրազի իրեն և մորը ուղարկած նամակները, գրությունները, բանաստեղծությունների բնագրերը, գրքերը: Գրքերի ընծայագրերում կարգում ենք. «Շատ սիրելի Գոհար փոջս՝ իմ ամենասիրելիին, ամենավշտաճին, բայց և ամենաքաջ փոջս, ինձ մոր պես պահողին: Հովհ. Շիրազ» (Հուշարձան մայրիկիս, Եր., 1968): ... «Իմ աանջված Գոհար փոջս» (Երկերի ժողովածու, գիրք առաջին, 1981) և այլն: «Իմ պաշտելի փոջո, իմ հեռավոր առաղ, իմ կարոաի կաթիլ Գոհարին»:

Նախապատերազմյան շրջանում մորը, Գոհարին, իր փե-
ռային՝ տեֆոտիլի նշտնավոր վարպետ Բագրատ Վարդանյա-
նին ուղարկած նամակներում պոետը արտահայտել է կա-
րոտ, սրտացավությամբ պատմել իր ստեղծագործական
պլանների մասին: Առհասարակ նկատվում է ֆույրերի և փե-
սայի հեղինակավոր ազդեցությունը նրա վրա: Առաջ անցնե-
լով նշենֆ, որ կյանքի վերջին տարիներին Գոհարին, որը,
ի դեպ, գուրկ չէ գրակտն հակումներից, խնդրել է արագաց-
նել «Շիրագ» կենսագրական պատում գրքի տպագրության
պատրաստումը, որ վաղուց է ոկսել, բայց չի ավարտել:

— Քույրս իմ մանկությունը և արծիվ կյանքը ամենից
լավ գիտի, նա անկեղծ է, բարի, մեծ հույսեր եմ կապում
նրա հետ,— ասել է Շիրագը: Միակ արդարության ոսկե կը-
շեռքը ժողովուրդն է: Քույրս ժողովուրդ է, ապրում է ժո-
ղովրդի մեջ, բանվորական կուկեկտիվում: Քենադատը մի
անցֆ է, ժողովուրդը վիթխարի մաղ, երկնամաղ... իմ գու-
ծերը ուզում եմ երկնամաղով խախալեն...

Շիրագը մինչև մահ կարոտ մնաց հայրենի ֆաղաֆին,
Ալագյագին, Արարատին, «Մանթաշի գով ու գմրուխտ» հավ-
ֆերին: Չգիտես ինչու նրան թվում էր Շիրակում մոռացել են
իրեն:

— Հիմա ինձ Գյումրում ոչ ոֆ չի հիշում: 1939-ին նա
գրել է.

Միայն իմ միակ աստվածն է հիշում,

Ա՛խ, միայն մայրս է անունս տալիս

Միայն մի աստղ է հեռու մշուշում

Մորս աչքի պես կարոտս լալիս...

Շիրագը Երևան փոխադրվելուց հետո Լենինականի բնա-
կարանը պետֆ է հանձներ մեկ ուրիշին: Այդ ժամանակ նա
դեռ նոր էր Շիրագ դառնում: Բայց մտադիր էր, եթե հնա-
րավոր է պահել իբրև մայրական ծուխ-ծխանի, և նաև
կոահում էր իր ապագան: Նամակներից մի ֆանիսում Գո-
հարի հետ գրուցում է այդ մասին, խորհուրդներ ստանում:
«Ինչ վերաբերում է սենյակը մեր Մոսին տալուն,— գրել է
նա,— թողնում եմ ձեզ (դա ֆրոջ պլանն էր), բայց եթե մեր
հարևան Արմենակին թողնես, միանժամանակ լավ կլինի ինձ

համար, որովհետև թե՛ ես և թե՛ Վերս ամառը կգանք և անտուն շենք մնա, իսկ ձմեռները թող սեճյակը որդեգրեն Արմենակենք...»

Նամակն ավարտել է բանաստեղծությամբ.

*Ծս որ մեռնեմ, տարեք թաղեք
իմ Շիրակի դաշտերում,
Որ մերս գա ու վրես լա՛
որդու կարոտն աչքերում:
Մորս արցունքն, ա՛խ, թե ընկնի
շիրմիս քարին մարմարե,
Շիրմիս քարը լուռ կծաղկի,
ու ծաղկի պես կբուրե:
Ծս որ մեռնեմ տարեք թաղեք
իմ Շիրակի դաշտերում,
Որ մերս գա ու վրես լա,
Միակ լացողս աշխարհում:*

Սա 1937-ի ծանր, անօրինականությունների, մեծն Եղիշե Չարենցի և հազարավոր անշիբիմ սպանությունների մղձավանջային օրերի արձագանքն է: Քսաներկուամյա պատանու, որությունից լուսավոր ճանապարհ դուրս եկած բանաստեղծի համար շաա շոա է նման ողբը, բայց ազգային Հելիկոնում գանվող բանաստեղծը նրանով է մեծ, որ դառնում է իր դարաշրջանի շունչը, անանձնական ցավերը ձուլում անձնականին և դառնում ապագայի պատգամախոս:

1941 թ. հոկտեմբերին Գոհարին գրած նամակում Շիրազը խորհուրդ է տալիս բնակարանը հանձնել իրենց հարեան Արմենակին: Նա «մի տուն լիք մանուկների տեր է և աղջիկն էլ կարծեմ հասնելու վրա է: Բայց, իմ սիրելի Գոհարս, ես այդ Արմենակի հետ պայմանավորվեցի, որ նա սենյակին մաիկ տա, պահպանի մինչև որ մայրս գա Լենինական սենյակի պառաված իրերը հավաքի, իսկ որ ամենագլխավորն է, հավաքի և պահպանի իմ գրքերս և մանուկ, ավելի ունիշա կլինի եթե ասեմ, պատանեկան տարիներինս գրվածքները, ոտանավորները, սևագրությունները հավաքի ու տա ֆրոջս, — ֆեզ, իսկ դու կարծեմ այդ իմ «գանձերը» աչքի լույսի պես

կպահես, չէ որ իմ մանկությունս աչքիդ մի նանանչի պես չպահեցիր գոնե պատանի օրերիս գրավար հուշերը պահիր... և չեմ կասկածում, որ կպահես՝ թե գրքերիս բեկորները (այսինքն՝ գրադարանիս), թե՛ գրվածքներս...»: Նամակներում Շիրազը պատմում է իր կնոջ՝ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի, ավագ որդու՝ Արայիկի (Արմազդ) մասին: Նա սիրում էր Սիլվային, և մեր կարծիքով նրա սիրո ֆնտրականի լարի աղբյուրը Սիլվան է: Նրա բանաստեղծությունների հերոսները թեև ունեն տարբեր անուններ, բայց դրանք ավելի շատ պոետական հնարաններ են...

Ով գիտի ինչպիսի ծանր տառապանք է ապրել, երբ 1942-ին գրել է. «Իմ և Սիլվայի գործը մթին գիշերի է նման, սպասում եմ արշալույսի»:

Երանի այդ արշալույսը տյնպես լինե՞ր, որ գար ու չգրնար: Մեր գործը չէ դատավորի դերում լինել, ֆանի որ մինչև այժմ աշխարհում և ոչ մեկը ամուսնական կյանքի տարածայնությունների գաղտնիքները չի հասկացել:

«Նա խոսեցի և շուտով Սիլվան և նրա... տասնիկը պիտի գան մեր սենյակում մնան,— գրել է Շիրազը,— մայրս ևս համաձայնեց... Խնդրում եմ մի օր գնաս և մաքրես, որ հարսդ չնեղանա»:

Հովհ. Շիրազի անողջությունը վաս էր: Որք մանկությունը իր գործը տեսել էր: Մեծ Հայրենականի տարիներին Շիրազին բանակ շտաբում: Աշխատում էր «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունում: Պատերազմի առաջին իսկ օրերին, այսուհանդերձ, ներկայացավ Երևանի Կիրովյան շրջանի գեներալիտատ և խնդրեց ռազմամտկառ ուղարկել: Մերժեցին: Նա գրվեց աշխատհագուտյին: Մեծ ֆնաբեզակը միանգամից դարձավ սովետական գեներալների ռազմի սրբաբանների երգիչ, հնչեցրեց հայրենասիրական ֆնարը: «Գրում եմ նոր երգեր մեր երկնային հերոսների մասին,— գրել է Շիրազը,— կեսը գրված է, անունը դնելու եմ «Բանաստեղծի ձայնը» (1941 թ.): Նա գրեց «Նզովի», «Բանաստեղծի ձայնը», «Ա՛խ, թե ընկնեմ օտար մի սրից», «Իմ սուրբ հայրենիք...», «Մայրն ընդդեմ մտհի» «Դյուցազն Բադրամյանին», «Գնդապետ Զաֆիյանի հիշատակին» և այլ հայրենաշունչ

բանաստեղծություններ, ինչպես և «Մենք խաղաղ էինք մեր լեռների պես» հուշակավոր էֆալոմադր: Շիրազի 1941—1945 թվականների նամակներից երևում է, թե նա ինչպիսի լարվածությամբ և տնտեսական ծանր պայմաններում է ստեղծագործել. ընտանիքի, մոր, փույրերի և նրանց որդիների կարիքները հոգացել: Առհասարակ, հիշտ կլինի ասել, որ Շիրազն իր ողջ կյանքում իրեն վայել չապրեց, նյութական հոգսերի ծանր բեռից չազատվեց. պատերազմի տարիներին առավել ևս: Քչով բավարարվող էր:1941-ի հունիսին Քազրաթին և Գոհարին գրած նամակում ասում է, որ մայրը, փույր Մանիկը և ինքը մտադիր են կենինական գնալ: «Մանիկը միտք ունի գյուղ գնալ,— գրել է նա: Թե լավ եղավ ևս էլ կերթամ հետք, թե սիրտս լավի դարձավ թրթռակը...»:

Նամակը, ինչպես միշտ, ավարտվում է բանաստեղծությամբ:

*էլ ինչ գրեմ—ինչ երկարեմ,
 Բավական է որ սրտիս մեջ
 Ձեզ խոր սիրով գաղտնի սիրեմ
 Անգին սիրով, սիրով անվերջ
 Դուք լավ մնաք—փառք է ինձի,
 էլ ինչ ասեմ, ճոխ մնացեք,—
 Բայց երբ որ գամ՝ սեղանն հացի
 Ձեր սրտի պես դեմս բացեք:
 էլ ինչ գրեմ—սիրելիներ,
 Մի ղոչ տղա ունեմ հիմա,
 Աչքերք հուր
 Ինքը մի թուր՝
 Թշնամու դեմ՝ կռիվ ու մահ,
 Սակայն մինչև նա մեծանա,
 Կրնկնի—կանցնի շուն թշնամին
 Ու մանկիկս պիտի խնդա
 Խաղաղությամբ մեր խնդագին...*

1942-ի ամռանը Շիրազը Աբաշիկի լուսանկարը ուղարկել է Գոհարին հետևյալ բանաստեղծությամբ.

*Իմ բալիկ, իմ հոգիս,
 (աստված պահի իմ որդուն)*

*Դու իմ բախտս, դու կյանքիս
Վերադարձ մանկություն,
Փուշ է վաստակը երգիս,—
Ով կտա վարդն իմ որդուն:*

Պատերազմի ծանր պայմանները, բանաստեղծական հզոր պոռթկումները Շիրազի առողջությունը ավելի փայփայեցին: Ապրուստը ծանր էր: Մորը, երեխային ոտիպված ուղարկում է Լենինտկան՝ ֆրոշ մոտ: 1943-ին մանկության ընկերոջը՝ Արամ Գրիգորյանին ուղարկած նամակում գրել է. «Շատ եմ հոգնած ու հյուծված, իսկ գրիչս խելագար կնոջ խոնաված մազերի է նման և սիրտս թույլ է զարկում, և մայրս անիծում է իր բախտը՝ ինչպես եմ տանջվում նրա վշտի համար՝ պարզապես չեմ կարող մի կաթիլ մայր պահել, այո՛, այն լուսամարմանը աղբյուրից մի շիթ է մնացել կարծես, այն էլ արցունքն է նրա, հաստատ կվկայեմ, որ իմ գրչակիցներից միայն ես եմ վատ ապրում... Մայրս շատ է կուշ եկել ու շատ է ուռենու պես դեպի աշնան արցունք—ջրերը թեփվել, այս է, որ մղկտում է սրտիս մեջ...»: Նամակն ավարտվում է մայրերգությամբ.

*Մայր իմ, կուզեի ես քո ձեռի տակ
Մանուկ օրերս անվերջ մնային,
Մայր իմ, կուզեի քո ոտքերի տակ
Գային գարունները ու չգնային,—
Բայց մայր իմ, տենչս մնաց կրծքիս տակ
Որ կրկին գարթնի՝ ինձ խոցի կրկին:*

Սա 1943 թվականն է: Եվ մի՞թե այս գաղափարից չի ծրնվել անկրկնելի «Հուշարձան մայրիկիս» բանաստեղծություններով հյուսված պոեմը: Չէ ի՞նչ պոեմ, մայրերգության հիմնը, «Երգ-երգոցը»: Ահա թե ինչ են պատմում նամակները: 1943 թ. Շիրազը Անդրերկաթուղու Երևանի բաժանմունքի պետին գրել է. «Քույրս ինձ տնամերձից մի ֆանի փուր կարտոֆիլ է ուզում ուղարկել Երևան, ինչպես հայտնի է բոլոր չեն վերցնում: Հիմա այն գրովս խնդրում եմ, որ կտրգա-

դրե՛ք բազած վերցնեն և կարտոֆիլը մորս հասցնեն: Հույսով եմ, որ ինձ կհիշե՛ք և չե՛ք մերժի իմ և քոջս խնդրանքը»:

Ինչպես պատերազմի ահեղ տարիներին, այնպես էլ հետագայում Շիրազը հոգատարությամբ է շրջապատել իր քույրերին, նրանց զավակներին: Դա երևում է նաև նրա նամակներից. օգնել է լավ սովորեն, ազնիվ ֆաղափացի դառնան, բարձր պահեն գերդաստանի պատիվը, հաստատուն տեղ գրավեն կյանքում: Հատկապես նրան զբաղեցրել է Գոհարի որդու՝ Վիլիկի նակատագիրը, որն ապրել և սովորել է Շիրազի հարկի տակ: Վիլիկի ողբերգական մահը շատ խորն ապրեց Շիրազը: Նամակներում նա ողբում է վաղամեռիկ պատանու կորուստը, ջանում սփոփել ծնողների վիշտը: 1951-ին Գոհարին ուղարկած նամակում ասում է. Վիլիկի մահից հետո «մեռած եմ, բայց թաղված չեմ... սև նակատագիրը սրտիցս երկու սիրտ պոկեց... Թող, չեմ ուզում խոսել... Դու որ նրա մայրն էիր՝ դու էլ ինձ չես հասկանա: Եվ սրտիս քննչությունից է, որ գրական բախտս էլ այսպես կոխկրրավում է: Այդ մահով մեր տունը սև է հագել, մահացել է: Չէ՞ որ ծաղիկ էր դեռ և այն էլ ինչ ծաղիկ: Վայ՛ գլխիս իմ անուշ քույրիկ ջան... Գլուխս փարը, դու լավ եղիր, իմ սրտի հատիկս, իմ դժբախտ սրտի պատկեր: Լավ նայիր մնացած երեխաներին, և մի կուտրած սիրտդ նորից կուտրիր... Միթե, իրավ, ես այսֆան սիրում էի իմ Վիլիկին:

*Քրոջս հողից իմ հողում
Քեզ տնկեցի ու ցողում
Մնում էի քո պտղին,—
Բայց պտղեցիր սև հողում:*

Վիլիկի հիշատակին, բացի նամակներում լցված ողբից, Շիրազը մի ֆանի բանաստեղծություններ էլ է նվիրել: Ահա նրանցից մեկը.

*Մնվել էի մեկուճար,
Քույրս ախպեր տվեց ինձ,
Այն էլ ավաղ բախտը շար
Զարկեց խլեց իմ գրկից:
Հիմի նստել ծով կուլամ,*

Գերեզմանին նորածիլ,
 Քույր իմ էլ քեզ ինչպես տամ,
 Քո դրախտից գեթ մի խիլ:
 Քե քեզ երգով սփռփեմ,
 Ով ինձ՝ ինչով սփռփի,
 Վիշտս ծովով կշափեմ
 Դու էլ ծով ես, մի խաբի:
 Բղկավում ես ծով ցավից,
 Տավի ծով ես, լուս բերան,
 Քույրս ախպեր ավեց ինձ՝
 Ինձ էլ նրա հետ կեքան...

Հիսունական թվականներին Շիրազը սովորում է Մոսկվայում, Մ. Գաբիու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում, կատարելագործում է իր պոետական արվեստը, հաբստացնում հումանիտար գիտելիքները: Շատ նամակներ, որ գրվել են Մոսկվայից և ուղարկվել Լենինական, բացաճայում են պոետի կենսապատման անհայտ էջերը, վկայում նրա ապրելակերպի, ընկերական շրջապատի մասին, բացում մոսկովյան ստեղծագործությունների պատմությունը:

«Ես մի մեզու եմ այժմ,— 1954-ին գրել է ֆրոշը,— որ ծաղիկներով լիք մի ծով դաշտ և չգիտե որ մեկից մեզու ֆաղի որը թողնի և աշին է հոգնում և միաքն է դադարում և այսպես... Բայց էլի լավ է ինձ նմանի համար՝ ինչ էլ որ ֆաղեմ՝ էլի լավ է, ի տո խլեք»: Մի այլ նախապատմում՝ «սիրում եմ լսել գրական դասերը, ֆաղաֆական դասախոսությունները գրելը»: «Դասերս շատ են ու շատ եմ հոգնում,— գրել է 1955-ին ուղարկած մի նամակում,— բայց պատվի հարց է, տակից դուրս եմ գալու»: «Հմայված սպասում էի Տելոյի ապագային,— գրել է 1955-ի ձմռանը,— բայց էլ ինչ, երբ չի սովորում այլևս: Տաղանդը ձուկ է, կրթությունը՝ ջուր, իսկ Տելոն ուզում է առանց ջրի ապրել: Զայրացած եմ, իհարկե, բայց հայրը, մայրը, որ լոռում են, ես ինչ ֆաղի տամ տանջված իմ գլուխս: Համ էլ չէ որ շատ վախենում եմ... հիշելով Վիլիկիս: Ինչի համար ես իմ հին վերաբերուն դրկել... ես թողել եմ որ Տելոն կամ մեկն ու մեկդ հագնեմ... ինձա-

նից մի քանի անգամ, ես հիվանդ մարդ եմ... մեկը պետք է իմ վշտերը ցրի, ինձ տիրություն անի»: Մեկ աստի անց, 1956-ի գարնանը Տելոյին գրած նամակում խիստ խրատական խոսքեր է ասում, ոգեշնչում նրան: «Հույս կա, որ կենդիվ բախտի սև ժայռը և ներս կմտնես կյանք, այսինքն կտմես, կոսվորես, նորից վրձինդ վար շես դնի, շոր շես թողնի, կյանքում կհաղթի նա՝ ով վատագույն շոր է պահում, վրձինը՝ թաց, ամսք կլինի մեր ցեղի համար, եթե մեծ նկարիչ շրդաունաս, եթե մեր հույսերի ցարենի ամեն մի հասակից մի հասկ աշխարհ շքերես»:

Շիրագի մասնագության կենտրոնում է մայրը, Բույրերից պահանջում է ուշադիր լինեն նրա նկատմամբ: Կարգում ենք շիրագյան նամակները և ակամայից խորհում, թե ինչ-լան անտեղյակ ենք մեծ ֆազաֆացի պոետի մարդկային բարեմասնություններին:

Օ՛, խելահեղ իմ հոգի, — կարդում ենք նամակներում:

1964-ի նոյեմբերի 12-ի թվակիր նամակում Շիրագը գրել է. «Իմ սիրելի Գոհար, ստացել եմ նամակդ, բայց ինչ պատասխանեմ, սիրտս բանամ՝ տշֆերիդ առջև անդունդներ կբացվեն և գլուխդ կպտտվի, եթե ցած նայես... Բայց դրանք բոլորը վշտերով են լցված, դու, ոիրելի Բույրս, բանաստեղծի սիրտը շես հասկանա, և ոչ միայն դու, մի նեղացիր, — իմ ցավերն ուրիշ են սկսած անանձնականից հասած մեծ ազգայինս ու վերջացրած համամարդկայինի անդնդամթին մրտածմունքներով և մանավանդ ցավերով... Բայց չգիտեմ, թե որն է ավելի ուժգին գրոհ տալիս բազմավիրավ սրտիս վրա՝ անձնական թե անանձնական մշտամրմուռ տվայտանքներս, — ես երազում էի մարդը մարդուն օգնության հասներ այնպես՝ ինչպես շտապ օգնության են հասնում... կամ ինչպես հրդեհաշեջի կայծակնանիչ ավառն է սպանում իմաստուն խելացնորությամբ...»

«Իմ մեջ է հորս մեծ և համամարդկային խիղճը», — կարդում ենք Շիրագի նամակներում:

Հիրավի, Հովհաննէս Շիրազի նամականիւն մեծ պոետի փառքին վայել գրական մեծարժեք ժառանգութիւն է:

1.

Գ Ո Ղ Ա Ր

Ինչ վերաբերում է սենյակը ձեր Սոսին տալուն—թողնում եմ ձեզ, բայց եթէ Արմենակին թողնես, մի անժամանակով—լավ կլինի ինձ համար, որովհետեւ թե ես և թե մերս ամառը կգանք և տնտուն չենք մնա, իսկ ձմեռները թող սենյակը որդեգրեն Արմենակենք... բայց ես կարծում եմ, որ Սոսը հիմա պիտի որ ունենա փառավոր բնակարան, չէ որ մեծ պատանի է՝ լռել եմ... Մի խոսքով մտածիր լուրջ:

Այս երգն էլ կարդա, իմ սրտիս միակ իղձն է... Գոհար ջան:

* * *

*Ես որ մեռնիմ, տարեք-թաղեք
իմ Շիրակի դաշտերում,
Որ մերս գա ու վրես լա՝
որդու կարոտն աչքերում:
Մորս արցունքն, ախ, թե բնկնի
շիրմիս քարին մարմարե,
Շիրմիս քարը լուռ կծաղկի,
ու ծաղկի պես կբուրե:
Ես որ մեռնիմ, տարեք թաղեք
իմ Շիրակի դաշտերում,
Որ մերս գա ու վրես լա,
միակ լացողս աշխարհում:*

2. Շիրազ

ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Զարմանալի էր լոռությունդ. երկար ժամանակ չէիր գրել, ինչու չես պատասխանում, մանավանդ բան էի խնդրել՝ սենյակի գործը... ահա և նորից եմ գրում.— եթե սենյակը ուզում են ումանք խլել և հնար չկա մեր ձեռքը պահել, ուրեմն զնա և միջի իրերը և հասկապես իմ գրվածքներին արխիվը վերցրու և սենյակը տուր:

Բայց լավ կլինի՝ եթե գրվածքներս տանես ձեր տուն, իսկ իրերը տուր հարեան Վարդուշին սենյակի հետ միասին, նա թող սենյակը օգտագործե, իրերը նույն ռենյակում պահե, և այդպիսով սենյակը կմնա... Իսկ եթե նա չի ուզում այդ պայմանով... ինչ արած... իրերը տար ձեր տուն... բայց Արմենակը ինձ ասաց, որ կուզե. ուրեմն ամոթ է, շտապիր: Կամ թե չէ սենյակը Սոսիկին տուր, կամ Գևորգ Շախաթին:

Բարև բոլորիդ:

Քո՝ Շիրազ

Իմ սիրելի, իմ շնաշխարհիկ Գոհար ջան և սիրելի Բազրասու:

Զգարմանա՛ք, որ գրում եմ, բայց չե՛ք զարմանա, պարտք չէ, որ կատարում եմ, այլ հենց սիրտս ուզեց: Մի թախիծ էր իջել վրաս, բայց նայելով շուրջս հիշեցի ձեզ և ահա կողմի լինել ձեզ մոտ: Իմ դասերի մասին մի՛ էլ հարցնի՛ք, շատ ու շատ եմ ծուլացել: Միայն սիրում եմ լսել գրական դասերը, ֆաղափակոն դասախոսություններ գրելը: Ուզում եմ ասել, որ մի նախանձելի ուսանող չեմ, այլ և ծաղրելի, բայց իմ գործում ինձ վագրի ձագ եմ զգում: Անշուշտ դու՛ք լավ ե՛ք և ահա այդ ոսկի ցանկությունը:

Գոհար ջան, Վիլիկին մեկ-մեկ տես...

ԳՈՂԱՐ,

Իմ սիրելի ֆուրբիկ
Մրտնից անաչ մի նամակ եմ գրել, խնդրում եմ ստանալուն
պես ոչնչացնես: Անշուշտ գլխի կբնկնես, թե ինչու: Քա Օնիկ:

1947 թ. հոկտեմբեր,
Երևան

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ ԶԱՆ

Ձի՞ կարելի իմանալ, թե ինչու նամակիս պատասխանը ուշա-
նում է, շի՞նք զբաղված ես շատ... Մայրս սեզում էր գալ,
բայց Վիլիկի նամար հեռաձգեց, ախր Վիլիկը սովորում է
և կարգին հանախում է դասերին, թեև երևում է, որ շատ
ծույլ է և միևնույն ժամանակ ընդունակ...

Անցյալ օրը մեր (Լենինականի տան) հարեան Արմենակը
եկել էր ինձ մոտ և խնդրում էր, որ մեր սենյակը տամ
իրեն, նա կարծում էր, որ այդ սենյակը ես մտադրված եմ
եղել տալ ուրիշի, բայց ես նրան ասի, որ եթե ես վերջնա-
կանապես հրաժարվեմ դրանից՝ այն, այսինքն իմ սենյակս,
անպայման կտամ քեզ, ոչ նրա համար, որ հարեան եմ եղել,
այլ գուտ նրա համար, որ նա (Արմենակը) մի տուն լիք
մանուկների տեղ է և աղջիկն էլ կարծեմ հասնելու վրա է...
Բայց, իմ սիրելի Գոհարս, ես այդ Արմենակի հետ պայմա-
նավորվեցի, որ նա սենյակին մտիկ տա, պահպանի մինչև
որ մայրս գա Լենինական և սենյակի պատասխան իրերը հա-
վաքի և պահպանի իմ գրքերս և մանուկ, ավելի նիշա կի-
նի ասեմ՝ պատանեկան տարիներս գրվածքները, ուսանա-
վորները, սեպտեմբերյանները հավաքի և տա քեզս, — քեզ,
իսկ դու կարծեմ այդ իմ «գանձերս» աչքի լույսի պես կպա-
հես, չէ որ իմ մանկությունս աչքիդ մի նանտնչի պես շափ-
նեցիր, գոնե պատանի օրերիդ գրավոր նուշերը պահիր...
և չեմ կասկածում, որ կպահես թե՛ գրքերիս քեկորները (այ-
սինքն գրադարանից) և թե՛ գրվածքներս...

Հիմա կարն կապեմ, ասելով, որ մայրս այս ամսին վայ-
թե շհարողանա գալ և Արմենակ հարևանն էլ վայթե սեն-
յակը՝ առանց մեզնից մեկի ներկայությամբ՝ բանա և անա
կիսանովեն թե՛ հեռամենի մեր գորչ իրերը և թե՛ ինչքան հին՝
այնքան և լավ իմ գրական սևագրությունները և այլն... և
որպեսզի նմանօրինակ անախորժություններ չլսեն ականջ-
ներս և սրտիս շասն և սիրտս էլ չալեկոծվի, շմթնի, դու,
սիրելի և սիրելի փուրս, պարտավոր ես գնալ և հարևանիս
հետ խոսել... այնպես որ նա պահպանի իմ և իրեն միջև կա-
յաջած պայմանագիրը... իսկ թե նա կորժի ուխտը և կըմ-
բոստանա՝ գրիւ ինձ, ես վերջին անգամ կզգուշացնեմ նրան
և որպես պատիժ ես կգամ և սենյակը կտամ ուրիշի... բայց
ես չգիտեմ ինչու շեմ ուզում վատը գուշակել, ուզում եմ հա-
վատալ ներքին ձայնիս, որ նա չի տնի հակառակը, և, սեն-
յակը մի օր իրենը կլինի... հիմի թողնում եմ ֆեզ, ուզում
ես դու ինքդ գնա և հավաքիր իրերը մեր, կիտիւ սենյակի մի
տնկյունում և սենյակը հանձնիր նրան, նա թող համաձայն
մեր պայմանի՝ և այն ժամանակ ապրի և պահպանի մեր
իրերը, իսկ ինչ կվերաբերի գրվածքներին հարցին խնդրում
եմ և բախանձում, որ վերջինս ձեր տուն ասնես՝ չկորչելու
համար...

Համբույրներով՝ քո Հովհաննես

6.

ԳՈՀԱՐ,

սիրելիս.

Սենյակի մասին շատ խոսեցի, հիմի էլ խոսեմ իմ մա-
սին.— ես էլի հիվանդ եմ ու էլի հիվանդ, թվում է, թե իմ
մեջ ավելի տաք տեղ՝ տաք բան է գաել այդ «սրտի հիվան-
դությունը» կոչված դժխեմ առատան... պատրաստվում եմ
համալսարանի ավարտական ֆենությանը դիմավարել նա-
մուսով: Բացի այդ, պատրաստում եմ իմ Հատընաիր գիրքը,
որը կոչելու եմ «Ամառնամաս»: Հիշում ես, առաջին գր-
քույկս էր «Գարնանամուտ» այնպես, որ գարնանը ուզում
եմ ամառը հաջորդվի՝ համաձայն բնության հավերժական

սուրբ օրենքի... կրկին մշակեցի իմ մի ֆանի պոեմները, մի ֆանի գլխով ես՝ իմ աշխուժ բարձրացա... իսկ թե մերոնցից կհարցնես, ասեմ՝ մայրս, որը բոլորից վեր ու վսեմ է, լավ է, մի ֆիչ դալկել է, Վիլիկը՝ վնիտ է և կրկին կայտառ, կրկին հաստատուն ու կրկին ծույլ Արամազդս մի լուսեղեն գաղտնիքի է նման, մեկ լալիս է, մեկ ժպտում, մի խոսքով բալիկ է և ֆեզ է կանչում, Մանիկը՝ լավ էր, բայց աչքը վերջերս ցավով ուզում է նրան նորից տանել, լավ է և մշտառողջ իմ Սիլվան, բարևում է ֆեզ, բոլորը կարդալիս բարևներ են հղում ֆեզ՝ և ֆո բալիկներին և զարմանալի սակավախոս մեր *Բազրատին*... Խնդրում եմ գրի՛ր պատասխան... ուզում ես՝ եկ, մի ֆանի օր մնա... ուզում ես հավիտենապես մնա... մեր գլխի վրա միշտ տեղ ունես...

Համբույրներով ֆո՝ Շիրազ

7.

Գ Ո Հ Ա Ր

Ես խոսեցի և շուտով Սիլվան և նրա տատիկը պիտի գան մեր սենյակը մնան, մայրս ևս համաձայնեց, բայց միայն ոչ երկարորեն: Խնդրում եմ մի օր գնաս և մաքրես, որ հարսդ շնեղանա...:

Քո՝ Շիրազ

8.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՀԱՐՈՒ ԲԱԳՐԱՏ

Իմացա, որ լավ եք նորից
 Կյանքը ծով է, կյանքը օվկիան
 Ու դուք ոսկի նավ եք նորից,
 Կյանքը գինի ուրախության,
 Ու դուք ոսկի գավ եք նորից,
 Խմում եմ ես կենաց գինին՝
 Քանի որ դուք լավ եք նորից:
 Ինչքան ապրեք՝ ուրախ եղեք,

Կանաչ գարուն ու բաղ եղեք,
 Կյանքն էլ ալիք՝ հոգսեր ունի,
 Դուք միշտ ու միշտ ղոշաղ եղեք,
 Ծաղիկներ եք նոր աշխարհի՝
 Անուշ բուրմունք ու շաղ եղեք,
 Շաղ ու շողով ձեր օրերի
 Խինդ ու խաղով՝ խաղաղ եղեք։
 Կյանքով ինչքան որ ծարավեք՝
 Դուք մեկմեկու աղբյուր եղեք,
 Սիրուց անուշ բան չտեսա,
 Աշխարհի մեջ համբույր եղեք,
 Թող միշտ լսեմ խնդումը ձեր,
 Դուք վայելքին միշտ քույր եղեք,
 Մեկ օր եղբայր ու մեկ օր քույր
 Ու մինչև մահ մաքուր եղեք...
 Սրտիս միջին երգ ու երազ՝
 Ձեր Հովհաննես խնդուն Շիրազ։
 1941. Երևան

1941 ամառ, հունիս,
 Երևան

9.

Սիրելիներս —

ԲԱԳՐԱՏ ԵՎ ԳՈՂԱՐ

Ստացա և պատասխանում եմ ձեր նամակին. ես մտ-
 սամբ լավ եմ, մերս լավ է, Վիլիկը՝ ավելի լավ: Մանիկը և
 մերս Վիլիկի հետ շուտով կգան Լենինակոն, հետո ես կգամ:

Մանիկը միտք ունի գյուղ գնալ: Թե լավ եղավ՝ ես էլ
 կերթամ հետը, թե սիրտս լավի դարձավ — թրթռակը...

էլ ինչ գրեմ — ինչ երկարեմ,
 Բավական է, որ սրտիս մեջ

Ձեզ խոր սիրով գաղտնի սիրեմ,
 Ազնիվ սիրով, սիրով անվերջ,
 Դուք լավ մնաք—փառք է ինձի,
 էլ ինչ ասեմ, ճոխ մնացեք,—
 Բայց երբ որ գամ՝ սեղանն հացի
 Ձեր սրտի պես դեմս բացեք:
 էլ ինչ գրեմ—սիրելիներ,
 Մի ղող տղա ունեմ հիմա,
 Աչքերը հուր,
 Ինքը մի թուր՝
 Թշնամու դեմ՝ կռիվ ու մահ,
 Սակայն մինչև նա մեծանա,
 Կընկնի-կանցնի շուն թշնամին
 Ու մանկիկս պիտի խնդա
 Խաղաղությամբ մեր խնդագին...
 Բարևներով միշտ ձեր՝ Շիրազ

10.

ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ.

Գրողների միությունը ինձ մի ամսով ուղարկում է Մոսկ-
 վա՝ այնտեղ մեծամեծ գրողներին տեսնելու, մայրաքաղաքի
 կյանքին ու կուլտուրային ծանոթանալու, բան սովորելու հա-
 մար...: Հիմա մի բան եմ խնդում,— մորս հայտնենք, թե
 ոչ, եթե գտնում եմ որ չի տխրի, հայտնեցեք: Դուք ոնց ե՞ք,
 լավ և քաջ մնացեք, արժիվի պես: Ես լավ եմ: Գնալու եմ
 մոտ օրերս:

Բարևում եմ Շիրազ

11.

Աի խոսքով սեճյակը շտապ
 Ին մեր Աստղիկ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Խնդրում եմ անմիջապես գրես, թե մերս գա՞ թե դեռ ոչ՝
անհրաժեշտ է նրա գալը թե ոչ, բնակարանը պահիր մինչև
ես կամ մերս գա, իսկ Արմենակին ես ասել եմ, որ սենյակը
չբանա մինչև մոռս կամ իմ գալս, կամ Գոհար ֆրոշս կար-
գադրությունը: Հիմի դու գիտես, ուզում ես գրի՞ր՝ մերս գա,
կամ թե չէ սենյակից իմ պատանեկան օրերիս գրածները և
գրքերը վերցրու և պահիր ֆեզ մոտ, քո տանը, իսկ իրերը
և սենյակը հանձնիր հարեանին՝ մինչև մենք հաշորդ ամառը
զանք... թող նա իր երեխաներին ֆնացնի մեր սենյակում՝
մինչև մոռս վերադարձը Երևանից: Մեկ էլ մերս պիտի գա, որ
անձնագիրը (*nacnopt*) փոխե և նորը ստանա: Ուրեմն Արմե-
նակին ասա, որ սենյակը չբանա, իսկ դու վարձը տուր՝ ես
փողը կուղարկեմ մոտ օրերս: Այսֆանը տան մասին: Մերս
լավ է, Վիլոն նույնպես, ես ֆիչըմ տկար եմ: Տղես՝ արի է:
Անունը Արամազդ եմ դրել: Խնդրում եմ գրես թե իմ նա-
մակներս ստացել ես և ինչու չես պատասխանում, իմ պաշ-
տելի ֆուր շան, իմ հեռավար աստղ, իմ կարոտի կաթիլ: Քեզ
են կարոտում և բարեում Մանիկը, Վիլիկը, անուշ բալիկնե-
րը, մերս: Մերս ամենից շատ է կարոտել ֆեզ: Բարեներս և
ողջագուրանֆներս բալիկներիդ ու Բագրամին:

Քո՛ Շիրազ

Յ. 10. 1941 թ.:

12.

ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

ՍԻՐԵԼԻ ԲԱԼԻԿՆԵՐ

Ես ձեզ նամակ գրել եմ, բայց և այնպես պատասխան
չեմ ստացել: Ինչու չեք գրում: Մերոնք լավ են, Վիլիկը, մերս,
ես, Մանիկը, մանուկները: Եվ կուզենայինք իմանալ (ձեր
որպիսությունը) և կցտնկանայինք, որ ժայռի պես ամուս
լի-
նեք:

Մտնիկի ֆեֆը մի ֆիշ վատ է, կարծեմ իմացած կլինե՞նք, որ Մեսրոպը գնաց: Լավ կլինե՞ր, Բագրատ, որ դու և Գոհարը երեխաների հետ մի ֆանի օրով գայի՞ք մեզ մոտ: Ինչ էթե՞ դու շեռ կտրող, թող Գոհարը գա: Ես էլի էն եմ ու էլի էն: Միշտ վախենում եմ և թվում է, թե վիշաբ շպիտի հեռտնա իմ հիվանդ ստից: Գրում եմ նոր երգեր մեր երկնային հերոսների մասին: Մտադիր եմ մի գիրք գրել: Կեսը գրված է, անունը դնելու եմ «Բանաստեղծի ձայնը»: Ձեզ բարևում են մերո, Մանիկը, Վիլիկը, Սիլվան, հիվանդ բալիկն և բոլորը:

Միշտ ձեր Շիրազ

13.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Մենք լավ ենք: Խնդրում եմ գրե՞ք Ձեր մտնին: Մտնիս ցտվը կարծես մեղմտնում է: Մայրս լավ է, Վիլիկը՝ չար, Մանիկս՝ խելոք, Սիլվան՝ պաղ: Պատրաստել եմ Հայրենապաշտպան մի գրքույկ: Մեսրոպը գնաց կտրմիր բանակ, ինչ Մանիկը դաս է տալիս ինչպես գիտե՞ք: Նա ուզում էր, որ մի արդար ու հուստից ձեռքով յուր զրկեի՞ք էթե ունե՞ք: Կարոտել եմ ձեր հայացքին, ձեր վեհտ ձագերին:

Միշտ ձեր Հովհ. Շիրազ

1941 թ. դեկտեմբեր

14.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ստացանք քո նամակը, մայրն շատ ուրախացավ և շատ ախրեց: Մանիկը նույնպես: Այժմ գալ շենք կտրող: Ես կարոտից հավում եմ, ուզում եմ տեղնել իմ Նագելի Արագածը, ֆեզ և բոլոր դարդիման բնկերներին, բայց հիվանդ եմ որ չեմ կտրող ես նույնպես գալ: Մայրն միայն, մեկ վեր

է կենում, որ գա, մեկ էլ թեաքափ նստում է, չգիտեմ ինչու համար: Մանիկը ծանրաշունչ հիվանդացավ, փառք երկնքին (ֆանի որ աստվածությունն չկա) վեր է կացել և գնալու է գործի: Ուրեմն նա ևս չի կարող գալ, շնայած ուզում է գալ, գուցե և մայրս ևս ինձ նման տենչում է գալ Շիրակ: Ուրեմն այսպես լուրջուն գալու մասին: Ես ֆեզնից մի քան եմ խնդրելու՝ գնաս «Բանվորի» խմբագրություն, ես ստանալիք ունեմ, իրանաստեղծություն եմ դրկել, ժամտնակին փողն սաացիր, մի 100 ռուբլի կլինի գուցե, ստացիր և բնակարանի, այսինքն սենյակի վարձը տուր... բացի այդ ահա մի նոր բանաստեղծություն եմ ուղարկում ֆեզ, այս նամակիս հետ, տար և տուր «Բանվորին» և խնդրիր դրա նոնորարը և... սիրելիս, իմ վիճակս շատ ողբալի է, ամեն օր կամ օրընդմեջ սիրտս մոռանում է կյանքը, կարծես կանգնում է մահվան լուրջունը լսելու համար, կանգնում, լսում է և տեսնում է, որ մի առանձին քան ու իմաստ չի գտնվում մահվան անդորրի մեջ՝ էլի սկսում է վերագառնալ կյանքը, էլի բախում է, ոչ թե բախում, այլ բաբախում է, բախում է առողջ սիրտը, իսկ իմս՝ հիվանդ է, բայց լավ կլինեք, որ չիմանար աշխարհը այս ցավս... և չի էլ իմանտ, միայն ֆեզ եմ ասել և մորս, գուցե դուք կհավատաք...

Քո՝ Շիրակ

15.

ԻՄ ՍԻՐԵԼԻՆՆԵՐՍ

ՔԱԳՐԱՏ ԵՎ ԳՈՂԱՐ ԵՎ ԲՈՂՐՈՂՋՆՆԵՐ.

Եկա և հիվանդացա, հիմա մի ֆիշ լավ եմ, շատ շնորհակալություն մայրիկիցս, Մանիկիցս, Սիլվայիցս, սրտիցս և մանուկներից մեր բոլոր: Շնորհակալություն:

Կարծում եմ, որ մեզ մոռացած չե՛ք և պիտի որ նամակ գրեիք, ֆանի որ ես գրել եմ և պատասխան չունեմ:

Բարևում են ձեզ բոլորիդ մերոնք, բոլորը՝ սկսած մանուկ մորիցս մինչև մանուկ Արայիկս:

Միշտ ձեր՝ Օնիկը

16.

Տողեր Արայիկի նկարի տակ

ՔԱԼԻԿԻՍ

Իմ բալիկս, իմ հոգիս,
(աստված պահի իմ որդուն)
Դու իմ բախտս, դու կյանքիս
վերադարձ մանկություն,
Փուշ է վաստակը երգիս,—
Ով կտա վարդն իմ որդուն:

Հովհաննես Շիրազ

1942 թ. ամառ

17.

ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

Նամակներ եմ գրել քեզ,
Ու դեռ շունեմ պատասխան,
Գրիր՝ ոնց է սիրտը ձեր,
Աշնան վարդ է, թե գարնան,
Եվ ինչպես են բողբոջուն
Երեխաները ձեր անգին,
Իմ կարոտն է կարկաչում,
Համբուրում եմ ամենքին,
Վառ սեղանդ սրբազան
Թող միշտ գինով գավ լինի,
Առ ողջույնը դու մեր տան,
Որպես բաժակ ծիրանի,
Ողջույն քեզ ու քրոջս,—
Թող արևս քեզ լինի:

Հովհաննես Շիրազ

12 հոկտեմբերի, 1942 թ.

ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ստացա նամակդ: Իզուր ես կարծում, որ ես կարող եմ մոռանալ: Քեզ մի նամակ էի գրել: Գրածս նորից հետ եկավ՝ ձեր գործարանից: Չէիր ստացել ուրեմն: Զարմացա: Բայց այդ ոչինչ՝ կպատանի: Մայրս ի սկզբանե լավ էր, վերջերս դալկեց և հիվանդացավ: Հիմա ֆիշըմ լավի է դարձել: Լավացել: Վիլիկը վատացել էր, շարացել: Կաաաղել: Խուժանանման դատել: Գպրոցից փախել էր: Բայց վերջերս ընդունել տվի նորից և հիմա ֆիշըմ լավ է, կարգին է... բայց թե ինձնից կուզեիր իմանալ՝ ես աննախանձելի դրությամբ մեջ եմ: Նախ գանգատավոր եմ սրտիցս: Նախ նա լավ չի աշխատում: Հոգիս այդ իսկ պատճառով մթազնում է ու մոայլում: Այն բոլոր վառն ու դաժան օրերը, այն բոլոր սոված և սովատանջ օրերը, որ ես եմ ապրել քեզ հետ...

(շարունակությունը չկար).

ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

Մոռացա գրել, որ դու մի ֆիշ խրատական հովանի լինես Վիլիկի գլխին: Ես խիստ ջղային և սրտի հիվանդությամբ եմ տառապում և այդ պատճառով էլ խիղճս միշտ ինձը իրեն կորցնում է, երբ ուզում եմ մի բանով մի խրատականով խելֆի բերել Վիլիկին և փոխանակ իմաստավորելու իրա մաասող ուղեղը, լարում եմ իմ դեմ, իսկ դու հանգիստ և փորձագետ մարդ ես և ավելի հուժկու կլինի խոսքդ նրա էության վրա: Նա վերջերս շատ վատ է պահում իրեն, նույնիսկ ուսուցչունին եկավ մեր տուն և գանգատվեց նրա շարունակներից: Հիմա նա գալիս է քեզ մոտ, դու մի ֆիշ հայրորեն նայիր... բարևներս բոլորիդ:

Քո՝ Շիրազ

ՄԱՆԻԿ ԵՎ ՎԻԼԻԿ

Այս գրվածքներս տարեք «Բանվորին» և թող եթե տպվեն,
փողը ձեզ կոշիկի փող լինի, ուտել չկա: Ես էլ հիվանդ եմ
հլը, մորս ասել եմ:

Ձեր Օնիկ

* * *

Իմ հեռավորս, գիշեր է դրսում,
Բարձր գլխիս տակ ժեռ քար է կարծես,
Քունս չի գալիս ու սիրտս մրսում
Ու աչքս ճամփիդ՝ սպասում եմ քեզ,
Օրերս երկար, գիշերներս անքուն,
Միծեանակները եկան, դու չեկար,
Ե՛րբ պիտի դու էլ ինձ բերես գարուն,
Իմ հեռավորս, իմ սրտի ծիծառ...

Բայց չէ, թող քո ձին նորից թև առնի
Ու քար արցունքս աչքերս քանդե,—
Միայն թե դաժան թշնամին մեռնի,
Աշխարհն աչքիս պես դուման չպատե:
(1942.)

ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

ՍԻՐԵԼԻ ԳՈՀԱՐ

Ստացա ձեր այնքան թանկ նամակը: Շնորհակալություն
ձեր եղբայրական և քույրական շերտ սիրո և խորհուրդների
համար, իմ առողջական վիճակը աննախանձելի է, բայց
կաշխատեմ հեռակա ձեր բարի խորհուրդներին, լավ պահել

ինձ... մերոնք լավ են, Սերովբից նամակ սաացանք, գրում է, որ բանակում իրեն զգում է այնպես, ինչպես արծիվը երկնում. երեխեք լավ են, ինչպես ձկնիկները ծովի մեջ. Վիլիկը ֆիշ-ֆիշ խելի է գալիս, մայրս մի ֆիշ հիվանդ է, իմ և Սիլվայի գործը մթին գիշերի է նման, սպասում եմ արշալույսի: Գրում եմ և մշակում: Կարոտել եմ ձեզ, կարոտել եմ Ալագյազի կապույտ հայացֆին: Միտք ունեմ գրել մի մեծ պոեմ՝ Հայրենական հաղթական մեր կովից:

Քարևում են ձեզ մայրս, Մանիկը, երեխեք:
Քարևներով՝

ձեր Հովհաննես Շիրազ

22.

ՄԵՍԱՐԳՈ ԵՎ ՍԻՐԵԼԻ

ԸՆԿԵՐ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Այս նամակաբերս իմ ֆույրն է, Մանիկ Կարապետյանը, կարմիր բանակայինի ընտանիք է, ունի չորս երեխա, մի խոսքով՝ մայր մի տուն լիքը մանուկների, հիմա այս նամակով նրա բերանով խնդրում եմ երկու բան. առաջինը մի ֆիշ կարտոֆիլ, երկրորդը՝ կարգադրեք, որ այս տարի (գարնան համար) ինձ հատկացնեն մի տնամերձ՝ մի բուռ հող իմ հայրենի անուշ Շիրակից, ուզում եմ գալ և ֆոջս հետ գլուխս վար դնել արպես մի կաթիլ ֆրոֆին... Անցյալ տարի բնկ. Գյոդակյանը տվել էր, բայց ֆոջս ձեռքից խլել էին... ֆույրս բողոքել էր, բայց իզուր... Իհարկե լավ կլինեք, եթե ես անձամբ գայի, բայց համ հիվանդ եմ, տկար, համ էլ ձեռքիս տակ մի մեծ նանապարհորդություն ունեմ, այսինքն մի մեծ պոեմի վրա եմ աշխատում՝ նյութը հայրենական հերոսների ... փառքն ու անմահությունն է:

Հույսով եմ շեք մերժի:

Հ. Շիրազ

1943 թ.

1943 թ.

*Ինչքան էլ շաբերը իմ սիրտը խոցեն,
Սա չեմ մոռանա իմ Շիրակը շինչ,
Ինչքան անեծքով իմ ճամփան գոցեն՝
Պիտի գամ մորս գիրկը կախարգիչ:*

ՀՇ

23.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՔՈՒՅՐ

Իմ սիրելի Գոհար, ստացա նամակդ. նամակ քիչ եմ գրում ո՛չ թե նրա համար, որ ծուլտնում եմ, ո՛չ թե նրա համար, որ քեզ երբեք կարող եմ մոռանալ, այլ շեմ ուզում սիրտդ կոտրել, շե՞ որ իմ սիրտս լիքն է թախիծով, որը չի կտրող պտտահեղ, որ շփոթ գրչիս միջով թղթի վրա... մայրիկս լավ է, ինքն էլ չի սիրում լավ հագնվել, և շատ է սիրում մեծակությունը, այնպես ինչպես իմ սիրտս է սիրում, կարծես մայրիկս էլ է բանաստեղծ, ինչ վերտրեռում է Մանիկին և երեխաներին՝ նրանք էլ լավ են. ոչինչ: Շտա ուրախ կլինեմ, որ հաջողացնես գնաս ստնատորիա, եթե ծայր կանոնն զանտզան շեմուչումեր, այսինքն եթե շեն օժանդակի՝ ինձ գրիւր և ես փող կուղտրկեմ, որ անպայման գնաս: Լավ կլինեւր մորս հետդ տանեիր, տվելի լավ կլինեւր գնայիք մի հանգստավետ գյուղ, մի ծաղկալից տեղ և երկու ամիս մնայիք մորս հետ... ես ծախսերը կհոգամ ինչքան էլ լինեն... եթե այդպիսի մի գյուղ գիտես՝ գրիւր, կամ արի մորս հետդ տար, կամ մի ելք գտիր, որ մայրիկս այս ամառ հանգստանա... այսինքն վերջ տա մեծակությանը: Եթե այդ չի լինի, դու անպայման գնա քո այդ սանատորիան, որի մասին խորհուրդ են տալիս բժիշկները:

Բարևներով քո եղբայր Օնիկ

ՄԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ ԵՎ ԳՈՂԱՐ

Ստացա ձեր համակը, պատասխանը գրեցի՝ գործարանի վրա, բայց իմ գրածս նորից ինձ հետ եկավ...

Ես լավ եմ, տենցիք նույնպես և ավելի լավ եմ: Միշտ ձեր մասին ենք մտածում: Թե՛ ես, թե՛ մերս, թե՛ Մեսրոպը և թե՛ Երեխեքը:

Ուզում ենք գալ, բայց դեռ համալսարանի գործերի հետ եմ ուզում կովել: Այս համակս վայ թե ստանաք նոր տոմարուն, ուրեմն Շնորհավոր նոր տարի, լավ ու պայծառ եղեք, միշտ պարզ ու վսեմ հոգով մնացեք, միշտ իրար հասկացող և սիրող, միշտ իրար ցավի տեր... Միշտ թող հրեզեն վառվի ձեր ընտանիքի սուրբ օջախը... Ամեն նոր տարի նոր բարի թող բերի ձեզ, իմ սրտի հեռավորներ, իմ ազիզներ:

Բան չէի ուզի երկնից, երկրից, բան չէի ուզի աշխարհից այս նոր, միայն շնքներ հույսը իմ սրտից, միայն լինեիք դուք միշտ բախտավոր, միայն թե երբ որ ամեն նոր տարի գայի ձեր ոտքը՝ ձեր տեսիլն կարոտ, տեսնեի ծուխը ձեր սուրբ օջախի և ձեր սուրբ օջախը վառվեր սրտիս մոտ,

*սիրելի Բագրատ,
սիրելի Գոհար,
ես ձոր կդառնամ,
դուք մնաք միշտ սար:*

Ձեր Օնիկ՝ Շիրազ

ՄԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

ՄԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Եկա տուն և հիվանդացա, երբա լավ եմ. գիտեմ, որ մեզանից կհարցնեք, մենք լավ ենք, միայն Արայիկս մի փչզունատ է դեռևս և աչքերը ցավեցին, թե չէ մյուս բոլորը

լավ են, թե՛ մայրիկս, թե՛ Վիլիկը, թե՛ Մանիկը և մանավանդ
մեր Սիլվան, մեր Դշխո անթագավոր թագունին, իսկ երե-
խաները՝ Մանիկի, քիչ մըսել են և հառաչանքի մեջ են տա-
կավին. Դշխո Սիլվան չի եկել դեռ, ավելի նիշտ ես ինձ վատ
էի զգում և դեռևս չեմ բերել, մտածում եմ այնպես անել,
որ, Բագրատ, քո խորհուրդը կատարվի, այսինքն վերջը
չկովենք. վերջը լավ լինի, խաղաղ ու հաշտ իսկ [

] թույլ չի տա, իսկ Դշխունին մեծ
մտուրի եղնիկ է: Համենայնդեպս լավ կլինի, ես դրանով չեմ
էլ մտահոգված, ես իմ մասին երբեք չեմ մտածում, ես մոայլ-
ված եմ ձեր բախտի համար, ինձ երբեմնապես տանջում է
ձեր հոգեվիճակը, ինձ վրա շատ վատ ազդեց այն գիշերը,
երբ լսում էի ձեր տրտունջները ձեր մասին, երբ պատմում
էին ձեր լեզուները ձեր սրտերի որպիսությունը:

Դուք երկուսդ էլ մտախոհ և հասուն էակներ եք, դուք
եք, որ մեզ հովանի պիտի լինեք ձեր բարի և իմաստուն
խորհուրդներով, էլ ես ինչպես մտածեմ և բարի մաքերս
իբրև հովանի հյուսեմ ձեր գլխին, ես հիմա կարծում եմ, որ
մեղմացած կլինեն ձեր սրտերի ակեղոճ գեաները և անմիտ
հոգմերը շփացած կլինեն, ես անչափ մտածում եմ և տրյու-
րում ձեր մասին, միթե՞ չեք կարող պահպանել ընտանեկան
վնիտ և սրբազան խաղաղությունը, չէ որ առանց զրան՝ մոայլ
է, ուրեմն ինչ էիք մտածում. ես մեղադրելով քեզ, Գոհար,
չեմ շոյում և քո, և մեր Բագրատին, որին ես քիչ առ քիչ
նանաչեցի և մանավանդ նրա պատմած առակներից, որոնք
լավ դասեր են հասկացողի համար, իսկ դու, Բագրատ սի-
րելի, եղի՞ր ուսուցիչ նոր, լենինյան դարի և ոչ ուսուցիչ
հնազարյան, քո ամեն խոսքդ իմ սրտին նստում էր իբրև
մայիսի ցողը վարդի կամ ծաղկի վրա, բայց այնպես արա,
որ քո խոսքդ Գոհարի սրտին էլ մայիսի ցողի պես լինի,
այս ամենը գրելով ես մաածում եմ նաև այն մասին, որ հի-
մա ամեն խուժ ու խոչընդոտ վերացված է և ձեր սուրբ
տունը իմ հոգուս տանար է. հանուն երեխաների, հանուն
այն խելոք և եղնիկների՝ եղեք բարի մեկմեկու դեմ և թող,
Գոհար, ամեն ինչ լինի Բագրատի խորհուրդով ու մյուս գա-
լուս՝ կտեսնեմ այն, ինչ հստակ է մեզ և մեր պատվին. ձեր

տնտեսականը լավ էր, մնում է որ հոգեկանն էլ պայծառաց-
նե՛ք, ցրեցե՛ք վշտերը և թող ձեր տունը դառնա մի բուռ
աստղերի անաղաւտ երկինք. բարեւում են քեզ մերոնք բո-
լոր, բարի արեւ քեզ, իմ բարեկամներս, իմ բալիկներս...

Բարեկերով միշտ ձեր Հովհաննես Շիրազ

Գոհար, Արամի մորն ասա թոյ մեկի միջոցով կոշիկ-
ներս դրկի ինձ:

Շ.

26.

ԳՈՂԱՐ ՔՐՈՋՍ

Քրոջս հետ կեսօրին գնում էի ես բոստան,
Մե՛րթ գառի պես համրաքայլ, մե՛րթ ուլի պես ոստոստուն
Հոգնում էի կես ճամփին, հորս ծառի տակ նստում,
Հանգստանում ու նորից ընկնում հորս հույս-ճամփան:

— «Գիտես ինչո՞ւ է տնկել հայրս այս ծառն՝ այս ճամփին,
Որ անցորդներն ամռանը՝ այս ծառի տակ հովանան,
Օրհնեն հորս, որ ապրի այս ծառի շափ, հավիտյան»:
Պարծենում էր մեծ քույրս սուրբ շշուկով իր նրբին:

Հիմա սիրտն էլ իմ քրոջ՝ լիքն է վշտի սև ամպով,—
Հապա ու՞ր է օրհնանքը՝ լոկ հայ վիշտն է ծովացել,
Ո՛չ հայրս կա, ո՛չ ծառը, ո՛չ էլ մարդ է... հովացել,—
Հազար ու բյուր մահ եկավ, անցավ... անմահ այն ճամփով:

...Բայց ինչքան էլ շթողնեն հորը քաշե իր տղան,
Ես իմ հորը կքաշեմ, թեկուզ դարը շթողնի,—
Յոթը որդի կերկնեմ, որպես յոթը սուրբ կաղնի,
Որ երգիս հետ՝ գինդ, հակինթ ու մարգարիտ վար տեղան...
Իմ սիրելի Գոհար.

Ստացա նամակդ, շատ ախրեցի, ես էլ երկուր օրեր հի-
վանդ էի և եմ, մրսել էի և մրսում եմ այժմ վշտերից:

Վերջերս նայելով կուտակ-կուտակ թղթերիս՝ տեսա որ

հայրիկի մասին շատ բաներ եմ գրել ու գցել,— որոշեցի
հրա մասին էլ մի գրույկ ծխարձելու ջանալ,— ահա այդ
փունջից մեկ ծաղիկ, որը ֆեզ եմ եվիրել:

Հ. Շիրազ.

27.

ՍԻՐԵԼԻ ԻՄ ՔՈՒՅՐ ԳՈՂԱՐ

Ստացանք նամակդ. շատ ուրախացա, որ էմման նա-
մակ է գրում արդեն. մենք լավ ենք, Վիլիլը լավ է և սովո-
րում է. մայրս մի ֆիշ ինչպես և ես՝ հիվանդացանք, բայց
հիմի շատ լավ ենք: Ես ուզում էի ֆեզ գրել, որ գործի
գնաս... բայց իմացա և ուրախացա, որ արդեն գնում ես:
Դա պատճառ կլինի, որ այլևս չկովեք: Արայիկի մասին ես
հարցնում, ես Մուկվայում է. մեկ-մեկ համակ է գրում, թե
լավ եմ...

Մի խոսքով բոլորս լավ ենք:

Ցանկանում ենք քո մշտապես լավ լինելը:

Քո Օնիկ

28.

ԼԵՆԻՆԱԿԱՆ

«Բանվորի» խմբագրություն

Մուշեղ Նարյանին

Գևորգ Շահխաթունուն

Մայրիկս ծանր է, ֆրոչս շտապ ուղարկեցեք Երևան:

Շիրազ

Երևան Գրողների տուն

Շիրազ

ՍԻՐԵԼԻ ԳՈՂՅՐ

Տելոն եկավ և ասաց, որ էմման հիվանդ է ... Ի՞նչ է պատահել և ի՞նչ է հարկավոր՝ գրիւ: Իմ գրական գործունեության 25-ամյակն այստեղ խափանեցին՝ տյս պատճառով չեմ կարող գալ Լենինական՝ թեև ինձ գրել են այդտեղից, որ ուզում են մեծ երեկոյով նշել... չեմ գալու՝ հետո քեզ կասեմ թե ինչու, այնպես որ էլ մի քանի օր անց, այլ գրեցեք թե ի՞նչ է հարկավոր...

Քո Օնիկ

Նամակը շարունակել է Մանիկը:

ԲԱՐԵՎ ՁԵՁ, ՍԻՐԵԼԻՆՆԵՐՍ

Բագրատ, Գոհար և էմմա ջան, ինչպե՞ս եք, ինչո՞ւ նամակ չեք գրում, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ եք էմմային տարել հիվանդանոց, չկարողացա՞ք կրթավարժի ձեռով ձվածեղ անեթի ուտացնեթի և հետո էլ նստացնեթի վրան, մտել է, մայասուզը պաղել է, ամեն բանի համար մի քանի քայլերի ձեռքով: Հիմա ինչպե՞ս է, գրեք իմանանք: Մենք էլ լավ չենք, մեկս ելնում ենք, մյուսս պառկում: Եթե Տելմանի մասին կհարցնեք, լավ է, մի քանի մտածե, միայն մի բան. Տելմանը իր պալտոն բերել է, — ասում է փեշերից կտրիւ, գոտի շինի, հիմա ես աշխատում եմ, վախենում եմ կտրեմ հետո կարճանա և էն ժամանակ էլ ասի կարճ է ու էլ չհագնի: Հիմա դուք ի՞նչ խորհուրդ եք տալիս, գրեք այդ մասին:

Ինչ էմմային ես ուզում էի տանել էջմիածին, այնտեղ լավ մասնագետ կա, նա ինձ շլտեց, շմնաց, իսկ այստեղից շատ շատերը գնում են նրա մոտ: Գոհար ջան, դու կամ Բագրատը կարող եք էմմային բերեք և տանենք դրա մոտ,

շատ լավ են տսում այդ բժշկի համար:

Հետո կթավաթ և գեյթունի յուղ էլ խմացրեմ, եթե չկա, ես կհարեմ, գրեմ իմանամ:

Բարեւում ենք՝ մերս, ախպերս, ես, Ջանիկը, Տելմանը, մնացած բոլորը:

Բարեկենդիվ Մանիկ

Եթե նամակ չեմ գրում, դա ունի իր պատճառը:

Անընդհատ հիվանդ եմ:

31.

ԿԻՄԱ

Ստացա նամակդ, ոչ միայն ես այլ մորս էլ հետոս պիտի բերեի, բայց ես հիվանդացա և այժմ այնքան էլ լավ չեմ, ևրոջս էլ գրել եմ այդ մտօնը: Ես կարգացի քո ոտանավորների ամբողջ տետրակը, եթե քեզ տեսած շիճեի՝ ինչպես առաջ, ապա այժմ էլ քեզ շատ պիտի քննադատեի թե այս ինչու թույլ ես գրում, ես քեզ առաջ այդպես էի գրում ու խրատում նրա համար, որ ինձ թվում էր, թե դու այդքան մանուկանման չէիր՝ ինչքան որ տեսա քեզ, կարծում էի թե կլինես քան-քանակ և նույնիսկ ավելի տարիքով, բայց սխալվել էի... կարծում էի, թե մեծ ես ու դրա համար էլ քեզ գրում էի թե «փոխանակ սրա-նրա հետ ման գալու՝ նստիր և ամեն օր գիրք կարդա, որ մի բան դառնաս...»: Բայց ինչ իմանայի թե դեռ այդքան պատանի էիր: Եվ քանի որ այդքան ես, ուրեմն քեզանից իհարկե չի կարելի պահանջել այնպիսի բանաստեղծություններ գրել, որոնք կարելի լինի տպել տալ... դու իրականում մի կոկոն ես, որ պիտի շատ գրես, որ սովորես կարգին բաներ գրել... ուրեմն մի հուսահատվիր և շարունակիր շատ գրեր կարդալ ու գրել—երբ կոզկորվես, իսկ ոգևորվելու շատ ու շատ բան կա մեր կյանքում, մեր մեծ ու սուրբ Հայրենիքում:

Քո կյանքը և քո բախտը քո առջև է դեռ... ծաղկիր ինչքան սիրող ուզի:

Բարեկենդիվ Հ. Շիրազ

ԻՄ ԱՆԳԻՆ ՄԱՅՐԻԿԻՍ

Հեռացել եմ քեզանից
Դու իմ Աստղիկ հեռավոր,
Դու իմ մաքուր, իմ անբիծ,
Դու իմ երազ լուսավոր:
Չկա քեզ պես ուրիշ լույս,
Ուրիշ Աստղիկ ոսկեշող,
Դու իմ միակ, ինձ կանչող—
Կուզեմ հովից շուտ հասնել,
Գիրկդ ընկնեմ, վիշտս լամ,
Կուզեմ ոտիտ տակ բանել
Ոտիտ տակ եմ անթառամ:

Քո՝ Օնիկ Շիրազ

33.

Թեպետ սիրտս լիքն է մահով,
Բայց քնարս ահ շունի,
Հայրենիքիս շահից բացի,
Ուրիշ ոչ մի շահ շունի,
Յոթն անգամ է մորից ծնվում
Բանաստեղծը բազմատանջ,
Թեկուզ հազար անգամ թաղեն՝
Իր մի մազն էլ մահ շունի

Հ. Շիրազ

34.

ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

...(Առաջին էջը չի պահպանվել)

...հո իսկ աչքի առջև, հո իսկ ձեռքի տակ՝ այն օրերը
այժմ շատ վատ [] էլնում՝ այն դառնադեա որքի մեր

օրերը այժմ ևս ինձ հանգիստ չեն տալիս, թեև երկիրն ու ժամանակը ուրախագին են, ժողովուրդն ազատության իր երկնքի մեջ՝ արծիվ: Իմ սիրելի փոյրս, վիշտս խորն է, խորունկ: Ամեն վտյրկյան մտին է իմ սովերը հիմտ: Ամեն վտյրկյան մտի եմ շնչում: Քայց ամեն անգամ միենույն ժամին լիաթոք գգում եմ աշխարհի թոհ ու բոհը՝ այս նվիրական կյանքը և փոհի գգամ, որ նվիրական տյս հորը անգուգական է, որ դեմս բաց է տշխարհի ոսկե դարբտսը, փանի գգամ, որ երեկվա որբուկն եմ, այսօրվա բանաստեղծը — տյնփոն վիշտս խորունկ է խորտնում — փոնգի սմեն վայրկյտն ոիրտս ցավում է, սիրտս տառապում, շունչս կտրվում, ա՞ր ես իմ տխուր, բայց տնցած մանկություն:

2. Շիրազ

35.

ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

Ինձ մտատանջում է քո բուխտի սու վիճակի խնդիրը, իսկ դու ոչ մի տող չես գրում, թե ինչպես լուծվեց: Ես կտրծում եմ, որ մտրդ պիտի իր խոսքի տերը լինի, չէ՞ որ ինձ պիտի գրեիր, նույնիսկ հեռագրեիր, գուցե քեզ թվում է, թե ես քո ջրս ընտանիքի վրա մտտների արանքով եմ նայում, սխալվում ես, իմ մեջ է հորս մեծ և համամարդկային խիղհր, ուրեմն մի գրով ուրախացրու ինձ, լավ գիտեմ, որ Վրույրը իսկական կուսակցականի աչքով կնայի գործիդ, իսկ ընկեր Գյոդակյտնը քեզ լավ է հանաչում և հարգում՝ կտրծեմ, չերկտրացնեմ, վայ թե գլուխդ ցավի, Մանիկը խնդրում է, որ մի բուռ հող հույս պահես հրտ համար... Համբույրս բուլուրիդ...

Քո Հովհաննես Շիրազ

ԻՄ ՍԻՐԵԼԻՆՆԵՐՍ

ԲԱԳՐԱՏ—ԳՈՀԱՐ

Մենք շատ լավ չենք, բայց լավ ենք, հարցնում ենք ձեր որպիսությունը, ձեր երեխաների: Բազրատի մեծ եղբայրը կնոջ հետ եկան և իսկույն թռան հավերի պես: Մենք ինչպես ասի լավ ենք՝ թե՛ մայրիկս, թե՛ Մանիկս, թե՛ Վիլիկս, թե՛ Զոնիկս, թե՛ աչիկս, թե՛ Արայիկս ձեզ համբուրում են իմ շրթունքներովս, ավելի նիշտ՝ իմ այս գրովս: Կարոտել եմ ձեզ, շատ կուզեի գալ: Իմ քեֆս մի օր լավ է, մի օր մոայլ, հիվանդոտ: Գրում եմ կովի և մեր անմահ հերոսների մասին երգեր և մի պոեմ: Քաջ եղեք: Մեսրոպբից մի ամիս և կես է ինչ նամակ չկա: Գրեցեք նամակ, հոգուս հատորներ:

Համբույրներ՝ ձեր՝ Շիրազ
Սիրելի Բազրատին՝
Բազրատ, եթե մայրս գա՝
հո նեղութուն չի լինի ձեզ այս
ամառ...

37.

ՍԻՐԵԼԻ ՔՈՒՅՐ ԳՈՀԱՐ

Ես մոռացա Վիլիկի հետ գրածս ու քեզ դրկածս նամակի մեջ գրել հետևյալը ևս. մայրս շատ ու շատ կարոտում և կարոտից տխրում է, որ այս էլ քանի ամառ է մնում է շոգի մեջ— Երևանի և անա ինձ նա խնդրեց, որ գրեմ այս նամակս քեզ և խնդրեմ այնպես անես, որ նա այս ամառս գա Լենինական՝ ձեզ մոտ... նա (ինչպես և ես) մտածում է ապրուստի մասին... եթե նրա հետ մի քիչ ալյուր, մի քիչ փող դնեմ և ուղարկեմ ձեր տուն— կլինի՞, այսինքն՝ հո ձեզ շատ չի նեղի.. իսկ ես որ հիվանդ եմ (ինչպես քեզ գրեցի արդեն) այս ամառս չգիտեմ, թե ինչ անեմ... ուր գնամ... կյանքիս մեջ սանատորիա ասած բանդ չեմ գիտի ինչ է—

պիտի դիմեմ այստեղի մեծերին ~~ու~~ ինձ համար մտածեն...
ուրեմն այս տարի-ամառս ես ձեզ մտա չեմ գալու, թող
մայրս գա՛ քանի որ ե՛ր ուզում է, ե՛ր կարիքի մեջ է՛ զովի
կարիքի... Կեր, թե երբ դրկեմ մորս, համ էլ մի թուղթ հա-
րիւր դրկիւր, որ պրոպասկ հանի ու գա... բարեկներս բոլորիդ
և բոլորիդ...

Քո Օնիկ

38.

Հարգելի ընկ. Դիլանյան

Քույրս ինձ տնտեսածից մի քանի փութ կարտոֆիլ է
ուզում ուղարկել Երևան: Ինչպես հայտնի է բազած շեն
վերցնում: Հիմա այս գրովս խնդրում եմ, որ կարգադրեմ
բազած վերցնեն և կարտոֆիլը մորս հասցնեն: Հույսով եմ,
որ ինձ կհիշեմ և չեմ մերժի իմ և բոջս խնդիրը:

Ձերմ բարեկներով՝ Հ. Շիրազ

(Հայաստանի բանաստեղծ)

1943 թ.

39.

ԻՄ ՍԻՐԵԼԻՆՆԵՐ

ԲԱԳՐԱՏ ԵՎ ԳՈՀԱՐ

Ահա մայրս և երեխաները քեզ հյուր են գալիս, հյուր—
ուրեմն և պետք է սրտաբաց լինեմ, ես շուտով կգամ. մորս
տարեք տղոց հետ մեր տուն. խնդրում եմ եթե հնարավոր է
գյուղից մի քիչ յուղ ու կարտոֆիլ գնեմ մեզ համար. Փող
նարել և տվել եմ մորս, քիչ է, բայց ի՞նչ արած: Բարե և
համբույրներ քեզ: Բոլորիդ: Քաջառողջ և սրտաբաց եղեմ՝
քանի որ նեղ օրեր են՝ դուք պիտի լայնասիրտ լինեմ դեպի
հարազատները:

Ձեր Շիրազ Հ.

Իմ Աստղիկ մայրիկ

ջան, ջան

Իմ Վիլիկ ջան

Ես շատ ու շատ եմ լավ, իմ մասին հեշ մի մտածե՛ք...
[] գնել ե՞ք, թե դեռ ոչ []
կարտոֆիլ բերե՞ց, թե դեռ ոչ, Արամը գալի՞ս է, թե ոչ...
Սիրելի Քաջան, նամակդ կարդացի, մի մտածի՛ իմ մասին,
միայն դու ֆեզ աշե, լավ սնունդ կեր...

Քո բալիկ Շիրազ

40.

Իմ սիրելի

մայրիկ

Իմ Աստղիկ

Ես շատ լավ եմ, նստած գրում եմ ու գրում, եթե դու
էլ այդտեղ լավ ես՝ այդպես էլ մնա և իմ մասին մի մտա-
ծի, հանգստացիր, շուտով ուզում եմ գալ ձեզ մոտ:

Քո որդի՛

Հովհաննես Շիրազ

41.

Սիրելի մայրիկ ջան

Լեւան ահա գալիս է, որ մենակ չգաս՝ այլ առնես և
գաս, երբ որ կուզես, տունը դատարկ՝ ֆեզ է սպասում, կա-
տուններն էլ են սպասում, բայց նրանք ասում են, եթե էդ-
տեղ լավ է՝ էլի թող կենա մեր բարեբարը, մեր Աստղիկ ա-
նունով աան տիրուհին, ես էլ, ոչինչ, լավ վտովում եմ շո-
գից, բայց սոված չեմ մնում... երբ որ կուզես արի — բայց
ես կուզեմ գալ ֆեզ մոտ, բայց կասուներին ո՞վ հաց աա,
եթե գամ, համ էլ թող Լեւան կամ Մանիկը գան՝ նոր կգամ:
Գոհարին լավ աշե...

Քո Շիրազ

ԻՄ ԱԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ.

Սաացա նամակդ. վիշտս ծանրացավ, ափսոսում եմ, որ այդտեղ չեմ, այդ թշվառ կիսամարդուն ես լավ գիտեմ, բայց դու ֆաչ եղիր, կհաղթես ևս անձնվեր աշխատանքով, ես հույսով եմ և հավատում եմ քո խելքին ու փորձագիտությանը: Կիսում եմ քո վիշտը եղբայրսերեն, գրելու եմ Գյոզակյանի և այդ մասին: Բարևներս մանկիկներին, քեզ, Գոհարին, նորից համբուրում եմ քեզ:

Քո ախպերդ՝ Հովհ. Շիրազ

Գլխովը շաա ամպեր կանցնեն,

Սարը միշտ կա անասան...

Շնորհավոր նոր տարիդ, նոր կտրով քեզ, նոր սեր:

1947 թ. հունվար

Երևանից

ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

Սաացա նամակդ, հիվանդ էի. մտնել էի: Հիմա ֆիշըմ լավ եմ... դու ինձնից իզուր եռ նեղացել: Դու վոնեմ խորհուրդներ եռ տալիս. բան չունիմ տոնելու, բայց քեզ թվում է, թե ես չեմ լսում քեզ, սխալ եմ լսում, բայց ձեռք բան չկա, որ աստծիդ պեռ անեմ, այդինքն տանը զարդարել ասեմ կահով և կարատիով: Դիտմամբ ես ուշացնում եմ իմ կենթնակիան գալս, քանի որ ոչ թե փող, այլ կռպեկի կարող եմ մնում հանախապես... Ես սպելի շատ մշակում եմ իմ հին գրվածքներս, քան թե նորերը գրում, որե՛նք բնական է, որ պիտի կարիք մեջ մնամ... Հոչակ կամ տնարար խաբամանկությունն ունեցող գրիչները միայն նախածեկի են սոյժմ ինձ հասնար, քանի որ ես իրապես մի մանուկ եմ այդ գործում, այդինքն՝ իմ տանը չպիտի թողնել իմ հույսին, ես բամբակե սյուն եմ, մինչդեռ հաբկավոր էր գրանիտյա լինել... իսկ ինչ կվերաբերի գալուս և այդ ձեր տե-

սած և հավանած աղչկան 'անենես' ապա զարնան գլխին
անպայման կգամ, մեկ որ հիմա փող չունեմ, մեկ էլ իմ
գրքին վրա եմ աշխատում, այսինքն՝ գրում եմ և մշակում,
որ հանձնեմ Պեանրաաին և փող-հոնորար առնեմ ու հնար
ոտեղծեմ գալուս... դու զարմանալի մարդ ես, այս բոլորը
աչքի չես ունենում՝ ինձ կշաամբելիս... ախր դու ուրիշ մարդ
եո, եո՝ ուրիշ: Եո գուխո առաղբրին տված՝ թափառում եմ
երազների մեջ, ինձ համար օրվա մի պատառ չոր հացը
կբավե... իսկ դու ուրիշ եո: Եո թեև նախանձում եմ քեզ...
Եո ուզում էի, որ ունենայի մի կամ մի ֆանի եղբայր,
հատկապես ինձնից մեծ, որ անատեականի լուծումը իմ ուսե-
րից նրանք առնեին և եո լիքը օրով թեւովորված՝ գրականու-
թյամբո զբաղվեի... բախար մի աչքով է ժպտացել ինձ...
միայն տաղանդը ֆիչ է... ֆիչ... կամ թե լիներ իմ հարսնա-
ցուն կամ ինչպեո երեի լիներու է՝ կինս՝ մի ձեռնահաս, մի
լիքը էակ կամ կարգին մի օջախի գավակ, որ ինձ օգներ
և եո՝ կրկնում եմ, հնար կունենայի էլ ավելի խորը բաներ
գրելու... իոկ հիմա սոփալված եմ մտածել օրվա իմ պարենի
մասին և ոչ միայն իմ... այլև, ինչ ասեմ, դու լավ գիտես...
այդ ձեռ նարած աղջիկը եթե հարուստ է՝ ապա ինձ առնելուց
կփախչի, եթե աղքատ է՝ էլի ինձ առնելուց նետո երկար չի
մնա մոտս ու դա մարդկային հոգեբանություն է... եթե
միայն հանկանա գրականության և իմ հոգեաշխարհի արժե-
քը՝ միայն այդ դեպքում ինքն էլ, ես էլ կլինեմք երջանիկ,
իսկ եթե ոչ—օ՛, բախտ...

Քո եղբայր՝ Զ. Շիրազ

44.

ԻՄ ՍԻՐԵԼԻՆԵՐՄ

Նոր տարու ողջույն ձեզ, նոր տարու մեջ նոր ուրախու-
թյուններ եմ մաղթում ձեզ— Դուք, որ ինձ երբեմնապես
խելք եք խրատում՝ դուք, տա ասաված խելքի գաք և ես
միշտ ձեռ լավը լսեմ, ցնծամ... լավը լսեմ և լավ յիներմ...
երբ դուք կովում եք (իմացել եմ ուրիշներից) եո ես իմ շքի

հետ եմ կոպում... ուրեմն դուք լավ եղեք, նոր տարիներ թող
ուկեպասկով ձեզ խնդացնի, երեխաների ձեռագրերը կար-
դալով ձեզ օրհնեցի, ուրեմն լավ եք խնամում ու դաստիա-
րակում նրանց... ես անպայման կգամ, երեք գալ ամսին,
կգամ և այն աղջկան կաեսենմ... իմ քեֆս լավ չէ, սիրաս
բարխայունով է անհանգիստ... թույլ է.... դուք ուժեղ մնա-
ցեք, դուք, իմ սիրելի հեռավորներս, որ սրախ մեջ եք, դուք՝
Քազրաադ, Գոհարդ, երեխեքր:

Համբույրով ձեր՝

Հ. Շիրազ

Նոր տարի՝ այսինքն 1947 թ.

45.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՐԱՄ

Նոր-նոր լավ եմ դառնում պոեմիս գլխով՝ այսինքն՝ և
իմ գլխով փորձության սարեր՝ որոտալով անցան, լավ է,
որ անցան... բայց գրեթե մոնչալով էի գրել, աեղ-տեղ էլ
հառաչելով, ինչեէ... շնորհակալություն ուղարկածդ հավկիթ-
ների, պանիրի և բրինձի համար՝ մի ասար օր մոռացա օր-
վա պարենի, կա ու շկայի մասին, ապրես, գորանաս, իմ
ավագ եղբայր, այնպես ծանր էի հիվանդացել, որ ամեն
գիշեր լուսինը իմ դիակի դերն էր խաղում՝ ամպերի վարա-
գույրը բանալով... շատ եմ հոգնած և հյուծված, իսկ չդերս՝
խելագար կնոջ խոնված մազերի են նման, և սիրաս թույլ է
զարկում և մայրս անիծում է իր բախար... Ինչպես եմ աանջ-
վում նրա վշաի համար՝ պարզապես շեմ կարող մի կաթիլ
մայր պահել, այո՝ այն լուսամբումնջ աղբյուրից մի շիթ
է մնացել կարծես, այն էլ արցունքն է նրա հասասա, կվը-
կայեմ, որ իմ գրչակիցներից միայն ես եմ վաս ու կես բե-
րան ապրում, բայց նորից ամաչում եմ դիմելու, ուզում եմ
գալ Գյումրի՝ քոջս մոտ սրախ ամպը թեթևանա... որքան
լավ էր նորից լինեիեք մանուկ-պատանի, վագ աայինք,
փախցնեիեք, մինչև օրը կորչեր սարի այն կողմը ու մայրերս
շոյեիեք մեր բոբիկ, ցեխոտ ուները... հիմի հուշերով եմ

ապրում կարծես, մանուկ հուշեր, սիրո հուշեր, և արցունքներիս պես կաթում են երգերս, աչերիս համբույրը մորդ, բալիկիդ ու կրկին մայրիկիդ, մայրը ուրիշ բան է, մայրը ասաված է, մայրը լույս է, մայրը ֆնարից վեր է իսկական բանասանդղի համար ու դու ֆիչես սիրում մորդ, դու մեղֆի մեջես, ես շատ եմ սիրում, ես դողում եմ մայրիկիս դեմֆի դալուկը անենելիս, ես կրծում եմ ինֆա ինձ այն բանի համար, որ չեմ կարող մորս լավ պահել... Հիվանդանում եմ այդ ծանր վշտից ու կատաղում, մանավանդ ես այն կարծիքին է, որ բանաստեղծը (նրան ամենուրեք ասում են իր աստիքի կանայք և մանավանդ իր «տարիֆի» աղջիկները...) մեծ խնդություններով կարող է ողողել իր տունը և ահա մայրս անսալով այդ ձայնը՝ անհիծում է իր բախտը և երբեմն-երբեմն անհիծում է ինձ՝ որ իբր թե ցնորված եմ ինչ-որ աղջկա սիրով և ամեն ինչ՝ տուն ու տեղ, հաց ու ջուր, մայր ու որդի մոռացել եմ և ինչ էլ որ գրում եմ «յարա շի սաղացեն» ինչպես ինֆն է ասում... բայց գիտե՞ս, որ սա մեծ վիշտ է, դժեք է, ընկհող է, այս վշտի ամպի ասկ լինելիս հիշելիս երբեմնապես մոռանում եմ ֆնարս, մոռանում եմ ինֆա ինձ և ցամաֆում են ասես ակունֆները երգիս... Գիտեմ որ վերջը լավ կլինի, բայց մայրս շատ է կուշեկել ու շատ է ուտենու պես դեպի աշնան արցունք-ջրերը թեֆվել, այս է, որ մղկտում է սրտիս մեջ ու միայն ֆեգ եմ գրում այս մտաֆն ահա՝ գուցե առաջին ու վերջին անգամ.

*Մայր իմ, կուզեքի որ քո ձեռքի տակ
 Մանուկ օրերս անվերջ մնային,
 Մայր իմ, կուզեքի քո ոտքերի տակ
 Գային գարուններն ու շֆնային,—
 Բայց, մայր իմ, տենչս մնաց կրծքիս տակ,
 Որ կրկին զարթնի՝ ինձ խոցի կրկին...*

Միշտ ֆո կրտսեր եղբայր
 Հովհաննես Շիրազ*

1943 թ. ամառ
 Երևան

* Այս նամակը ևս Գոհարի թղթերի մեջ է: Նամակն ուղղված է Արամ Գրիգորյանին—Խ. Բ.:

ԻՄ ՄԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ստացա մերս և ինձ համար դրկածդ տան մեջ ման գալու համար այս փափուկ ոտնամաններք. խորին շնորհակալություն, ցավո՛ք սրտի Բագրատին շտեռա, որ մի լավ պատվեի, բայց սրտիս մեջ ե՛ք բոլորդ...

Քո եղբայր

Հովհաննես Շիրազ

Իմ ավագ եղբայր

Իմ սիրելի

Բագրատ

Սպասում էի Գոհարին— շեկավ, ինքս էլ սրտի հիվանդությամբ՝ դալուկ և տրտմետես գամված եմ հավերժական վշտիս ժայռին: Հոգիս սրտիս տղավների նման դեպի քեզ է թռչում, ուզում եմ գուլ և երկար մնալ ձեզ մոտ, իմ հայրենի սուրբ ու նվիրական երկնքի սահ: Ինձ իմ Շիրակը կրուժե, իմ մայրք: Համբույրի շափ շնորհակալ եմ 'նո հոգատարության համար,— էրեկտրական շայնիկի և պլիտայի համար.. կյանքս մաշվեց ծախս ու մթի մեջ— նոր եմ աչք բացել կարծես աշխարհում: Շատ լավ կլինի, եթե Գոհարի հետ մի ֆանի օրով ելնես ու գաս մեզ մոտ ֆանի

ճապաստակ ունեմ, նրանցով ձեզ կհյուրասիրեի և կհանգրտանաս՝ բանվոր մարդ ես ու զայրացած մի ֆիչ էլ... բայց, հույսով եմ, որ Գոհարը խելացի կլինի, և քեզ չի զայրացնի այլևս, քանի որ քո խորհուրդները նահապետական սրբությունից են բխում և կոպում են կյանքի շարիֆի դեմ... ա՛խ, ինչքան բախտավոր կլինեի որ միամիտ մարդ լինեի, այսօր ծանր վշտերի մեջ չէի խորասուզվի ու ֆնարս էլ, որ նոր հրաբուխ կժայթփեր... գալու շափ խնդրում եմ նա իր Գոհարից և մի ֆիչ էլ քեզից՝ լավ եղե՛ք ու լավի օրինակ տվե՛ք երեխաներին ու ինձ... Գոհար, արի ու գնա՝ ինձ էլ հետդ տար իմ մորս — Շիրակի գիրկը...

Քո Շիրակ

48.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂՍՐ

Ստացա նամակդ. ների, որ ուշ եմ շնորհավորում ձեր նոր տարին: Հիվանդ էի, մրսել էի... այժմ լավ եմ, բայց մտատանջվում եմ բախտիս համար... ուրախ եմ, որ ուզում ես մտածել իմ մասին, բայց իմ ուզածը եթե չլինի՝ չեմ տմուսեանա՝ թեկուզ տատվածունի լինի. իմ կինը պիտի լինի ամենից առաջ խելացի, որը գլխավորն է՝ ինձնից էլ խելացի, — կար մի աղջիկ (Էմման գրեմ...), բայց լսեց բաժնաճանապարհի և համ էլ փոքր էր ինձնից և մինչև այժմ տվալանում եմ այս անհաջողության համար: Բայց միթե էմման քեզ ոչինչ չի ասել, կամ միթե իրեն գրածս նամակները քեզ չի ցույց տվել: Ինչու կարծում ես, որ մի թեթևամիտ երջանիկ եմ, և չեմ ուզում կարգավորել իմ այժմյան ռոտմեի կացությունը... սխալ ես ե՛ր, և՛ դու, և՛ բոլոր նրանք, ովքեր մեղադրում են ինձ... ես տարված եմ իմ մուսայով, իմ միակ աստվածությամբ, որը իր միակության միայն հավասար է իմ ծնող ազգին: Եվ ահա երկար ժամանակ է չեմ կարող նարել իմ ուզածը՝ մի այնպիսի աղջիկ, որ ինձ հասկանա և մտներ ոչ թե գիրկս այլ սիրտս... այլ սրտիս խորքը, սրտիս սիրտը, ինչպես ասում է ինձ նման դժբախտ Համլետը:

Քո՛ Շիրակ 2.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Իմացա և շատ տխրեցի, որ հանգիտ չես թողնում էն աղջկան... Ես նրան առնողը չեմ և ուշ է, ուշ ու մշուշ է իմ մնացած փշալից կյանքի դաժան այս մշուշում ուշ է, ուա՛շշ...

Համբուրում եմ ուշադրությունդ, բայց ուշ է, դու իմ ուզածն արա, իմ կենսագրականն հասցրու... ուշ է...

Հասցրու՝ ասում եմ...

Հովհաննես Շիրազ

Մեղք է էն աղջիկը, հույսերով մի շոյի՛ր հեռավոր հոգին...

Է Մ Մ Ա

Ստացա նամակդ և շատ գայրացա, ախր ինչու՞ իմ սրտի հետ չեմ գնում... Ինչու՞ եմ իմ բախար կապել ուզում ինձ նման մի տխրաբախտի հետ: Ես չե՞մ ասել, որ չխոսեմ այն Ռ-ի հետ իմ անունից... եթե քո գլուխը խելի չունի, միթե՞ անխելի է նաև մայրդ...

Գրի՛ր Անահիտի մասին՝ ավելի պարզ, ուղարկի՛ր ինձ նաև այն անսառազի՛ր նամակը, այդ գրած կլինի.... ձեր բնորած հարսնացուն, նա ինձ ասաց, որ «կլար-մլար չկա, այլ էմման քեզ է սիրում»:

Այս խոսքերից պիտի եզրակացնեմ նրա (այդ Ռ-ի), խելի՛ ու մանավանդ բարոյականության, խղճի կշիռը.... շափր:

Գրի՛ր Անահիտի մասին, նա այլևս չի գալիս մոտս... գրի՛ր ամենը...

Հ. Շ.

Հ. Գ.

Եթե իմացա, որ այն ախմար երգչուհուն նամակ ես գրել՝ այլևս անունս չտա՛մ բոլոր-բոլորդ.

Նույն

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ահա Վիլիկը գալիս է: ԱՆՁԱՄԲ և անձամբ ինքդ հետը կգնաս և մանրամասն ինձ կգրես, թե ինչպես է լինելու նրա (Վիլիկի) օրն ու ապագան, եթե իրոք պիտի լավ տրակտորիստ դառնա և իր գլուխը պահի այնպես, որ սրտերս հանգիստ մնա՝ թող ուրեմն մնա այդ գործին... ուշի ուշով նաև հետևիր, թե որտե՞ղ է գնելու, ո՞վ է հաց ապու և այլն. Եթե նկատես, որ տղան փչանալու է և պտուղ չի տալու՝ իսկույն կամ այլ գործի դրե՛ք այդտեղ, եթե ուզում է, կամ անմիջապես ետ ուղարկիր...

ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ստացա նամակդ. Պետյանին գրածիս հետ քեզ էլ էի գրել. կատանաս, բացի դրանից մի քանի օր էլ առաջ՝ էլի էի գրել— ինչու համար ես առել այդ ֆայկա կոչվածը, երբ քեզ հրատապ հապենպով փող էր հտրկավոր... ես զարմանում եմ ձեր խելի վրա... իսկ ինչպե՞ս վերջացավ այդ խելագար պատմությունը, որ մինչև օրս իմ էլ սիրտս ակնկոծում է և մտքերս թոցնում դեպի քեզ, դեպի քո լալահառաչ բախտը... նամակիդ այս (...) անգամվա ռեն ու խորհրդ ինձ վրա հանդարտություն բերեցին, բայց խնդրում եմ ֆայկեն ծախես և փողը տաս պարտիզ՝ ում որ տալու էիր, ես նամակ եմ գրել նաև Հովհաննես Բաղ-ին և բավականին մեղմ ու խորը կշտամբել եմ նրան, որ իմ քոջս լավ չի նայել... չի պաշտպանել նշմարտությունը, որը սպիտակ մի անմեղ աղավնու նման նակատագիրը գցել էր խորամանկ... աղվես— անգղի ճանկը, ես սրեմն այժմ էլ խնդրում եմ, որ դու, Գոհար, զնառ ֆաղկոս և հենց Արմոյի և Հովհաննեսի մոտ և խնդրես (ես էլ գրավոր խնդրել եմ), որ քեզ լավ գործի դնեն... ես շուտով կգամ, հիվանդ էի՛նք և ես— գրիպով

և մայրս— գրիպով և Արան— գրիպով... հիմի ես փչ լավի
եմ դառնում և միտ ունիմ մի երկու պոեմ մշակել ու գալ
մոտդ: Արամին ևս գրել եմ և խնդրել, որ օգնի... բայց թեր-
մաշը քանի անգամ եկել է Երևան՝ մեր աուն չի եկել, մո-
րիցս վախենում է թե ինչ, չգիտեմ.

Բարևներս բոլորիդ.

Քո՝ Օնիկ

Բժշկանու բժշկանի աղջիկը
ինձ բանի տեղ չդրեց...
Ոչինչ, ես կհիվանդանամ՝
ուզի-չուզի բանի տեղ կդնի
այն ժամանակ...

(1948)

Նույն

նամակի շարունակությունը՝

ՄԱՐԴԸ ԾԱՂԻԿ Է.

Մարդը ծաղիկ է քաղում...
Համբն է, որ միշտ նրկինք ելած
Գարնան գոգքն է գեղգեղում,
Չի խառնվի համբք նրդեք
Չար ու բարին աշխարհի,
Եվ թե պատ է պաղիտ մեկ մեկ՝
Նա մեզ շարիք չի բերի,
Սվ ով կարող է արծվից
Գեթ մի փետուր բերել պատ.
Նա է նրկինք [անհատի] հատարում
Ով թևավորված է ծնված.
Բանն էլ այն է, որ արծվի պես՝
Բայց առանց թև դարձրանա,
Մտքի թևով թևեր առնեա,
Նա է նրկինքի տերն անհատուն:

Ահա այդ նամակները.

ՄԵՍԱՐԳՈ ԸՆԿԵՐ ԱՐՄՈ ՀԱՐՆՆՑ.

Թղթաբերս փոյրս և իբ որդին է՝ իր հետ, խնդրում և թախանձում եմ միջամտե՛ք որդուն՝ Վիլիկին ընդունեն կարնային տեխնիկումում սովորեցաւ... Փոքր ինչ ետ է մնացել՝ մերժել եմ... Ուղղակի մեծ վիշտ է թողնել այդպիսի պատանան «իբ գլխի տեր կատվի» բախտին... ես հայտով եմ, որ եթե կամենա՛ք, նա կընդունե՛ի և վերջը մաքր կդառնա՝ իբ բախտի և մեր հայրենիքի համար, սովորեցով թե՛ արհեստը և թե՛ գիտությունը: Մայրը խեղճ է և չի կարող գրուխ բերել: Հույսով եմ:

Բարենկերով՝ Հ. Շիրազ

[1948]

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Թղթաբերս փոջս պատանի որդին է: Խնդրում եմ միջամտես նրան տեղավորել այնպիսի մի տեղ, որ արհեստ սովորի, շատ է սիրում մեխանիկ կամ տրակտորիստ դառնալ:

Հատուկ խնդրում եմ զբաղվես և բանաս նրա բախտի նախապատե՛ք, այնպես որ պիտանի մաքր դառնա և ֆեզ իմ բեռանով օրհնի՝ երբ ամեն անգամ նստի իբ արդար հացի սեղանի առջև...

Շատ խոստումներ ես արել, չես կատարել, այս իմ խնդրանքը՝ թախանձանքը կատարիբ հայրենասիրությամբ:

Բարենկերով՝ Հ. Շիրազ

1948 թ.

աշուն

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԿԵՐ ՄՈՎՍԵԱՅԱՆ.

Շատ եմ խնդրում փոջս որդու բախտով զբաղվե՛ք և նրան ընդունե՛ք ձեր ուսումնարանում սովորելու... նա ըն-

դունակ տղա է և նրանից լավ մարդ դուրս կգա՝ եթե տոայծմ
ներե՛ք նրա «թերի» ուսումը:

Ուղղակի խնդրում եմ:

Բարևներով՝ Հ. Շիրազ

56.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ.

Իմացա, որ դու ևս վիրավորված ես շգալուս պատճառով՝ ոչինչ, եթե բուն պատճառն իմանաս՝ կներես, մարդ ես, այնպես որ բուրիդ համբուրելով՝ սղջունում եմ էմմայիս ոսկե նշանդրե՛ք և հույս եմ հայտնում, որ հարսանիքն առանց իր ոչ ու փուչ ֆեռու չի լինի...

Ձէ, չի լինի: Կգամ:

Ողջույներովս՝

Հովհաննես Շիրազ

57.

ԻՄ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ

Սիրելի հանդիսականներ, երանի եմ տալիս ձեր աչքերին... Արդեն ինձ հասկացա՛ք. մայր բնությունը, որ միշտ իմ նկատմամբ բարի է եղել, այս անգամ չգիտեմ ինչու շարացավ, այսինքն՝ անկախ ինձնից չպիտի կարողանամ մասնակցել այս հանդեսին, որին ներկա եմ հոգուս աչքերով: Բայց ինչ էլ ասեմ, էլի տողերիս տակ վիշտս տեսե՛ք, որովհետև անպայման կուզե՛նայի ներկա լինել իմ շֆնաղ ֆրոջ դասեր էմմայի և Հրանտի պսակադրությանը: Բայց անավերցնում եմ երկու բաժակ, որ ըմպեմ երկու ծաղկի հավիտենական կենացը: Մարդը հավիտենական չէ, բայց սերը պիտի հավիտենական լինի: Թող այդ ցմահ սիրով ծաղկեն մեր սիրեցյալները...

*Իմ բալիկներին, որ կյանք են մտնում,
Երկար ու երկար կյանք եմ ցանկանում,*

որ անանց դարձի.

ծաղկեն մի բարձի,—

Սուրբ մնան ինչպես պատառն իմ հացի.

Մնված ու սնված անարատ կաթով՝

Միշտ այնպես ծաղկեք հայոց աղաթով,

Որ միշտ վառ պահեք օջախը պատվի,

Որ մեր անունից մի մաս չպարտվի...

Որ անխախտ մնա տունը բերկրանքի,

Սուրբ ընտանիքը՝ սյուն հայրենիքի,

բացվի թոռներով,

լցվի ծոռներով,

Ձեր տունը դառնա պարտեզը կյանքի:

Վիշտ, ուրախություն, փորձություն, տանջանք,

Կգան ու կանցնեն կյանքում քանի կանք,

Բայց պիտի կիսե ծաղիկը ծաղկի

Երջանկության հետ վշտերն էլ կյանքի

Իմ ծաղիկներին մաղթում եմ հույսով,

Որ միշտ մի բարձի ծաղկեն երկուսով,

Միշտ բարձր պահեն ինչպես Արազած

Հայոց սրբությունն ու սերը ծաղկած:

Ինչ վատ ենք տեսել՝ նրանք շտեսնեն,

Իմ երկու ծաղկի ցավը տանեմ ես,

Ինչ լավ ենք տեսել՝ ավելին տեսնեն,

Իմ երկու ծաղկի ցավը տանեմ ես,

Իմ երկու ծաղկի,

Իմ սուրբ Շիրակի,

Իմ հայրենիքի ցավը տանեմ ես...

Հովհաննես Շիրազ

58.

Երբ դու մեռար, ա՛խ, այն օրից

Աստղերը լիքն են վշտերով,

Ձի անցնում մութն իմ աչքերից

Իմ սիրտը լիքն է վշտերով,

Մենակ ես չեմ լալիս վշտից,

Անտառը լիքն է վշտերով,
Զի անցնի վիշտը իմ աչքերից
Ու ժայռը լիքն է որբանով,
Լիքն է վշտով սիրտը ծովի,
Իմ սիրտը լիքն է վշտով
Լիքն է վշտով սիրտն էլ արծվի
Եվ հողիս լիքն է վշտով...

59.

ԻՄ ԱՆԳԻՆ ԳՈՂՆՐ

Գրի՛ր, թե ոտացար նամակս և ինչպե՞ս ես և խորհուրդ
սրտանց կտաս զնամ Մոսկվա վշտերս ցրելու և կյանք ու
մտքերով լցվելու: Եթե զնամ մեկ-մեկ կգաս մորս մոտ, թե
ինչպես...

Թ՝ Շիրազ

1951 թ.

Երևան

60.

**ԻՄ ԱՆԳԻՆ ԳՈՂՆՐ,
ԻՄ ԱՆԳԻՆ ՔՈՒՅՐԻՆ**

Ստացանք նամակդ. ուշացրի նրա համար, որ մեռած
եմ ու թողված չեմ... Իմ մանուկ ու խելագար բնավորու-
թյունը ֆեզնից, մորիցս, Մանիկից, բուրբիցդ, բուրբից, աչ-
խարհից խլեց ու ծածկեց իմ բարի, իմ խելով, իմ հանճա-
րեղ սիրտս ծածկեց, վարագուրեց իմ դժբախտ բախտից և
այժմ կհավատաս, թե ինչպես է խոցվել սիրտս... Վիլիկիս
մահով և սիրտս հագիվ լավացել էր կարծես՝ բայց սև ճա-
կատագիրը իմ կրճիցս երկու սիրտ պոկեց --- թող, չեմ ուզում
խոսել. . դու որ նրա մայրն էիր՝ դու էլ ինձ չես հասկանալ
եվ սրտիս ֆեֆշությունից է, որ գրական բախտս էլ այսպես

կոխարանում է: Այդ մահով մեր տունը սև է հազել, մահացել է: Ձե՞ որ ծաղիկ էր դեռ և այն էլ ինչ ծաղիկ: Վայ գլխիս, իմ անուշ փուլիկ ջան. մեծ մաքդ դուրս չեկա, որ գեթ մի բանով շայեք վիրավառ հազիդ, խոսես էլ արցունքոտ է ու արցունք կրեի և չգիտեմ ինչու ես իմ գլուխս ծարավել եմ... գուցե հենց դա է սրտի խելագարությունը:

Քեզ վրա շատ նեղացած եմ: Եթե դու իրավ հեռուն տեսնեիր՝ այս անավոր վիշտը մեր տան վրա չէր գա, կծաղկեր Վիլիկը, և ես իրավ մեծ բանաստեղծ կդառնայի՝ մեջս կար... մնաց մեջս և ինչ որ գրել եմ, դաշտի ծաղկի պես է բացվել ինքն իրան... բայց գլուխո՛ւ ֆարը, դու լավ եղիր, իմ որտի հաաորիկս, իմ դժբախտ սրտի պատկեր: Լավ նայիր մրնացած երեխաներին, և մի՛ կուտրո՞ւ սիրող նորից կուտիր... այս անգամ էլ չի կորչի... ինչպես անտ իմ ոիրտս, և մի՞թե, իրավ, ես այսֆան սիրեմ էի իմ Վիլիկին...

*Քրոջս հողից իմ հողում
Քեզ տնկեցի ու ցողում
Մնում էի քո պողիս,—
Բայց... պողեցիր սև հողում:*

Եվ այժմ, ինչ մտրում եմ՝ արցունք է, ինչ գրում եմ՝ արցունք է: Թե իմանար, թե իմանար՝ չէր գնա,— չէ և այլևս չեմ կարող ուրախ բան գրել. և դա ինձ համար մահ է— կրկնակի: Տունն էլ պահող չունեմ, որ գլուխս առնեմ, կորչեմ: Սիրտս կարատավում է, որ ատենում եմ Մանկիկն... երեխեքեք վրան բեկած ու շեմ կարող նշույլ օգնել... թաղեմ բանաստեղծի անունն, բնույթս խանգարեց ինձ, անկեղծությունս:

Քույր ջան, գլխիդ մեռնիմ, ինձ ներիր, որ սիրող ցավեցնում եմ, և այլևս մի խռովի, որ չեմ գրում քեզ... ինչ գրեմ, ինչպես գրեմ: Սիրտս մոզիաում էր, որ Տելոյին գրեթե մերկ էի բերել մոտս՝ ձմռան ցրտով: Նրա բախախն էի զգել մի պոեմիս տպագրումը... և հեռուսարք անա ուղարկեցի, որ գտնե մի լավ վերարկու առնես նրան և քոզը: Ոչինչ, Տելոն կարծես թե բախտավոր պիտի լինի՝ հենց որ նրա բախտը զգեցի՝ պոեմս իսկույն տպվեց:

Ախ, Վիլիկ ջան, վախ, վախ, վախ, մեռնեմ մանուկ գե-
րեգմանիդ, ով կոպասեր ֆեգանից, կանաչ կարիչ բալիկ ջան,
այո ինչ արիւր ֆեզ ու մեզ, ի՞նչ, ի՞նչ...

Ուրեմն թող թֆեմ մայր բնություն կոշվածի նակատին,
որ ծաղիկս պոկեց սրաիցս: Չգիտեմ ո՞ւմ կսկորդից բռնեմ,
գոնե մի բանի, մի նշույլ լավ բանի համար ընկած լինե՞ր,
գոնե զոհված լինե՞ր գեթ թեկուզ մի ծաղիկ հասակի հա-
մար, էլ չեմ առում Հայրենիքի...

Այդ էլ է սիրաս տանջում: Եվ հիմի ինչ որ գրում եմ—
տողերիս տակից Վիլիկիս լացած աչերն են ինձ նայում ու
քրջում քնարո.

*Արազ, տակդ մի փորե,
Առանց այն էլ նա խոր է,
Բալիս տարար, ա՛խ, Արազ,
Սիրտս քեզնից պղտոր է:
Վարդ ու թփիդ շաղիկ էր,
Բալես ափիդ ծաղիկ էր,
Նոր էր սիրում, ա՛խ, Արազ,
Մատաղ սիրտը դաղիկ էր:
Դեռ չսիրված՝ կորավ նա,
Սիրտս ինչպես մոռանա,
Բալիս ետ բեր, վա՛խ, Արազ,
Արազ, լուսդ քոռանա:*

Էլ չեմ կրնա գրե, սիրտս վերք է, սիրտս փուր է ուզում, գթու-
թյան համբույր, մի նեղացիր ինձնեն, աչքերիդ վրա մեռնիմ,
փուր ջան, բալիկ ջան, Գոհար ջան, էս տողը Վիլիկովդ
վերջացնեմ.

*Բալիկ, մատաղ քո սոյին,
Ես դիպնեի ավտոյին,
Այս ինչ արիւր, ո՞ւր թռար...
Ես մեռնեի քո բոյին:*

Մի վերջին էջ էլ էլի Արազի նետ լամ.

*Ես չեմ քաղել քո լալեդ,
Ես չեմ թաղել քո բալեդ,
Իմ լացս լաց, վա՛խ, Արազ,*

Քիչ է լացդ խնդալեդ՝
Համբույրով՝ Վիլիկին գրկած պառկած այնտեղ
էլ քո եղբայր՝
Օնիկ
1951 թ. ձմեռ

61.

Մնվել էի մեկուճար
Քույրս ախպեր տվեց ինձ,
Այն էլ, ավաղ, բախտը շար
Ջարկեց, խլեց իմ գրկից՝
Հիմի նստել՝ ծով կուլամ
Գերեզմանին նորածիլ,
Քույր իմ, էլ քեզ ինչպես տամ
Քո դրախտից գեթ մի խիլ՝
Թե քեզ երգով սփռփեմ,
Ով ինձ՝ ինչով սփռփի,
Վիշտս ծովով կչափեմ,—
Դու էլ ծով ես, մի խաբի՝
Բզկտվում ես ծով ցավից,
Ցավի ծով ես լուռ-բերան,
Քույրս ախպեր տվեց ինձ՝
Ինձ էլ նրա հետ կերան...

2. Շիրազ

62.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ստացա նամակդ և շատ ուրախացա, որ հանգստանում ես ու բուժվում, եռ էլ եմ ուզում ունատորիայի նման մի ծաղկալից ու խաղաղավետ վայր գնալ՝ փախչելով թե՛ շոգից, թե՛ դժնաշոգ գրական նախանձների աչքերից: Մայրիկս, ինչպես դու գիտես, ուզում էր գալ այս ամառ մոտդ, բայց

Երբ իմացանք, որ քաղաքում չես՝ տրամեցի՞նք ու հիմա սպասում ենք գալուդ: Վաղուց է, որ մայրս ծարավ է իր ծննդավայրին, շատ է փոխվել և այնպիսի բաներ է ցնորարանում, որ եթե իմանաս՝ կամ վշախց կխելագարվես կամ ծիծաղե ու լացդ իրար կխառնես: Այո՛, նրան շատ է հարկավոր հանգիստ ու էլի հանգիստ: Շատ է կասկածամիա ու ինձ էլ սնում է այդ թույնով: Կարծում եմ, որ ծննդավայրի օդն ու ջուրը և մանկության վայրերի հուշերի շշուկները մայրիկիս և ինչպես ինձ էլ՝ կմեղմեն... ա՛խ, ուր էր թե մեղմեին և իմ մրրկալից մտերև ու կարոտները՝ մենակությունը, այսինքն՝ այն, սր հոգերնեկեր կին շունիմ՝ ինձ էլ խելից հանում է ու մորս օրին գցում: Չեմ գտնում մի լավ աղջիկ ու գտնող էլ չունեմ կամ ունեմ ու չունեմ: Մայրս ծերացել է, էլ չի կարող ինձ այնպես նայել, ինչպես առաջ: Դուրս էլ հագիվ ձեռ գլուխն եմ պահում, մեռում եմ ուրեմն մենակությանս մեջ կրկնակի մենակ: Այլևս աղջիկներն ինձ չեն հավանում, նյութապես աղքատիկ եմ, հոգեպես խելառանման, մայրս էլ ինձնից դժգույն ու անցած, էլ՝ ով է խելագարվել վրաս աչք գցելու համար: Միով բանիվ՝ լավ չես դառնում բախտիս անիվ... Մանիկը եկել է, այո, նա էլ է խեղճ, նա էլ մի նախանձելի վիճակի մեջ չի, նյութապես ավելի վատ ու վատթար է, քան ես ու մայրս: Սիրաս նվկում է, որ չեմ կարող օգնել... Սիրտս ուտում եմ, ծամում, որ նրան այդպես եմ տեսնում— հեշտ չէ երեք երեխա պահելը, ինքը մենակ, անօգնական: Ու սիրտս ցավում է ու սիրտս այդ վիշտը խառնում է աշխարհի վշտին ու որպես թույն խմում եմ, խմում ու էլի չեմ մեռնում... Հապա քո վիշտը, և ապա իմ գրական սև հակատագիրը կրող նախանձոտ վագրերի որոգայթներից ծնված վշտերը, հապա այն վշտերը, որ հոտոտում եմ գալիքիս՝ դողալով մարդկության գալիք տանջանքների համար, ու կատաղի ատում եմ պատերազմը— այդ դժոխքը վանում եմ աշխարհից, երազներիս մեջ անգամ: Մտիցս տաք արյուն էր գնում Կորեայի համար. Փառք սակայն խաղաղությանը: Հաղթեց... Բարևներով համբույրներ՝

Հ. Շիրազ

[1952]

Հայրս տեսավ հայկական
 Կոտորածներն ահավոր,
 Եվ աչքերում իր մուրր
 Գերեզմաններ կան այնքան,
 Որ թարթիչներն իր բուրր
 Ահից ծոված ու մուրր
 Խաչերն էին՝ խրված խեղճ
 Հորս և իմ սրտի մեջ...

2. Շիրազ

64.

ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ստացա նամակդ և շաապեցի ուզածդ կատարելու, հե-
 ազրով ուղարկեցի երկու հազարից վաթսուն ուրբի պա-
 կաս ... որպեսզի ոչ միայն քեզ համար, այլև վերաբերու գնես
 Տելոյի համար: Այժմ իմ դրուքյունն էլ այնքան նախանձելի
 չէ, թշնամիներս վխտում են շուրջս և ինչ որ գրում եմ, չեմ
 կարող ժամանակին տպագրել տալ... Բացի այդ, հոգե-
 պես էլ եմ ընկնվում ու մուտայիս մեջ արծիվը դառնում
 է կուչ եկած մի թռչնակ: Խնայդրամարկում ունեցածս ըն-
 դամենը մնացել է շուրս հազար յոթը հարյուր ուրբի — սա է
 իմ և մաբս «եբկար» հույսը՝ մինչև մի հոր գիրք հասցնելս...
 հավաաս, որ շատ եմ ուզում օգնել և՛ քեզ, և՛ մանավանդ
 կիոաթշվառ Մանիկին, բայց սրտիս շափ բախտն ինձ չտվեց
 ինչպես գիտեո... այս բանը ծանր վիշտ է: Առաջվա պես
 այլևս չեմ կարող արադի նման ծոր ապ, սիրտս թուլացել
 է, վշտերս են երկերի տեղ հորդանում սրտիս մեջ և բախտիս
 նանապարհների վրա: Ինչ վերաբերում է ամուսնանալուս՝
 ուշ է... ուշ է, ավա՛ղ, ուշ է այլևս:

Քո թշվառ եղբայր Օնիկ

1953 թ.

ՈՂՋՈՒՅՆՆԵՐՍ ԲԱԳՐԱՏԻՆ,
ԷՄՄԱՅԻՆ

Ինչպե՞ս ես սիրելի Տելո

Խաբլան ես, խաբլան, ինչու խոստացար նամակ գրել,
բայց չես գրում: Գասերդ լավ սովորիւ ե գրեւ կարդա նակ
դասերիցդ դուրս, իմացիր, որ լավ, նույնիսկ մեծ մարդ ես
դուրս գալու... վայ քեզ, եթե հույսերս քամուն տվիր, էլ
ինձ համար Տելո չես...

Քո ժամանակը ոսկի է այժմ, իմացիր ծախսել այնպես,
որ ապագայի քաղցր պտուղ տա— այսինքն հիմա ես սո-
վորելու խելաւի պես, այլապես մարդ չես դառնա:

Քո քեռի

66.

Վաշտ ու սարի ձունն հալվելիս*
Վառվող սրտիս ջուր չի բերում,
Գարունն հազար ծաղկով գալիս՝
Իմ մի ծաղկից լուր չի բերում,
Հազար բուրմունք է շաղ տալիս՝
Ինձ գեթ հույսի բույր չի բերում...

Հովհաննես Շիրազ

1953 թ.

67.

ՍԻՐԵԼԻ ՔՈՒՅՐՍ
ԳՈՀԱՐ

Ահա ստացա քո երկրորդ նամակը ե Մուշեղի հողվածը
գրքիս մասին՝ «Բանվոր»-ում շնորհակալ եմ ուշադրությանդ

* Սա համարիւր պատասխան քո ոտանավորին:

համար: Ես այն կարդացել էի: Լավ է գրել, որտանց և անկեղծ, ո՛չ երկինք է հանել, ո՛չ անդունդ է գցել:

Մարդավայել բան է: Ես քեզ հազար և ինը հարյուր էի հինգ-վեց օր առաջ դրկել՝ ստացա՞ր, թե ոչ: Մերոնք լավ են, բարեում են բուրբիդ:

քո եղբայր

Հ. Շիրազ

68.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԷՄՄԱ

Այն ինչ է, ոչ մի նամակ չես գրում ինձ. ինձ չե՞ս սիրում, թե հավատ չունես. հեշ չես ասում թե քեզ ունիմ, լուր է և Տելոն: Ես չեմ գրում նրանից, որ երբեմն տխրում եմ, իոկ հանախ մեծ վշտի մեջ եմ, մաքից ու որտից չի հեռանում Վիլիկո, աչքերն թե չորացել են, բայց որտի հազարավոր աչքերը լաց ու արցունքով լիքն են... և ահա չեմ ուզում ձեր մանուկ որտերն էլ կոտրել... Դուք լավ չգիտեք, թե ինչ տղա կորցրինք, թեև քո եղբայրն էր, բայց իմ տղան էր, իմ հոգեորդին, մեկ չէ, քո չո տղան թե իմը... և կորավ, այն էլ քան տարեկան հասակում, էլ ինչպես այժմ քիրտո մաղիկ-մաղիկ չըլա. մայրդ չգիտե, բայց Վիլիկիս մահով մոտեցվեց և իմ... մահը, այդ քո վշտից թույլ սիրտս հիվանդացավ ու... բայց չեմ ուզում իմ վշտերով վշտացնել այս աշխարհում ոչ-մի. հավատացեք, որ այդ է բուն բնավորությունը՝ այսինքն՝ թաքցնել իմ ցավերս... այդպես էի և մանուկ հասակիս մեջ, Գոհարը գուցե կհիշի ավելի լավ քան ես ինձ: Եվ եթե այժմ ես ո՛չ քեզնով, ո՛չ էլ մանավանդ Տելոյով եմ ձեռնադրեմ հետաքրքրվում ու զբաղվում՝ նրանից է միայն, միայն նրանից, որ վախենում եմ, սիրտս ահ է ընկել... չգիտեմ հանկարգ միտքն թե ոչ: Այսինքն ուզում եմ անել, Վիլիկին եթե ինձ մոտ չպահեի՝ գուցե մոտ մոտ մնա և այդ դժնի աղետը չպատահե և հիմա խիղճ, թեև անմեղ, բայց խոցված, կիռամորթված եղնիկի պես բառաչում է ու հառաչում իմ սրտիս բուրբ կաժանե-

րում, բոլոր ծալեքում. և այժմ ձեզնից այնպես եմ վախե-
 նում, որ ինձ թվում է, թե դուք բյուրեղյա-ապակյա բաժակ-
 ներ եք ու եթե ձեռք տամ-կվշտվեմ... Բայց դուք իմ հոգու
 մեջ եք, իմ հոգուս մեջ, իմ օրտի օրում: Ես շատ եմ տանջ-
 վում, որ ձեր այս ֆեռի Հովհաննես Շիրազը հաճախ չի կա-
 րող ձեզ օգնել նյութապես... անուս միշտ ականջիս է դիպ-
 շում, բայց փող շատ ուշ-ուշ է ձեռքիս դիպչում... ու բուռ-
 րից դադանի, գրեթե իմ գլխից էլ գաղտնի՝ լալիս եմ սր-
 տիս մեջ այդ վշտի մտքին ևս, լալիս եմ Գոհարիս համար,
 որ իսկական մի Գոհար էր, շատ շնորհալի մի աղջիկ, որից
 ինչքան հիշում եմ մանկությանս օրերից, շատ մեծ նկար-
 շունի էին սպասում... բայց էլ ի՞նչ գրեմ... ուզում եմ մի
 ֆանի խորհուրդներ տալ, որքան կարող ես, ինչպես ծաղի-
 կը, համեստ ու պարկեշտ եղբ, ծնողներիդ այնպես լսիր,
 ինչպես զառներն են լսում հովվի արհնգի երգը, մի լսիր ևս
 զարթնացող օրտիդ, լսիր ծնողներիդ բազմափորձ խելիք...
 դու, և մանավանդ Տելուս, նրանց, իմ և հայրենի երկրի հույսն
 եք, եթե միշտ, ամեն վայրկյան այս խոսքերս օղ անես ական-
 ջիդ, հույսերիս ծիրը կժողկի կապով: Վատ ընկերուհիների
 հետ ման չգաս երբեք, իսկ տղաների հետ—երբեք, դու այն
 հասակիդ մեջ ես, որ թեև հույնիսկ այս խոսքերս ու իրա-
 վունք շունիմ գրելու ֆեզ, բայց սիրտը չի համբերում, ֆո
 ապագայի և մանավանդ Տելույիս ապագայի համար է մաա-
 ծում իմ անապագա վիշտ... երբ մայրդ մի խոսք կասի, հաշ-
 վիր, որ ֆեռիդ է ասում, որովհետև մի մայրը հազար ֆե-
 րի է հույնիսկ: Կիմայից նամակ ստացա նորից, նա գրում
 է, որ դու և ինքը գալու եք մասս, գրիր թե երբ եք գալու...
 Այդ աղջկան ես չեմ անտել, նա արդեն երկու երեք տարի է
 ինչ ինձ նամակներ է գրում— խիստ մանկամիտ նամակիկ-
 ներ. ձեռագիրն էլ մանկածեռ. նամակներից երևում է, որ
 շատ մառադ աղջիկ է, ֆեզ նման և ինձ իր մտքում, թե
 օրում եղբայր է ընտրել հեռվից-հեռու, դեռ շատե՛ս, գրով,
 անա այդ աղջիկը, եթե լավն է, բարի է, մաքուր է, և մա-
 նավանդ եթե խելացի է, ոչ խորամանկ, բող լինի ֆո լավ
 ընկերուհին, իսկ եթե խելով չէ, հարկավոր չէ, նամակները

այնքան կարն են և մանավանդ այնքան ծանծաղ, որ ես
 առանց երեսը տեսնելու կասկածում եմ, որ շատ խելացի
 աղջիկ լինի— տա աստված, որ իմ տյա կտսկտծանք միայն
 տնտեսությունն ունայն կասկած լինի: Այսինքն, եթե իրավ
 լավ է ֆուրիկս, Գոհարը և Բագրատը հավանել են տպա
 դու էլ հավանիր: Իսկ եթե ոչ տպա շտապ կարգով խրնդ-
 րում եմ, որ տյլևս հետը շխոսես, և միևնույն պտհին ինձ
 էլ գրիր, որ ես տյլևս նրա նամակներին չպատասխանեմ:
 Ինձ գրիր նաև թե ինչպե՞ս եմ սովորում ձեր բոլոր դասերը,
 մանավանդ ինչպես է սովորում Տելոն, շնորհի ունի, թե ոչ,
 խելո՞ք է, թե ոչ, և ամենից գլխավորը՝ առո՞ղջ է... կարծում
 եմ (?) և մազթում— տյա... Շատ եմ կտրոտել իմ սուրբ
 ծննդյան վայրի, իմ սիրտս այստեղ չէ, սիրտս ձեզ մոտ
 է անվերջ, իմ Շիրակի մեղմիկ դաշտերում է, իմ Ալագյազի
 արծիվների թևերի տակ է, ուզում եմ գալ, բայց փող չու-
 նեմ, իսկ շեմ ուզում բեր լինել հարազատներիս: Մանա-
 վանդ, որ խելագարության շափ շոայլածեո եմ, ձեռս բաց
 է արտիս պես, ավելի նիշտ, ձեռս բաց է, որովհետև ոիրտս
 է բաց. տվե՛ք ինձ հագար, իոկույն շող կտամ իմ խղճի
 պես. ուրեմն լավ սովորիր և մանավանդ տյա խոսքերն ոսկի
 օղ արա Տելոյիս անանջին, իսկ ֆո ականջին՝ տրծաթ, լավ,
 ուշի-ուշով սովորե՛ք, պարկեշտ մեացե՛ք, ապագան ձերն է,
 մեր մեծ հայրենիքի սուրբ ու լուսափայլ ապագան ձերն է,
 այսինքն իմ հույսերինը, որոնք նաև ձեզնով են ծողկելու

Համբուրում եմ բոլորիդ՝

Երախտարախտ

Կիոտառադանդ Բեոի Հովհաննես Շիրազ

1953 թ.

ապրիլ

Իմ պտշտելի Գոհար

Աղտշում եմ... հիշիր Վիլիկիդ, հիշիր և աղտշիր, որ Տելոյիդ
 հեռու պտհե՛մ այդ բոլորիդ աննշտ ձվոտ կոշվտծ շտրտ-

գուշակից, աղաչում եմ խեղճի երեխան...

Աղերսում եմ, հիշիր Վիլիկիս ողբերգուկանը...

Հ. Շիրազ
Երևան

70.

ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Սաացա նամակդ: Իմ մասին ինչ գրեմ, ես լավ եմ, բայց շատ են դժվար դասերը՝ լեզուն կիսով չափ գիտեմ, կյանքի լեզուն այլ է, ավելի հասարակ ու հասկանալի, բայց այլ է այստեղ՝ գրականության, փիլիսոփայության մասին խոսելիս, դասախոսելիս, նոր-նոր բաներ, անհասկանալի ինձ համար, ոչ թե նյութն է մութ, այլ շատ բաներ ինձ համար: Ի՞նչ գործ ունեմ ես այստեղ՝ անվերջ միտք եմ անում այժմ: Ես մի մեղու եմ այժմ, որ ընկել է ծաղիկներով լիք մի ծով դաշտ և չգիտե որ մեկից մեղր փաղե, որը թողնի և աչքն է հոգնում և միտքն է դադում և այսպես... բայց էլի լավ է ինձ նմանի համար՝ ինչ էլ որ փաղեմ՝ էլի լավ է, իսկ խլեր: Բայց ո՞վ է մեղավոր, որ ես այսպես եմ, իհարկե դու, մայրս, դու՝ թշվառ մանկությունն այն—ինչ այն ժամանակներում պիտի սովորեի՝ այժմ են ուզում սովորեցնել... բայց էլի ոչինչ, իսկ խլեր: Այլևս չգիտեմ ինչ գրեմ քեզ, բարևում եմ բոլորիդ, տխուր եմ և կարոտում եմ իմ Հայաստանին, կարոտում և ախրում եմ խորապես: Այստեղ ինձ ոչ ոք չգիտե, բացի մի ֆանի գրողներից, մեր շատ անաղանդ գրողներ այստեղ անուն ունեն, ես ոչ, նրա համար, որ իմ գրվածքներս գրեթե չեն թարգմանված, թարգմանվածներն էլ շատ տխմար... ու տխրում եմ ու վհատվում— խաչը անբարձր կտնի, իոկ ես տեր չունեմ, այսինքն՝ գործնական մարդ չեմ, միայն պոետ, միայն բանաստեղծ և սիրտս հառաչում է, և հոգիս ամպում ... բայց՝ իսկ խլեր:

Ողջուններով՝

Քն Հովհաննես Շիրազ

1954 թ. Մոսկվա

ՍԻՐԵԼԻ ԷՄՄԱ

Ստացա փոփոխիկ նամակդ. Գոհարից էլ նամակ ունեի, շնորհակալ եմ, որ հետաքրքրվում ես իմ ստեղծագործությունների բախտով: Բայց դու ինչպես ես սովորում, այդ մասին լուր ես ու լուր: Իմացա, որ Տելոն լավ չի սովորում և նույնիսկ ֆանի ու ֆանի հատ թույլ (2) ունի, ամոթ է, ասա նրան, մեր ցեղի համար շատ է ամոթ: Ասա նրան, որ ինչ էլ որ սեղանս դառնալ՝ բարձր կրթությունը հաց ու ջրի պես այժմ մեր դարում հարկավոր է, էլ ուր մնաց միջնակարգը, որ ահա պարապիր է ամենքի ու ամենքիս համար: Ես լսեցի և շատ տխրեցի, կարծում էի գերազանցիկ է, բայց ահա ինչեր եմ լսում... Ախր Տելոն շատ խելոք տղա է, այդ ինչու՞ է ես մնացել... աշխատիր օգնել նրան: Բարեկիր բուրբիդ:

Բարեկներով՝ Քո Քեռի

Հովհաննես Շիրազ

1954 թ .

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ստացա նամակդ, ստացել էի նաև նոր տարվա ողջույնդ և կոնյակն ու մյուս բաները... շնորհակալ եմ: Ես այժմ ոչ մի կաթիլ բերանս չեմ առնում... դասերս շատ են ու շատ եմ հոգնում... բայց պատվի հարց է, տակից դուրս եմ գալու... ես ձեզանից, մանավանդ Մանիկից շատ եմ նեղացել— նամակով գրում էին, թե մայրս լավ է, լավ էլ ապրում է— արձակուրդիս գնացի տեստ, որ բուրբ սուտ, երեք ամսվա մեջ մի անգամ էր տաք կերակուր կերել... բերոզ, դնող շունի... և տխրեցի ու կատաղությունից խմեցի... էլ ինչ... ինչ գրեմ:

Քո Շիրազ

1955, Մոսկվա

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

Հիվանդ պանկած էի, երբ ստացտ նամակդ, բայց շտապով ահա պատասխանում եմ, որ շնեղանա... լավ խորհուրդներ տալը հեշտ է, լավ աղջիկ նարեւն է դժվար... մանավանդ բանաստեղծ մարդու համար և այն մարդու համար, որ արդեն քառասուն տարեկանի ձորերն է իջնում... մի ֆիշ ավել, մի ֆիշ պակաս... ես ուս աղջիկ սիրում եմ, անշար ազգ է ու վերջապէս Լենին է ծնել... բայց ուս աղջիկ տոնելուց վտխենում եմ, ես հայ բանաստեղծ, մոլեգին մարդ, նա մեր տանը անլեզու թութակ պիտի դառնա... մի երկու բառ սովորելով: Մինչ բանաստեղծի կիներ նրա մուսան պիտի լինի, նրա սրտի լեզուն էլ պիտի հասկանա... այնպէս, որ ուշ է, բախտիս նավը ցամաքում մընաց... և եթէ մեկ մեկ օրորվում է— այդ հառաչանքներին ալիքներն են դիպչում նրա կողերին ու մի վայրկյան նստ (բախտիս նավը) իրեն ծովն ընկած է զգում... այս մնաց ինձ՝ այս անդառնանուշ ցեորֆր: Այո, կաշխատեմ շուտ տուն գալ: Թեև ոչ մեկդ շեֆ ուզում գալս, բայց մայրս կուգե՝ միակ անկեղծս աշխարհում, իսկ Տելոյին նամակներ էլ եմ գրում, որ լավ մարդ դառնա... էլի կգրեմ, որ շատ ես ուզում, բայց հոր խոսքը ոսկի է, ֆեռունը՝ արծաթ: Տելոն շնորհալի տղա է, աշֆ որ դարձվի՝ մեծ մարդ դուրս կգա, որ շղարձվի... ինձ նման մի թշվառ... նա մոր ((ֆրոջս) շրժողկած շնորհին է ժառանգել... Գոհարն էլ երբ մանուկ էր՝ լավ նկարում էր... Մեծ հույս կար վրան... բայց... այս մի փոքր, բայց խոսքը մի ծովի ծանրությունն ունի մեջը... Բնության մեջ էլ բոլոր աշխարհ եկած սերմերը ծաղիկ չեն աշխարհ բերում... ուրեմն մեծ է մեծախորհուրդ ուշֆ դարձնել տղայի վրա... նամակ կգրեմ նաև դպրոցի մեծին, դի-

րեկտորին: Ընդհանրապես... տխուր եմ ու վշտաթառամ: Շտա
ուրախ եմ, որ Գոհարին առաջ են քաշել, սեղմում եմ ձեռք:
Հայտնիք, շատ շուտով գալիս եմ: Հոգիս ելավ... ինչպես
նավը ծովում է կենդանի, բանաստեղծն էլ իր մայր ժողո-
վրդի մեջ է... անմահ, բայց սա արդեն շատ եղավ:

Քո Հովհաննես Շիրազ

74.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՀԱՐ

Ինչ որ դրկել ես—ստացել եմ. և՛ նոր տարվա նվեր ող-
ջույնը, և նամակդ և հետո՝ նամակդ և էլի ահա նամակ ու
Մուշեղի հոդվածը՝ Հատրնտի գրքիս մասին և Տելոյի նկարը՝
նվիրված ինձ: Մանիկից ևս նամակներ էի ստանում—
գրում էր, որ մայրիկս ամեն ինչով ապահով է, և՛ փայտ են
առել, և՛ սնվում է լավ, և՛ իրենք (թոռներն էլ) միշտ մոտն
են լինում ... և այլ՝ և այլ՝ սաեր: Եվ ահա, երբ արձակուրդով
վերադարձա Հայաստան՝ աեսա, որ բոլոր գրածները սուտ
են... և՛ փայա չեն առել, և՛ մորս մոտ չեն գնում, և՛ երեք
ամսվա մեջ մի անգամ է տոբ կերակուր կերել մայրիկս և
այս վշտից (և գրական.... թշնամիներիս հանցրած վշտից
էլ...) այո, այս վշտից մի գիշեր մի երկու թաս խմեցի ու
չեմ իմացել, թե ովքեր են դրանից հետո էլ կոնյակ խմցրել
ու... մեռցրել: Հիմա որ կենդանի եմ—մորս բախտից է միայն:
Բայց այդ դժոխքի գիշերը ինձ դաս եղավ (չկա շարիք առանց
բարիքի...) և այժմ ես մի կաթիլ չեմ խմում ու թվում է,
թե չեմ խմել ու չգիտեմ ի՞նչ բան է խմելը... այնպես, որ
ուշ է քո վրդովմունքը՝ թեև օգտակար... բարի բնությունը
ինձ իր շար վայրկյանին է ստեղծել, ամառ կրճիս տակ
թույլ ու նագուկ սիրտ է դրել, և ծանր բաների չեմ դիմա-
նում... նաև խմիչքի. իմ միակ սփոփանքս մնում է ստեղ-
ծագործելը, ո՛չ կնոջ ևրես տեսա գրեթե, ս՛չ բնտանեկան
սուրբ քաղցրություն, ու ևթե շիներ համայն նայ ժողովրդի
«գաղտնի» ոները դեպի իմ քնարը՝ ևս վայրե խելագարված

լինեի... առայժմ տյախունը, տտ տաւված, որ դեռ երկաթ
տարիներ տյապե վշտեր գրեմ քեզ... Բարեկիր Բագրատին և
Էմմային:

Համբուրում եմ քո էլ տանջված հակատը,
քո Հովհաննես Շիրազ

75.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՀԱՐ

Ստացա համակող, ես հիվանդ էի և մի տմոթ շտի պառ-
կեցի, տուն շէի գրում, որ մորս բան շաքեք ... Հիմա լավ եմ
և ուզում եմ նոր տարուն հասնել Հայաստան: Բայց այժմ
ես չգիտեմ, թե ինչ գրեմ Տելոյին, որ նա խելքի գա... խել-
քը մորուց պիտի լինի, խելքը բնովի է, դնովի չէ, բացի
դրանից իմ գլխում էլ շատ բան չի մնացել տխր ... Հմայված
սպասում էի Տելոյի ապագային, բայց էլ ի՞նչ, երբ չի սովո-
րում այլևս: Տաղանդը ձուկ է, կրթությունը՝ ջուր, իսկ Տե-
լոն ուզում է տոտեց ջրի ապրել: Զայրացած եմ, իհարկե,
բայց հայրը, մայրը, որ լուր եմ, ես ինչ քորի տամ տանջ-
ված իմ գլուխս: Համ էլ չէ որ շատ վտխենում եմ... հիշելով
Վիլիկիս: Ինչո՞ւ համար ես իմ հին վերահույն դրկել ... Ես
թողել էի, որ Տելոն կամ մեկն ու մեկը հագնեիք... Ես ինձ հա-
մար տրդեն նորը գնել եմ: Ինձանից մի քանակ, ես հիվանդ
մարդ եմ ... մեկը պետք է իմ վշտերը ցրի, ինձ տիրություն
անի:

Բարեւում եմ բոլորիդ:

Հ. Շիրազ

1955 թ. Մոսկվա
ձմեռ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՀԱՐ

Ահա խնդրում եմ, որ իմ մասին շատաձեք և մայրիկիս ասա, որ ես լավ եմ և գրում եմ ու մշակում եմ նոր պոեմս, այնպես որ թող մայրս լավ հանգիստ հունգատանա: Երբ որ Մանիկը գտ՝ թող մորս առնի և հետք բերե, որ ես գտմ, ես էլ հունգատանամ:

Ահա Սոսիկի աղա Հենրիկն էլ ընդունվեց ուսման... լավ կլինի, որ եթե Մանիկը ուշանա՝ թող Հենրիկի հետ մերս գա:

Շիրազ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՏԵԼՈ

Ահա ես էլի գնում եմ Մոսկվա և պիտի վերջացնեմ ուսումս, տոանց ուսման շկտ կյանք և բախտ: Բայց ահա քեզ ասում եմ, որ եթե չգաս և չսովորես՝ տյսինքն՝ եթե մեծ նկտրիչ չդառնաս՝ էլ իմ տնունը չտաս: էլ քեռիդ չեմ ...

Հովհաննես Շիրազ

ՍԻՐԵԼԻ ՏԵԼՈ

Բան չկա գրելու, ինչպե՞ս ես: Աշխատիր մարտին գալ: Եամտկ գրի Շիրազի հաղեով: Սպասում եմ նամակիդ

Արայիկ

[1956]

1956 թ (Մոսկվա) Ռուս.
գարուն

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԲԱԳՐԱՏ

Արդեն երկու նամակ եմ գրել Տելոյին և նորից ու նորից զգուշացրել, որ անպայման կամ գործի գնա, կամ սովորելու... քայց քանի որ ես ևս հույս ունիմ, որ նա շնորհի ունի և եթե իր վրա աշխատի, այսինքն՝ եթե շարունակե սովորել ու նկարել, նկարել ու սովորել, վերջը հաղթանակը իր քախախեն է, քայց...

Քայց եթե դու ևս ուշ չդարձնես վրան, հավատա, որ այդպես միշտ մաքուր-նեւական թուղթ չի մնա նրա էությունը, կյանքը վրան սև կգրի, կյանքը սովոր է անզուրկ պատանիներին գլխահան անել... քայց,—

Քայց կրկին կրկնում եմ, որ դու ևս մեծ հույս պիտի տաս մեր հույսին, այսինքն հույսդ մեր վրա չպիտի դնես, չէ որ մորն այնքան շտաղը էլի շատը հարն է լսում ու չէ որ քեզին միշտ մտար չէ...

Իմ խոսքը նա եթե վար գցի՝ բոնը չի կարող... իմացիր, որ նրանից իսկական մեծ նկարիչ դուրս կգա՝ կրկնում եմ՝ իմ աշխարհ, խոփը, որ խոփ է, աշխատանքի մեջ է փայլում, թողեցիր՝ կժանգոտի:

Այսօր նրա՝ Տելոյիդ ու Տելոյիս քախտի մասին:

Ուղարկում եմ քեզ ինձ հասանելի փոխառության թրղթերը, դու թվերին իմ քախտի աշխատք մի նայի՛ր, այլ քո կամ Տելոյի, որ մի գուցե մի բան դուրս գա այսօրից՝ շատ արեւներ՝ իմ քախտից՝ ոչինչ դուրս չգալուց հետո:

Քո եղբայրիկ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

1956. Մոսկվա

գարուն

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՏԵԼՈ

Ստացա նամակդ. վերջապես ուրախացա, որ խելքի ես գալու, հույսեր ես տալիս, ապա թե ոչ՝ միշտ պիտի կուտրես

սիրտս, միշտ պիտի լռությամբ ասնջվեմ, որ բնությունից ստացած շնորհից չես լույս աշխարհ բերելու, վերջը գլխիդ վայ ես ապու, այնինչ պիտի դու հիմի ժայռ նեղֆեիր, նա-կատով Մտսիս պիտի հրեիր և առաջ թոնեիր, առաջ, առաջ, առաջ... Գ

Քայց դեռ, ինչպես խոստովանում ես, հույս կտ, հույս կա իմ մեջ էլ, որ կնեղֆես բախաի սև ժայռը և ներս կմբտ-նես կյանք, այսինքն կաֆնես, կսովորես, նորից վրձինդ վար չես դնի, չոր չես թողնի, կյանքս կհաղթի նա՝ ով վա-ռողը չոր է պահում, վրձինը՝ թաց, տմոթ կլինի մեր ցեղի համար, եթե մեծ նկարիչ չդառնաս, եթե մեր հույսերի ցո-րենի ամեն մի հատիկից մի հասկ աշխարհ չբերես: Իմա-ցիր, որ հորդ և մորդ և ֆրոշդ միակ հույսն ես, լավ իմա-ցիր, որ հավիտյանս երեսդ չեմ նայի, եթե մեկ էլ լսեմ, որ գլխիդ փշած ֆամով ես մեկ էլ թռել... խոսքերս ականջիդ օղ արա:

Այժմ մարդը փոֆրուց էլ մեծ է, ես ֆեզ հետ լուրջ ու վերջնապես եմ խոսում, կան շատ երեխաներ, որ այժմ տուն են պահում, ֆեզանից այժմ այդ չի պահանջվում, այլ միայն լավ սովորել և մեր հույսերը գեանով շաալ...

Դու ես մեր ասն ոյունը, իմացիր, տխմարություննե-րիդ վերջ տուր և հույսերիս անապատը ծաղկեցրու վր-ձինովդ:

Քո մշաավիշտ ֆեռի՝
Հովհաննես Շիրազ

Նամակի վերջում՝ բանաստեղծություն

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՏԵԼՈՅԻՆ

*Երբ ես դու մարդ դառնալու,
Դու իմ կանաչ կոկոնիկ,
Ե՞րբ եմ, արդյոք, լինելու
Գեթ քեզանով երջանիկ:*

* * *

*Վշտիս ծովից կողջունե
Սիրտս հույսով քո գալիքին,*

Բախտի նավը թող ափ հանե
Նախ քեզ, ապա՝ իմ բալիկին ...

* * *

Շատ եմ, ավա՛ղ, այս մտքերից հոգնել,
Չկարացի հորդ-մորդ ես օգնել,—
Դու ես հույսիս դեռ գոց դռան բանալին,
Չտաս հույսիս գառը վշտիս սև գալիին.

.
էն շնորհքը, որ հեք մայրդ կորցրեց
Դու ես գտել, դե դարձիր մարդ, դարձիր մեծ.

Հովհաննես Շիրազ

80.

ԻՄ ՍԻՐԵԼԻ

ԱՍՏՂԻԿ ՄԱՅՐԻԿ

Ստացա էմմայի ձեռագրով բո նամակը: Շատ ուրախա-
ցա, որ քեզ լավ ես զգում, եո էլ ինձ վատ չեմ զգում, Մա-
նիկը գալիս է և ինձ համար մեկ-մեկ հաշ է եփում ...

Խնդրում եմ, որ քեզ լավ նայես և մեր սուրբ ծննդա-
վայրի— Շիրակի օդով քեզ վերածնես և լինես էլի այն իմ
նին խելացի և փառապաշտ մայրիկը, գոնե մի հետավոր Աստ-
ղիկի պեո հուսո շող տալով ջարդված սրտիս:

Համբուրում եմ քեզ, Գոհարին, Բագրատին, էմմային և
Տելոյին:

Քո Օնիկ

1957 թ. Երևան

81.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ես նամակ գրեցի փաղկոմի առաջին փարտուղարին,
Սավոյանին, տյս նամակս ստանալիս՝ գնա նրա մոտ և

Իմացիր նրա խղճի գիւր...

Քո Շիրազ

1958 թ.

աշուն

Շատ տխուր եմ, շատ ...

82.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Այս նամակն ստանալով՝ իսկույն գնա բնկեր Սավոյանի մոտ, նրան այստեղ տեսա և խոսեցի, որ ձեզ բնակարան աան, խոստացավ ...

Ուրեմն մի ծուլացե՛ք,— երեսը երեսից է ամաչում ...

Քո Շիրազ

1959 թ.

83.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Քանի որ մայրիկիս մոտ ես՝ խնդրում եմ մնաս մուր՛ մինչև գալս: Իսկ ինչ վերաբերում է Տելոյին՝ ես շատ վախե-
նում եմ նրան մի բան գրել.. Նա ինձ չի լսում և եթե քո
աչքի տակ չմնա... շատ եմ վախենում... Հիշիր Վիլիկիս ...
այնպես որ ինձ նոր մեղքի մեջ մի՛ գցի:

Քո Շիրազ

84.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ես էլ մորս հետ ուզում էի գալ, բայց մորս բնավորու-
թյունը գիտես էլի, հա հա ասավ ու վերջը փոշմանեց, շատ
է աառապում կասկածամտությամբ, ցավն էլ այն է, որ ես

էլ նրանից եմ ծնվել, իսկ դուք չգիտեմ: Բայց ես մի ֆանի օրից հետո կգամ, ձեռքս տակ պոնեմ ունեմ, վերջացնեմ կգամ: Բայց արի ականջիդ ասեմ, իմ անունից էլ մի երկու մոմ վառեմ, թե իրավ եմ գնալու սուրբ Հովանես: Շատ եմ վշտոտ ու տխրատեսիլ: Կարծես թե բոլոր առապայալ մեծ բանաստեղծների մահաշշուկ նակատագիրը սողալով ու շո-րեֆթաթ ինձ էլ է մոտենում: Այնքան ու այնքան եմ նա-խանձից վառվում, որ արդեն շաաերը դեռես իրենց հոգում գոյության կոնիվ եմ մղում կյանքիս ու երգիս դեմ ... վտոիր դու էլ ... ուզում եմ հավատալ... անմեղ եմ, հոգին աղտվնի է... հայրենի աղավնի:

Օ՛, խելանեղ իմ հոգի,

Քո եղբայր
Շիրազ

85.

ՊԱՏԱՍԵԱՆ ԻՄ ՍԻՐԵԼԻ
ՏԵԼՈՅԻՆ

Իմ սիրելի Տելո, առա
Քո նամակը՝ կրակ դառա,
Դառա կրակ վառ կարոտի,
Ու սիրտս ահա ելած ոտի
Թռչում է քեզ՝ կարոտ հագած,
Թռչում է քեզ ու Արագած,
Թռչում է ձեր գիրկը բարի,
Թռչում գիրկը աղբյուրների,
Թռչում Շիրակ, թռչում է ձեզ,
Թռչում հովի ու հավքի պես,
Համբուրում եմ ձեզ բոլորիդ,
Ու թող մի օր դառնամ գերիդ,
Թե բանաստեղծ դառնաս մի մեծ,
Քանզի տեսա շնորհք ունես,
Իմ արմատի ծիլը դուն ես...

Քո՛ Շիրազ

1962 թ.

Երևան

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Խնդրում եմ իմանաս, թե «Շիրակ» թերթում վերջերս իմ թողած որ ու որ բանաստեղծություններն են տպվել: Լավ կլինի խնդրես ինձ ուղարկեն ... շատ ու շատ են հարկավոր այժմ ինձ, քանզի գիրքս՝ («Քնար Հայաստանի» երկրորդ հատորը) ևս գրվածի տակ բնկավ և շատ կարելի է արգելվի. եթե այդ բանաստեղծությունները նրանք են, որոնք այստեղ գրքից ուզում են հանել, եթե տպվել են իրավ այդտեղ՝ ցույց կտամ այստեղի.... ինքնապաշտ աթոռ/ոնք...:

Օհ, ուրեմն շաապիր ...

Հ. Շիրազ

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ

(Պլպլան ժամի պարտեզում գանվող մանկական ամուսնոցի մեծին)

Խնդրում եմ այս իմ երկու երեխաներին պատասպարեմ այս ամուսնը:

Հ. Շիրազ*

ՇԱՏ ՍԻՐԵԼԻ ՆԱԽԱԳԱՀ
ԻՄ ՊԱՇՏԵԼԻ ԾՆՆԴԱՎԱՅՐԻ

Ինչ որ պիտի ձեզ վաղուց գրեի՝ ահա փույս ձեզ կրպատմե: Հույսով եմ, ավելի հեռուց կխորհեմ և ապագայում, թեկուզ ոչ մոտիկում, ինձ էլ, որպես գյումրեցու, մի բա-

* Լուսանկար. Շիրազը իր Սիփան և Մասիս զավակների հետ: Այն ընծայել է հանգստյան տան գիրեկտորին: Նկարը գտնվում է Գոհարի թղթերում:

նով սփոփած կլինե՞ք ... իմացա, որ մեծամեծ ու մանա-
վանդ հայրենանվեր վերափոխներ ե՞ք ձեռնարկել, որ է՛լ
ավելի ծաղկեցնե՞ք իմ խնկելի հավիտենականը— Գյումրի
ծննդավայրս ...

*Հովհաննես Շիրազ
Շիրակացի*

89.

**Իմ պաշտելի ծննդավայր Գյումրիի
խորհրդի նախագահ քնկեր ՄԱՏՆԻՇՅԱՆ**

Թղթաբերս իմ բուրն է և իր աղջիկը, խնդրում եմ նրանց
լսե՛ք հայրաբար ... մի բուռ սենյակում եմ ծվարում, մի ողջ
ընտանիք է,— կուզենայի նրանց հետ խնդրել ձեր ազնիվ
միջամտությունը ... շատ չէ նրանց երազածը՝ մի սենյակ
և ո՛ր երկարորեն կհիշեն ձեր մարդասիրությունը:

Հույսով եմ ...

Հովհաննես Շիրազ

1963 թ.
Երևան

90.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՂԱՐ

Ստացել եմ նամակդ, բայց չգիտեմ ինչ պատասխա-
նեմ, սիրուս բանամ՝ աչքերիդ առջև անդունդներ կբացվեն
և գլուխդ կպտտվի, եթե ցած նայես ... բայց դրանք բոլո-
ւր վշտերով են լցված, դու, սիրելի բույրո, բանաստեղծի
վիշտը շեռ հասկանա, և ոչ միայն դու, մի նեղացիր,— իմ
ցավերն ուրիշ են, սկսած անձնականից հառած մեծ ազգա-
յինս և վերջացրած համամարդկային անդեղամթին մտած-
մունքներով ու մանավանդ ցավերով ... բայց չգիտեմ թե
որն է ավելի ուժգին գրոհ տալիս բազմավիրավ սրտիս վրս՝
անձնական, թե անանձնակտն մշաամրմուտ տվայաանֆ-
ներս,— ես երազում էի մարդը մարդուն օգնության հառներ
այնպես՝ ինչպե՞տ շտապ օգնության են հասնում... կամ ինչ-

պես հրդեհաշեջի կայծակնանիչ ավտոն է սլանում իմաս-
տուն խելացնորությամբ ...

Համբուրում եմ՝

Հովհաննես Շիրազ

12 նոյեմբերի 1964 թ.

* * *

Մինչ ահաբեր ճշում էին թե ձեռք քաշի

Մասիսից,

Մինչ կուզեին ինձ էլ պոկել աստվածաշենք

Մասիսից,

ես իմ որդոց անունները Սիս ու

Մասիս դրեցի,

Որ հավիտյան Մասիս ելնենք, ձեռք

չքաշենք Մասիսից:

Հովհաննես Շիրազ*

1967 թ.

91.

ՍԻՐԵԼԻ ՍԵՐԳՈ

ԳՐԻԳՈՐՅԱՆ

Խնդրում եմ ֆոջս «խաբրին» չկպչես, նա ուղիղ մեկ
ամիս է, ինչ այստեղ, Երևանում տանջվում էր, տառապում
իւր միակ դասեր հետ հիվանդանալով ...

Խնդրում եմ

բարությունդ ...

Հովհաննես

Շիրազ

1969 թ.

Երևան

* Լուսանկար. Շիրազը և իր տիկինը գրկել են Սիսին ու Մասիսին:
Ինքնագիր: Այն նվիրել է Գոհարին:

ՍԻՐԵԼԻ ԿԱՐՈ

Ահա Գայանեն ... որի մասին շատ եմ խնդրել քեզ, որ միջամտես՝ ընդունեն սովորելու ... շատ շնորհալի աղջիկ է, կարող է շփոթվի և ... ուսաի խնդրում եմ Սենոյի հետ մի բարություն անես կյանքիդ մեջ...

Հ. Շիրազ

ՍԻՐԵԼԻ ՍԵՆՏՔԵՐԻՄ

Ահա քոչս դուսարը՝ Գայանեն, որի մասին անցյալ աս-րի ևս խնդրել էի... խոսաացել էիր և ... մոռացել, խնդրում եմ այնպես վարվե՛ք, որ անպայման ընդունվի սովորելու...

Հ. Շիրազ

1976 թվականի հոկտեմբերին մեծ հանդիսավորությամբ նշվեց Լենինականի գուլպա-նասկեղենի տրաադրական միավորման (նախկին աեխաիլ կոմբինատի) հիմնադրման 50-ամյակը: Հոբելյանը շնորհավորեցին շատ շատերը, այդ թվում՝ Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, բանաստեղծներ, գիանականներ: Շիրազն իր ողջույնի խոսքը գրել է բանաստեղծությամբ, որի ձեռագրի ֆախսիմլեն տպագրվել է միավորման տպագիր օրգան «Արշալույս» թերթի 1976 թ. հոկտեմբերի 16-ի համարում:

ՈՂՋՈՒՅՆ ԻՄ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԻՆ ...

Ասեղ սրող էի,— այստեղ, գուլպայի գործարանում,
 Երեց քույրս՝ Գոհարը հույժ բանվորուհի,—
 Եվ հիմի, կարծես, ասեղները հուշ առ հուշ սիրտս են խրվում,
 Որ այլևս այն պատանին չեմ և կարոտում եմ ձեզ, իմ
 Հնուժ վայրեր, իմ սուրբ ու խենթության շափ ազնիվ
 Բանվոր-բանվորուհի ընկերներ:
 Եվ սակայն ուրախ եմ, որ նոր են ասեղները
 Սրվում են ու գուլպաները ծնվում են հորդում, որ
 Տաք պահեն հայրենի Հայաստանի և հեռուների
 Անթիվ-անհամար ոտքերն ու ոտիկները,
 Քղջույն իմ պատանիկ օրերի օջախին
 Համբույրներս բոլորիդ,— հույսերիս
 Որ սանդուղքն է վեր՝ Մւ սիսն ի վեր

Հովհաննես Շիրազ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՀԱՐ

Ստացա նամակդ, գրեցի անա քս ուզած միջամտու-
 թյունս ... հույսով եմ գրել... իմացա նաև Սոսի մահվան մա-
 սին և երկար ու խորք տվայտում էի... խոցվում ու խաչվում
 Քրիստոսի պես, որ չի կարող խելի բերել աշխարհը ... Իմ
 սփոփիչ ողջույնը տուր Բագրատին և ցավակցությունս Սոսի
 ողջ ընտանիքին:

Համբուրում եմ բոլորիդ: Տելոն թող անսայման գործի
 մտնի:

Քո թշվառ՝ Շիրազ

ՍԻՐԵԼԻ ԳՈՀԱՐ

Ես խոսեցի ֆաղխորհրդի մեծի հետ,— դու Սիփանին տար Սամսոնի մոտ, որ հանգստյան տանը տեղավորեն որդուս, Մտսիսի մոտ, նաև Մուշեղի, թող մի ֆանի օր հունգրստանա, խնդրում եմ ուշադրությունդ...

Եղբայրդ՝

Հովհաննես Շիրազ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԳՈՀԱՐ

Ստացել եմ նամակներդ, ոչ միայն հեռախոսեցի որդուդ քնակտրանի մասին այլև անձամբ գնացի այս մեր ֆաղաֆազլիսի մոտ...

Նո՛ւյն ... գլուխն է, սիրտ չկա, գուր էլ գովում էիք, բայց և այնպես ըմբոստ «խոնարհությամբ» «սաստեցի» որ այլևս բավական է ձգձգումը և նա հեռախոսեց մյուսին, մյուսը, ոմն Թաղեոսյան՝ (ափսոս հայրիկիս անունը) խոստացավ այս շաբաթ զբաղվել, այնպես որ մի կարծիք, որ կարող է մոռանամ....

Անին լավի է դառնում, կարծես, ոտքը գիպսի մեջ են առել... Հույսս չեմ կորցնում, բայց հիմիկ էլ Հայկ Թաթեվոսիկն է մրսել և տաֆ է.... մոտից չեմ հեռանում, ստոված հորո հետ շէր, գոնե հորս անվան հետ մեա... Թաթոսիկս վեր կենա...

Բայց ֆանի որ Տելոյի գործը այսֆան ձգձգվում է— ֆիչ է մնում գնամ և կայծակեմ անգլուխ ֆաղաֆազլիսի աչքի մեջ...

Տեսնեմ, կուպրենե՛ կտեսնենե՛...

Հովհաննես Շիրազ

[1966]

ՀԳ. Գուրգեն նկարչին* գրածս նամակը սխալմամբ քեզ
ևմ դրկել. պահիր, կամ մոխրացրու:

Հ. Շ.

13/2—76 ք.

99.

*Իմ ծննդավայր Գյումրիի
Գլխավորին
ընկ. Դոնարաին*

Գոհար փոյրո ողջ կյանքը տվեց Գ. Գործարանի ծաղկ-
մանը, ամուսինը նույնպես, այժմ եկել հասել են եգրին, ծե-
րին, — մահավախությանը, ուստի մտահոգ են թոռան նա-
կատագրով ...

Բանն այն է, որ զույգ ռենյակը թոռներին են կտակել,
բայց ընդդիմացողներ են հայտնվել և... և գործը զուլալ
նամփից շեղել են ջանում... ոմանք:

Ուստի հարկավոր է Ձեր բարի պետական մտածության
ուշադրությունը, այնպես որ գոնե թոռնուհին անտուն չմնա. .
տան կողմին:

Հույսով՝ Հ. Շիրազ
1980 թ. Երևան

100

ԳՈՒՐԳԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ ԳՈՒՐԳԵՆ

Այսօր ստացա նամակդ, հարցնում ես այն՝ ինչ գիտես:
Այո, դու հիշա եո, Շիրակագուն եմ, ինչպես Հայկագուն,
Հայկագունին, նույնիսկ ուզում էի ի հեճուկս մեր հավիտե-
նական թշնամու՝ անունս դնել Ազգունի, Հովհաննես Ազգու-

* «Բանվոր» թերթի նկարիչ Գուրգեն Կարապետյանի մասին է խոս-
քը.—Խ. Բ.:

նի, այսինքն մենք կանք, կլինենք, ունենք, ազգ ենք և ճար
ու հավերժ կխորխենք եղեռնագործների և մեզ ձուլել ցան-
կացողների վրա*:

Հ. Շիրազ

Մի ուրիշ անգամ հրավիրատոմսի վրտ գրել է.

ՍԻՐԵԼԻ ԳՈՒՐԳԵՆ

Ստացա մայրիկիս նվիրված գրքիս մասին գրածդ գողա-
րիկ հոդվածը— շնորհակալություն, շնորհիդ շատ, միայն
թե մի տող քեզնից էիր դրել իմ մի փայլիկի մեջ...

Շնորհակալություն կրկին.

Հ. Շիրազ

* * *

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարություն

Սիրելի Քսպե, այնպես խորագին
Այնպես խորզգա կարդա գլխիկոր,
Որ՝ թեև ջահել, տեսնես իմ հոգին
Լուանի պես փոքրիկ, երկնքի պես խոր:

Այնպես գոհարը ավազից զատիր,
Որ գործի աչքը շտեսնի արցունք,
Եվ խարույկ վառվի,— դե՛ քննադատիր,
Իմանանք՝ երգս ակն է, թե ակունք:

Հ. Շիրազ

* Այս նամակը պատասխան է Գ. Ստեփանյանի հարցմանը, թե Հով-
հաննեսը իր գրական անունը ինչպես է Շիրազ դրել:

Գրականության և Արվեստի Ե. Չարենցի անվան թանգարանի Շիրազի
ֆոնդ:

*Իմացեք ողջը գերի է մահին,
Լոկ լավությունն է մնում իր գահին ...*
Իմ սիրելի գրչակից ընկերներ

*Համո Հարությունյան
Դանիել Գաբրիելյան
և*

Սուրեն Սողոմոնյան

Գրաբերումիս երկնչում է ե սակայն մեծ ու խորք ցանկու-
թյուն ունի սովորելու— բայց եթե ընդունակ շիներ՝ չէի
խնդրելու ձեր երեքի գոնե մի մեղմությունը՝ նրան ֆենելու...
Հույսով և կանխաշնորհակալությամբ՝

Հովհաննես Շիրազ

ԵԳԻՊՏՍԱՀԱՅ ԳՐՈՂ ՄԿՐՏԻՉ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Շիրազը նամակագրական և անձնական կապեր է ունե-
ցել եգիպտահայ գրող-հրապարակախոս Մկրտիչ Անդրանի-
կի և նրա ընտանիքի անդամների հետ: Նամակներում ար-
ծարժված են սփյուռքի և սփյուռքահայության նակատագրի,
հայ մշակույթի և այլ հարցեր: Մկրտիչ Անդրանիկը 1985 թ.
մայիսին Շիրազից ստացած նամակները հանձնել է գրա-
կանության և տրվեստի Եղիշե Չարենցի անվան թանգա-
րանին: Թանգարանի տնօրեն, բանասիրական գիտություն-
ների դոկտոր Ավիկ Իսահակյանի թույլտվությամբ ստորև
հրապարակում ենք այդ նամակները, շնորհակալություն
հայտնում թանգարանի կուլեկտիվին:

23/2—1964

1

ԱԶՆԻՎ ՀԱՅՐԵՆԱԿԻՅ

Ստացա ձեր նամակը, ցավոք սրտի հիվանդացա, և այս
տարի դժվար թե հնար լինի իմ գալուն... Բայց երբ լինի՝

ձեր հյուրը կլինեմ, հազար սրտով, հազար համբույրս ցր-
ված հայությունը...

Հովհաննես Շիրազ

12 հոկտեմբերի 1964

2

Իմ ոիրելի հեռավոր հայրենակից
արդյո՞ք ստացա՞ք իմ նոր գիրքը, որի անունն է «Քնար Հա-
յաստանի» (դա երկրորդ հատորն է...): Խնդրում եմ գրե՞ք
ձեր կենդանի կարծիքը:

Համբույրներս ողջ ընտանիքիդ,
մեծին ու փոքրին, փոքրին ու մեծին:

Հովհաննես Շիրազ

3

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Ստացա նամակդ և ահա իսկույն գրում եմ պատասխա-
նը, բայց ինչու չես կատարում խոստումդ, ինձ ինչու չես
ուղարկում «Ջահը», որի մասին գրել էիր և լսեցի էլ, որ
նվաստիս է նվիրված... Խնդրում եմ գոնե դու բարի լինես և
մի հատիկ ինձ ուղարկես, — գրել և տյժմ ավարտել եմ մեր
հավերժասուզ մեծ եղեռնին նվիրված մի մեծածավալ գործ,
պոեմանման մի ողբերգություն, մի ահեղ դատաստանի մը-
մունջ ու մոունջ, բայց չգիտեմ ինչպես հասցնեմ կամ ֆեզ,
կամ «Ջահակրին» կամ «Սփյուտֆին»: Այս իմ գործում իմ
ոիրտը բաժանել եմ բյուրավոր մասերի, ինչպես արևը աստ-
ղերի թվով և ամեն մի շիթ մառնիկի մեջ՝ ինչպես հայելում
բարբախում է մի հահատակի հայ սիրտը: Յոթը միլիոնի եմ
ծվատել սիրտս, երբ տպված տեսնեմ՝ նոր այն ժամանակ
կհանգստանան սրտիս ողջ ու բոլոր մասերը...

Համբույրներով ֆեզ

Հ. Շիրազ

18 մայիսի 1965

ՍԻՐԵԼԻ ՄԿՐՏԻՉ

Ստացա նամակդ, որով ուզում ես ֆեզ կամ խմբագրությանն ուղարկեմ իմ նոր պոեմը-հայոց մեծ եղեռնին..

Քայց չի հասնի, փոքր նանայարհներն էլ այժմ լիքն են մեծ ավազակներով և հոգիս տրամում է ու տրամում .

Քայց մարդ լինե՛ր... օ՛, եթե մարդ լինե՛ր...

Հ. Շիրազ

6 հուլիսի, 1965

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Վաղուց գրել եմ ֆեզ... բայց պատասխան չունեի, լուսթյուն խորհրդավոր, բայց անա տեռտ պատվական հայորդի Սարգիսին, որն ինձ հանձնեց ազնիվ ու սրտագին նամակդ, իմացա, որ շես ուսացել նամակներս և տխրեցի... Սարգիսին տվեցի մի ֆանի բանաստեղծություն և ֆեզ նամակի նրման մի բան, ոչ միայն ֆեզ, այլ իմ գրչի մյուս բարեկամներ Հայկին և Արմենին և Հակոբ Շահնուրին, որի մասին այժմ իմացա... Հիմա խնդրում եմ ինձ գրես, թե Սարգիսը իմ նամակները՝ փշրանքները՝ հտոցրել է ոեղ, թե ոչ... նա շատ ազնիվ մարդ էրևաց աչքիս, բայց նրա տիկինը շուս պաղ վարվեց ինձ հետ... Երևի հիմա Սարգիսն էլ մի նոր կոարած սազյան դառնա, չէ որ երևի աստ իմ թշնամիների հետ բաժակ բռնած կլինի, ինչպեռ ելճումուտ կոչված անարևը, ինչևէ... Խնդրում եմ գոնե դու գրի՛ր մի երկտող... Խընդրում եմ նաև ինձ ուղարկես այն բանաստեղծություններս, որոնք կտպվեն, կտրի՛ր և ուղարկի՛ր...

Հ. Շիրազ

Երևան, 16 հունվարի, 1967

ՍԻՐԵԼԻ «ՍՓՅՈՒՌՔԻՆ»

«Հայոց դատը» պոեմի մեջ երկու-երեք սխալներ են բաց թողված:— Խնդրում եմ գեթ երկուսը ուղղեմ

1. Ընդդեմ Հայաստան գորհի արշավեր
տողը պետք է լինի՝
Ընդդեմ Հայաստան գորհի արշավի
2. Ինքն էլ դադարեց, դար խաչվեց արճափում
պետք է լինի՝
Ինքն էլ դարեց՝ դար խաչվեց արճափում
(Մյուսները՝ հետո)

Հ. Շիրազ

ԻՄ ՀԵՌԱՎՈՐ ԲԱՐԵԿԱՄ

Ինչո՞ւ ոչ մի տող չես գրում այլևս, ի՞նչ եղավ Սարգիս Պալայանի դարձը, ի՞նչ արավ իմ գրվածքները... Չլինի թե «Ջահակիրն» էլ Գահիրեի «Արևի պես սկսում է խավարել՝ խաբվելով ինչ-որ ամպերից ... Հտպա ինչու եմ լռում ...

Հ. Շիրազ

28 փետրվարի, 1967, Երևան

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Ստուցա նամակդ, ես էլ ծտնոթ եմ «Արևի» մեջ գրածդ հոդվածին, թշնամիդ այս տնգամ նշմարիտ է,— մի պատասխանե, հենց նրա համար, որ հանճարները ուշ-ուշ են ծնվում, իոկ իմ կողմին դրածներդ իմ... հակառակորդիկ-

ներն են... փղերի նման: Սո նկատել եմ, որ հայրենիքի կա-
րոտից դուրս՝ մեր— ավյալ դեպքում և իմ նյութը ծառ եմ
կարծում, ծառը՝ անտառ,— հասկանալի է, հայրենակարոտ
է ձեր սիրտը, հայրենաբաղձ եմ, ծաղկում է Երևանը և ու-
զում եմ խնամով էլ գրկել, շոյել, համբուրել, կրծքերիդ սեղ-
մել հայրենի որբահողը ...

*Այժմ երկրում այս մեկ ու ճար
Մի Մասիս կա ու մի անճար ...*

Հ. Շիրազ

4 ապրիլի, 1967,

9

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Բարեկամդ ինձ բերեց վերջին նամակդ, հարցումիդ պա-
տասխանը գրել եմ, դրկել, հույսով եմ կհասնի, լիքն է
անմեղուքյամբ և ծաղկի բույրով... Հաննարը հազվագյուտ
է, նրանք, որոնց համար կոխվես մղելու՝ չարժեն, միջակու-
թյուն են պարզապես, բայց խորամանկ և նույնիսկ շարա-
կամ... առհասարակ լավ է, երբ մարդ չափի զգացումը
կպահի իր մեջ... 'Ինչ մեծ հայրենասեր ես՝ դրանից ես ինձ,
նվասախս, խղճուկիս, կարոտյալիս այդքան գովաբանում, ինչ
արև, ինչ բան, ես մի նրազ եմ, ազգիս վշտի հին ու նոր ձե-
թով այրվող... Ինչ արև, արևն Հայաստանն է...

Հ. Շիրազ

14 ապրիլի, 1967

10

ԹԱՆԿԱԳԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ

Ստացա համառող կամքով լեցուն գիրդ,— կամքը բռն
է, բայց կուզեի բեզ էլ հուշել իմ գլխավոր միտքը՝ մեր ազ-

գի վտանգավոր ու ֆառմանելի տրոհվածության մասին, երագելով համախմբումը մեր ժողովրդի, ազգահավաք՝ անխորտության մեծավայելուչ պողոտայով, որը տաներ դեպի մեծ անխորտակելի ու հավերժ ողնաշարը — Մասիս... Պիտի լրցենել մահավիհը և ոչ թե խորացնել: 'Ինչ քարի սիրտ ունես, մեծախոր խոր՜... այս իսկ գիտենալով կարն եմ կապում... Փոփրաթիվ ազգերն իրավունք չունեն իրար շփոթելու, իսկ փոփրաթիվ ազգի զավակներն՝ առավել... Մահաբեր է տրոհվածությունը... վայ մեզ, որ իրար չենք սիրում այնպես, որ աշխարհն ապշեր հայության միասնականությամբ... և ոչ թե...

2. Շիրազ

18 մայիսի, 1967, Երևան

11

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏԻՉ

Ստացա սպասածս նամակդ. կարդացի վշտախառն խինդով, — ինչ ազնիվ մտրդ ես երեւում, ինչպես Հայկը, ինչ հրաշալի սիրտ ու հոգի ես... Բայց ինչքան անտեղյակ ես իմ տանջվող ոգուց, — միթե ես կարող եմ այնքան հախուռն լինել, որ ինձ կորցնեմ և ցավեր գտնեմ, իմացիր, որ իմ գինեխենթ շշուկներն էլ, մոռունչն էլ ջրեր են եղել և ես հայոց վաղվա բախտի ջրաղացին, ես պաշտում եմ իմաստությունը... պատվո խոսք եմ տալիս, այո՛, բայց ով է լսողը, իսկ այն մարդուկները, որոնց անունները տալիս ես, նրանք միջակություններ լինել — ինձ և իմ տեղան հետ վարվում են, ինչպես սև վամպիրները վիրավոր եղնիկի կամ ֆեռնո ալյուրի հետ... նոքա նախանձորեն սու շարաքարո, և միայն նրանք չեն.. նրանց ոտանավորները բանաստեղծություններ չեն, ահա թե ինչու են ընդդեմ եղնիկիս, ու ոչ էլ ասող ևն, որ լուսավորեն իմ այդ նամական, ոչ էլ անմեղ աղավնի են, որ արծվին շխայթեն անողը եկած տեղը... Նրանք ամեն գնով կտշխատեն, որ ես զգամ որ իրենք կգրկախառնվեն ձեզ հետ, որ ինձ զգեն վերենների աշփից ու այդպիսով գոցեն իմ առջև բոլոր դռները, բայց դոքա մի բուն մարդուկ-

ներ են, ողջ ժողովուրդն ինձ հեա է, հայոց ոգու հետ և հվաստս այս հույսով եմ թևավորված... Մաղկող, հսկայացող, արծվացող, առյուծտցող իմ ու ողջ հայության մայր Երևանն եմ երգում ու գրկում հոգուս հոգում... այնպես որ սխալվում ես, լսելով բամբասանքների մշուշոտ շշուկներին, սխալվում է և ոիրելի, և իմաստուն Հայկը, որ չի էլ ուզում իմ նամակին...

Խնդրում եմ հավատասա այն մարդուն, որն յուր ողջ կյանքը դրել է իր մեծ ազգի սանդուղքի բարձրունքի տակ-որպես պատվանդան. որ սլանա ողջ իր նայությունը դեպի իր Մասիոները... իր ճաբ կյանքով, իր նորահրաշ Երևանով, իր Վանով, իր Վանաճղով, իր հավիտենական մայր Մտշտոցով...

Համբուրում եմ քեզ ու ողջ սփյուռֆահայության հայա-հայարտ նակատը, հայապահպան լեզուն...

Հ. Շիրազ

30 մայիսի, 1968, Երևան

12

ԹԱՆԿԱԳԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ

Առն բարեկամդ ինձ այցելով ասաց, որ տրամել ես, որ իբր թե քո նամակներին չեմ պատասխանում... Բայց սիրելի գրչեղբայրս, իմացած եղիր, որ ամենամտնուկի նամակին էլ ես պատասխանում եմ, էլ ուր մնաց քեզ, մտնավտնդ, որ մեծ Հայի հետ է իմ գործը լինում... Ստացել եմ քո այն նամակը, որի մեջ ինձ հայրաբար խրատում ես, թե երբ որ գամ ձեզի՝ խելոք մնամ... կամ խնդրեմ, որ ինձ այցի նամիս տան մի շարք գրողների հետ... Բայց իմացիր, որ ինձ հենց այս վերջիններն են, որ գցում են վերե-ների աչքից, հենց այն գրողուկները, որոնց անունները տված ես...

Ուրեմն բախտս տակավին ինձի հետ չէ... տյնուամենայնիվ քեզնե խորին շնորհակալ եմ վշահարս...

Ստացել եմ ֆեզմե երկու նամակ և պատասխանել խույն ... հետներն էլ բանաստեղծություն եմ ուղարկել ֆեզ

Հ. Շիրազ

24 հունիսի, 1968, Երևան

13

ԹԱՆԿԱԳԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ, ԻՄ ԳՐԶԱԿԻՑ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ

Ստացա երկարաշունչ հայրենաշունչ նամակդ և դպրոցի հոգաբարձության հրավեր-որոշումը՝ ուղղված ինձ և մայրենի կառավարությանը ... սաացա, կարդացի և լցվեցի խորին շնորհակալությանց սուրբ զգացմունքներով դեպի ձեզ, դեպի սփյուռփի այն ազնիվ հայորդիներին, որոնք ձգտում են հարթել իմ դեպի ձեզ՝ դեպի սփյուռփ այցիս խութալից նամփան ... Բայց փոքր ինչ սխալի մեջ ես, ինձ հեա շեն գա այն մարդիկ, որոնց հիշել ես քո նամակի մեջ, մղված գրական պիղծ նախանձից, այստեղ՝ Երևանում էլ նոքա խուսափում են ինձ հեա միասին հանդիպումներ ունենալ հոծ դահլիճներում ... էլ ո՛ւր մնաց ինձ ուղեկցելը, այն էլ դեպի կարոտալից սփյուռփահայությունը ... այնպես որ նոքա հրազներ են, ոչ թե ասադեր, ազոավներ են ... ինքդ գրող ես՝ լավ գիտես, թե ինչպես են նախանձում միջակությունները: Ուրեմըն իմ նամիեքը կապում են միայն ու միայն շարամիտ նախանձների կույր կրքերը ... Լսել եմ, որ նույնիսկ ձեզ մոտ էլ՝ սփյուռփում, կան մարդիկ, դարձյալ գրողներ, որոնք ջանում են իմ գալն արգելել... խոչընդոտել, գոցել, փակել նամփաներս ... թե ինչու, չգիտեմ, աստված նրանց հետ, ինչ արած, ինչ կարող եմ անել, բախտը, կարծես թե նիշա է, սատանան էլ, գույզն էլ հեաապնդում են՝ մտած թշնամիներիս մեջ ... երկոսանիացած—գրչակացած: Բազմաթիվ նամակներ եմ ստանում, որոնք, ինչպես քո մեծ ու ազնիվ սիրտը, կտնչում են ինձ, կանչում են Բեյրութ, կանչում են Կահիրե, կանչում են Փարիզ, Լիոն, Թեհրան, Ամերիկա և չգիտեմ ինչ պատասխանեմ այս կարոտալի կանչերին, շատե-

րին թվում է, թե ես չեմ ուզում գնալ, — այնինչ ... և... տըխ-
րում եմ և հուսալվում, ինչպես կարող է գրող մարդը շու-
գենա հեռու աշխարհներին այցելել, այն էլ իր կարոտալի
արյունակիցներին, իր հայությունը ... ինչպես կարող է շու-
գենալ հառնել և կիսել այն իր եղբայր-բույրերի վշաերը,
քրոնք ատենում են ծաղկած հայրենիքից բույր ու մեղրախոս-
քեր ըմպել, մանավանդ իրենց ուզած բանաստեղծից ...

Իմ այցելությանց դռները գոցել են ապիս մութը դավե-
րով հաակապես նրանք, ովքեր իրենք իրենց գրող են կո-
չում և այցելած են ձեզի, — վախենում են արծիվը հավե-
րուն վրա սավեր գցի ... ահա ամենը ... Բայց միայն նրանք
չեն, որ նախանձում են խելահեղ ու կույր մոլորությամբ ...
գրական նախանձը եղել է և միշտ կլինի, կլինի հավիտյան...
ժողովուրդը ում որ պաշտում է՝ նրան՝ իր գրչեղբայր կոչ-
ված ոչուփույզները առում են, անկարող լինելով շղավել,
չզցել, չմրոտել ... ինչ հախուռն լինելու մասին է խոսքը, որ
քեզ են հասցրել, և ոչ միայն քեզ ... ես ամենից խելոքն եմ
և ամենից հեռահայացը, և իմ հայրենի Հայաստանի բերդ
ու ամրոց պաշտե՛ թեկուզ իմ գրչով, իմ խոնարհ բնարով,
իմ ողջ ու ողջ կյանքով ... միթե՞ կարող եմ մորս մազերի
մեջ փուշ անեսել, — միթե՞ կարող եմ որդուս շուրթերում
չտեսնել ազգիս է՛լ ավելի նվիրական գալիքի վարդերը ...
մի հավատա, սիրելիս, մի հավատա բամբասաններին ...
մանավանդ չէ՞ որ գրողն իր գրվածքների մեջ է խորասուզ-
ված, ես — նվաստ ամենից շատ ...

...Ուրեմն համբույրներս ձեր ազնիվ մաշտոցասուրբ
դպրոցին ... սպասումով և սպասումով՝

Հ. Շիրազ

օգոստոս, 1968, Երևան

Գրում եմ, որ շանհանգստունաս՝ ստացա փոքրիկ նա-
մակդ՝ այն մարդոց մե, որոնք բախտ էին ունեցել ձեզ-

սփյուտֆ այցելել, — Ես՝ ոչ ու ոչ... և դարձյալ ոչ և կրկին
ոչ, նորեն ոչ, նորից ոչ, վերստին ոչ, դարձյալ ոչ, մեկ էլ
ոչ, էլի ոչ, կրկնակի, եռակի, քառակի, յոթնակի ոչ... ոչ ու
փշերի կողմից ոչ, ոչ թե ժողովրդի կողմից ոչ՝ որ վախենա-
լի ... շուտով կժամանի Նոր տարին, ուրեմն շնորհավոր ֆո
էլ և համայն սփյուտֆի Նոր տարին, բոլոր անոնց, որոնք ֆո
ոսկե սիրտն ունին և կսպասեն իմ արծաթե սրտի այցե-
լությանը, շնորհավորանքիս մեջ թող որ առ ժամ հեռվից բա-
բախեն համբույրներս ...

Հ. Շիրազ

9 դեկտեմբերի, 1968, Երևան

15

ՍԻՐԵԼԻ ԿԱՐԱՊԵՏԻ ՈՐԴՈՒՆ

*Վռազում եմ ... Կյանքս կարճ է ինձ թվում,
Րոպեն էլ շշնջում է՝ շտապիր,
Երևանդ Մասիսիդ է ծարավում,
Ժանտ ոսոխից Արարատդ ազատիր:*

Հ. Շիրազ

1969

Երևան՝ հուլիս ու սանդուղֆ
Մասիսի

ԳԱԹ № 3491

16

*Շատ սիրելի Մկրտիչ,
Իմ հուլիսի գորավար Անդրանիկ*

Ստացա նամակդ, գրված ծունկիդ վրա, ինչպես ասաց
բերողը՝ գիրուկ Սամսոնը: Շնորհակալություն, որ շես մո-
ռագել ինձ, նույնիսկ ոսկի ժամերիցդ բաժին Ես հաճում ինձ,
կարոտյալիս ... Վշտացա, որ ֆո գալն էլ... ֆեզ եմ ուզու-

կել իմ նոր գիրքը, «Հուշարձան մայրիկիս», արդյո՞ք հասց-
վեց քեզ: Ուզարկել եմ նաև Հայկ ժամկոչյան և Արմեն Տա-
րոնի ազնիվ գրչակիցներին, բայց նրանցից էլ ոչ մի ձայն
չի գալիս, չգիտեմ ինչո՞ւ... Երեկ իմ խոհերի աղավնիներն
էլ ազոավ թշնամիներ ունեն, բայց շէ՞ որ ես ոչ միայն մեր
մեծատանջ ազգին, այլև բոլոր ու բոլոր ազգերին, Հիսուսի
ճման, ոչ միայն բարիք, այլ հավերժություն եմ ցանկա-
նում ... Հավերժ՝

Հ. Շիրազ

25 օգոստոսի, 1969, Երևան

17

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏԻԶ

Սպասում էի նամակիդ և ահա նա. շնորհակալություն
բարի խոսքերիդ համար: Ստացու նաև Բարիլույն տիկնոջդ՝
Համիկի նամակը, ոտացա նաև Ասատուրինը: Բոլորիցդ՝
շնորհակալություն և շնորհավոր ամանոր բոլորիդ: Իմ գալն
էլի ժայռի դեմ առավ ... ինչ լավ մարդ ես դու, ինչ սքան-
չելիություններ կան հասարակ կերպարանքիդ խորքերում:
Բայց իրավ են քեզ կշտամբել, թե ինչու շեռ շարունակում
ուտեղծագործել: Սուրախացա՝ իմանալով որ հայրենասուրբ
ապավորություններիդ գրքի ես վերածելու, եթե ճիշտ է՝
չվուագես, այլ ճեղեղիր և ապա գտիր, ինչպես լինում են
գարնան գետերը, երբ իջնելիս՝ բարձրանում են՝ այսինքն
գուլավում, բյուրեղվում, ըմպելի դառնում: Եվ գրիր միայն
ու միայն ճշմարիտը, հոգուդ աչքերի տեսածը բաղդատելով
տչքերիդ վկայության հետ: Իմ ողջույններովս համբուրիր,
մեկ էլ համբուրիր Հասմիկ իմաստնաբույր ծաղկիդ, ասա
Շիրազն ասում է առածդ շղարշային վարագույրն հիշում է
և ախրում, քանզի այդ էլ շեմ կարող պատռել, որ գամ...
Իմ ողջույններս ասու նրա եղբորն էլ, հիշում եմ նրան էլ,
Սհանյան Բենիկին էլ, շատ ազնիվ այդ սուրբ հայրենասե-
րին, նրա Շաֆեին էլ՝ զգվանքներու: Հիշում եմ դերձակին,
որի տիկնոջ ձեռքը՝ մեր ասանը, նույնիսկ մեր անեցոց աչքի

անշև, կրծքիս եմ անել ու շոյել... և հետո կշտամբվել էի
ամանց կողմից: Բոլորին հիշում եմ, բոլոր մոլորին: Եվ կա-
րոտում եմ ձեզ, բոլորիդ: Եվ անհիծում եմ բախասս... Քո ող-
ջույն-նամակն էլ անաս և տվեցի ում որ հարկն է, բայց նա
լավ գրողիկ էլ չէ, այլ պարզապես խելացի գրիչ... Ինձ ևս
կարելի է այսպիսի խոսքեր ասել, այնպես որ, սիրելի Անդ-
րանիկ, դու ևս ինձ շատ ես գերազնահատում, այդ նրանից
է, որ ոչ թե սիրում ես միայն, այլև պաշտում ես մեր գողա-
րիկ հայրենիքը՝ հույսը այն հայրենիքի՝ լուս Հայաստա-
նի: Այսօր անա մի նամակ ստացա շֆեղաշյա Շաֆեի հայր
Թեն Օհանյանից, — սա ևս քեզ նման սֆանչելի տայավորու-
թյուն է ստացել մայր Հայաստանիկից: Իմ համբույրներն
նրան էլ: Ավաղ, որ շատ քիչ տեսանք իրար, շատ քիչ խո-
սեցինք: Վաղը նամակ եմ գրելու Օհանյանին: Խնդրում եմ
շնորհավորես ամանորը ազնիվ ֆենտոգատ, իմ գրչի մեծ բա-
րեկամ Հայկ Ժամկոչյանին, մեր Մասիսի համար ինձ նման
մորմոհողներից մեկին: Նրան էլ նամակ գրեցի, խի՞նա լուրջ
մարդ Ստ. Շահբաղին էլ... (ավաղ, որ նրանից գրեք չեմ
կարդացել, այլ միայն երկու-երեք հրաշալի հոդվածներ):

Հ. Շիրազ

28 դեկտեմբերի, 1969, Երևան

18

ԱԶՆԻՎ ԲԱՐԵԿԱՄՄ՝ ՄԿՐՏԻԶ ԱՆԴՐԱՆԻԿ

Ստացա տխրաբեր նամակդ, շատ ախրեցի՝ իմանալով
բուն կյանքիդ էությունը, չգիտեի, որ այդքան վշալի եո՝
ողջ կյանքդ օրվա ապրուստի է վազում և ժամանակդ գլա-
նում է արծաթե գրիչդ ոսկեգոծելու... ուրեմն ինչու վերցրի
այն ինձ նվիրաբերածդ հագուստը (կոստյումը) երբ դու էլ
կարիքի մեջ ես եղած...

Բայց ինչ էլ որ լինի՝ գրիր հուշերդ՝ ժայռից էլ ծաղիկ
ու գինի ֆամոզ Հայաստանիկի մասին, և այնպես, որ տուն
գուն, անուն քերես բոլոր հայերին և մասիսները. ախ, միթե

չափաի անսնեմ մեր ազնիվ ու անչար ազգի համախմբումը
իր բոլոր հողերու վրա:

Համբույրներս քեզ, քո Հասմիկին, որի նամակն էլ հաշ-
մըվող հույսիս հենակն է,— իմ ողջույն համբույրներս դեր-
ձակին՝ սիրելի Կարոպետին, իր ընտանիքին, Քեն Օհան-
յանին, հայրենապահ Նորայրին, իր դուստր Շաֆեին, զրգ-
վանքներս ողջ սփյուռքին, ողջ հայությանը... Համբույր-
ներս...

Հ. Շիրազ

գարուն, 1970, Երևան

19

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Ավետիս ես գրում, հայանելով, թե իբր հաջողվելու վրա
են իմ այցի նամփեքը բացվել երազող շշուկներս... թե
իբր շար մարդուկները բարիացել են, մարդացել,— չեմ հա-
վատում, սիրելի եղբայր, քեզ խաբել են, կամ դու ինձ հույո
ես տալիս, որ վշտին հաղթեմ... հույսով: Բայց ինչ վիշտ,
երբ ես մտա եմ հույոի ասիունքին... չեն թողնում՝ չեմ գա,
միևնույն է՝ իմ քնարը չեն կարող լռեցնել՝ ինչքան էլ որ
ջանան ջինների նման գաղանաձածուկ թշնամիներս: Ես գնա-
յով ավելի ու ավելի եմ խորասուզվում այն մափի անդունդ-
ների թաղուտների մեջ, որ շար նախանձից են իմ նամ-
փեքը գոցում դեպի ձեզ, միայն ու միայն շարաթույն կախան-
ձից՝ քանզի լավ գիտեն, թե ինչ ասել է ոսփյուռքի հայու-
թյուն և... Հովհաննես Շիրազ: Այնպես որ աննտհանջ է իմ
կյանքը և մանավանդ իմ քնարի կամքը, ես նսնաչում եմ
ողջ հայությանը, մի հայ էլ դուրս չի մնում իմ սիրադաշտից,
ատում եմ կեղծ հայասիրություն կոչվածը, ուզում եմ
խոսել ողջ հայության հետ, որ միանան, իրար ոիրեն, պաշ-
տեն իրար, համախմբվելով շարակամ ազգերի աչքը հանեն—
նդենազործին սպանեն հայոց ծաղկումով, հայոց ծննդա-
տների բազմաբյուրապասկումով, սո՛ր ընտանիքների նա-

հապետական սրբությունների էլ տվելի ամրապնդումով,—
աշխարհի բոլոր մոլոր կողմերից բոլոր մոլոր հայության տուն
գալով, Մասիսի շուրջը հայ ազգով ոսկե գոաի կապելով ...
Այս է իմ գաղափարական ողնաշարի միջի ծուծը, ծուծի ծու-
ծը, այսինքն ոչ մի հայ շմեա հայ ազգից դուրս, վերածնվեն
բոլորը, վերահայտնան, ոչ թե վայանան ...

Այս է իմ էությունը, այսինքն որ հայ ազգն իրավ հա-
վերժա՛նա ... Այս պիտի խոսեի, եթե գայի ...

Մտղկյալ այս Հայաստանիկի մեծ Հայաստան դառնուլն է
երազս...

Ահա Շիրազս

1970 թ. ամառ

Երևան՝ հուլիսի սանդուղք Մասիսի

20

ՍԻՐԵԼԻ, ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ և ՀԱՍՄԻԿ,

ԻՄ ՀԱՍՄԻԿ, ԱՆԴՐԱՆԻԿ, ՍԻՐԵԼԻ, ՍՐՏԱԼԻ ...

Ստացա ձեր նամակները, մեկիդ նամակն՝ ուղեղով լի-
քը, մյուսինդ՝ սրտով լիքը: Լավ է, լավ է, ուրեմն դուք
ցվերջ չե՛ք տրոհվելու, չե՛ք բաժանվելու երբեք, քանզի մա-
նուկն էլ գիտե, որ ոչ սիրտն առանց ուղեղի, ոչ էլ ուղեղն
առանց սրտի չեն լինի և մի վայրկյան էլ չեն ապրի մենս-
թյամբ: Ուրախ եմ, որ շատ լավ է և սրտի, և ուղեղի սաա-
ցած տպավորությունը մայր Հայաստանից: Ես հավատում
եմ, որ ոչ մի հայ մարդ սրտի մեջ խեթ չի նայում մայր
Հայաստանին և գնալով բռունցքվելու է հայ ժողովուրդը իր
Մասիսի շուրջը ... Կեցցե սիրար, — ուղեղի մեջ, կեցցե ուղե-
ղը՝ սրտի մեջ: Գալով իմ վշտին, նա շատ մեծ է, — ողջ գերի
և ամայի Հայաստանն է նա՝ իր Մասիսներով, իր Անիներով,
իւր արցունք, իմ արցունք Վանա ծովով, վիշտ է նաև այն,
որ ձեր ջանքերը, ինչպես ազնիվ ու հայապաշտ նորայրի

ջանները,— ջանները նաև Հայկի, իմ ազնիվ գրչակցի,—
կարծես թե գուր են անցնում և ահա Մասիսն էլի իր արծվի
հետ՝ վանդակի մեջ է և կամուրջները շեն ձգվում անդնդի
վրա ... ինչևէ ... սիրաս ախուր է և հույսս անթև ... և միտքս՝
մռայլ, և նամփեֆն՝ գոց և մասիսներս ինձ պես և ես ար-
ցունեմք վանտ ծովի ...

Հովհաննես Շիրազ

27 մայիսի, 1971 թ.

21

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՄԿՐՏԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ
ՍԻՐԵԼԻ ՀԱՍՄԻԿ՝ ԱՆԴՐԱՆԻԿԻ

Ստացա երկուսիդ նամակն էլ լցված երկու հազար հայ
որտի հայ բարախումներով ... Ստացել եմ նաև ազնիվ ու
մեծ հայրենաոեր նորայր Օհանյանի նամակը և մանավանդ
ինձ կանչող վիզան՝ Եգիպտոսի կնիքով և Խորհրդային Միու-
թյան դեսպանի կնիքով ... Վերջապես, վերջապես, իմ սիրելի
հայրերիներ, վերջապես նախապտրհիս անդունդը կես կամուր-
ջով կամրջվեց— մնում է մյուս կեսը ... Ուրեմն՝ հուսանք
օրեր, հուսանք ... տարիներ,— դարեր հուսանք, որ իմ բախ-
տի արծիվը, որի մի թևը դուր արդեն ծնեցիք, մյուս թևն
էլ տյառեղի հայրերիները իցիվ կծնեն, իցիվ ծնեին,— ինչ,
ծնեն. միթե ֆնտծ է անգղանախանձը ... Մաղձը ... անհայոց:

Հ. Շիրազ

27 հուլիսի, 1971

22

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Ստացել էի նամակդ և ահա վերջապես հասավ ավետա-
լից կանչը (վիզան): Նույնիուկ չէի հավատում աչքերիս, կանչ,

որք հաստատված է Եգիպտոսի գլխավորների ստորագրու-
 քյամբ և կնիքներով— և դրանց կողքին խորհրդային դես-
 պանի կնիքն ու ստորագրությունը ... և իսկույն գրեցի վիզա-
 կանչը ձեռք բերող մեր ազնվագույն հայ նորայր Բեն Օհան-
 յանին, Եգիպտոսի փոտոտարան Ֆաուզի Համգոյին, Բեգ,
 ապա և Բենադատ և գրող Հայկ Փամկոչյանին, բայց ինչպես
 երևում է՝ ոչ մեկը չե՛ք ստացել իմ շնորհապարտության գրե-
 րք: Կարմանալի է... սակայն իմ այցելության համփան աա-
 կավին նույն մշուշի մեջ է, նույն մտախուղի մեջ է ասա-
 դավարոսը ... Կանչագիրը (վիզան) ներկայացրի այստեղ առ
 որ անկլ է, բայց մշուշը մնաց մեզ ու մշուշ՝ ծածկելով հույ-
 սիս բոլոր աչքերից բոլոր հար ու համփաները: Այնուամե-
 նայնիվ շնորհակալ եմ և՛ քո, և՛ նորայրի հույժ մարդա-
 սեր, հայապաշա ազնվությանց ջանքերից, որոնց ծնած պր-
 տուղն ահա սեղանիս վրա է, բայց այնպիսին, ինչպիսին է
 կտավի վրա վրձնած ոսկեգույն ծիրանը, կամ դեղձը ոսկե-
 գույն, կամ Մասիսի ձյունաշենով և տրեավառ իմ Հայաս-
 տանի ոսկեփունջ խաղողը՝ վրձինով բերված ... ինչե՛ն, չի
 ցրվում մտախուղը երե՛ն քոխտը ոչ թե մարդու քնա-
 վորության բազմանյութերի համախմբումն է, այլ հույզերի
 մի ինչ-որ միստիկայի մշուշում է թաղված, անֆենեյի, ան-
 գննելի, ինչպես ինձը ատոված: Իրավ, աշխարհում շատ ու
 շատ անֆենեյիներ կան, նենց մարդկային սիրտն էլ, միտքն
 էլ, ոգին էլ, ողջ երևակայությունն էլ խոր լաբիրինթ է կար-
 ծես: Բայց ամենից եղկելին շարաթույն նախանձն է, նույնիսկ
 նողկալի է նա, որ միշտ պատարտա է իր մի աչքը հանելուն՝
 միայն թե իրենից բարձրի երկու աչքը հանվի ...

Այսպես ուրեմն, էլի պիտի սպասեմ, այնինչ ոչ միայն
 դուր, Եգիպտոսի հայությունը, այլև կանչում են (թեկուզ և
 նամակներով) Ամերիկայից, Բուենոս-Այրեսից, Կալիֆոռ-
 նիայից, Լոս-Անջելոսից, որտեղ պիտի կրկնվեին շիրագյան
 գրական օրերը՝ եթե ... համփեֆս քացվեին: Կանչում են նաև
 Բեյրութից (նույնիսկ օրս թերթերու մեջ տպվելով կանչերը),
 Փարիզից, Մարսելից, Հալեբից, Բաղդատից, Կանադա չված
 բայց և խարված հայության գաղութավայրերից, նույնիսկ
 բանաստեղծություններով են կանչում նվաստիս, բայց ի՞նչ

կարող եմ անել— ես ինքս էլ շատ կուզեի գեթ մեկ անգամ այցելել իմ հեռավոր հայր ու եղբայրներին, իմ պանդխտաթափառ արյունակիցներին, եղեռնից մազապարծ եղած, հագիվ փրկված մարդամասունքներին, որոնք այս ու այն կողմերում, աշխարհի բոլոր-մոլոր երկիւմների տակ ինչ բայներ են դրել՝ սպասելով բազմահոծ հայրենադարձությանը, որ գան և մայր երկրի ծոցում վերածնվեն, վերածնելով մասիսները, հավերժացնելով հավերժության արժանի իմ սրբություն հայ ժողովրդին ...

Հ. Շիրազ

10 սեպտեմբերի, 1971

23

ՄԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Ստացա զարմանահրաշ նամակդ, միթե իմ բարի բարեկամները շարացել են,— ձեռքս չի ընկել ոչ «Նաիրի», ոչ էլ «Սփյուռք» շաբաթաթերթերը: Միայն այսօր նամակդ «գուժեց» առաջինի դավալից ելույթն՝ իմ ֆնարի «սավերների» ընդդեմ,— բայց կա՞ որևէ ֆնար՝ անսավեր ... կա՞ անբիծ արև ... Ինչևէ, գլուխը փարք,— երևի աշուն են աղում»,— առհասարակ անձն ավելին է, ֆան համընդհանուրը՝ ազգը ... Ցավալի է, ցավալի, ձեռքս դողում է, երբ կուզեմամ գրել մի բանակոթիվ, երբ դիմացինս արժանի չէ «զինյալ» ուշադրության, հենց թեկուզ նրա համար, որ կեղծում են, նշանի հետևից են վրաս խոյանում: Ճահիհից ...

Առհասարակ՝ գրական նախանձողները վխտում են և շուրջս ... նոքա շունեն սրբություն,— Թումանյանի դեմ կրո՛վում էին ոչ գրական ոչնչությունները, իմ դեմ կո՛վում են գրական ոչնչությունները, և աստ, և թե ոնդ, և անդ (ոփյուռֆում) և թե աստ ...

Եվ, սակայն՝ Հայկ Նահապետը իրավ է,— պիտի կարդայի, որ կարենայի պատասխանել ձեռնապտակին ոտնապտակով:

Ողջ լեռուք, համբույրներս Հայկ եղբորդ, Հայկ բարի
բարեկամիս, ողջ հայ սփյուռքին, — Հասմիկիդ էլ:

Հ. Շիրազ

20 սեպտեմբերի, 1973

24

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏԻԶ

Ստացա նամակդ, որին կսպասեի երկարորեն... Ուրախ
եմ, որ ինձ հիշում եմ և մանավանդ՝ բարությունք լի: Իմ
ձեռքն ընկավ միայն «Նաիրի» շաբաթաթերթի այն թիվը,
որում մեջ կա նշածդ հոդվածը՝ իմ ֆնարի սովերը չորս տշ-
ֆով տեսնող և լույսը՝ մեկ աչքով... Բայց մինչև հիմա
կփնարեմ «Սփյուռք», որտեղ կա պատասխանը, ինչպես
գրում ես դու, և որը իբր հանել է այն չորս աչքերից երկու-
սը, և կարգի հրավիրել թե նայիր բնությանն ազնիվ աչքե-
րով ...

Շատ եմ խնդրում ինձ դրկես ֆո ձեսփինը, կարգամ՝ ետ
կուղարկեմ...

Ջարմանալի է՝ դեսում էլ շկամներ ունիմ, դեսում էլ...
Բայց կաղոթեմ, որ ամենն էլ բոլորն ալ ապրին՝ վառնգի մի
բուռ ենք, մի ծովից մի գետ ենք մնացել ...

Համբուրում եմ ազնիվ և ազնիվ հոգիդ, հայրենապաշտ
հոգիդ: Հրաշալի Հայկին և հրաշալի Հասմիկիդ բուռն համ-
բույրներ հայրենյաց հովիկներով՝

Հ. Շիրազ

12 դեկտեմբերի, 1973

25

*Այգեպանի պես
Ժպտացիք ինձ դուք,
Երբ ծիլ էր մի հեզ*

*Քնարս մանուկ,
Բայց երբ մեծացա,
Երբ կաղնիացա՝
Ինչո՞ւ ձեր աչքի
Գրողը դարձա:*

21 սեպտեմբերի, 1975

26

ՍԻՐԵԼԻ ՄԿՐՏԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ

Սառցա նամակդ, դժբախտաբար չեմ ստացել Հայկ Ժամկոչյանի «Ճբագր», որին կսպասեի ... ոչ էլ քո գրածը: Շնորհակալ եմ, որ ինձ հիշում ես, — Ների, որ ասեմ, պահ մի սրտողած՝

Աստված, մոռացիր ինձ մոռացողաց ...

Հ. Շիրազ

19 հուլիսի, 1975

Բացիկի վրա Սանտեինի Գրիգոր Տուսետրդու խաչքարն է
(1184 թ.)

Գործ Մխիթար կազմողի

27

*Գարնանային ողջույն ձեզ
Անդրանիկ, Հասմիկ, Հայկ
Ժամկոչյան, Արմեն Տատուր.
Կանչիր, սփյուռք, կանչիր գամ,
Քեզ յոթնակուռք Մասիս տամ ...*

Հ. Շիրազ

20 մարտի, 1977

ԳԱԹ. № 3491

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏԻԶ

Ստացել եմ ամանորի բացիկդ՝ հույսի վառ մոմով — որ ձնծաղիկի նման բերանիկը բացել և, ասես, հույս է խոսում... իմ այցելության գոց նամփի առջև ...

Բայց և այնպես իմ պաշտելի հայոց այն լեռներից իջնում են ձյուները և միահյուսվում մազերիս և ջանում ու նզնում խրվել սիրաս ...

Ու դեռ այս գրիս գույնով «լույսն» է, որ ցցվում է և գոյակամուրջ նամփիս շրթունքին, և օրերս ուներիս նզնում և տարիներս են խորանալով՝ ծանրանում, որ ծալեն ծնկներս՝ և ծերացումս ահաբեկիչ է...

Իմացա, որ Հայկը ևս, և նույնիսկ Շահբազը (մեղապարտ մի բանում, քեզ հետ ուս-ուսի են տալիս, որ ... գամ,— և սակայն՝ միայն ձեզ չէ, որ մերժում է շար բախաի վնուկը, կանչ ունեմ Իրանից, կա Հյուզոյի հայրենիքից, կանչում են հեռավոր Նիագարայի հավերժառև ծիածանի աակ ծվարած հայ ոգիները, կանչում էր ինքը գույզն ինչ (փոքրիկ) Հայաստանիկը՝ Բեյրութ հայաբունիկը, որ, ավաղ, Անիիս օրն է ընկնում, և ցավեց սիրտս, ինչպես երգերս և յոթնաբարուրիկ ձագերիս աչքերիս առջև այրեին ...

Տես թե ինչպես են ցնորվում մարդ արարածները, երբ կասկածում են աստծո գոյության հրաշքին ... այս էլ՝ միալեզու, միացեղ եղբայր արաբները որ իրար են խոյանում, իրար ... խողխողում, ինչպես մերոնք երբեմնապես...

Բայց հույսի փեթակից փախան վշախ բոռերը և հագարավոր մեղուններս հեռվից հավաախս մեղրը բերին՝ այն հրաշալի համբավը, որ Պեյրութում հայ զանգվածները շեն խելահեղվել՝ շեն խրվել կովի արնատիղմը, շեն անցել երկու եղբայրներից ոչ մեկի կողմը, շեն սրահարել ոչ մեկին ...

Այս բանը հանճարեղության է հասցրել այդ կողմերի հայերին, հայությանը, կեցցեն եղբայրներս, որ խելի են եկել և այժմ ջանում են ու ջանում, որ շթափվի տրաբ՝ եղբայրակապ արյունը ... որ մեր ազգային դատի խոպանն հերկելու

Ելենն մերոնք՝ բոլոր-բոլոր հայերը. մեծն ու պսակը, այրն ու կինը, որձն ու էգը, աղավնին ու բազեն, լորիկն ու արծիվը, վարդն ու գինաբբեն, թորթն ու հուսամը, ուրցն ու Հասմիկը, շուշանն ու մանուշակը, տնթառամն ու նունուֆարը,— եղնիկն ու այծյամը, միազգացած հարսասահարվածը, հայը, հայ ցեղը, հայրենագուրկը այդ՝ յոթը կողմերի ... ուրեմն, բարեկամներս՝ հույս աստված ... թեպետ և դեռ անշարժ են մասիսներս, բայց և անգութ են հույսերս ... Իմ կյանքս՝ այսինքն սիրտս այնքան հույսի դալարներ ունի, որ եթե սիրտս վառեմ՝ Մասիսի շղթաների և իմ տոջն կանաչ լույսեր կվառվեն ... տուն-տուն, դեպի տուն, դեպի հայրենիք, դեպի մեծամայր Հայաստան ...

Համբույրներս քեզ, Հայկին (Ժամկոչյանին), Ստեփանին, Հասմիկիդ, Նորայրին և բոլոր հայ սփյուռքին՝ համբույր հավերժաբույր:

*Հովհաննես Շիրազ
ամենայն հայոց*

16 օգոստոսի, 1977, Երևան

29

Մասիս սիգարետների պիտակի վրա Շիրազը գրել է.

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Իմ բազում բանաստեղծություններ ձեռքն ձեռք են անցել, փոփոխվել, թուլացել են, դարձել ոտանավոր, մնացել են ուղն ու ծուծը բարեբախտաբար, միայն դա չէ, որ եղծվել է, տեղ-տեղ փոխվել, ուրիշ-ուրիշ անշնորհիք ձեռքերի հետքեր կրելով ... այդպես են դժգունել «Շախմատի արքան», «Եղեռնի աստիճան», «Տոթ բուռ մոխիրը», «Ղարաբաղի ողբ», «Ինչո՞ւ հայերեն չես խոսում», «Ամենայն սրտովս», «Հտննարեղ խելագարը», նույնիսկ «Հայոց անունները», նույնիսկ մասեր «Հայոց Իանթեականը» պոեմից՝ այնպես են արտա-

գրելիս ձևափոխել, որ միայն հեղինակիս ուղն ու ծուծն են մնացել, վասնզի այնպես են մնացել շարի այո դարում...

*Ավա՛ղ Մասիսներս,
Հե՛յ, վաղ Արազներս:*

Հ. Շիրազ

10 հուլիոի, 1979

ԳԱԹ № 3491

30

ԱՆՄԱՀ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Եգիպտահայ հայրենասեր պարոն Շարլ Սարգոյանը ինձ հանձնեց (Մկրտիչ Անդրանիկին—Խ. Բ.) այո նամենի մեծարժեք մագաղաթյա աղոթագիրքը, որ բերեմ հայրենիք: Գրքին դրսում 160 ոսկի էին տալիս, բայց հայ Սարգսյանը մերժեց վանառել՝ հանուն հայրենի հիշատակաց հարմարեցման: Եո էլ մեծ ցնծությամբ եմ բերել և հանձնում եմ հավերժ Հայաստանին՝ համբույրներովս

Մկրտիչ Անդրանիկ (գրող, Եգիպտահայ)*

* * *

Շիրազը մի ֆանի ծաղիկի հետ Մկրտիչ Անդրանիկին երկառո է հղել. «Ինչպիոի լեզվով կթարգմանվի լոուրջուոնդ»:

Հ. Շիրազ

31

Աննտհանջ իմ բարեկամ, իմ գրչակից Մկրտիչ Անդրանիկ

Ստացա երկարաշունչ նամակդ (հապա կսես թե ժամանակ չունեմ հուշերի գիրքս գրելու...): կարդացել էի նաև

* Նամակը գրված է Շիրազի ձեռքով:

«Ջահակրիս» մեջ գրածդ, ինչ որ կգրեիր նամակներուդ մեջ՝ հոն կար, գրեթե մանրամասնորեն:

Շնորհակալություն նամիեֆս բացել ցանկացող ջանքերուդ համար: Ես գրավոր դիմում եմ տվել, վաղուց, բայց տակավին ձայն մը չի կա: Քեզնից էլ իմացա, որ իմ անունով փողոց են կնիել Իրանում, Նոր Զուղայում, իմացա և սիրտս խայտաց, որ անասված չեն իմ մրմունջներն ու մոունչները՝ հայապահպանման ամենօրյա Ավարայրում: Երենկ թողնեին անգամ մը անցնեի անվանս փողոցով ... միայն Զուղայում չէ, Քեյրութում էլ, առում են, կա, բայց անդ էլ դիմադրող սինի իմ բախար ... իմացել եմ, որ ... սիրտս տխուր է, էլ ինչ երկարեմ, երբ նույնիսկ կարող է նամակս տեղ չհասնի ու դուն էլ միայն պանդուխտ եղբայրներիս ու քույրերիս նրման կարծես, թե ես ծույլ եմ, որ իբր չեմ պատասխանում նամակիդ:

Համբույրներս ողջ հայ սփյուռփին

Հ. Շիրազ

32

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Այս փոքրիկ բանաստեղծությունն եմ դրկում քեզ, որպես պատասխան քո հրաշալի և հույժ մարդասիրապաշտ հոդվածին, որով ձաղկել ես իմ դեպի սփյուռփ՝ գեթ մեկ շաբաթով նամիես շքացողներուն, նոքա մեկ-երկու բուռ գրական փոքրություններ են, լինելով իրավ մեր ազգի ազնիվ բարեկամները, — իմ, այսպես ասած՝ գրական ... գանահիկ թշնամիներ են ...

Չկամ մարդիկ են, լուն ուղա սարհողներ, բանասարկուներ:

Այնուամենայնիվ հույսս ոչ թե լոր է, այլ արծիվ, կամ բազե է՝ թեկուզ վանդակի մեջ:

Համբույրներս ազնիվ Օնիկը՝ հզոր հայասերը կրեբե քեզ, Հասմիկիդ, Հայկիդ, Հայկ Փամկոչյանին, իմ քնարի բարի բարեկամներին:

Հ. Շիրազ

Երեւոյն իր լուսանկարի տակ գրել է.

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Չստացա շաբաթաթերթը և խոստմանդ ծաղիկն ընկավ
առանց պտղելու ... Ինչո՞ւ...

Հ. ՇԻՐԱԶ

ԳԱԹ N 3491

Նկարի տակ.

Անի քաղաք նստե՛ կուլա,

Կա ասողը մայր իմ, մի լա՛ ...

Հ. Շիրազ

ԳԱԹ N 3491

ԳՐՈՂ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ (ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՎԱԴԱՅԻՆ)
ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Ինչ գրեմ էեզ, որ խորամուխ լինի և խելացի: Գլուխս
խառնված է, նոր և մեծ բան եմ սկսել, լավ եմ գնում, կար-
ծես թե ձիավոր եմ: Ինչ ոնց ես, դու, որ միշտ հիվանդ,
բայց ամենից եռանդունն ես: Հաջողվեց կուրորտիդ գործը,
երբ ես գնում, «գր. էջը» տվել ես: Հաջողությունն գտա՞վ,
թե ...

Քեզ բարևում է Իաշտենցը, շատ է կարոտել: Բարևներս
ձեր տանեցոց և մեր ընկերներին: Առա, թող լավ բաներ
գրեն, ոչ թե Մ. Կ.-ի պես չար և ապիպակ....

Բարևներով՝ *Հ. Շիրազ*

Սաղկաձոր

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՈ ՋԱՆ

Այսօր երեկոյան եթէ խոսեմ դիտարանում, անպայման
կխոսեմ նաև և «Սրաի» մասին՝ հիացով:

Հ. Շիրազ

1941 թ.

ԻՄ ՍԻՐԵԼ ԱՆԻՐԱՆԻԿ

Ահա Մանիկ փայրս գալիս է մտադ: Խնդրում եմ ամառա-
յին խոստումդ կատարես՝ օգնեո նրան ինչով որ կրնան, մի
խոսով և փայրն էլ է համարյա թե, ուրեմն մի թույլ տա, որ
ախրի, մի տուն լիք մանուկների աեր է և կարմիր բանա-
կայինի ընտանիք, դու լավ գիտես, որ բնավորությամբ խեղճ
է ու անօգնական: Խնդրում եմ օգնես ...

Միշտ և՛ Շիրազ

ՍԻՐԵԼԻ ԱՆԴՐԱՆԻԿ

Ահա այն ազգիկը, որի մասին հեռախոսեցի և դու խոս-
տացար իմ խնդրանքը կատարել՝ բարությամբ լցվելով գոնե
լոկ այն պահին, երբ բննելու ես նրան և առարկայից՝ հա-
յոց գրականությունից, որն իմ պաշտելին է, ուրեմն հույ-
սով եմ, որ կհեծնես իմ հույսի սոլիտակ ձին, ինչպես մեր
ազգի այն պաշտելին (խոսքը գորավար Անդրանիկի մասին
է, (Խ. Բ.) չէր իջնում ուղիաակ ձիուց, հայոց տան դառ-
նահույ ժամանակների բյուրավար որբուկներին փրկելով
յաթաղանի արյունա երախից, — այն հավերժական սպիտակ
ձիավորը, որի անվան թողն է անունդ, Անդրանիկ, — բայց
դու ուր, նա ուր ... դու գրիչ, նա թուր, այն էլ ինչ, ինչ թուր,
լուսափայլ մափուր, անմեղ, ինչպես մայր, մափուր, ինչպես
փայր...

Ուրեմն հույսով եմ, որ գեթ այսօր կհեծնես նրա անկաշառ մասիսածյուն ձին՝ բարության, լավության, օգնության, փրկության, մարգասիրության ձին,— ա՛խ, ինչ լավն է լավությունը՝ կարծես ոռխակն է երգում, երբ փրկում ես թշվառ մեկին՝ կարծես աշխարհն ես փրկում, ինչ տալիս է ձեռս աշխարհին՝ այն էլ մնում է իմ ձեռքում, ինչ շի տալիս՝ այն է կորած, ա՛խ, լավությունն միշտ արե՛ք, որ բարության լույս ձիերով Մասիսներս ինձ բերե՛ք ...

Մի կայծ տվող լավությամբ էլ անլեզու քարն է երգում,
Մարդն աշխարհին ինչ տալիս է՝ այն մնում է իր ձեռքում,
Լավությունն անես՝ ծովն էլ որ ձգես՝
Ծովից դուրս կգա և կգտնի քեզ ...

Հ. Շիրազ

ՆԱՄԱԿՆԵՐ ԳՈՒՍԱՆ ՎԱՂԻՆԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հովհաննես Շիրազը սերտ կապեր ուներ ընթերցողների հետ, օգնում էր գրական հակումներ ունեցողներին, երիտասարդ ստեղծագործողներին: Հաճախ էր հանդիպումներ ունենում բանվորների, կոլտնտեսականների և մտավորականության հետ: Նա շատ անգամ է եղել Ապարանի շրջանի Երնջատափ գյուղում, հանդիպել աշխատավորներին, դպրոցականներին: Հավաքվում և լսում էին անտիպ Շիրազին ... Հենց այդ ժամանակ էլ բարեկամություն է հաստատվել Երնջատափցի գուսան Վաղինակի հետ: Շիրազը իր նամակներում օգտակար խորհուրդներ է տվել գուսանին: «Առայժմ խամե՛ք, ինչպես արծվի ձագը ոչ թե արծվի թևերի տակ, այլ ձ ի մեջ... տհեր, նգնիր, նգնավորիւր Ի՞նչ տնե՛ն ու հույսը, հույսն ու հավատը...»: Նամակներից մեկում Շիրազը ժողովրդի մասին ասում է. «Նա ազնիվ է, մշտական է, ինչպես ծովը նկներին»:

Շիրազը Վ. Վարգանյանին համարել է «գորմանալի հայրենասեր-հայասեր ... տիպար ազգանվեր ազնվության», «Ոսկեհանք բանաստեղծ», գուսանը Շիրազի անունը տալուց հուզվում է, տշֆերը արցունքով լցնում— Իմ միակ գան-

ձր Շիրազի հետ ունեցած բարեկամությունն էր,— ասում է նա,— ինչ այժմ՝ նրա սուրբ մասունք դարձած թղթերը: Այն պահպանում եմ խնամքով, նվիրելու եմ բացվելիք նրա տուն-թանգարանին:

1

ՍԻՐԵԼԻ ՊԱՏԱՆԻ ՎԱՂԻՆԱԿ

Ստացա ձեր նամակը և ոտանավորները. կարդացի և գտնում եմ, որ գեոեո պատանի է նաև ձեր տնհայտ շնորհքը և հույո կա ոակայն, որ մի երանելի օր նա հայտնի կգաոնա ...

Աո այժմ խամ եք, ինչպես արծվի ձագը ոչ թե արծվի թեերի տակ, այլ ձվի մեջ,— ինչպես վաղվա հոր համբույրը կամ ոերմը մանուկ ողնաշարի մեջ:

Այնպես որ մի վուոիր, այլ աքնիր, հգնիր, նգնավուրիր քո ջանքն ու հույսը, հույսն ու հավաար, աուանց հավատի մարգուց գայլ էլ գուրս չի գա...

Շուրուակիր ստեղծագործել ...

Հ. Շիրազ

1963)

2

Սիրելի Երնջատափ գյուղի Վաղիճակ

Սուսցա ոտանավորներով լիքը նամակներդ,— բայց ինչ ասեմ, նախ որ հում եմ, ձվի մեջ եմ, կամ ձագ եմ, շեն թևավորվել, շեն գտել իրենք իրենցը, մոր թեերի տակ դեո շատ եմ ծվարելու և սպա, սիրելիս, մի՞թե չգիտես, որ ես այստեղ, Անի քաղաքի պես շրջապատված եմ, Անին աուելի թուրք յաթաղանով: Ես ... այնպես, որ շաա տխուր եմ,— պատահակտն շէր այն գրական երեկոյին ձեր դպրոցի դիրեկտորի և հայոց լեզվի ուսուցչի խոսքը՝

— «Այսօր մենք հանդիպում ենք Անտիպ Շիրազի հետ...»:— Հասկացիր և ներիր տմենահզորի ... անզորությունը,— ահա թե ինչ քաոս է իմ շուրջը ...

Հ. Շիրազ

ՍԻՐԵԼԻ ՎԵՂԻՆԱԿ

Ստացա նամակդ, շնորհակալություն, որ ինձ շես մո-
ռացել և ինձ նիշում ես, ես ևս լավ եմ հիշում քեզ և քո ողջ
բնտանիքդ և այն իրիկնաճաղը, որ վայելեցինք ձեր օջախի
առջև, և այն ողջ գրական երեկոն եմ հիշում— ուր թըն-
դացնում էին հայրենի երգը ձեր ազնիվ գյուղացիները ...
ստանալորներդ կարդա ձեր դպրոցի դեկավարի մոտ, այն
սև, թուխ ազնիվ հայի մոտ, նա շատ խելացի և զգայուն
մարդ է ըստ երևույթին ... գարնան մեջերին ուզում եմ գալ
ձեր կողմերը ...

1967

2. Շիրազ

Այդ օրերին Շիրազը Երևանիցի Սմբատ Աբրահամյա-
նին նամակ է գրել, որը նույնպես մեզ է արամադրել Վ. Վար-
դանյանը: Ահա այն.

Սիրելի Սմբատ Աբրահամյան, իմ գրչի քարեկամ գուսան
Վաղինակ նորածովեցին ինձ տասց, որ ինձ շես մոռացել
և նույնիսկ ինձ ուզում եմ լնտի հրավիրել, և ապա իրիկնա-
դեմին գրական երեկոյի՝ շրջանի աշխատավորության հետ—
սիրով կգամ, մեծ սիրով ... մանավանդ, որ գործ կունե-
նամ նորեն մի ազնիվ և հայրենասպաշտ մարդու սրտի հետ,
ոչ թե խաբուսիկ ժպիտների ... բայց ավելի ուրախացա, որ
դու այժմ թեպես առաջ ես փոշված, բայց էլի՝ բարձր աթո-
ռի վրա էլ՝ ցածրասիրտ ես մնացել, ինչպես կասեր ժողո-
վուրդը .. և տակավին այս ոսկեհանք բանաստեղծը՝ Վաղի-
նակն էլ նույնը վկայեց ... ուրեմն օր կխլեմ ինձանից և
կգամ ... կաշխատեմ ինձ հետ արտաստեղծներ էլ... տնախա-
ներիցս ...

Հովհաննես Շիրազ

1967 թ., Երևան

ՍԻՐԵԼԻ ՎԱՂԻՆԱԿ

Ես ստուցա նամակդ և շատ զարմացա, ինչպես ես հուսահատվում, երբ էո գլխի տերն ես ... հապա ես ինչ անեմ ...

Հ. Շիրազ

5

Շիրազը Վ. Վարդանյանին է ուղարկել իր նկարը հետեյալ ինքնագրով.

Նվեր ազնիվ հայորդի Վաղինակին, բռնաստեղծի սուրբ ոգով շաղախվածին:

Հ. Շիրազ

6

*Բարեկամներս ծովեն, Վաղարշակ,
Թշնամիներս սև փրփուրի տակ ...*

* * *

*Գիտեմ Մասիսն իմ հայրենի
Կղանա թագը Հայաստանի ...*

Հ. Շիրազ

7

*Երանի ձեզ, զմրուխտ սարեր,
Որ չեք տեսնի պանդուխտ օրեր,*

Եվ քեզ Վաղո, յոթ երանի,
Որ քեզ ծաղկանց բույրն է գինի ...

Հ. Շիրազ

Ճ

ՍԻՐԵԼԻ Վ-ԻՆ.

Շնորհավոր քո նոր տարին,
Ցորեն ծնի հույսիս գարին,
Մեր լույսն հաղթե թուր— խավարին,
Որ դուռ բացվի հայ աշխարհին,
Սուրն տեսնի այս նոր տարին,
Խաղաղն հասնի հազար դարին,
Ծաղիկ բսած տեսնի քարին,
Մասիս հասնի հայոց բարին,
Արժանանաք մեր գոհարին,
Ճամփա բացվի մեր քնարին
Մահ շղիպղի սրտիս լարին
Շնորհավոր քո նոր տարին:
Աստված հասնի Մասիս սարին,
Մասիս սարին,
Մեր աշխարհին,
Հավերժանա հայոց բարին:

Հ. Շիրազ

1968 թ.

Հունվար

Ձմեռ ...

Ծ

Շնորհավոր նոր տարիդ, սիրելի Վաղինակ, շնորհիդ, որ
հայրենաշունչ է, թող այս աստի հորդի, ափից ելնի, ինչպես
մայր Արագն է ափից ելնելու և Մասիսին այս կողմ է բշ-

լու, դեպի գիրկդ, դեպի մեր ողջ ազգի կարոտյալ գիրկը...
Թող որդիդ էլ է՛լ ավելի խելացվորի և մնա գրկիդ մշտորեն ...
Ողջ ընտանիքովդ երկար ու դարեր ապրես որդիներիդ,
թոռներիդ, ծոռներիդ օջախի մեջ ...

Հովհաննես Շիրազ

1969 թ.

10

ՍԻՐԵԼԻ ԻՆՔՆՈՒՍ ԳՈՒՍԱՆ ՎԱՂԻՆԱԿ

Ստացա նամակդ և ինձ նվիրածդ ոտանավորը, որը լիքն է և՛ վշտով, և՛ հայրենյաց լեռ հավատով:— Երկուսի համար էլ երեք Շնորհակալություն: Նամակդ նաև կանչ է, ուզում ես գրական հանդիպման գամ Ապարանի ֆաջ ու ազնիվ ժողովրդի հետ, կգամ միայն թե մի փոքր կանչ էլ լինի ձեր վերին սֆերաներից ... Վասնզի սովերներ են հետևիցս պտրավում, ամենքը չէ, որ մեծն Մասիսի արժեքը հոգով գիտեն:

(Այսպես եմ գրում՝ ձեռիս տակ, փաստեր ունենալով, խուռն, հոծ տո հոծ):

Այն Արշակյանին գրել էի, բայց մինչև օրս ձայն չի հանում ... Ուրեմն կգամ՝ եթե կանչվեմ,

Այնպես, ինչպես հարկն է,

Իսկ ինչ վերաբերում է ժողովրդին՝

*Նա, գիտեմ, որ մշտականչ է, ինչպես ծովը
ձկներին ...*

Հովհաննես Շիրազ

(25.5—1970)

11

Շիրազը Մասիսների պատկերով բացիկ է ուղարկել:
Առաջին էջի վրա գրել է.

Բոլոր ազգերը թող հասնեն լուսին՝
Միայն թե հայը հասնի Մասիսին:
Երկրորդ էջում երկտող:
Սիրելի վաղինակ էրնջատափի
Իմ անունից ողջունիր հարսանիքին,
Թող մի բարձի ծերանան
Ծաղիկները մեր երկու,
Մինչև Մասիս բարձրանան
Հայ քաջերս ահարկու ...

Հովհաննես Շիրազ

1971 թ. Երևան

12

ՍԻՐԵԼԻ ՎԱՂԻՆԱԿ

Իմ վիճակը դարձյալ նույնն է, ինչպես երգերիդ բախար,
բայց ես մաքառում եմ, կռում ու կոփում եմ, որ ընկել եմ
դարձն ու ժամանակը դժնի, հույսս վտու կանթեղն է Արա-
գածի վրա կախված՝ աչքն նառած դեպի Արարտա ... ան-
պայման:

Հ. Շիրազ

13

ՍԻՐԵԼԻ ԳՈՒՍԱՆ ՎԱՂԻՆԱԿ ՆՈՐԾՈՎԵՑԻ

Շնորհակալություն՝ ինձ այնպես լավ ընդունելության
համար՝ մեծն ու ազնիվ Արա Գեղեցիկ Հայոց արքայի ան-
վտն Արայի լեռան վրա՝ աշնամուտված անտառում ...

Հուսամ՝ գարնանամուտվողի
Հովանիին էլ արժանանալ՝ որևէ գալիքում:

Հովհաննես Շիրազ

1979 թ. Երևան

Սիրելի հայունքի.

Գրաբերս հայ գուսան է, Վաղինակ Վանենցը ... Իր որդին այս էլ հինգ ամիս է լուր չի տալիս հորը, որդին գտնվում է հեռվում, — այժմ վշտահար ծնողը ուզում է գնալ անսուքյան ... Խնդրում եմ ընդատաչեք բանաստեղծին:

Իմացեք, որ մի բազմաաանջ սիրտ սփոփած կլինեք և նույնիսկ փրկած կլինեք մի կյանք՝ եթե շղանաք մի փոքրիկ, արագահաս բարություն ...

Հովհաննես Շիրազ

1968 թ.

14

Գուսան Վ. Վարդանյանը մեզ է տրամադրել նաև շիրազյան այլ գրություններ, սրտն վերաբերում են նրա ընտանիքին և վկայում են բանաստեղծի մարդասիրության մասին:

15

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ ՍԱՐԳԻՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ահա այն բանվոր — հայորդիս, գուսան Վաղինակի որդին, քո Հովանու տակ՝ բանվորը, որի մասին խոսեցի ձեզ հետ՝ խնդրելով ձեր աջակցությունը ...

Նա այժմ գրեթե անօթևան է

Հույսով եմ, որ մարդասիրությունը կա, կամ կլինի:

Հ. Շիրազ

ՍԻՐԵԼԻ Ս. ՄԵՐԳԵԼՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԻՄ ԵՂԲԱՅՐ

Կրաբերս գուսան Վաղինակի օրդին է, վերադարձել է հայրենիքին իր նախապարտքը տալուց, — հայթեյաց սահմաններին զինվորվելուց հետո, այժմ ուզում է ուսումը շարունակել բարձրագույնում, հասակն էլ հեկնց այն է, ինչ կուզեմ, — ես խնդրում եմ Ձեր ուշադրությունը ...

2. Շիրազ

*Բարությունդ քից ծովն էլ սևանա՝
Դուրս կգա վաղը ծովից էլ վանա ...*

«Շատ սիրելի էլիային, — իմ Մարիամ և Գոհար քույրերից ոչ պակաս ոչ ավելի...»

էլիա Փահլևանյանի «Բանաստեղծի արձանախից»

Ես շատ ընտանիքներում եմ Հովհաննես Շիրազի նկարները տեսել իրենց հարազատների նկարների հետ կողք կողքի կախած: Լսնդնում Ասատուր Կյոզալյանի անձնական գրադարանի պատերին միայն Շիրազի տարբեր տարիների նկարներն են փակցված: Խո իր գրադարանը 1960-ին կոչել է Շիրազի անունով: Շիրազ լուստեկարչատուն կա Բեյրութում, նկարիչն էլ իրեն Շիրազ է կոչում: Ո՞վ գիտի, թե էլ ինչե՞ր կան ժողովրդի մոտ Շիրազի անվան և նրա ստեղծագործությունների հետ կապված: Բայց ինձ համար հայտնագործություն էր երևանաբնակիչ, վաստակած մանկավարժ էլիա Փահլևանյանի շիրազյան հավաքածուն, որի գաղափարը ժամանակին խրախուսվել է պոետի կողմից, և խորագրվել «Բանաստեղծի արձանախ»: Այս տեղանակոչությամբ հետ միասին Շիրազը «Այմանախում» էլիայի մասին գրել է.

*Քեզ վայել է հայոց թագուհի
Փառանձեմ անունն առնել վեհաշուք.*

Քանզի հայ ես դու, գու իմ երգի քույր,
 Նաև սրտիս քույր, ազնիվ ու մաքուր,
 էլիա անունը շատ խորթ կհնչի
 Երգի հետ իմ ջինջ
 Չի ասի ոչինչ, քույր իմ սիրասուն,
 Քույր իմ երազուն,
 Փառանձեմ անունը քեզ հետ
 շատ է սազում ...

Շուրջ երեսուն տարի է, ինչ Փահլեանյանը մեղվաշա-
 նորեն հավաքում է Մեծ բանաստեղծին նվիրված հոգված-
 ներ, փտոտեր, լուսանկարներ և այլ նյութեր: Նկարիչ Եր-
 վանդ Սեթյանի ձեռագրամաք դաս-դասել մեծադիր «Ալբո-
 մում»: «Բանաստեղծի ակմանախի» ստեղծմանն օգնել ևն
 նաև Բանդակագործ— նկարիչ Միֆայել Ավետիսյանը, գե-
 դանկարիչներ Արտաշես Հունանյանը, Գևորգ Կարապետյանը,
 պոետի որդին Մասիսը, ֆույրերը՝ Մանիկը և Գոհարը: Այդ
 ինքնատիպ և եզակի «Ալմանախը» կազմված է երեք բա-
 ժիններից: Բացվում է «Մեծ բանաստեղծին» բաժնով, որ-
 տեղ տեղադրված են նշանավոր մարդկանց՝ գրողների, ար-
 վեստագետների, գիտնականների, գրականագետների խոս-
 տերը Շիրազի մասին. երկրորդ բաժինը վերնագրված է
 «Ժողովրդի սերը», իսկ երրորդը՝ «Գյումրին և գյումրեցի-
 ները»:

— Թեև վաղուց էի նախաշում Հովհաննես Շիրազին,
 իբրև Բայրենակցի և մեր ժամանակի մեծ բանաստեղծի,
 կարդացել էի նրա ստեղծագործությունները, աշակերտների
 մեջ սեր բորբոքել շիրազյան պոեզիայի նկատմամբ,— տսում
 է է. Փահլեանյանը,— բայց երկար ժամանակ չէի համար-
 ձտկվում մոտենալ բանաստեղծին, թեկուզ և մի ֆանի խոսք
 փոխանակել, կազմակերպել նրա հանդիպումը մեր զրպ-
 րոցի մտնկավարժական կոլեկտիվի և դպրոցականների հետ:
 Օր-օրի Շիրազի հետ տնձնտպես հանդիպելու ցանկությունը
 մեծանում էր: «Քնար Հայտատանի» ժողովածուի առաջին
 հատորը նոր էր լույս տեսել: Առիթը բաց շթողեցի, գնեցի,
 կարդացի և գիրքը ձեռքիս ոգևորված մտեցա Շիրազին:

Մի պահ սառնություն զգացի, բայց հետո ջերմությունից դեմ-

:... և յախտի ուժ

Հենց այսպես էլ սկսվեց մեր մտեմությունը, որը վերածվեց բարեկամության: Գարձանք փուր և եղբայր: Իր «Մարիամ և Գոհար փուրերից ոչ պակաս ոչ ավելի...»: Եվ ամեն անգամ Շիրազը թերթելով «Բանաստեղծի ավանախը» էֆրապրոմտով ինֆնագրեր էր թողնում, որոնք ինձ համար բանկագին մասունքներ են: «Ինչ լավ, խոշոր աչքեր ունես...» մեֆենագիր բանաստեղծություն լուսանցում Շիրազը գրեց. «Սիրելի էլիա, կայծակի պես աչքով նայեցի հալածվածիս մասին ժողովածուիդ մտածները՝ ասեր, ասացվածքներ և նույնիսկ հողվածներ խմբել ես, առանց խմբագրելու, ասես հում և կույս բաներ — այսինքն բուն ազգը իմ ֆնարի մասին: Շատ մեծ բան ես մտածել և ծնել ես դայակորեն, համբույրներ: Ավանախը եզակի է»:

Գրասեր էլիա Փահլևանյանը այժմ էլ շարունակում է հարստացնել «Բանաստեղծի ավանախը», հավաքել Շիրազի կյանքը և գործունեությունն արտացոլող նոր նյութեր: «Բանաստեղծի ավանախը», անշուշտ, տեղ կգրավի նրա ծննդավայրում բացվող Հովհաննես Շիրազի տուն-թանգարանի ցուցադրություններում:

1.

«Սիամանթո և Խչեզարե» գրքի անվանաթերթին Շիրազը գրել է. Շատ սիրելի, ջնորհալի էլիա գյումրուհուս:

Հ. Շիրազ

2.

*Միակ արդարության ոսկե կշեռքը
Իմ ժողովուրդն է, սուրբ է իր ձեռքը ...*

Հ. Շ.

Իմ ազնիվ քոջ նման իմ հայրենակից, Գյումրվա ծաղիկ,
 Լենինականի աստղիկ էլիա Փահլևանյանին՝ ի նշան իմ նվիր-
 վածությունը իր հոգվո աշերին:

Հ. Շիրազ

1960 թ.
 Երևան

4.

Նոր տարվա մաղթանքներ

Այնքան շատ եք դուք ինձ սիրում, որ հոգնում եմ
 ձեր սիրուց,
 Ձեր միշտ անշահ ու անկաշառ, աստված ընծա
 սեր-սիրուց,
 Կարծես դուք եք իմ քույրերը՝ ինձ հետ ծնված
 մի մորից,
 Ես արծիվ եմ դառնում կարծես ձեր անմար մին լեռ—
 սիրուց,
 էլիա, Անիկ, Գոհար, Շուշիկ, իմ քնարի սուրբ
 քույրեր,
 Միշտ մնացեք անդավաճան, իմ քնարի նուրբ քույրեր,
 Ես ձեզ եղբոր համբույր ու սեր, ես միշտ սար եմ
 ձեր մեջքին,
 Իմ սուրբ ազգի դուք ապավեն, դուք իմ իրավ սուրբ քույրեր:
 Այս նոր տարին նոր գարուններ թող բերի,
 Ձեզ կյանքն իբրև համբույր ու սեր թող բերի,
 Դառնությունը մեղքի փոխվի թող ցմահ,
 Հազար ու մի նոր տարիներ թող բերի ...

Մի սփոփանք գտա կյանքում անսփոփ՝
 Այն, որ այլոց հույս ու հենակ մնացի ...

Հովհաննես Շիրազ՝

1962 թ.
 Հունվար

ՄԱՀՎԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Մարտ, 1984:

1984 թվականի մարտի 14-ին, ծանր հիվանդությունից հետո, կյանքի 70-րդ տարում վախճանվեց մեր ժամանակի խաչորագույն բանաստեղծը՝ Հովհաննես Ծիրազը (Հովհաննես Թադևոսի Կարապետյանը): Նրա մահը վշտի խորախոր հորձանքով ողողեց նրա՝ շիրազյան պոեզիայի բյուրավոր երկրպագուներին, ժողովրդի լայն շրջաններին: Հայաստանի աշխատավորները, սփյուռֆահայությունը, խորհրդային մտավորականությունը մարտի 17-ին վերջին հրաժեշար տվեցին իրենց մեծաշնորհ զավակներից մեկին, ֆաղաֆացի-բանաստեղծին, ջերմ հայրենասերին ու մարդասերին, բազմադարյան հայ գրականության հերկի անխոնջ ու շոայլ սերմնացանին:

Հովհաննես Ծիրազը գարնան երգիչ էր, նակատագրի բերումով էլ նա գարնանամուտին էլ վերադարձավ մայր հողին: Նրա մահը աշխարհասփյուռ արձագանք գտավ:

Մամուլում հրապարակվեցին շատ հոդվածներ, ցավակցական հեռագրեր, հուշեր, լուսանկարներ: Պաշտոնական մահախոսականում ասված է. Ծիրազը մեր Հայրենիքի «բազմազգ պոեզիայի համաժողովրդական սեր վայելող վարպետներից մեկն էր .. ապրում էր իր ժողովրդի բոլոր մեծագործությունների ուրախությամբ ... Ծիրազի ստեղծագործությունը մեծ սեր է վայելում ոփյռտֆահայ զանգվածների մեջ, նրանց մեջ արթուն պահելով վերածնված մայր հայրենիքի նվիրական պատկերը:

Հովհաննես Ծիրազի պոեզիայի լավագույն էջերն ընդմիշտ կապրեն հայ գրականության, խորհրդային բազմազգ բանաստեղծության ոսկե մատյանում»:

«Շիրազը ինձ համար առասպել էր, առասպել է բուրբի համար, Հայաստանի բուրբ բնակավայրերում, Սփյուռֆի բուրբ ընտանիքներում... Մեղքս ինչ թախտեմ,— գրել է Համո Սահյանը,— ես դեռ չեմ կարողացել ինձ համար պարզել այդ առասպելի խորհուրդը: Երևի այդքան պարզ ու սովորական մարդու մեջ դրված արտակարգ հաննարն է...»:

Շիրազն ինչ որ ուներ, դա նրանն էր, ինքնօրինակ, միայն Շիրազի ֆենոմենն էր,— «Կյանքից վերցնելով երեք խորհրդանիշ-բնագավառ (գարուն, Մասիս, Մայր),— գրել է Հր. Հովհաննիսյանը,— Հովհաննես Շիրազն այդտեղից արձակում է իր բանաստեղծական սգու բուրբ շոգերը բազում ու բազմերանգ ցոլացումներով, հոխ ու շֆեղ պատկերներով, անակնկալ, հահախ շլացուցիչ համեմատություններով, զարմանալի գուգորդություններով: Դա նրա բանաստեղծական կյանքի նշմարիա էությունն է: Եվ միաժամանակ նրա այս անգամ արդեն ստեղծագործության ֆենոմենը»:

«Քարսիա Լորկայի, Բորիս Պաստերնակի և Գալսկտիոն Տաբիձեի մահից հետո, մեծն Պոլրույր Սևակի վախճանվելուց հետո,— գրել է Մորիս Ծոցխեշվիլին,— մեր դարը շէր ունեցել պոետական հտնարի տյնպիսի կորուստ, ինչպես Հովհաննես Շիրազինն է: Նրա մեջ բոցկլաում էր Մաշտոցյան լեզվի կրակը, նրա երակներում վառվում էր Նարեկացու և Քուչակի արյունը, իսկ սրտի միջով անցնում էր Խաչատուր Աբովյանի վերբը: Նա աիրապետում էր Սասունցի Դավթի ուժին, սակայն նրա պոեզիայում ծաղկում էր մոռ ծաղիկը, որի անունը ֆեֆշություն է: Նրա ֆնարը պաավով կրում էր Կոմիտասի կարոտը և Մարտիրոս Սարյանի գույների հարմոնիան:

Հայաստանի սրբացած հողը մայրական ձեռքերով ընդունում է տֆնած և լուսավոր մարմինը»:

Շիրազը «նայապանպանության, Սփյուռֆի գոյամտրտի զինվոր էր,— գրել է Վահագն Դավթյանը... Մայրերի և բանաստեղծների մահն ինչ-որ շափով նման են իրար: Բանաստեղծներն էլ մայրերի նման տարիֆ չունեն, ինչ տարիֆում էլ մահանան նրանք, անժամանակ է, ֆանի որ նրանց մահով խիղնն ու բարությունն ինչ-որ շափով որբացած են

գգում իրենց»։ «Հազվադեպ են այն բանաստեղծները, — գրել է Վազգեն Մնացականյանը, — որոնց ընթերցողը մի ամբողջ ժողովուրդ է՝ փոքրից մինչև մեծը։ Շիրազն այդպիսի բախտավոր հազվադեպություն էր։ Բազմաթիվ են նաև նրա հետևորդները, նույնիսկ նրանք, որ թվում է շատ են հեռու Շիրազից, դարձյալ շեն կարողացել խուսափել նրա պոեզիայի ջերմությունից, միշտ չէ, որ հնարավոր է ստույգ ասել, թե որ կրակը երբ և ումից են վերցրել։ Այդպիսին է կրակի նակատագիրը — նա իր ավածը չի հաշվում։ Շիրազն էլ չբահաշվեց, որովհետև նրա գերագույն հոգսը ու երջանկությունը սրածով ժողովրդին ծառայելն էր, իսկ այդպիսի անմոռաց նվիրվածությունը ոչ թե հաշվել, այլ միայն ու միայն հպարտորեն ու անմնացորդ սպասվել է սիրում։

Շիրազյան ինչպիսի գեղեցիկ սպառում և անկեղծության ինչպիսի օրինակելիություն, նա, ում բախտ է վիճակվել սեղան նստել Թումանյանի, Խաչատրյանի, Տերյանի ու Չարենցի հետ, չէր կարող շնկատել, որ նրանց կողմին է նաև Շիրազը՝ իր փառքով ու տնունով, մեծերի նկատմամբ խոր ակնածանքով և նրանց հարգանքը վայելած»։ «Մեծերի մահը երևի արևի խավարման նման է, — գրել է Հովհաննես Մելիքոնյանը, — փոթորիկ, ֆամի, գետերը հունից դուրս են գալիս, իսկ հետո ամեն ինչ խաղաղվում և արևը՝ արև։ Վաղը Հովհաննես Շիրազը նորից դուրս կգա փողոց, կֆայլի մեզ նման՝ մեզ հետ և նրանց հետ, ովքեր այս աշխարհ կգտն հազար տարի հետո, կֆայլի՝ խոսելով իր ոռկեբառ պոեզիայի լեզու-բերանով, և նրա խոռոհն ու խորհուրդը կմանի մեր տան դռնից ու լուսամուտից ներս, ինչպես ամեն առավոտ՝ առավոտի լույսը ... Կմանի մեր ոգուց ներս։ Եվ նա ինքը՝ Հովհաննես Շիրազը կմանի մեր, մեր որդիների դռնից ներս, շեմին թոթափելով մահը՝ որպես ռաֆի փոշի»։

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը Մոսկվայից հեռագրել է. «Ժողովրդի կողմից սիրված, ժողովրդի հույզերով ոգեշնչված, մեր սիրելի բանաստեղծ Հովհաննես Շիրազի անյունի առջև խոնարհվում եմ մինչև գետին։ Հավերժ հիշատակ նրա անկեղծ տաղանդին»։ Վրաց ականավոր գրող Նոդար Դումբաձեն գրել է. «Հովհաննես Շիրազի մահ-

վան լուրը ցնցեց բոլորիս: Այն դեռ անցնում է երկրե-երկիր
և պատելու է ցավը հայ ժողովրդին, ասել է թե՛ աշխարհին:
Բոթը սփռվել է աշխարհով մեկ, ֆանգի այդպիսին է հայի
հակատագիրը ...

Պեպի Շիրազը տանող հանապարհը Հայաստանն է, և
դեպի Հայաստան տանող հանապարհը՝ Շիրազը ... Այն հո-
գևոր արժեքները, որ թողեց Շիրազը, գրեթե հավասարա-
պես վրացունն է, ուրեմն և կորստյան ցավն է մերը...»

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն գրել է. «Յե-
աայսու Շիրազն առավել պիտի ապրի յավերժության բար-
ձունքներում և սրտերում բոլոր հայերի, ի Հայաստան ի
սփյուռու աշխարհի: Մեծատաղանդ բանաստեղծը՝ Շիրազը,
բաժանվում է այս կյանքից, թողնելով մեր ժողովրդին ու
յեսապա սերունդներին՝ գանձարանը իր գրական պայծառ
վաստակին իբրև արարատած հուշարձան և մշտավառ փա-
րոս հայոց ազգային երազանքներին»:

Երեք օր շարունակ սգակիր մարդկանց թափոռն անվեր-
ջանալի շարքերով անցավ Օպերայի և բալետի թատրոնի
կամարների աակով, հանգրվանեց Շիրազի հարկի ներքո,
իբր հարգանքի տուրքը մատուցելով մեծ պոետին: Սև ժա-
պավենով երիզված Շիրազի ազնվատեսիլ նկարի առջև
դրված գրառումների գրքում ժողովուրդը թողեց իր սրտի
խոսքը, ոմա՛նք չափածո, ոմա՛նք արձակ, ոմա՛նք հեռա-
գրական հակիրճությամբ:

Երկու մեծադիր հատոր են կազմում Շիրազի մահվան
արձագանքները, հայրենիքում և սփյուռքում, որ հավաքել,
ամփոփել ենք ու հանձնել հանգուցյալի հարազատներին և
գրողների միությանը: Երկրորդ գիրքը խորագրված է «Ժո-
ղովրդի սրտում: Ցավակցական գրառումներ ընտանեկան տլ-
քումներում»: Ահա մի ֆանի նմուշ ժողովրդի գրառումնե-
րից.

— Հանգեց Հայաստան տշխարհի ամենալուսատու աստղը:
Սգա՛, հայ ժողովուրդ,
Սգա՛ ...

— Երգիր ամեն ինչ
Ե՛վ կյանք, և՛ «Երազ»,

*Քեզ բարի ճամփա,
Հովհաննես Շիրազ ...*

— Բարի հանապարհ, մեծ վարպետ ...

— Ես Ձեզ գիտեի, Դուք՝ ինձ: Մնացյալը՝ լուրջուն է...

— Մահ իմացյալ անմահություն է, ողորմի՛ր՝ քեզ ...

— Սիրելի Շիրազ, Արփաշայից բերված հողը թող խառնելի քո մեծ սրտին և թեթև լինի...

— Ով տեսել և կարդացել է Շիրազին, նա տեսել է Մասիսը և Հայաստանը ...

— Շիրազ, դու եղել ես, կաս ու կմնաս, ինչպես քո սիրած Մասիսը:

— Գլխիկոր, արցունքն աչքերիս, կանգնել եմ թարմ անյունիդ առջև և իբրև սաղմուսի բառեր արտասանում եմ խոսքերդ.

*Երանի մեռնող ձյուներին, որ միշտ
Հետևից կանաչ գարունն են թողնում ...*

Հավերժ հիշատակ ...

Հովհաննես Շիրազի մահն արեկոծել է և՛ սփյուռֆահայությանը: Հայոց բարեգործական ընկերության պրեզիդենտ Ալեք Մանուկյանը՝ ուս-Անջելեսից հեռագրել է. «Ես ցնցված եմ հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազի մահով: Նա շատ սիրելի էր ամբողջ աշխարհի հայության համար և իր արժանի տեղը կունենա բոլոր ժամանակների դասական գրողների շարքում»: Փարիզից «Աշխարհ» թերթի խմբագիր Ավետիս Ալիֆսանյանը հեռագրել է. «Սիրելի Շիրազի մահով սգավոր ենք: Թող հավերժ ապրի Շիրազներ ծնող հայ ժողովուրդը»: Հայեպի երիտասարդական ասոցիացիայից քստացված ցավակցականում ասված է. «Խոր կսկիծով ստացանք Շիրազի մահվան լուրը: Մեր ժողովուրդը և մեր գրականությունը կորցրեցին մի լեգենդար հսկա: Թող Մասիսը ողբա նրա մահը»:

— «Խոր ցավակցություններ մեր պապիկ և սկեսար Հովհաննես Շիրազի մահվան առթիվ, իր թոռնիկ՝ Լուսինե Կարապետյանից և Մարի Արոզերֆյանից», — հեռագրել են Լուս-Անջելեսից:

...«Հովհաննես Երուզիկ», «Սիրելի Երուզիկ», «Մեծանուն Վարպետին», «Հայ մեծ ֆնտրերգու Երուզիկ», «Մեր անմտն Երուզիկ», — տյապիսի մակագրություններ էին դրոշմված հորյուրավոր ծողկեպաստիկներին:

Մարտի 17-ին Օպերայի ու բալետի թատրոնից մինչև Կոմիտասի այգու պանթեոնը ձգվում էր թափորը: Ամբողջ նանապարհին և տյգում ժողովուրդը ծողիկներ էր սփռում՝ ի պատիվ խորհմասա «Բիբլիոտեկի» ու «Էպիկոտեկի», «Հայոց դանթեականի» ու «Քնտր Հոյաստտեկի», ծողկաբույր «Սիամանթոյի ու Խջեգորեի», խոհափիլիսոփայական «Յոթնոպասումի», հոչակավոր «Էֆսպրումտի», Հայրենիքին, մորը նվիրված բանաստեղծությունների մեծամտնֆտր հեղինակի: Կոմիտասի այգու պանթեոնում, որ հանգչում են մեր մեծերը՝ Կոմիտոն ու Իսահակյանը, Մարտիրոս Սարյանն ու Արամ Խաչատրյանը, Հրաչյա Ներսիսյանն ու Վահրամ Փափագյանը, Երվանգադեն ու Վիլյամ Սարոյանը, աեղի ունեցով Երուզի անյունը հողին հանձնելու արտադրությունը: Դամբունական նառեր արտասանվեցին: Դագաղը մոտեցվում է գերեզմանին, երգչախումբը հնչեցնում է Մտկուր Եկմալյանի «Ո՛վ հայոց տշխուրհ» երգը: Սգո մեղեդիների հնչյունների տակ Երուզի անյունը տմփոփվում է հողում: Թարմ շիրիմը ծածկվում է բանաստեղծի այնֆան սիրտը ու երգած գարնանային ցողաթաթախ ծաղիկներով:

Նա այն խոշոր երախաավորն է, Ստ. Զորյանից հետո, միակը հետհոկտեմբերյան դասական գրողներից, որի տհյունն տմփոփվեց կոմիտասյան սրբացած պանթեոնում ...

Հեռացավ մեծ բանաստեղծը դեպի հավերժություն, գնաց միանալու մեր մեծերին, թողնելով իր հոգու խոռվքը և բանաստեղծական անգուգական ժառանգությունը:

1980 թ.

Սերս Խանգաղյաճ — Շնորհակալ, աղնիվ ու մեծ գործ	3
Անզուգական Շիրազը	5

ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ, ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Ձեր սերնդի պսետը ծնվեց	8
«Զո՛ւր», ջո՛ւր, պտվապուլակի սատը ջո՛ւր»	9
Շիրազից ես ազդվել	11
Զափածո թղթակցություններ	11
Պատերազմ	12
Գնդապետ Զաքիյանի հիշատակին	14
Իանաստեղծի ձայնը	14
Շիրազը «Թամանցիների քայլերգի խմբագիր»	16
Իսկ ի՞նչ գիտես Գառնիկի մասին	17
Սպասում	17
Հաղթանակի լուսաբացին	18
Սիրելի Քոչար	19
Հազթանակ	20
Գիրք խաղաղության և սիրո	21
«Իմ կյանքի վեպը»	23
«Առանց Հայաստանի չեմ կարող շնչել...»	26
«Բայց կուզեի ես ազատեմ...»	29
«Գեղին կճանաչե՞ս...»	31
Նրզեբի գիրքը	31
«Հույսս դնում եմ կուլեկտիվ խելքի վրա»	38
«Այս ի՞նչ բան է...»	39
«Անիին» կյանք տուր»	40
«Շիրակի պոեզիայի ծառը ջրեք»	41
«Հազուս պարտքն եմ կատարել»	42
Երազիս մեջ	44
«Ա՛խր ինչ վատ բան կա»	44
Իլլիշի շքանշանով նշանավորված Հրաչյա Ներսիսյանին	46
«Տեղ գնալիս ինձ հիշիր»	48
«Զգույշ եղիր, քեզ չխաբեն...»	48
«Մարտիրոս Սարյանը սրտիցս է խոռել»	49
«Պոեզիան սկսվում է հայրենի խրճիթից»	51
Անմոռաց մայիսին	52
«Ձեր այգին Մասիսի փեշերից է կախված»	56
«Շիրազի «Նրզ-երգոցը» ծնվեց	57
Աննախաղեպ երևույթ	60
«Էդիկ թարգմանիչ Պետիկը շէ՞»	61
«Բարձր պոեզիան անթարգմանելի է»	61
Գրողների միության քարտուղարությանը	66-
«Շնորհավորանքդ ստացա...»	68

Ասատ հունձք	69
Հարստացնենք հայ քնարերգության շարենցյան ավանդույթները	71
«Մարտիրոսվող սիրտդ...»	73
«Լավ փառարանեցի, չէ՞...»	79
«Քանզի իմաստուն է բնությունը»	81
Տողեր իմ «Օրագրերից»	83
Ինչո՞ւ չես խոսում հայերեն	88
Վերջին իղձս	89
«Տրտունջ հայրենամոռունչ...»	90
«Շիրազ պիտի դենձ»	91
«Բանաստեղծի զայրույթն ամենեն սուկալին է...»	92
«Մոնչա Շիրա՛զ, ազատություն Մասիսին»	93
«Գլխավորը շոգեքարշն է...»	94
«Որտեղ հայ կա, բերեք սեղմեմ իմ կրծքին»	99
«Սիրտս սիոփանքի էր ծարավ»	101
Մայր Հայաստան	105
«Պատգամ ազգապահի»	106
«Ավա՛ղ, ավա՛ղ...»	108
Շղթայված մեղեգիներ...	109
Երկու մակագրություն	112
Իմ սիրելի ընկեր Արամ	113

ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ

1968—1984

Մորս խրատը	115
«Անունն է Ռուբեն Երազ»	117
«Այս այն աղջիկն է...»	117
«Գլուխս շի հավատում»	118
Գիրը կարմիր էր	118
«Գրաբերուհիս... Գյուճբեցի է»	119
«Կարելի է զտել, մաքրել...»	119
«Ընկել է վշտի մեջ...»	120
Երեք քառյակ	120
«Մեր ազնիվ գրողը»	121
«Աշխարհ բերեք»	121
«Անին» տակավին մշակում եմ...»	121
Պոեմ Խայամական, բաժակ անխայամական	122
«Գոհ եմ, բայց դժգոհ եմ...»	123
«Այս գիրքը...»	124
«Գնանք նկարվելու...»	125
Խառը բանաստեղծություններ	126

ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉԵՐ

Հատվածներ Պեպո Սիմոնյանին գրած նամակներից	126
---	-----

Իմ իրերի Պեպո, բանաստեղծ	127
Շեյքսպիրյան հրավիրատոմս	128
Էջապրոմտ տերատիլին	130
«Կարծես շատ է քիչ աշխարհի հողը . . .»	130
«Կարդա, խմիր, անուշ լինի...»	131
«Համբույրս արևին՝ ծողովրդին...»	131
Ես կմոռանամ աստղեր ու լուսին	132
ՆԱՄԱԿԱՆԻ	133—247
ՄԱՀՎԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ	243

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ԽԻԿԱՐ ՀԱԿՈՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՇԻՐԱԶ

Հուշ-նովելներ

Գարոցական միջին և բարձր տարիքի համար

Литературно-художественное издание

БАРСЕГЯН ХИКАР АКОПОВИЧ

ШИРАЗ

Новеллы—воспоминания

Для среднего и старшего школьного возраст

(На армянском языке)

Издательство «Аревик»

Ереван, 1990

Խմբագրության վարիչ՝ Գ. Ս. Օհանյան

Հրատ. խմբագիր՝ Ա. Գ. Յազիչյան

Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Խ. Զ. Հակոբյան

Տեխ. խմբագիր՝ Տ. Վ. Ավետյան

Վերստուգող սրբագրիչ՝ Է. Ա. Սախիկյան

ИБ № 325

Հանձնված է շարվածքի 15. 7. 90 թ.: Ատորագրված է տպագրության

13. 12. 90 թ. Չափսը՝ 84×108¹/₃₂: Թուղթ՝ տպագր. № 1: Տառատեսակ

Արամյան: Տպագրություն բարձր, 14,28 սյւյմ. տպ. մամ+1,68 ներդիր, հրատ. 11,69 մամ.: Տպաքանակ՝ 30,000: Պատվեր՝ 1647: Գինը՝ 2 ու.:

«Արևիկ» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Հայաստանի Հանրապետության հրատարակչությունների, պոլիգրաֆիայի

և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան

պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91

Полиграфкомбинат им Акопа Мегаларта Госкомитета Республики

Армения по делам издательств, полиграфии и книжной торговл

Ереван-9, ул. Теряна 91.

